

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Մատենաշար
Հայ-վրացական հարաբերություններ
Գիրք Գ

ՀԱՅԿԱԿԱՆ
ՄԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ
ՎՐԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ
(Ե-Ժ ԴԱՐԵՐ)

Քաղեց և ծանոթագրեց
Ռուզաննա Հարությունյանը

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2016

ՀՏԴ 93/94
ԳՄԴ 63.3
Հ 253

*Աշխատությունը հրատարակության է երաշխավորել
Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի
գիտական խորհուրդը*

Խմբագրական խորհուրդ՝ Սիմոնյան Ա. Հ. (նախագահ),
Բայրամյան Հ. Ս., Հովհաննիսյան Մ. Ս., Չոբանյան Պ. Ա.

Մատենաշարի հիմնադիր
ԵՊՀ ՀՀԻ վրացագիտության հայկական կենտրոն

Հ 253 Հայկական սկզբնաղբյուրները Վրաստանի մասին (Ե-Ժ դարեր)/ Քաղեց և ծանոթագրեց Ռուզաննա Հարությունյանը: -Եր., ԵՊՀ հրատ., 2016, 314 էջ:

«Հայկական սկզբնաղբյուրները Վրաստանի մասին (Ե-Ժ դարեր)» նյութերի ժողովածուն ընդգրկում է հայ պատմիչների տեղեկությունները Վիրքի, վրաց ժողովրդի և հայ-վրացական հարաբերությունների մասին: Տեղ են գտել պատմիչների երկերի աշխարհաբար տարբերակները:

Գիրքը նախատեսված է հայագետների, վրացագետների, վրաց պատմության ու մշակույթի հարցերով հետաքրքրվող ուսանողների և ընթերցող լայն շրջանակների համար:

ՀՏԴ 93/94
ԳՄԴ 63.3

ISBN 978-5-8084-2158-5

© ԵՊՀ հրատ., 2016
© Կազմողի համար, 2016

ԱՌԱՋԱԲԱՆ

Հայերն ու վրացիները, դարերով ապրելով հարևանությամբ, ունեցել են սերտ հարաբերություններ, որոնք ընդգրկել են կյանքի տարբեր ոլորտները: Հայ-վրացական բազմաբնույթ կապերի ուսումնասիրության համար կարևոր նշանակություն ունեն հայկական գրավոր պատմական աղբյուրները, որոնք թեև գրվել են 5-րդ դարում, սակայն տեղեկություններ են պարունակում նաև ավելի վաղ ժամանակների պատմության և մասնավորապես հայ-վրացական հարաբերությունների մասին:

5-7-րդ դդ հայկական աղբյուրները Վիրքի և վրաց ժողովրդի պատմությանն անդրադառնում են ոչ թե ամբողջությամբ, այլ այնքանով, որքանով դրանք առնչվում են Հայոց պատմությանը, և տեղեկություն են տալիս Վիրքի ռազմաքաղաքական կյանքի, մշակույթի, պաշտամունքի, սովորույթների, կենցաղի և այլ ոլորտների մասին:

Հայկական պատմական աղբյուրների դերը մեծ է վրացագիտությամբ զբաղվողների համար հատկապես այն պատճառով, որ դրանք ժամանակագրորեն նախորդում են վրացական աղբյուրներին և դրանով լրացնում բացը: Սրանով պետք է բացատրել այն հետաքրքրասիրությունը, որ ցուցաբերում են վրաց պատմաբանները հայկական աղբյուրների նկատմամբ:

Թեև հայ որոշ պատմիչների երկեր թարգմանվել են վրացերեն, սակայն անհրաժեշտություն է առաջացել հավաքել և ամբողջացնել հայ պատմիչների տեղեկությունները Վիրքի և վրաց ժողովրդի մասին:

Աշխատանքը կատարված է պատմական աղբյուրների աշխարհաբար թարգմանությունների հիման վրա, որպեսզի այն մատչելի լինի վրացագիտությամբ զբաղվողների և հետաքրքրվողների ավելի լայն շրջանակների համար: Ակադեմիական մակարդակով վրացագիտությամբ զբաղվողներին այս աշխատանքը կօգնի խուսափել տեղեկությունների ավելորդ փնտրտուքից, քանի որ աշխատանքում նշված են հավաքված նյութերի տեղն ըստ գլուխների կամ էջերի, որը հնարավորություն է տալիս անմիջապես գտնել տեղեկության գրաբար տարբերակը:

5-7-րդ դարերի հայկական պատմական աղբյուրներից Վիրքի և վրաց ժողովրդի մասին տեղեկություններ քաղել ենք Մովսես Խորենացու «Հայոց պատմությունից», Կորյունի «Վարք Մաշտոցի» երկից, Փավստոս Բուզանդի «Հայոց պատմությունից», Եղիշեի «Վարդանի և Հայոց պատերազմի մասին» աշխատությունից, Ղազար Փարպեցու «Հայոց պատմությունից», «Աշխարհացույց»-ից, Սեբեոսի «Պատմությունից», Մովսես Կաղանկատվացու «Պատմություն Աղվանից աշխարհի» գրքից և Հովհան Մամիկոնյանի «Տարոնի պատմությունից»:

Այս աշխատություններում վրաց մասին տեղեկությունները ժամանակագրորեն սկսվում են անտիկ շրջանից և հասնում մինչև 7-րդ դարի կեսերը:

Անտիկ շրջանի մասին մեզ տեղեկություն է տալիս Մովսես Խորենացին, որը հիշատակում է, թե ինչպիսին էին հարաբերությունները հայերի և վրացիների միջև Հայոց թագավորներ Երվանդ Վերջինի, Արտաշես Ա-ի, Տիգրան Մեծի, Արտավազդ Բ-ի օրոք: Հայ-վրացական հարաբերությունների մասին պատմիչը տեղեկություններ է հաղորդում նաև Արշակունյաց դարաշրջանի և իր օրերի մասին: Խորենացու տեղեկությունները բազմաթիվ են և հիմնավորված: Եթե անտիկ շրջանի մասին նրա տեղեկությունները բացառիկ են, ապա 4-5-րդ դարերին վերաբերող նրա վկայությունները հաստատվում են նաև Փավստոս Բուզանդի և

Կորյունի հիշատակություններով: Այսպես՝ եթե նախաքրիստոնեական շրջանի մասին Խորենացին վկայում է, որ հայերն ու վրացիները նույն հեթանոսական պանթեոնն են ունեցել (վրացիները նույնպես երկրպագել են Արամազդին և Վահագնին), ապա քրիստոնեության տիրապետման ժամանակաշրջանի մասին Պատմահայրը վկայում է, որ Հայոց եկեղեցին պայքար է մղել աղանդավորների դեմ ինչպես Մեծ Հայքում, այնպես էլ Վիրքում, մի իրողություն, որի մասին հիշատակում է նաև Կորյունը: Վերջինս հաստատում է նաև Խորենացու վկայությունները Մեծ Հայքում և Վիրքում գրերի գյուտի և դպրոցներ բացելու ու կրթական գործի մասին:

Ժամանակագրական առումով Մովսես Խորենացուն հաջորդում են Եղիշեն և Ղազար Փարպեցին, որոնք նկարագրում են հայ-վրացական հարաբերությունների նոր փուլը, երբ վերացվել էր Մեծ Հայքի թագավորությունը, և հայերը, վրացիներն ու աղվանները համատեղ պայքար էին մղում Պարսից գերիշխանության դեմ՝ չցանկանալով ազգային մշակույթը խաթարել պարսկական կրոնով, կենցաղով ու բարքերով: Եթե Եղիշեի մոտ Վիրքի մասին տեղեկությունների հիմքում ընկած են Ավարայրի ճակատամարտին նախորդող դեպքերն ու իրադարձությունները, ապա Ղազար Փարպեցին ավելի շատ պատմում է ոչ միայն երեք ժողովուրդների (հայ, վրաց և աղվանից) նախարարների համագործակցությանը Տիգրանում, այլև Վահան Մամիկոնյանի և Վրաց Վախթանգ թագավորի միջև ընթացող բանակցություններին, Պարսից դեմ հայ-վրացական համատեղ պայքարին և Ճարմանայի ճակատամարտին:

Վիրքի պատմաաշխարհագրական քննության համար կարևոր սկզբնաղբյուր է «Աշխարհացույց»-ը, որը ոչ միայն տալիս է Վիրքի աշխարհագրական պատկերը, այլև նկարագրում է նրա սահմանները, վարչական կառուցվածքը և նշում, թե Մեծ Հայքի որ գավառներն են միացվել Վիրքին: Ըստ «Աշխարհացույց»-ի

Մեծ Հայքի կազմից հանվել և Վիրքին են միացվել հետևյալ գավառները՝ Կղարջք, Շավշեթ, Արտահան, Ջավախք, Մանգլեացփոր, Քուլիշափոր, Բողնոփոր, Օորոփոր, Կողբոփոր, Ձորոփոր, Տոեխք (Թոեղք), Տաշիր ու Կանգարք: «Աշխարհացույց»-ը վկայում է նաև Վիրքը Պարսից տիրապետության տակ գտնվելու և նրա Քուստ ի Կապկոհ կոչվող վարչական միավորի կազմում Վարձան անվանաձևով հիշատակվելու մասին: Նշենք նաև, որ Քուստ ի Կապկոհի, որը Պարսկաստանի հյուսիսային քուստակն էր, կազմում էին գտնվում նաև Հայքը, Սիսականը (Սյունիքը), Աղվանքը, Ատրպատականը և այլ երկրներ:

Վիրքի մասին Սեբեոսի տեղեկություններից հատկապես կարևոր են նրանք, որոնք վերաբերում են 591թ. Պարսկա-բյուզանդական բաժանման գծին, քանի որ այդ սահմանագիծն անցել է նաև Վիրքով, ինչպես նաև հայ-վրաց-աղվանական հակաբյուզանդական պայքարի որոշ դրվագներին:

Մովսես Կաղանկատվացու վկայությունները Վիրքի մասին եթե սկզբում կրկնում են Մովսես Խորենացու, Կորյունի, Եղիշեի հիշատակությունները, ապա դրանից հետո տեղեկություն են տալիս Վիրքի՝ 6-7-րդ դարերի պատմության մասին: Հեղինակը հատկապես կանգ է առնում խազարների դեմ Տիֆլիս քաղաքի բնակչության մղած պայքարին, Հայոց եկեղեցուց Վրաց եկեղեցու անջատման փաստին, ինչպես նաև հայ-վրացական հակաարաբական համատեղ պայքարին:

* * *

Քննության առնելով 5-7-րդ դարերի հայ պատմիչների տեղեկությունները Վիրքի մասին՝ տեսնում ենք, որ դեռ վաղ ժամանակներից հայերի և վրացիների միջև գոյություն են ունեցել սերտ հարաբերություններ, որոնք ընդգրկել են ռազմաքաղաքական, գաղափարախոսական, մշակույթի և այլ ոլորտներ:

Հայ-վրացական ռազմական հարաբերությունների մասին Մովսես Խորենացու առաջին տեղեկությունը վերաբերում է մ.թ.ա. 1-ին դարին, երբ նշվում է, որ Հայոց Տիգրան Մեծ թագավորը Մարաց Աժդահակի դեմ կռվում «գորք է հավաքում Կապադովկիայի սահմաններից, Վրաց և Աղվանից ընտիրները, որքան որ կային, Մեծ և Փոքր Հայքի բոլոր ընտիրները, և ամբողջ զորությամբ դիմում է Մեդացիների կողմերը» (Խոր., Ա-ԻԹ):

Ըստ այս տեղեկության՝ Տիգրանը Վիրքի և Աղվանքի ռազմական ուժի նկատմամբ վարվել է այնպես, ինչպես Մեծ և Փոքր Հայքերի ռազմական ուժի հետ: Սա վկայում է, որ ինչպես Մեծ ու Փոքր Հայքերի, այնպես էլ Վիրքի և Աղվանքի ռազմական ուժերի նկատմամբ Տիգրանը նույն իրավասությունն է ունեցել:

Ռազմական հարաբերությունները շարունակվում են նաև Տիգրան Մեծի որդի Արտավազդի օրոք, որն Անտոնիոսի դեմ պայքարում «հրամայում է զորքեր հանել Ատրպատական նահանգի բյուրավորներին, Կովկաս լեռան բնակիչներին աղվանների և վրացիների հետ, շարժվում գնում է Միջագետք և հալածում է հռոմեացիների զորքերը» (Խոր., Բ-ԻԲ):

Խորենացու այն տեղեկությունը, որ Արտավազդը հրամայում է Կովկաս լեռան բնակիչներին, վրացիներին և աղվաններին զորքեր հանել հռոմեացիների դեմ իր պայքարում, վկայում է, որ այս երկու ժողովուրդները գտնվել են Մեծ Հայքի գերիշխանության ներքո, որը թույլ է տվել Խորենացուն նշելու, որ Հայոց արքան «հրամայել է»:

Մեկ այլ վկայությամբ Հայոց Երվանդ թագավորը, Արտաշեսի հարձակման լուրն ստանալով, գալիս է իր քաղաքը, որպեսզի իր մոտ հավաքի Հայոց, Վրաց, Կեսարիայի և Միջագետքի զորքերը (տե՛ս Խոր., Բ-ԽԴ): Վրացիները Հայոց Երվանդ թագավորի բանակում Արտաշեսի դեմ կռվում էին իրենց Փարսման թագավորի գլխավորությամբ (տե՛ս Խոր., Բ-ԽԶ):

Ռազմական համագործակցության օրինակների հանդիպում ենք նաև հետագայում: Խորենացին վկայում է, որ Հայոց թագավոր Արշակ Բ-ն (350-368 թթ.) Արշակավանը կառուցելուց հետո, հանդիպելով Պարսից թագավոր Շապուհի և հայ նախարարների դիմադրությանը, «փախավ Կովկասի կողմերը՝ վրացիների հետ միաբանելով» (Խոր., Գ-ԻԷ), որից հետո «Արշակը վրացական գնդով գալով՝ իր մտերիմներից էլ սակավաթիվ զորք է հավաքում և պատերազմ սկսում այն նախարարների դեմ՝ իր Արշակավան դաստակերտի վրեժն առնելու համար» (Խոր., Գ-ԻԹ):

Վերոհիշյալ տեղեկությունները վկայում են, որ հայ-վրացական ռազմական համագործակցությունը եղել է օրինական իշխանությունների միջև, պետական մակարդակով, որը խոսում է հայ-վրացական քաղաքական համագործակցության մասին: Թեև հայ-վրացական քաղաքական հարաբերությունները եղել են բարիդրացիական, սակայն եղել են պատմական պահեր, երբ այն խախտվել է: Այդպես եղավ Հայոց Արտաշես թագավորի օրոք, երբ «ալանները բոլոր լեռնականների հետ միաբանվելով, Վրաստանի կեսն էլ իրենց կողմը քաշելով՝ մեծ բազմությամբ գալիս սփռվում են մեր երկրում» (Խոր., Բ-Ծ), հանդես գալով հայերի թշնամու ճամբարում: Հայ-վրացական մի ընդհարում էլ տեղի է ունեցել դարձյալ Արտաշեսի օրոք, երբ «վրաց թագավորը՝ մի ոմն Քարձամ, ապստամբեցնում է երկիրը և (հյուսիսային զորքի սպարապետ- Ռ. Հ.) Ջարեհին բռնելով՝ բանտարկում է Կովկասում», սակայն Արտաշեսի որդիներ Արտավազդը, Տիրանը և Սմբատ Բագրատունին, որոնք Հայոց մյուս երեք կողմերի զորավարներն էին, հաղթում են Քարձամին և ազատում Ջարեհին (տե՛ս Խոր., Բ-ԾԳ):

Այս ժամանակ ևս Վիրքը Մեծ Հայքից կախվածության մեջ պետք է գտնվեր, այլապես Վրաց թագավոր Քարձամը չէր ապրստամբեցնի երկիրը և Հայոց հյուսիսային զորքի սպարապետ Ջարեհին չէր բանտարկի Կովկասում: Վիրքի՝ Հայոց գերակայության

ներքո գտնվելու մասին է վկայում նաև Հայոց թագավոր Խոսրով Կոտակի (330-338 թթ.) օրոք հյուսիսային զորքի սպարապետ Միհրանի՝ «Վրաց առաջնորդ» կոչվելու փաստը, որը Մովսես Խորենացին հիշատակում է երեք անգամ: Ահա այս Միհրանի օրոք է Հռիփսիմյան կույսերից Նունեն քրիստոնեություն քարոզում Վիրքում: Թվում է, թե Խորենացու արտահայտած այդ սեղմ արտահայտությունը բավարար չէ եզրակացություն անելու համար, սակայն Խորենացու «Հայոց պատմության» ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ամբողջ աշխատանքը գրված է սեղմ, հակիրճ շարադրանքով, առանց ավելորդաբանությունների:

Վիրքի՝ Հայոց գերակայության ներքո գտնվելու մասին վկայում է նաև Ագաթանգեղոսը, որը, խոսելով քրիստոնեության տարածման մասին, նշում է, որ այն տարածվեց «ամբողջ Հայոց երկրում ծայրից ծայր», իսկ այնուհետև հիշատակում՝ «սատաղացիների քաղաքից մինչև Խաղտյաց երկիրը, Կդարջքի մոտ, ապա ընդհուպ, մինչև Մասքութների սահմանները, մինչև Ալանաց դռները...» (Ագաթ., ԸԺԹ), տարածք, որն ընդգրկում է նաև Վիրքը: Այստեղ Ագաթանգեղոսը չի հիշատակում Վիրքը, այլ ասում է «Հայոց երկիրը ծայրից ծայր»: Բայց Խորենացին է դա ասում Նունեի քարոզչության նկարագրությունից հետո, երբ նշում է, որ «նա առաքելուհի դարձած քարոզեց Կդարջքից սկսած, ալանաց և Կասբից դռների մոտով մինչև մասքութների սահմանները» (Խոր., Բ-ՁԵ), որից հետո ավելացնում է. «Ինչպես քեզ պատմում է Ագաթանգեղոսը»: Այստեղից պետք է եզրակացնել, որ ըստ Խորենացու Վիրքը գտնվել է Մեծ Հայքի թագավորության ենթակայության ներքո: Այս վիճակը թերևս պետք է պահպանվեր մինչև 387 թ. Բաժանումը: Նույնը վկայում է նաև Փավստոս Բուզանդը, ըստ որի՝ Հայոց թագավոր Պապի օրոք (369-375 թթ.) Մուշեղ սպարապետը ճնշում և Մեծ Հայքին է միացնում ապստամբած բոլոր երկրամասերը, և այդ թվում հիշատակվում է նաև Վիրքը: Բուզանդը «Վրաց մասին» կոչվող գլխում նկարագրում է, թե

ինչպես Մուշեղը ճնշեց, պատժեց ու հնազանդեցրեց Վիրքը՝ վերականգնելով նախկին սահմանը, որն անցնում էր Կուր գետով (տե՛ս Բուզ., 5-ԺԵ):

Որ Մեծ Հայքի թագավորության սահմանները հասել են մինչև Կապկոհ և Ճորա պահակ, վկայում է նաև Մեբեոսը, ըստ որի Պարսից արքա Խոսրով Բ-ի դեմ ապստամբած Վահրամը հայերին իր կողմը գրավելու համար Մուշեղին գրում է. «...Ձեզ կթողնեմ ամենայն Հայոց երկիրը մինչև Կապկոհ և Աղվանից դուռը, Ասորիքի կողմից Արվաստանը, Մրծուինը և Նոր Շիրականը մինչև տաճիկների սահմանները, որովհետև ձեր նախնիների օրոք իսկ ձերն է եղել, իսկ արևմուտքից՝ մինչև Կապադովկյան Կեսարիա...» (Մեբ., ԺԱ):

Հայ – վրացական ռազմաքաղաքական հարաբերությունները փոխվում են արդեն 5-րդ դարում: Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ Հայաստանը 387 թվականից սկսած արդեն անկախ պետություն չէր և գտնվում էր Բյուզանդական կայսրության և Պարսից տիրապետության ներքո: Պարսից գերիշխանությանն էր ենթարկվում նաև Վիրքը, և այս պայմաններում Հայքն ու Վիրքը համատեղ հանդես են գալիս Պարսից տիրապետության և նրա վարած քաղաքականության դեմ: Թեև 387 թ. Մեծ Հայքի թագավորությունը բաժանվեց երկու մասի, այնուհետև մասնատվեց և նրանից շատ տարածքներ անջատվեցին և բռնակցվեցին հարևան երկրամասերին, սակայն Պարսից արքունիքն իր քաղաքականության մեջ առաջնությունը տալիս էր Հայքին, գտնելով, որ «...Երբ Հայքը սերտորեն մերը լինի, Վիրքն ու Աղվանքը կլինեն անպայման» (Փարպ., ԻԱ), կամ «Երբ դուք մեզ պես մեր ճշմարիտ հավատին լինեք, Վիրքն ու Աղվանքը չեն համարձակվի մեր ու ձեր կամքից հեռանալ» (Փարպ., ԻԲ):

Հայ-վրացական քաղաքական կապերի մասին վկայում է նաև Եղիշեն: Ըստ նրա Վարդանանց շարժման ժամանակ հայ, վրաց և

աղվանից նախարարները միաբանվել են պարսից քաղաքականությանը դիմակայելու համար:

Հայ-վրացական քաղաքական համագործակցության վառ օրինակ է Ղազար Փարպեցու տեղեկությունը Տիգրանում հայ, վրաց և աղվանից նախարարների համաձայնության մասին (Փարպ., ԻԶ-ԻԸ) կամ էլ հայ-վրացական համագործակցությունը Վահան Մամիկոնյանի և Վրաց Վախթանգ թագավորի միջև, որի արդյունքը Ճարմանայի ճակատամարտն էր հայ-վրացական միացյալ ուժերի և պարսիկների միջև (Փարպ., ՀԳ-ՀԴ):

Վիրքի՝ Մեծ Հայքի գերիշխանության ներքո գտնվելու մասին վկայում են նաև գաղափարախոսության բնագավառին վերաբերող տեղեկությունները: Մովսես Խորենացին, խոսելով Հայոց ռազմի աստված Վահագնի մասին, նկարագրելով նրա առասպելական ծնունդը, նաև գրում է. «Բայց ասում են նաև, թե սա աստվածացված է, և Վրաստանում սրա հասակով արձան կանգնեցրած լինելով՝ պատվում էին զոհերով» (Խոր., Ա-ԼԱ), որից պետք է ենթադրել, որ Հայոց Վահագն աստվածը պաշտամունքի է արժանացել նաև Վիրքում, որտեղ նրան պատվել են զոհաբերություններով: Վիրքում պաշտամունքի է արժանացել նաև Հայոց Արամազդ աստվածը, որի արձանը Գրիգոր Լուսավորչի խորհրդով տապալվում է Նունեի նախաձեռնությամբ (տե՛ս Խոր., ԶԶ): Այստեղից պետք է եզրակացնել, որ հայ-վրացական հոգևոր կապերի արմատները հասել են հեթանոսության շրջան: Նաև սա է պատճառը, որ Մեծ Հայքում քրիստոնեություն ընդունելուց հետո ուշադրությունն ուղղվեց դեպի Վիրք, որի արդյունքում Հայոց Լուսավորչի տոհմից կաթողիկոս Վրթանեսի որդի Գրիգորիսը համարվում է «Վրաց և Աղվանից կողմերի կաթողիկոս» (Բուզ., 3-Զ):

Հայ-վրացական գաղափարախոսական համագործակցության վկայությունն է նաև բորբորիտոնների աղանդի դեմ պայքարը; Այն տարածված էր Հայքի բյուզանդական և պարսկական հատվածներում, ինչպես նաև Վիրքում և Աղվանքում, և նրա դեմ

պայքարի կազմակերպումը Հայոց կաթողիկոս Սահակ Պարթևը հանձնարարել էր Մեսրոպ Մաշտոցին: Մովսես Խորենացու վկայությամբ Վրաց թագավոր Արձիլի օրոք Մեսրոպը Գուգարաց Աշուշա բդեշխի հրավերով Գարդմանից մեկնում է Գուգարք՝ բորբորիտոնների դեմ պայքարելու համար (տե՛ս Խոր., Գ-Կ):

Վիրքում Մեսրոպ Մաշտոցի՝ աղանդավորների դեմ պայքարելու և քրիստոնեական ոգով նրանց դաստիարակելու մասին վկայում է նաև Կորյունը, ըստ որի «Հայոց, Վրաց և Աղվանից բոլոր կողմերում...Հիսուսի անունը կրեց իր անձի վրա թագավորների, իշխանների և բոլոր հեթանոսների առաջ» (Կոր., ԲԱ), որից պետք է եզրակացնել, որ այս երեք երկրները գաղափարական (այն է՝ քրիստոնեական) մի ամբողջություն են կազմել և ղեկավարվել Հայոց եկեղեցու կողմից: Այս մասին վկայում է նաև Ղազար Փարպեցին, որը հիշատակում է, որ Վահան Մամիկոնյանի դաստիարակ Աղան Արծրունու հիշատակը նշվել է «Հայոց աշխարհի, Վրաց և Աղվանից բոլոր եկեղեցիներում» (Փարպ., Դ): Հետևաբար հոգևոր հարաբերությունների մասին տեղեկությունները ևս վկայում են Վիրքի նկատմամբ Հայքի գերիշխանության մասին:

Հայ-վրացական հարաբերություններում իր ուրույն դերն ունեն մշակութային ոլորտը: Այս մասին Մովսես Խորենացին (տե՛ս Խոր., Գ-ԾԴ) վկայում է Մեսրոպի կողմից վրաց այբուբենի նշանագրերը ստեղծելու տեղեկությամբ: Սա տեղի է ունենում վրաց Բակուր թագավորի և Մովսես եպիսկոպոսի օրոք, որոնք օժանդակել են Մեսրոպին այդ հարցում, ինչպես նաև աշակերտներին կրթելու, այսինքն՝ դպրոց բացելու գործում: Այդ նպատակով Մեսրոպը Վիրքում է թողնում իր երկու աշակերտներին՝ Տեր Խորձենացուն և Մուշե Տարոնացուն, որոնք պետք է ծանոթ լինեին վրաց նշանագրերին և գուցե վրացի երեխաներին սովորեցնեին նաև հայերեն:

Վիրքում Մեսրոպի կողմից վրաց նշանագրերի ստեղծման մասին Մովսես Խորենացու վկայությունները հիմնավորվում են Կորյունի տեղեկություններով, համաձայն որի Մեսրոպը «...նշանագրեր հորինեց վրացերեն լեզվի համար: Գրեց, դասավորեց ու օրինավոր կերպով հարդարեց... Գնաց ներկայացավ թագավորին, որի անունը Բակուր էր և աշխարհի եպիսկոպոսին, անունը Մովսես: Եվ թագավորն ու ազնվականները, բոլոր գավառներով միասին շատ անսացին նրան ըստ աստվածային օրենքի» (Կոր., ԺԵ):

Այն հանգամանքը, որ Հայոց եկեղեցին շահագրգռված էր գիր ստեղծել և դպրոցներ բացել ոչ միայն Հայքում, այլև Վիրքում, վկայում է այս երկու ժողովուրդների միջև ձևավորված նաև մշակութային սերտ համագործակցության մասին, որն այդ ժամանակ նպատակ էր հետապնդում դիմակայելու Պարսից գերիշխանությանը:

Հայ-վրացական սերտ հարաբերությունների վկայությունն է նաև միջամուսնական կապերի իրողությունը հայ-վրացական իշխող վերնախավում: Խորենացին այս մասին գրում է, որ Հայոց թագավոր Արշակ Ա-ի որդի Արտաշեսն «...իր Արտաշամուդուստրը կնության է տալիս ոմն Միհրդատի, Վրաց մի մեծ բղեշխի, որ Դարեհի նախարար Միհրդատի զավակներից էր, որին Ալեքսանդրը նշանակել էր իվերիացիների գերիների վրա... և նրան է վստահում հյուսիսային լեռների և Պոնտոս ծովի կուսակալությունը» (Խոր., Բ-ԺԱ):

5-7-րդ դարերի հայ պատմիչների տեղեկությունների հիման վրա արված եզրակացությունը Վիրքի նկատմամբ Հայքի գերիշխանության մասին հիմնավորվում է նաև 11-րդ դարի վրաց հեղինակ Լեոնտի Մրովելու տեղեկություններով, ըստ որի՝ Ադերկից սկսած՝ Վրաց թագավորները «Հայոց թագավորների հնագանդության ներքո էին, նամանավանդ Արմազեցվոց թագավոր-

ներն օգնում էին հայերին նրանց բոլոր թշնամիների դեմ»¹ կամ նշում է Հայոց Արտաշես թագավորի օրոք կնքված հայ-վրացական պայմանագրի մասին, համաձայն որի՝ հայերի դեմ ապրստամբած և պարտված վրացիները պարտավորվում են թշնամու հարձակման դեպքում հանդես գալ հայերի կողքին, Արտաշես արքայի պատկերով դրամ կտրել, իսկ Հայոց թագավորի պատերազմելու դեպքում՝ տասը հազար սպառազեններով օգնել հայերին² և այլն:

Մեր խնդրից դուրս է հայ-վրացական հարաբերությունների քննությունն ընդհանրապես, ուստի շատ այլ տեղեկություններ չենք ընդգրկել, այլ փորձել ենք հիմնավորել 5-7-րդ դարերի պատմիչների տեղեկությունների կարևորությունը հայ-վրացական հարաբերությունների լուսաբանման գործում:

* * *

Պատմական նոր ժամանակահատված են բնութագրում 8-10-րդ դարերի հայկական աղբյուրները: Այս փուլը բնորոշվում է հայ-վրաց-աղվանական համատեղ պայքարով ընդդեմ նոր նվաճողների՝ արաբների, որոնք Հայքը, Վիրքն ու Աղվանքն ընդգրկել էին վարչական մեկ՝ Արմինիա միավորում, որի կառավարիչը նստում էր Դվինում:

Այս ժամանակաշրջանի մասին ուշագրավ են Ղևոնդի «Պատմության» տեղեկությունները հայ-վրաց-աղվանական հակաարաբական շարժման, խազիլների արշավանքի, Արտավազդ Մամիկոնյանի ապստամբական գործողությունների մասին, որոնք վկայություններ են պարունակում Վիրքի պատմության մասին:

¹ Լ. Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Եր., 2013, էջ 155:

² Տե՛ս նույն տեղում, էջ 159-160:

Արժեքավոր հիշատակություններ է պահպանել նաև Անանուն Զրուցագիրը (Կարծեցյալ Շապուհ Բագրատունին), որն իր «Պատմությունում» վկայում է «Հայոց և Վրաց և շատ երկրների ինքնակալ թագավոր Սմբատի» և Ափխազաց Դատոս արքայի միջև հարաբերությունների մասին, որոնք ոչ միայն ռազմաքաղաքական համագործակցություններ էին, այլև ընդգրկում էին միջամուսնական կապերի ոլորտը:

Առանձնապես բազմաբովանդակ են Հովհաննես Դրասխանակերտցու հաղորդած տեղեկությունները Վիրքի և վրաց ժողովրդի մասին: Եթե սկզբում նա կրկնում է նախորդ պատմիչների (հատկապես Մովսես Խորենացու) վկայությունները, Վահագնի պաշտամունքի, Մեսրոպ Մաշտոցի՝ Վիրքում ծավալած գրակրթական գործունեության մասին, ապա հիշատակում է հայ, վրաց և ադվանից եկեղեցիների միասնության, հետո՝ Վրաց եկեղեցու՝ Հայոց միաբանությունից անջատվելու և քաղկեդոնականությանը հարելու մասին: Պատմիչը նշում է նաև, որ Հայոց հայրապետ Աբրահամը ջանք է թափում, որպեսզի թերևս հնարավոր լինի Վրաց կաթողիկոս Կյուրոնին ու նրա հետևորդներին ետ դարձնել իրենց ճանապարհից, սակայն Վրաց եկեղեցու առաջնորդը մնում է անդրդվելի, որի հետևանքով արժանանում է Դվինի եպիսկոպոսաց ժողովի նզովքին:

Հեղինակը խոսում է նաև Հայոց արքաներ Աշոտ Ա, Սմբատ Ա, Աշոտ Բ Բագրատունիների օրոք հայ-եգերական հարաբերությունների մասին: Բավականին շատ են տեղեկությունները Հայոց Սմբատ Ա արքայի և Վրաց իշխան, այնուհետև Սմբատ Ա-ի կողմից Վրաց թագավոր թագադրված Ատրներսեհի միջև կապերի մասին: Պատմիչն անդրադառնում է նաև հայ-վրացական հարաբերություններին, որոնք գոյություն ունեին Աշոտ Երկաթի և Վրաց թագավոր Ատրներսեհի միջև:

Հովհաննես Դրասխանակերտցու «Հայոց Պատմություն»-ը լի է նաև պատմաաշխարհագրական բնույթի տեղեկություններով,

ինչպես նաև արքունիքների միջև միջամուսնական կապերի մասին վկայություններով:

Վիրքի և վրաց իրականության մասին տեղեկություններով հարուստ է նաև Ուխտանեսի «Հայոց Պատմություն»-ը: Եթե առաջին գլխում պատմիչը կրկնում է իր նախորդների տեղեկությունները, ապա երկրորդ գլխում, խոսելով Վրաց եկեղեցու՝ Հայոց միաբանությունից դուրս գալու մասին, մանրամասն նկարագրում է բաժանման ընթացքը, Հայոց Մովսես և Աբրահամ կաթողիկոսների ջանքերն այդ գործընթացը կանխելու ուղղությամբ:

Հայոց եկեղեցուց Վրաց եկեղեցու բաժանման պատմությունը շարադրելիս Ուխտանեսը տեղեկություններ է տալիս Կյուրոնի կյանքի ու գործունեության, երկու եկեղեցիների բաժանման պատճառների, Ցուրտավի եկեղեցու՝ Հայոց եկեղեցուն հավատարիմ մնալու և Ցուրտավի պատմության ու աշխարհագրական տեղադրության մասին: Ուխտանեսը ցույց է տալիս Վրաց եկեղեցու՝ քաղկեդոնականություն ընդունելու և Հայոց միաբանությունից անջատվելու ողջ գործընթացը, ընդգրկելով այն բոլոր նամակները, որոնք գրվել են այդ առիթով Հայոց և Վրաց կաթողիկոսների, Ցուրտավի եպիսկոպոսի, Վրթանես Քերթովի և Վրկանի մարզպան Սմբատ Բագրատունու կողմից:

Վիրքի և հայ-վրացական հարաբերությունների մասին տեղեկություններ է պարունակում նաև Թովմա Արծրունու «Պատմություն Արծրունյաց տան» աշխատությունը, որտեղ հիշատակվում է 591 թ. Պարսկա-բյուզանդական բաժանման գծի, հայ-վրացական համատեղ հակաարաբական պայքարի մասին: Հեղինակը մասնավորապես անդրադառնում է Բուղայի՝ Վիրք կատարած արշավանքին և արաբների կրած պարտությանը ծանարներից:

Ինչպես տեսնում ենք, 8-10-րդ դարերի հայկական պատմական գրավոր աղբյուրները ևս կարևոր տեղեկություններ են պարունակում վրաց ժողովրդի մասին և դրանք գնահատելի են հատկապես այն պատճառով, որ աղբյուրների հեղինակներն

իրենց նկարագրած ժամանակաշրջանների ականատեսներն են, ուստի այդ տեղեկությունները՝ արժանահավատ:

Այսպիսով՝ 5-10-րդ դարերի պատմական երկերը կարևոր սկզբնաղբյուր են Վրաստանի ու նրա ժողովրդի մասին, քանի որ տեղեկություններ են պարունակում վրաց իրականության պատմաքաղաքական, կրոնական, մշակութային կյանքի ու կենցաղի, ինչպես նաև հայ-վրացական հարաբերությունների մասին, որոնք ունեցել են կայուն, տևական ու շարունակական բնույթ, ընդգրկել են կյանքի բոլոր բնագավառները և դարերի ընթացքում խորանալով, հասել մեր օրերը՝ որպես երկու հարևան ժողովուրդների միջև հարաբերությունների օրինակելի դրսևորումներ:

Ռուզաննա Հարությունյան

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ (Ե-Է ԴԱՐԵՐ)

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅԻ, ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ³

Եվ հայոց թագավորը (1) (գորք) է ժողովում Կապադովկիայի (2) սահմաններից, Վրաց և Ադվանից ընտիրները՝ որքան որ կային, և Մեծ ու Փոքր Հայքի բոլոր ընտիրները, և ամբողջ զորությամբ դիմում է Մեդագիների կողմերը:

(Խոր., Ա-ԻԹ)⁴

Մենք մեր ականջով լսեցինք, ինչպես այս ոմանք երգում էին փանդիռներով (նվագակցությամբ): Դրանից հետո երգի մեջ ասում էին, թե կովել է (3) վիշապների հետ ու հաղթել, և Հերակլեսի քաջագործություններին շատ նման բաներ էին երգում նրա մասին: Բայց ասում են նաև, թե սա աստվածացված է, և Վրաստանում սրա հասակով արձան կանգնեցրած լինելով՝ պատվում էին զոհերով:

(Խոր., Ա-ԼԱ)

³ Մովսես Խորենացու տեղեկությունների աշխարհաբար թարգմանությունը տե՛ս Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, Եր., 1968:

⁴ Մովսես Խորենացու տեղեկությունների գրաբար բնագիրը տե՛ս «Մատենագիրք Հայոց», հ. Բ, Անթիլիաս, 2003, էջ 1743-2121:

*Թե ինչպես Վաղարշակը Հայոց քաջերին միավորում է և
ռազմական կարգով արշավում մակեդոնացիների
դաշնակիցների վրա*

...Եվ այստեղից, մեր երկրի բոլոր կողմերից /գորքերը/ միաց-
նելով, հասնում է Խաղտիքի (4) սահմանները, որովհետև Ղա-
զիկան (5), Պոնտոսը (6), Փոյուզիան (7), Մաժաքը (8) և ուրիշներ
Արշակի (9) պատերազմների լուրն առած չլինելով՝ հաստատ
բարեկամական դաշինք էին պահում մակեդոնացիների պե-
տության հետ: Ուստի մի ոմն Մորփյուղիկես վերոհիշյալ
կողմերը միաբանելով՝ պատերազմի է պատրաստվում Վաղար-
շակի դեմ: Նրանք իրար հանդիպում են մի բարձրավանդակ
քարագագաթ բլուրի մոտ, որ այժմ կոչվում է Կոլոնիա (10), և
միմյանց մոտ գալով, մեջտեղը երկար ասպարեզներ թողած,
երկու կողմերն ամրանում են ամբողջ օրեր:

(Խոր., Բ-Դ)

*Թե ինչպես Վաղարշակը կարգավորեց մեր երկրի
արևմուտքն ու հյուսիսը*

Եվ այսպես գործելով՝ (Վաղարշակը) կարգավորում է Մա-
ժաքի կողմերը, պոնտացիներին և եգերացիներին, ու դառնում է
դեպի հյուսիս, Պարխար լեռների ստորոտով, Տայքի (11) միջով,
դեպի անտառախիտ, խոնավ, մառախլապատ լոռավետ տեղերը.
գեղեցիկ կերպով կարգավորում է այս երկիրը, նրա լեռնային և
տաք վայրերը փոխադարձաբար բարեխառնելով իր թագավորու-
թյան վայելչության համար, այնտեղ ամառանոցներ պատրաս-
տելով՝ երբ ամառները դեպի հյուսիս գնալու լինի:

(Խոր., Բ-Զ)

Բայց վերջերը, Պարսից թագավորների ժամանակ, ինչպես
լսում եմ, ուրիշ գնդեր են կազմվել ու ոստանի կոչվել: Չգիտեմ.
արդյոք նախկին ցեղի սպառվելո՞ւ պատճառով, թե մի որևէ ընդ-

դիմության պատճառով այդ ցեղը դեն գցելով և նրա տեղ ուրիշ գնդեր նշանակելով՝ արքունի անունով: Բայց առաջինը հաստատ հին թագավորների սերնդից էր, ինչպես և այժմ կան Վրաստանում, որոնք Մեփեծով (12) են կոչվում:

(Խոր., Բ-Է)

Իսկ Շարայի զավակներից Գուշարին ժառանգություն տվեց Մթին լեռը, այսինքն՝ Կանգարքը և Ջավախքի կես մասը, Կողբը, Ծոփը, Ջորը (13) մինչև Հնարակերտ ամրոցը: Բայց Վաղարշակը Աշոցքի (14) տեր և Տաշիրքի (15) սեպուհ է նշանակում Գուշարի զավակներից Հայկազին: Իսկ Կովկաս լեռան դեմ հյուսիսի կուսակալ է նշանակում մեծ ու հզոր ցեղը և նահապետության անունը դնում է Գուգարացիների բդեշխ, որ Դարեհի Միհրդատ նախարարի սերնդից էր, որին Ալեքսանդրը բերելով, իշխան նշանակեց իվերացիների ցեղի գերիների վրա, որոնց բերել էր Նաբուգոդոնոսորը, ինչպես պատմում է Աբյուդենոսը ասելով. «Մեծագոր Նաբուգոդոնոսորը ավելի հզոր էր, քան Հերակլեսը, նա զորք ժողովելով հասնում է լիբիացիների և իվերացիների երկիրը (16) և հաղթահարելով իրեն է ենթարկում և նրանցից մի մասը տանում բնակեցնում է Պոնտոս ծովի աջակողմում»: Իվերիան գտնվում է արևմուտքում՝ աշխարհի եզրում:

(Խոր., Բ-Ը)

Բայց իր Արտաշամա դուստրը կնության է տալիս (17) ոմն Միհրդատի, Վրաց մի մեծ բդեշխի, որ Դարեհի նախարար Միհրդատի զավակներից էր, որին Ալեքսանդրը նշանակել էր իվերացիների գերիների վրա, ինչպես առաջ պատմեցինք, և նրան է վստահում հյուսիսային լեռների և Պոնտոս ծովի կուսակալությունը:

(Խոր., Բ-ԺԱ)

Գաբրիանոսը չի համարձակվում Տիգրանի հետ ընդհարվել և Եփրատի մոտերից դառնում գնում է Եգիպտոս, պատճառ բերելով Պտղոմեոսին: Եվ Տիգրանի հետ գաղտնի հաշտություն կնքելով՝ ետ է տալիս Միհրդատի որդուն՝ պատանի Միհրդատին, որ Տիգրանի քեռորդին էր և որին բռնել էր Պոմպեոսը Մաժաբում, ասելով, թե գաղտնի փախավ:

(Խոր., Բ-ԺԶ)

Այս ժամանակները Տիգրանի մեջ կասկած է ծագում պատանի Միհրդատի մասին, թե իր քեռորդին չէ, ուստի նրան ոչ մի իշխանություն չի տալիս, ոչ իսկ նրա երկիրը՝ Վրաստանը: Միհրդատը արհամարհանք կրելով իր քեռի Տիգրանից ապստամբվում է ու ապավինում է Կեսարին, և նրանից Պերդեքադաքի իշխանությունն ստանալով՝ նրա հրամանով օգնում և աջակցում է Հերովդեսի հորը, Անդիպատրոսին: Սա Մաժաք քաղաքը շենացնում է ավելի ընդարձակ և պայծառ շինություններով և ի պատիվ Կեսարի այն կոչում է Կեսարիա: Այս ժամանակից սկսած այդ քաղաքի վրայից վերանում է Հայոց իշխանությունը:

(Խոր., Բ-ԺԸ)

Իր զորքերից պախարակվելով իր անգործ ծուլության և սաստիկ որկրամոլության պատճառով, մանավանդ որ Անտոնիոսը (18) Միջագետքն առել էր նրանից, գայրացած հրամայում է (19) զորքեր հանել՝ Ատրպատական նահանգի բյուրավորներին, Կովկաս լեռան բնակիչներին աղվանների և վրացիների հետ, շարժվում գնում է Միջագետք և հալածում է հռոմայեցիների զորքերը:

(Խոր., Բ-ԻԲ)

Երվանդին (20) Ուտիք (21) գավառում լուր է հասնում, թե պարսից թագավորը մեծ զորք գումարեց Սմբատի ձեռքի տակ,

որպեսզի քեզ վրա գա և մանուկ Արտաշեսին իր թագավորությունը բերի: Երվանդն այս լսելով՝ այդ տեղում կողմնապահներ է թողնում նախարարներից շատերին և ինքը շտապով գալիս է իր քաղաքը, որպեսզի իր մոտ հավաքի հայոց, վրաց և Կեսարիայի կողմերի զորքերը, նաև Միջագետքինը, խնդրելով ու վարձ վճարելով: Գարնանային օրեր էին, ուստի բոլոր զորքերը շուտով գումարվեցին նրա մոտ. բազմաթիվ զորքերով եկավ նաև Արգամը՝ Մուրացյան ցեղի տանուտերը, որ Աժդահակի սերնդից էր:

(Խոր., Բ-ԽԴ)

Վրաց զորքերը թեպետ իրենց Փարսման թագավորի հետ հանդուգն հարձակում գործելով ընդհարվեցին, բայց շուտով ետ փախան (22):

(Խոր., Բ-ԽԶ)

Այս ժամանակներն ալանները բոլոր լեռնականների հետ միաբանվելով, Վրաստանի կեսն էլ իրենց կողմը քաշելով՝ մեծ բազմությամբ գալիս սփռվում են մեր երկրում: Արտաշեսն էլ ժողովում է իր զորքերի բազմությունը, և տեղի է ունենում պատերազմ երկու քաջ և աղեղնավոր ազգերի միջև: Ալանների ազգը փոքր – ինչ ետ է նահանջում և մեծ Կուր գետն անցնելով՝ հյուսիսային կողմից բանակ է դնում գետի ափին. Արտաշեսն էլ գալով բանակում է գետի հարավային կողմում. գետը բաժանում է նրանց:

(Խոր., Բ-Մ)

Զորքի իշխանությունն էլ չորս մասի է բաժանում (23). արևելյան կողմի զորքը թողնում է Արտավազդին (24), արևմտյանը տալիս է Տիրանին, հարավայինը վստահում է Սմբատին, իսկ հյուսիսայինը՝ Զարեհին: Զարեհը գոռոզ մարդ էր, երեների որսի մեջ խիզախ, բայց պատերազմների մեջ երկչոտ և դանդաղկոտ: Այս

բանը փորձով գիտենալով Վրաց թագավորը՝ մի ոմն Քարձամ, ապստամբեցնում է երկիրը և Զարեհին բռնելով բանտարկում է Կովկասում (25): Բայց Արտավազդն ու Տիրանը Սմբատի հետ նրա դեմ պատերազմելով՝ իրենց եղբորը ետ են դարձնում, տղմից հանելով (26):

(Խոր., Բ-ԾԳ)

Այս կերպով ամբողջ հյուսիսը միաբանելով (27) շատ զորքեր հանելով բանակ է կազմում և դիմում Պարսկաստան Արտաշիրի որդի Շապուհի վրա, իր մարդկանցից չորս զորավար նշանակելով՝ վրաց առաջնորդ Միհրանին, նրան վստահանալով քրիստոնեական հավատի պատճառով, Բագարատ ասպետին, Ռշտունյաց Մանաճիհր նահապետին և Ամատունյաց Վահան նահապետին: Բայց Միհրանի և Վրաստանի հավատալու մասին մենք դեռ պատմելու ենք:

(Խոր., Բ-ՁԵ)

*Երանելի Նունեի մասին, թե ինչպես պատճառ դարձավ
վրացիների քրիստոնյա դառնալուն*

Նունե անունով մի կին, որ սուրբ հռիփսիմյանների ցրված ընկերներից էր, փախչում հասնում է Վրաստան՝ Մծխիթա, որ նրանց նախագահ քաղաքն է: Խիստ ճգնություններով նա բժշկության շնորհք ստացավ, որով շատ ախտավորներ բժշկեց, մինչև իսկ վրաց առաջնորդ Միհրանի կնոջը: Այս առիթով Միհրանը նրան հարցրեց, թե ինչ գործությամբ ես այդ հրաշքները գործում. և նրանից լսեց Քրիստոսի ավետարանի քարոզությունը, և լսածին ախորժելով, գովասանությամբ պատմեց իր նախարարներին: Շուտով նրան լուր հասավ այն հրաշքների մասին, որ Հայաստանում կատարվեցին թագավորի և նախարարների վրա, ինչպես և երանելի Նունեի ընկերների մասին: Այս բաների վրա հիացած՝

նա պատմեց երանելի Նունեին, որից և ավելի ստույգ կերպով ու մանրամասն տեղեկացավ բոլոր բաներին:

Այդ օրերում դեպք եղավ, որ Միհրանը որսի գնաց և մոլորվեց լեռների դժվարանցանելի տեղերում, օղի, բայց ոչ աչքերի խավարելուց, ինչպես որ գրված է. «խոսքով մեզ է բերում» կամ «ցերեկը մթնեցնում գիշեր է դարձնում»: Այսպիսի մի խավար պատեց Միհրանին, որ առիթ դարձավ նրա՝ մշտնջենավոր լույսով լուսավորվելուն, որովհետև նա զարհուրեց, հիշելով Տրդատի մասին լսածը, թե երբ ճանապարհ ընկավ, կամեցավ որսի գնալ՝ ասածուց հարվածներ հասան նրան. նա կարծեց, թե իրեն էլ այդպիսի բան պիտի պատահի: Մեծ երկյուղից պաշարված՝ նա խնդրեց աղոթքով, որ օդը լուսավորվի և ինքը խաղաղ վերադառնա, խոստանալով պաշտել Նունեի աստծուն: Խնդրածը գտնելով՝ ասածը կատարեց:

Իսկ երանելի Նունեն հավատարիմ մարդիկ խնդրելով՝ ուղարկեց ս. Գրիգորի մոտ, թե ի՛նչ կիրամայի այնուհետև անել, որովհետև վրացիները հոժարությամբ ընդունեցին ավետարանի քարոզությունը: Նա հրաման ստացավ կուռքերը կործանել, ինչպես արել էր և ինքը, և կանգնեցնել պատվական խաչի նշանը, մինչև որ աստված հովիվ տա նրանց առաջնորդելու: (Նունեն) իսկույն կործանեց ամպրոպային Արամազդի արձանը, որ քաղաքից հեռու էր դրված և մեծ գետն անցնում էր երկուսի միջով: (Այդ արձանին) սովոր էին երկրպագել առավոտները յուրաքանչյուրն իր տան կտուրից, որովհետև երևում էր նրանց դիմացը, իսկ ով որ կամենար զոհել, անցնում էր գետը և զոհում էր մեհյանի առաջ:

Նրա վրա հարձակվեցին քաղաքի նախարարները, թե ում պիտի երկրպագենք կուռքերի փոխարեն: (Նունեն) ասաց, թե Քրիստոսի խաչի նշանին: (Իսաչ) շինեցին, կանգնեցրին վայելուչ բլուրի վրա, քաղաքի արևելյան կողմում, որ նույնպես բաժանված էր ավելի փոքր գետով: Առավոտը ամբողջ բազմությունը նրան

երկրպագեց, դարձյալ ամեն մեկն իր տան տանիքից: Բայց երբ բլուրը բարձրացան ու տեսան, որ մի տաշած փայտ է, ոչ ճարտար ձեռքի գործ, շատ շատերն արհամարհեցին՝ ասելով, թե այդպիսի փայտով նրանց անտառը լիքն է, և թողին հեռացան: Բայց բարերարն աստված նրանց գայթակղվելը տեսնելով, երկնքից ամպի սյուն իջեցրեց, լեռը լցվեց անուշահոտ բուրմունքով, և լսելի եղավ բազմաթիվ սաղմոսերգուների քաղցր ձայն, և լույս ծագեց խաչի նման, փայտյա խաչի ձևով ու չափով, որ կանգնեց նրա վրա՝ տասներկու աստղով: Ապա բլուրը հավատացին ու երկրպագեցին, և այնուհետև նրանից բժշկական հրաշքներ էին կատարվում:

Իսկ երանելի Նունեն այնտեղից գնաց, որ Վրաստանի մյուս գավառներին էլ քարոզի իր անապական լեզվով շատ հասարակ կերպով շրջելով, առանց ավելորդությունների, աշխարհից և աշխարհային ամեն բանից հրաժարված, ավելի ճիշտ խոսելով՝ խաչվելով, կյանքը դարձնելով մահվան վարժեցնելու միջոց, աստծու խոսքին խոսքով վկա դառնալով և իր հոժարությամբ պսակվելով՝ ինչպես արյունով: Համարձակվում եմ ասել, որ նա առաքելուհի դարձած քարոզեց Կղարջքից (28) սկսած, Ալանաց (29) և Կասբից դոների մոտով մինչև մասքութների (30) սահմանները, ինչպես քեզ պատմում է Ագաթանգեղոսը:

(Խոր., Բ-22)

Բայց ասենք, թե ինչու է կոչվում Մանյա այրք: Որովհետև սուրբ Հռիփսիմյանց ընկերների մեջ կար մի Մանի անունով կին, ինչպես վրացիներին ուսուցանող Նունեն, որ չկարողացավ հասնել և հետևել (ընկերներին), երբ գալիս էին մեզ մոտ, և իմանալով, որ բլուր տեղերն էլ աստծուն են, բնակվեց այս լեռներում քարայրների մեջ, որի պատճառով լեռան անունը կոչվեց Մանյա այրք...

(Խոր., Բ-ՂԱ)

Անտիոքոսն եկավ, Խոսրովին թագավորեցրեց (31) և չորս սպարապետներին հանձնեց զորքի վրա նույն իշխանությունը, որոնց նշանակել էր Տրդատն իր կենդանության ժամանակ, իր դայակ Արտավազդ Մանդակունու մահից հետո, որ միակ սպարապետն էր և հայոց բոլոր (զորքերի) զորավարը: Առաջին՝ Բագարատ ասպետը արևմտյան գնդի զորավար, երկրորդ՝ վրաց առաջնորդ Գուգարքի բղեշխ Միհրանը՝ հյուսիսային զորքի սպարապետ, երրորդ՝ Ամատունյաց նահապետ Վահանը՝ արևելյան գնդի զորավար, չորրորդ՝ Մանաճիհր Ռշտունյաց նահապետը՝ հարավային զորքի սպարապետ: Եվ զորքը բաժանեց, տվեց յուրաքանչյուրին իր բաժինը...

Իսկ ինքը, թողնելով Խոսրով թագավորին,- որովհետև մարմնով փոքր էր, ոսկորներով թույլ և հասակով պատշաճ չէր պատերազմելու,- վերցրեց իր հետ Միհրանին ու Բագարատին իրենց զորքերով ու ամբողջ հունական զորքի հետ միասին դիմեց Սանատրուկի վրա:

(Խոր., Գ-2)

Եվ երբ Շապուհը (32) Հունաստանից ետ էր դառնում, իր սպարապետներից մեկին հայ գնդով ուղարկեց, որ երբ հարմար լինի, Արշակին (33) բռնի, բայց նա խուսափեց նրանից, փախավ Կովկասի կողմերը, վրացիների հետ միանալով:

(Խոր., Գ-ԻԷ)

Բայց Արշակը վրացական գնդով գալով՝ իր մտերիմներից էլ սակավաթիվ զորք է հավաքում և պատերազմ է սկսում այն նախարարների դեմ իր Արշակավան դաստակերտի վրեժն առնելու համար: Նրանք էլ միաբանվելով՝ Կամսարի որդի Ներսեհի առաջնորդությամբ պատերազմով դիմադրում են Արշակին: Տեղի է ունենում սաստիկ կռիվ, որի մեջ յուրաքանչյուր կողմից շատ

մարդիկ են ընկնում, տղամարդ տղամարդի դեմ դուրս գալով, ոչ մեկը չէր կամենում պարտություն կրած լինել:

(Խոր., Գ-ԻԹ)

Մեսրոպը Վրաստան գնալով՝ նրանց համար էլ, իրեն տրված երկնային շնորհով, ստեղծում է նշանագրեր, մի ոմն Ջաղայի հետ, որ հունարեն և հայ լեզուների թարգմանիչ էր. օժանդակություն գտնելով նրանց Բակուր թագավորից և Մովսես եպիսկոպոսից: Ընտրում է երեխաներ, բաժանում է երկու դաս և նրանց համար ուսուցիչներ է թողնում իր աշակերտներից Տեր Խորձենացուն և Մուշե Տարոնացուն:

(Խոր., Գ-ԾԴ)

Այստեղից նրան (34) հրավիրում է գուգարացիների Աշուշա բդեշխը, խնդրելով, որ նույն գործի համար գա իր իշխանության երկիրը, Տաշիրք գավառը: Այնտեղ գնալով՝ նա ավելի լավ և ավելի հիմնավոր կերպով սովորեցրեց, քան մյուս աշակերտածներին: Այս ժամանակ Վրաստանում թագավոր էր նստել մի ոմն Արձիլ:

(Խոր., Գ-Կ)

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Խոսքը վերաբերում է Հայոց Տիգրան թագավորին, որը պատերազմում է Մարաց Ադդահակի դեմ:
2. Կապադովկիան գտնվում էր Մեծ Հայքից արևմուտք և նրանից բաժանվում էր Եփրատ գետով: Պատմական այս երկրամասը հյուսիս-արևելքում սահմանակից էր Փոքր Հայքին:
3. Տեղեկությունը վերաբերում է Հայոց ռազմի աստված Վահագնին:
4. Խաղտիք կոչվում էր Տրապիզոնից հարավ ընկած երկիրը:
5. Ղազիկան (Ղազիկեն) կամ Լազիկան լազերի բնակության երկիրն էր Սև ծովի հարավ - արևելքում, որն այսօր մասամբ գտնվում է Թուրքիայի տարածքում և փոքր մասով՝ Աջարիայում:

6. Պոնտոսն իր հզորության գագաթնակետին է հասել Միհրդատ VI Եվպատորի (Ք.ա. 120-63 թթ.) օրոք: Միհրդատ VI նվաճել է Բոսպորի թագավորությունը, վերահաստատել գերիշխանությունը Պափլագոնիայի և Գաղատիայի վրա, գրավել Փոքր Հայքն ու նրա հյուսիսում և հյուսիս-արևմուտքում ընկած մերձսևծովյան շրջանները:
7. Փոյոզիան գտնվում էր Կապադովկիայից արևմուտք:
8. Մաժաքը հետագայի Կեսարիան է, գտնվում էր Կապադովկիայում: Մինչև Պապ թագավորը այստեղ էին օծվում Հայոց կաթողիկոսները:
9. Սա պարթևական արքայատոհմի Արշակ Մեծ թագավորն է, որը, ըստ Մովսես Խորենացու, իշխել է Ք.ա. 2-րդ դարում և իր եղբայր Վաղարշակին թագավորեցրել Հայաստանում:
10. Կոլոնիան կամ Կողոնիան բնակավայր էր Փոքր Հայքում, Գայլ գետի ափին: Այն նույնացվում է ներկայիս Սվազի վիլայեթի Կոյուկիսար գյուղի հետ, Քելքիտ չայ գետի ափին:
11. Տայքը Մեծ Հայքի թագավորության տասնհինգ աշխարհներից մեկն էր:
12. Ըստ Ստ. Մալխասյանցի «Մեփեծուլ» վրացերեն բառ է. սեփե (թագավոր) և ծուլի (որդի) և նշանակում է արքայորդի, արքայազարմ, Վրաստանի բարձր ազնվական դասակարգը, որը համապատասխանում է հայերեն ոստանիկին: (Տե՛ս Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, Եր., 1968, էջ 342, ծանոթ. 84):
13. Կանգարքը, Վերին Ջավախքը, Կողբը, Ծոփը, Ձորը Մեծ Հայքի թագավորության Գուգարք աշխարհի գավառներից են:
14. Աշոցքը որպես Մեծ Հայքի թագավորության Այրարատ աշխարհի գավառ հիշատակվում է «Աշխարհացույց»-ի համառոտ խմբագրությունում:
15. Տաշիրը Մեծ Հայքի թագավորության Գուգարք աշխարհի գավառներից էր:
16. Աբյուղենոսի՝ «Իվերացիների երկիր» հիշատակությունը վերաբերում է Սպանիայի մի մասին՝ Ջիբրալթարից մինչև Պիրենեյան լեռնաշղթան ընկած տարածքին, որը կոչվում էր Իբերիա կամ Իվերիա: Այս երկիրը գիտի նաև Մովսես Խորենացին, որը նշում է, թե «Իվերիան գտնվում է արևմուտքում՝ աշխարհի ծայրում»:
17. Արտաշաման Հայոց Արտաշես (Ք.ա. 189-160 թթ.) թագավորի դուստրն էր: Հայ-վրացական միջամուսնական կապերի մասին բազմիցս հիշատակում է նաև Լեոնտի Մրովելին (տե՛ս Մելիքսեթ-Բեկ Լ., Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Եր., 2014, էջ 151-165, 168):
18. Սա հռոմեացի զորավար է:

19. Խոսքը վերաբերում է Հայոց թագավոր Արտավազդ Բ-ին (Ք.ա. 55-34 թթ.)՝ Տիգրան Մեծի (Ք.ա. 95-55թթ.) որդուն:
20. Սա Երվանդ Դ Վերջինն է, Երվանդունիների արքայատոհմի վերջին ներկայացուցիչը, որին հաղթելով, Արտաշեսը (189-160 թթ.) հիմք է դնում Արտաշիսյան արքայատոհմին:
21. Ուոլիքն ըստ «Աշխարհացոյց»-ի Մեծ Հայքի թագավորության արևելյան աշխարհներից մեկն է: 5-րդ դ. պատմիչների երկերում երբեմն «գավառ» և «աշխարհ» հասկացությունները նույնացվում են:
22. Տեղեկությունը վերաբերում է Երվանդ Դ Վերջինի և Արտաշեսի միջև մղվող ճակատամարտի նկարագրությանը, ուր վրացիները հանդես էին գալիս Երվանդ թագավորի կողմից:
23. Մովսես Խորենացին այստեղ վկայում է Հայոց Արտաշես թագավորի (189-160 թթ.) կատարած ռազմական բարեփոխումների մասին:
24. Արտավազդը, Տիրանը և Զարեհը Արտաշես արքայի որդիներն են:
25. Արտաշես թագավորի օրոք տեղի ունեցած այս ընդհարման մասին հիշատակում է նաև Լեոնտի Մրովելին: (Տե՛ս Մելիքսեթ-Բեկ Լ., Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, էջ 158-160):
26. Լեոնտի Մրովելին գրում է, որ Արտաշեսի որդի Զարեհին վրաց գերությունից ազատելուց հետո հայերն ու վրացիները հաշտություն կնքեցին. «Վրացիք /վերա/դարձրին թագավորի որդուն, վորը կալանավորված էր, և օգնություն խոստացան՝ այսպես ասելով. «Յեթե յերևան գա վորևե թշնամի և պատերազմի ձեզ հետ, մենք յերկոքյան թագավորներս (վրաց և օս թագավորները- Հ. Ռ.) անձամբ և մեր զորքով ձեզ հետ կլինենք և կոգնենք, իսկ յեթե վորևե մեկի ընդդեմ պատերազմեք, մենք տաս հազար սպառազեններով կոգնենք ձեզ և վրացական այս քաղաքում կկտրենք դրամ Արտաշես թագավորի պատկերով»... և այսուհետև համերաշխ եյին հայերն (սոմեխներն) և վրացիներն ու օսերը, և յերեք (ժողովուրդներն) ել միասին կռվում եյին (ընդհանուր) թշնամու դեմ»: (Տե՛ս Մելիքսեթ-Բեկ Լ., Վրաց աղբյուրները..., էջ 159-160):
27. Այստեղ խոսվում է Հայոց Տրդատ Մեծ (287-330 թթ.) թագավորի գործունեության մասին:
28. Կղարջքը Մեծ Հայքի թագավորության Գուգարք աշխարհի գավառներից էր:
29. Ալանները հյուսիսկովկասյան ցեղեր էին, որոնք հարավ էին շարժվում Ալանաց դռնով:
30. Մասքութները Կուրի ձախ ափին բնակվող ցեղախումբ էին:

31. Տեղեկությունը Անտիոքոսի՝ Մեծ Հայք գալու և Տրդատ Մեծի որդի Խոսրովին թագավորեցնելու մասին է, որը պատմությանը հայտնի է Խոսրով Կոտակ (330-337 թթ.) անունով:
32. Սա Պարսից արքայից արքա Շապուհ Երկարակյացն է (309-379 թթ.):
33. Խոսքը Հայոց Արշակ Բ (350-368 թթ.) թագավորի մասին է:
34. Մինչև Աշուշայի մոտ մեկնելը Մեսրոպ Մաշտոցը գտնվում էր Գարդմանքում, որտեղ նա պայքարում էր աղանդավորների դեմ:

ՓԱՎԱՏՈՍ ԲՈՒԶԱՆԴ, ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ⁵

Հետո Գրիգորիսը (1)՝ նրա ավագ որդին, որ վայելչակազմ, առաքինի անձ էր, հոգևոր արժանիքներով լի և աստվածային գիտության հմուտ, հասավ Վրաց և Աղվանից կողմերի եպիսկոպոսությանը: Նա չամուսնացավ և արդեն տասնհինգ տարեկան հասակում հասավ եպիսկոպոսության աստիճանի Վրաց և Աղվանից աշխարհների վրա, այսինքն՝ Մասքութների սահմանների: Այնտեղ գնալով նա եկեղեցիները նորոգեց լուսավոր կարգերով, առաջին Գրիգորի՝ իր պապի գործերին նմանվելով:

(Բուզ., 3-Ե)⁶

Ինչ վերաբերում է Վրթանեսի որդի Հուսիկի եղբայր Գրիգորիս եպիսկոպոսին, որ Վրաց և Աղվանից կողմերի կաթողիկոսն էր, իր ծառայությանը կանգնելով դեռևս մանուկ հասակում, շինեց և նորոգեց այն կողմերի բոլոր եկեղեցիները, մինչև Ատրպատականի կողմերի գավառները...

Եվ երբ այն կողմերի բոլոր եկեղեցիները կարգի բերեց ու նորոգեց, հասավ մինչև Մասքութների Սանեսան անունով թագավորի բանակի ճամբարը, որովհետև նրանք և Հայոց թագավորները նույն ծագումն ունեին, միևնույն տոհմից էին:

(Բուզ., 3-Զ)

⁵ Փավստոս Բուզանդի տեղեկությունների աշխարհաբար թարգմանությունը տե՛ս Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Եր., 1969:

⁶ Փավստոս Բուզանդի տեղեկությունների գրաբար բնագիրը տե՛ս «Մատենագիրք Հայոց», հ. Ա, Անթիլիաս, 2003, էջ 273-428:

Վրաց մասին

Ապա Մուշեղ սպարապետը (2) գնում է Վրաց աշխարհի վրա, նրան սաստիկ նեղում, ջարդում է, ամբողջ Վրաց աշխարհը նվաճում է, սրի է քաշում բոլոր ազնվականներին և բոլոր նախարարական տոհմերը, որոնց որ գտնում է: Մուշեղ սպարապետը հրամայում է Փառավազյաններին (3) խաչ հանել Վրաց աշխարհում, իսկ Գուգարաց բղեշխին, որ առաջ ծառայում էր Հայոց թագավորին և վերջը ապստամբվել էր, բռնելով գլխատեց և նրա ցեղի արուները կոտորեց, իսկ կանանց և աղջիկներին գերի վերցրին: Եվ առհասարակ բոլոր այն կողմի նախարարներին, որոնք Հայոց թագավորից ապստամբվել էին, գլխատում է, ամբողջ գավառը նորից նվաճում է և պատանդներ առնում. մնացածներին էլ հպատակեցնում է: Եվ գրավելով մինչև հին սահմանը, որ առաջուց գոյություն ունեւ Հայաստանի և Վրաստանի միջև, այսինքն՝ Կուր մեծ գետը, այնտեղից ետ է դառնում:

(Բուլ., 5-ԺԵ)

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Գրիգորիսը Գրիգոր Լուսավորչի թոռն էր, Հայոց Վրթանես կաթողիկոսի ավագ որդին:
2. Երկրի ամբողջականությունը՝ վերականգնելու և ապստամբած նախարարական տոհմերին ճնշելու՝ Մուշեղ սպարապետի գործողությունները տեղի են ունեցել Հայոց թագավոր Պապի (369-375 թթ.) գահակալության տարիներին:
3. Անունը վրացական աղբյուրներում հիշատակվում է «Փառնավագ» կամ «Փառնավազան» ձևով: (Տե՛ս Մելիքսեթ-Բեկ Լ., Վրաց աղբյուրները..., էջ 150-152):

ԿՈՐՅՈՒՆ, ՎԱՐՔ ՄԱՇՏՈՑԻ՜

Դարձյալ՝ մեջտեղում մի ժամանակ անցնելուց հետո՝ Քրիստոսի սիրելին (1) մտածեց հոգ տանել նաև բարբարոսական կողմի համար: Եվ սկսեց տիրոջից իրեն շնորհվածի համեմատ նշանագրեր հորինել վրացերեն լեզվի համար: Գրեց, դասավորեց և օրինավոր կերպով հարդարեց և իր աշակերտներից մի քանի լավագույններին հետն առավ, վեր կացավ գնաց, իջավ, Վրաց կողմերը: Եվ գնաց, ներկայացավ թագավորին, որի անունը Բակուր էր, և աշխարհի եպիսկոպոսին, /անունը՝ Մովսես: Եվ թագավորն ու ազնվականները, բոլոր գավառներով միասին, շատ անսացին նրան ըստ աստվածային օրենքի:

Եվ նա իր արվեստն առաջարկելով՝ խրատեց, հորդորեց նրանց, և այն ժամանակ ամենքն հանձն առան նրա ուզածը կատարել: Եվ վրացերեն լեզվի մի թարգմանիչ գտավ, որ անվանվում էր Ջադա, մի գրագետ և ճշմարտահավատ մարդ. այնուհետև Վրաց արքան հրամայեց իր իշխանության գանազան կողմերից և խառնադանջ գավառներից մանուկներ ժողովել և տալ վարդապետի ձեռքը: (Նա էլ) նրան առավ, ուսման բովի մեջ ձգեց և հոգևոր սիրով ու եռանդով ի բաց քերեց (նրանցից) դների ու սնոտի կուռքերի պաշտամունքի շարավաճոտ աղտն ու ժանգը, այնքան անջատեց հեռացրեց (նրանց) իրենց հայրենի (ավանդու-

⁷ Կորյունի տեղեկությունների աշխարհաբար թարգմանությունը տե՛ս Կորյուն, Վարք Մաշտոցի, Եր., 1941:

թյուններից) և անհիշող դարձրեց, որ մինչև անգամ ասում էին, թե՝ <<Մոռացա իմ ժողովուրդն և իմ հոր տունը>> (2):

Եվ արդ նրանց, որ այնքան առանձին և բաժանված լեզուներից ժողովվեցին, մեկ աստվածային պատգամներով կապեց, դարձրեց մե՛կ ազգ, մե՛կ աստծու փառաբանիչներ: Նրանցից գտնվեցին և եպիսկոպոսական կարգին, վիճակին բարձրացած արժանավորներ, որոնց առաջինը, Սամուել անունով մի սուրբ և բարեպաշտ մարդ, եղավ արքունի տան եպիսկոպոս:

Իսկ երբ Վիրքի բոլոր կողմերում կարգի դրեց աստվածապաշտության գործը, այնուհետև բաժանվելով նրանցից՝ վերադարձավ Հայոց երկիրը և հանդիպելով Հայոց Սահակ կաթողիկոսին՝ պատմեց նրան բոլոր եղելությունների մասին (և) միասին փառավորեցին աստծուն, մեծանուն Քրիստոսին:

(Կոր., ԺԶ)⁸

Այն ժամանակները Վիրքի թագավոր եղավ Արձյուղ անունով (մեկը), որը շատ պայծառացրեց, ծաղկեցրեց ուսումը, և նա (3) շրջեց բոլոր աշակերտների մոտ, պատվիրեց, որ ճշմարտության մեջ մնան:

(Կոր., ԺԹ)

Եվ այսպես՝ Հայաստանի, Վրաստանի (4) և Ադվանքի բոլոր կողմերում իր ամբողջ կյանքի ընթացքում ամառ ու ձմեռ, գիշեր ու ցերեկ, անվեհեր ու առանց երկար հապաղելու, իր իսկ ավետարանական և ողջապատում վարքով (5) ամենափրկիչ Հիսուսի անունը կրեց իր անձի վրա թագավորների, իշխանների ու բոլոր հեթանոսների առաջ և առանց ընդդիմության հակառակորդների կողմից: Եվ ամեն մարդու զարդարեց Քրիստոսի զգեստով և հո-

⁸ Կորյունի աշխատությունից բերված հատվածների գրաքար բնօրինակը տե՛ս «Մատենագիրք Հայոց», հ. Ա, Անթիլիաս, 2003, էջ 229-272:

գեպես, և շատ բանտարկյալներ ու կալանավորներ և նեղյալներ ազատեց՝ Քրիստոսի ահավոր զորությամբ կորզելով նրանց բռնակալների ձեռքից: Եվ շատ անիրավ մուրհակներ պատռեց, և շատ սգավորների ու նեղսրտածների իր մխիթարական վարդապետությամբ ակնկալություն ու հույս տվեց մեծ աստծու, մեր փրկիչ Հիսուս Քրիստոսի փառքի հայտնության ժամանակի համար, և ամենքին ընդհանրապես՝ փոխեց, աստվածապաշտության կարգ ու կանոնի մեջ դրեց:

(Կոր., ԻԲ)

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Այստեղ խոսվում է հայ գրերի ստեղծող Մեսրոպ Մաշտոցի՝ Վիրքում ծավալած մշակութային գործունեության մասին:
2. «Մոռացի՛ր քո ժողովուրդն ու քո հոր տունը» (Մաղմուս, ԽԴ, 11):
3. Խոսքը վերաբերում է Մեսրոպ Մաշտոցին:
4. Այստեղ ևս, կարծում ենք, ճիշտ կլինեն պահպանել գրաբարյան «Հայք» և «Վիրք» անվանաձևերը, քանի որ Հայքն ու Հայաստանը, Վիրքն ու Վրաստանը պատմաաշխարհագրական տարբեր հասկացություններ են:
5. Տեղեկությունը դարձյալ Մեսրոպ Մաշտոցի գործունեության մասին է:

**ԵՂԻՇԵ,
ՎԱՐԴԱՆԻ ԵՎ ՀԱՅՈՑ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍԻՆ՝**

Այս պատճենի համաձայն հրովարտակ (1) հասավ Հայոց, Վրաց և Աղվանից և Լփնաց (2), Ծավդեից (3) և Կորդվաց (4), Աղձնյաց (5) աշխարհները և շատ ուրիշ հեռավոր տեղեր, որոնք առաջ պարտավոր չէին այն ճանապարհը գնալ: Զորք էր ժողովում Մեծ Հայքից ազնվականներին և ազատորդիներին և թագավորական կալվածներից ոստանիկ մարդկանց. նույն օրինակով Վրաց, Աղվանից և Լփնաց աշխարհներից, և հարավի զանազան կողմերից՝ Տաճկաստանի (6) և Հռոմների աշխարհի սահմաններին մոտիկ, և Կորդվաց և Դասն (7) և Ծավդեից և Արզնարգյուն (8) /երկրներից/, որոնք բոլորն էլ հավատում էին մի կաթողիկե առաքելական եկեղեցուն և մկրտված էին:

(Եղ., գլ.1)¹⁰

Այնտեղ՝ Պահ դռան ներսում, արգելեց/ (9) Հայերի, Վրացիների և Աղվանների և այն բոլորի բազմաթիվ հեծելագորը, ովքեր հավատում էին Քրիստոսի սուրբ ավետարանին:

(Եղ., գլ. 2)

Եվ մինչդեռ զորք էին պատրաստում (10), որ նրանց անդարձ օտարություն քշեն, ինչպես քշել էին Վրաց աշխարհի բազմաթիվ

⁹ Եղիշեի տեղեկությունների աշխարհաբար թարգմանությունը տե՛ս Եղիշե, Վարդանի և Հայոց պատերազմի մասին, Եր., 1989:

¹⁰ Եղիշեի տեղեկությունների գրաբար բնագիրը տե՛ս «Մատենագիրք Հայոց», հ. Ա, Անթիլիաս, 2003, էջ 521-754:

նախարարների, հենց այդ ժամանակ գուժկան հասավ Քուշանների կողմերից, թե թշնամիներից մի գունդ անջատվեց ու արքունի շատ գավառներ ավերեց:

(Եղ., գլ. 2)

Որովհետև առհասարակ հրաման էին առել (11) արքունիքից մտնել ինչպես Հայոց, այնպես էլ Վրաց և Աղվանից և Լփնաց, Աղձնյաց և Կորդվաց և Ծավդեից և Դասն աշխարհները, և դարձյալ ուր որ գանազան տեղեր Պարսից իշխանության մեջ ծածուկ պաշտում էին քրիստոնեությունը:

(Եղ., գլ. 2)

Երկրորդ գունդը տվին Հայոց Վարդան զորավարի ձեռքը (12), որ անցնի Վրաց սահմանից Ճորա մարզպանի վրա, որ եկել էր Աղվանից եկեղեցիներն ավերելու:

(Եղ., գլ. 3)

Իսկ նա (13), երբ լսեց Վասակից այս բոլոր խրախուսանքները և ստուգելով համոզվեց, որ Հայոց սպարապետը սակավաթիվ գնդով է գալիս նրա վրա, այլևս չմնաց Ճորա կողմերում, այլ հավաքեց իր ամբողջ բազմաթիվ զորքը և շտապով անցավ Կուր անունով մեծ գետը և հանդիպեց նրան Վրաց սահմաններին մոտիկ Խաղխաղ (14) քաղաքի հանդեպ, որ Աղվանների թագավորների ձմեռոցն էր:

(Եղ., գլ. 3)

Եվ երբ այս բոլոր չարիքները հաջողվեցին նրան (15), քանդեց նաև Վրաց աշխարհի միաբանությունը Հայերից, Աղվանիցն էլ չթողեց առաջ շարժվել, նույն ձևով ետ պահեց նաև Աղձնյաց երկիրը:

(Եղ., գլ. 4)

Այսպես էր վարվում նաև աշխարհի բոլոր ամուր կողմերում, Տմորիքում (16) և Կորդվաց աշխարհում, Արցախում և Ադվանքում, Վիրքում (17) և Խաղտյաց աշխարհում (18). Մարդիկ էր ուղարկում (19), պնդացնում էր, որ ո՛չ ոք նրանց հյուրընկալության արժանի չհամարի:

Եվ նրա մեծ չարության համաձայն էլ առավելապես ժամանակը հաջողեցրեց նրա գործերը, որովհետև Հայոց գորքին դրսից ոչ մի օգնող չեղավ, բացի այն հոներից, որոնց հետ խոսք էին կապել: Սակայն նրանց դեմ էլ հավաքեց Արյաց բազմաթիվ հեծելազորը, արգելեց և փակեց նրա ելքի ճանապարհը, որովհետև նա ամեննին հանգիստ չէր տալիս Պարսից թագավորին, այլ ուղարկում-կանչում էր բազմաթիվ զորքեր ճորա պահակը, հավաքում էր այնտեղ Վրաց աշխարհի ամբողջ զորքը, ինչպես և Լփնաց և Ճղբաց զորքերը...

(Եղ., գլ.4)

Որովհետև ցույց տվին այն թղթերը (20), որ Վասակը և բոլոր նրա հետ եղածները տվել էին, թե նրա հետ միաբան են ապրատամբության ուխտի մեջ. մի թուղթ Վրաց աշխարհը և մի թուղթ Ադվանից աշխարհը, նույնպես և Ադանիք գրած մի թուղթ և մի գրություն Հունաց թագավորին և մի թուղթ էլ Անտիոքի մեծ սպարապետին:

(Եղ., գլ. 6)

Դրա՛ն հավատացիք Վրաց երկիրը (21), հարցրեք այդ երկրին՝ արդյոք գոհ են դրանից:

(Եղ., գլ. 6)

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Այդ հրովարտական իիշյալ երկրների այրուծին կանչվում էր Ապար աշխարհը՝ Քուշանների տերության դեմ կռվելու համար:
2. Լփնաց աշխարհը Բ. Հարությունյանը տեղադրում է Աղվանքից հարավ, Կուր գետի ձախ ափին: Պարսից արքայից արքա Հազկերտ Բ-ի (439-457 թթ.) օրոք Լփինքը գտնվում էր Պարսից տիրապետության ներքո:
3. Աղբյուրներում հիշատակվում է երկու Ծավդեք: Այս Ծավդեքից աշխարհը գտնվում էր Մեծ Հայքի թագավորությունից հարավ՝ Կորդուքի հարևանությամբ:
4. Կորդուքը Մեծ Հայքի թագավորության Կորճայք աշխարհի գավառներից էր: Հազկերտ Բ-ի օրոք այն գտնվում էր Մարգապանական Հայաստանի սահմաններից դուրս և ենթարկվում էր Պարսից արքունիքին:
5. Աղձնիքը Մեծ Հայքի թագավորության տասնհինգ աշխարհներից էր: 387 թ. Մեծ Հայքի բաժանումից հետո երկիրը թուլացնելու նպատակով Պարսից արքունիքը Մեծ Հայքի սահմանամերձ աշխարհները, այդ թվում Աղձնիքը, վարչականորեն անջատեց Հայքից: 449-450 թթ. Աղձնիքը որպես առանձին վարչական միավոր է հիշատակվում Պարսից պետության կազմում:
6. Տաճկաստան ասելով՝ 5-րդ դարի պատմիչները նկատի ունենին արաբական երկիրը, իսկ տաճիկներ ասելով՝ արաբներին:
7. Դասն երկիրը տեղադրվում է Ծավդեքի հարևանությամբ, Կորճայքից հարավ:
8. Արզնարզյուն անունը բխեցվում է Աղձնիք աշխարհի Արզն գավառանունից, որը տեղադրվում էր Արևմտյան Տիգրիս գետի ձախ ափին, Կորդուքի հետ սահմանակցությամբ:
9. Խոսքը վերաբերում է Պարսից արքայից արքա Հազկերտ Բ-ին (439-457 թթ.):
10. Պարսիկներն էին զորք պատրաստում, որ հայ նախարարներին անդարձ օտարություն ուղարկեն:
11. Պարսից արքունիքից հրաման էին ստացել պարսիկ մոզերը, որոնք Տիգրոնից վերադարձող հայ նախարարների հետ գալիս էին՝ նշված երկրներում քրիստոնեությունն արմատախիլ անելու և կրակապաշտություն տարածելու նպատակով:

12. Պարսից արքունիքի դեմ ապստամբելով՝ հայ նախարարներն իրենց զորքը բաժանեցին երեք մասի, որի մի մասը հանձնվեց Վարդան Մամիկոնյանին:
13. Նա ճորա մարզպան Սեբուխտն էր:
14. Խաղխաղը գտնվում էր Մեծ Հայքի թագավորության Ուտիք աշխարհում և եղել է Հայոց արքաների ձմեռոցը մինչև Ուտիք աշխարհի՝ Մեծ Հայքից բաժանվելն ու Աղվանքին միացվելը:
15. Խոսքը վերաբերում է Հայոց մարզպան Վասակ Սյունեցուն, որը հրաժարվել էր ապստամբության ուխտից:
16. Մովսես Խորենացին նույնացնում է Տնորիքն ու Կորդրիքը, որը թույլ է տալիս Տնորիքը փնտրել Կորճայք աշխարհում: Այն տեղադրվում է Կորդվաց գավառի հարևանությամբ, հայ – պարսկական սահմանի մոտ:
17. Հավատարիմ մնալով բնագրին՝ մենք պահպանել ենք Վիրք անվանաձևը, քանի որ Վիրք և Վրաստան տեղանունները պատմական տարբեր ժամանակների արտահայտություն են:
18. Խաղտյաց աշխարհը կամ Խաղտիքը գտնվում է Հայոց Տայք աշխարհից հյուսիս-արևմուտք: Երկիրը բազմիցս է ապաստան եղել հայ նախարարների և ապստամբ ուժերի համար:
19. Խոսքը Վասակ Սյունեցու գործողությունների մասին է:
20. Նյութը վերաբերում է Ավարայրի ճակատամարտից հետո Պարսից արքունիքում կայացած ատյանին, ուր հայ նախարարները կատարվածի ամբողջ մեղքը բարդում են Վասակ Սյունեցու վրա:
21. Պարսից ատյանում հայ նախարարները վկայում են, որ Վասակ Սյունեցուն վստահվել է նաև Վրաց մարզպանի պաշտոնը, որը նրա՝ նախքան Հայոց մարզպան նշանակվելը պետք է լիներ:

**ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑԻ,
ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԹՈՒՂԹ ՎԱՀԱՆ
ՄԱՍԻԿՈՆՅԱՆԻՆ¹¹**

Նա (1) ամփոփված է Հաղամակերտում (2) մի մատուռի մեջ, իսկ հիշատակը սուրբ նահատակների անունների հետ մինչև այսօր հիշվում է և հավիտյան պիտի հիշվի Հայոց աշխարհի, ինչպես նաև Վրաց ու Աղվանից եկեղեցիներում (3):

(Փարպ., Դ)¹²

Արդ, քանի աշխարհներ են, որոնց դուք եք իշխում (4) աստվածաբար և որոնց կամենաք կկոտորեք, կամենաք կապրեցնեք: Նախ և առաջ Հայոց աշխարհը, որ անհրաժեշտ է ու օգտակար: Նրա հետ էլ Վրաց աշխարհն ու Աղվանքը...

...Իսկ երբ Հայքը սերտորեն մերը լինի, Վիրքն ու Աղվանքը կլինեն անպայման:

(Փարպ., ԻԱ)

Եվ երբ դուք մեզ պես մեր ճշմարիտ հավատին լինեք, Վիրքն ու Աղվանքը չեն համարձակվի մեր ու ձեր կամքից հեռանալ (5):

(Փարպ., ԻԲ)

¹¹ Ղազար Փարպեցու տեղեկությունների աշխարհաբար թարգմանությունը տե՛ս Ղազար Փարպեցի, Հայոց պատմություն և Թուղթ Վահան Մամիկոնյանին, Եր., 1982:

¹² Ղազար Փարպեցու տեղեկությունների գրաբար բնագիրը տե՛ս «Մատենագիրք Հայոց», հ. Բ, Անթիլիաս, 2003, էջ 2201-2394:

Եվ Հագկերտ արքան, երբ այս ամենը (6) լսեց մոգերից ու արքունիքի բոլոր մեծամեծներից, կատաղի զայրացած հրաման տվեց շտապ հրովարտակներ ուղարկել Հայոց, Վրաց և Աղվանից աշխարհները: Եվ կարգադրեց հրովարտակների մեջ գրել, որ այդ երեք աշխարհների բոլոր տանուտերներն ու ավագ սեպուհները փութով ու անպատճառ գան արքունիք: «Եվ ով որ,- ասում էր,- ծուլանալով հապաղի, առանց որևէ զիջումի, կդատապարտվի մահվան»: Այս հրովարտակը հասավ երեք աշխարհները՝ Հայոց, Վրաց և Աղվանից: Ընթերցվեցին բոլորի առջև: Եվ երբ լսեցին ամենքի՝ այսպիսի ստիպմամբ, փութով արքունիք կանչվելը, իսկույն հասկացան, որ ոչ թե խաղաղության, այլ մարդկանց կորստյան համար է այդ հարկադրական հրավերը: Վշտացած աղմկեցին ու հոգով ապավինեցին Աստծո օգնականությանը:

Այնուհետև երեք աշխարհները միմյանց մոտ պատգամավորություն ուղարկեցին, ուխտ դրեցին ու հաստատեցին՝ Ավետարանի վրա խիստ երդվելով: Մտածում էին, թե չգնալը կհամարվի ապստամբություն, իսկ գնալու շուրջն էլ վիճելով տարակուսում էին: Վերջապես գնալը լավագույն էլք համարելով՝ գործի վախճանի համար Աստծուն կանչեցին օգնական: Բայց իրենց մտքերը, խոսքերը և խորհուրդները, սուրբ Ավետարանի միջնորդությամբ, իրար միջև անքակտելի ու աներկբայելի հաստատեցին: Ասացին՝ <<Այո՛, գնում ենք, սակայն չենք համաձայնի ուրանալ երկնի ու երկրի Արարչին...>>:

Եվ, այսպես, ուխտով ու երդմամբ միաբանված երեք աշխարհները՝ Հայքը, Վիրքն ու Աղվանքը, գնացին արքունիք:

Եվ Հայոց մեծամեծներից նրանք, որ այն ժամանակ ճանապարհ ընկած գնացին, սրանք են...

Իսկ Վրաց աշխարհից Աշուշա բդեշխը և աշխարհի այլ տանուտերներ:

(Փարպ., ԻԵ)

Այս ամենքը, հասնելով արքունիք, նախ հանդիպեցին արքունի դրան մեծամեծներին, ապա Հազկերտ թագավորին: Եվ Պարսից արքա Հազկերտը հրաման տվեց, որ առավոտյան իր մոտ պալատում լինեն արքունի բոլոր մեծամեծները երևելի մոգերով հանդերձ: Եվ թագավորի ասածներն առավոտյան կատարվեցին:

Ապա հրամայեց, որ Հայքից, Վիրքից և Աղվանքից եկածներին իր մոտ բերեն...

Հազկերտ արքան... նրանց ասաց. «...Հա՛նձն առեք ու դարձե՛ք կորստյան ճանապարհից, որի վրա մինչ այժմ շրջում էիք, ինչպես կույրը խավարի մեջ: Իսկ եթե ուրիշ կերպ մտածեք և ինչ մտքի ու մոլար օրենքների մեջ մինչև հիմա մնացել եք, նրանցում համառեք դուք՝ Հայք, Վիրք, Աղվանք, ապա ոչինչ կհամարեմ ձեզնից ստացած այնքան օգուտներն ու վաստակները և կանանցով, որդիներով ու ազգով բնաջինջ կանեմ»:

Երեք աշխարհների ազատները լսեցին պատվի, խոստումների ու մահվան սպառնալիքի բոլոր այս խոսքերը Պարսից թագավոր Հազկերտից և մի պահ լռեցին...

Եվ երեք աշխարհների՝ Հայքի, Վիրքի ու Աղվանքի ազատները լսելով Հայոց սպարապետ Վարդանի աներկյուղ պատասխաններն ու տեսնելով թագավորի սաստիկ ջղային դեմքը, պատասխան տվին, ասացին. «Թող արքան մեզ ների, որպեսզի իրար հետ խորհենք մի քանի օր և հետո ձեզ հաստատ պատասխան տանք միաբանությամբ, քանի որ այդ պատասխանը մեզանից պահանջվում է այնպիսի ընտրության համար, որի առաջ կա հոգիների փրկություն կամ հավիտենական կորուստ: Եվ կարիք չկա ստիպմամբ կամ անքնին մտքով ձեզ տալ այդքան մեծ խնդրի պատասխանը, քանզի պահանջում եք մեր նախնի, հայրենի սովորական ավանդության քակտումը և բռնությամբ ստիպում հանձն առնել օրենքներ, որոնք մենք կամ մեր հայրերը ո՛չ ընդունել ենք, ո՛չ էլ սիրել:

Թագավորն ու իր ամբողջ ավագանին հավանեցին այդ խոսքերը, նրանց ժամանակ տվին խորհելու և ատյանն արձակեցին:

(Փարպ., ԻԶ)

Այն ժամանակ երեք երկրների՝ Հայքի, Վիրքի և Աղվանքի նախարարները մի տեղ հավաքված, տարակուսանքի մեջ էին իրենց անձերի վրա և խորհուրդ էին անում, թե ինչպիսի՝ հնարքով ու մտածողությամբ պիտի ելք գտնեն այդ վիճակից: Եվ մի քանի օր խնդրի շուրջ հուզված շատ միտք անելով՝ կանգ առան այս մտքի վրա. «Այլևս ոչ մի հնար չկա ելնելու այս որոգայթից, որ չար սատանայի որսորդն է լարել ու մեզ բռնել, բացի նրանից, որ միառժամանակ պատճառաբանություններով հանձն առնենք նրանց կարգադրությունը և գնալով մեր աշխարհները, այնուհետև կամ ապրենք՝ ծառայելով Քրիստոսի ճշմարիտ հավատին..., կամ էլ թողնելով մեր աշխարհները, օտարության գնանք կանանցով ու որդիներով... Հետո էլ, եթե միայն մեր անձանց փրկության մասին մտածենք, ընդդիմանանք աշխարհի անօրեն հրամաններին, պատճառ կդառնանք անթիվ տղամարդկանց ու կանանց, ծերերի ու մանուկների բազմությունների հավիտենական կորստին. նրանց այստեղ քշելով՝ բոլորին սերնդե-սերունդ կծառայեցնեն անօրեն պաշտամունքներին»:

...Եվ նրանք՝ բոլոր նախարարներն ու սեպուհները, որ հավաքված էին արքունիքում, միտք անելով այս ամենի մասին, միաբանված եկան Մամիկոնեից տեր ու Հայոց գորավար Վարդանի մոտ ու նրան հայտնելով միաձայն արած խորհուրդը, պատմեցին իրենց ամենայն դիտավորությունները, կատարելիքի մասին մտածումները, նրան էլ գումարած իրենց բոլորի աղաչանք-պաղատանքը: «Նայի՛ր հանգիստ մտքով,- ասացին,- տե՛ս առաջիկայում բյուր մարդկանց պատահելիք չարաչար աղետները, հիշի՛ր մայրերի հառաչանքները, մտքի՛դ բեր մանուկների ողբ ու կոծը, ծերերին ու պառավներին բռնությամբ օտարություն

քշելը և այլ այսպիսի անհնարին ու չար վշտերը, որ պատահելու են բոլորին... Եվ ոչ թե լոկ հարևանցի է լինելու մեզ հասած այս վտանգի վախճանը, այլ խավար ամբարշտությունը թանձրամած քողով ծածկելու է մեր սուրբ եկեղեցիները և ժողովուրդներին, կանանց ու երեխաներին՝ հավիտենից հավիտյան: Եվ եթե դու, միաբանելով մեր խորհրդին, կարողանաս միաժամանակ քո մտքերը համաձայնեցնել, գիտենք, որ բոլորս ողորմածության կարժանանանք, ինչպես և երեք աշխարհներիս ընդհանուր եկեղեցիներն ավերի չեն ենթարկվի, և մեր բովանդակ աշխարհների բնակիչները չեն քշվի գերության: Սուրբ հավատը հիմքից չի շարժվում երբեք, իսկ թե առժամանակ երբեա էլ, ապա վերստին հաստատորեն կկանգնի, և հաստատողն էլ կլինի Ամենակալի աջը: Եվ սա հաստատ այսպես կլինի, եթե կարողանաս մեզ համար մի քիչ հիվանդանալ, որպեսզի ամենագթառատ բժիշկ Բանն Աստված առողջացնի մեզ՝ քեզանով հանդերձ»:

Եվ Հայոց գորավար ու Մամիկոնեից տեր Վարդանը, Հայոց, Վրաց ու Աղվանից նախարարներից լսելով այս բոլոր խոսքերը, ամենևին հանձն չառավ համաձայնել ասածներին, կամ էլ՝ նույնիսկ կցորդ լինել այսպիսի խորհրդին, այլ սաստիկ վրդովված, բարձրաձայն գոչելով՝ ամենքին ասաց. «Չի կարող պատահել, որ ես խաբեմ իմ արարչին՝ պատճառաբանություններով կամ ճշմարտությամբ, և անօրեն ու մահկանացու ազգի առաջ չեմ ուրանա նրան, որ պետք է ուրանա իրեն ուրացողներին՝ Հոր և սուրբ հրեշտակների առաջ: Քա՛վ լիցի, որ ես մտածելով կարիքների ու վշտերի, կնոջ ու որդիների և ազգի մասին, մոռացության տամ այն, որ ասում է, «Ով որ կնոջն ու որդիներին սիրում է առավել, քան ինձ, արժանի չէ ինձ» (7): Իսկ դուք՝ երեք աշխարհներից եկած տանուտերներդ ու սեպուհներդ, որ Քրիստոսի ողորմության շնորհիվ լի եք ամենայն գորությամբ ու քաջությամբ, քանի որ իբրև ազատներ բարձրացել եք ամեն տեսակ հրահանգներով և երևելի եք ճանաչվում սպաների կողմից ու բոլոր ազգերի մեջ՝

թե՛ մարտերում և թե՛ քաջության կոիվներում: Իսկ Աստծո ճշմարիտ ու արդար հավատը սովորել էք առաքելաճանաչման հովիվ, սուրբ նահատակ Գրիգորից ու նրա ժառանգներից: Ձեզնից յուրաքանչյուրը կարող է իր անձի կողմից պատասխան տալ, և ինչպես մտածում եք, այնպես էլ կարող եք անել: Բայց ձեզնից ոչ ոք թող ինձ չասի այն, ինչ անհնար է խոսքով լսել, ուր մնաց թե գործով կատարեմ»:

Եվ երեք աշխարհների նախարարները, Հայոց զորավար ու Մամիկոնեից տեր Վարդանից լսելով այս բոլոր խոսքերը, թեպետ և ընկան անասելի տրտմության մեջ ու վրդովվեցին, սակայն չթուլացան ու չհրաժարվեցին իրենց առաջարկությունից, քանզի չէին մոռանում վտանգը և ունեին մաղթանքների ուրիշ ձևեր ևս: Եվ մի տեղ հավաքվելով՝ իրենց մոտ կանչեցին Մոկաց իշխան Արտակին ու նրան առավել շտապեցնելով, խնդրեցին՝ անձանձրույթ խանդաղատանքով նստել ու խոսել իրենց սպարապետ և Մամիկոնեից տոհմի տեր Վարդանի հետ: Այդ Արտակը համեստ, խելոք ու քաջ տղամարդ էր, և Մամիկոնեից տեր Վարդանն էլ մեծ պատվով սիրում էր նրան: Մոկաց տերը հավանեց Հայոց նախարարների խնդիրքը, հանձն առավ ամենահորդոր ջանադրությամբ խոսել նրա հետ, հարաժամ աղաչել... Այսպես էլ արեց Մոկաց իշխան Արտակը. մերթ առանձին, մերթ Հայոց ավագանու հետ միասին, ըստ իր հանձնառության, շատ օրեր, գիշեր ու ցերեկ չէր դադարում նրա հետ նույն բանի մասին խոսելուց, աղերսագին խնդրելուց: Բոլորին նույն խորհրդի համար ստիպում ու հորդորում էր նաև Վրաց Աշուշա բղեշխը, որը խելացի և բանիմաց մարդ էր և որի կինն էլ Արծրունյաց տոհմից էր ու Մամիկոնեից մեծ սեպուհի՝ Վարդանի եղբոր քենին էր: Այս Աշուշան ավելի շատ էր հորդորում Հայոց նախարարների ամբողջ բազմությանն ու Մոկաց տեր Արտակին՝ Հայոց զորավար Վարդանի հետ այս ամենի մասին խոսել առանց հապաղելու: Եվ հենց ինքն էլ նույնն էր խոսում նրա հետ՝ անձանձիր աղաչելով և ստեպ-ստեպ

հիշեցնելով այն հանգամանքը, թե իր (Վարդանի) չհամաձայնելն ինչպիսի կորուստ կպատճառի երեք աշխարհներին, իսկ համաձայնելն ու հանձն առնելն էլ կրեբեն փրկություն մարդկանց ու ակնկալություն իր անձի ապաշխարության:

Երեք աշխարհների նախարարներն ու սեպուհները, տեսնելով, որ Հայոց սպարապետ Վարդանի կամքն անշարժ է և նա իրենց խոսքերի ու աղաչանքների հորդորները չի ընդունում, հարկադրված եղան այնուհետև նրան պատմել սուրբ գրքի այն առակները, որոնք հարմար էին գալիս նույն ժամանակին... Ասում էին. «Դու էլ հանձն առ մեզ համար լինել խայտառակ ու նգովյալ: Հո դու Քրիստոսի սուրբ առաքյալ Պողոսից ավելի մեծ չես կամ արդար հավատին առավել նախանձախնդիր: Բայց Հայոց, Վրաց և Աղվանից ժողովուրդներն ավելի շատ են, քան խաչ հանող հրեից ժողովուրդը»:

Եվ երբ երեք աշխարհների ավագ տանուտերերն ու սեպուհները Հայոց գորավար Վարդանի առաջ դրին այսպիսի բազում խոսքեր ու թախանձագին աղաչանքներ, հետո էլ բերեցին սուրբ Ավետարանը և բոլորը ձեռքները նրա վրա դնելով երդվեցին, ասելով՝ »Եթե դու միառժամանակ կարողանաս պատճառաբանություններով հանձն առնել թագավորի ասածները և մեզ ազատես որոգայթադիր թշնամու հարձակումներից, քո ամենայն ասածները կլսենք և կկատարենք՝ մեր անձերը դնելով սրբության ուխտի վրա և մեր արյունը հեղելով ամբողջ աշխարհի փրկության համար: Եվ եթե պատահի, որ մենք թողնենք աշխարհն ու ամենայն ստացվածքները և փախչենք օտարություն, ապա դա կընտրենք կանանցով ու որդիներով հանդերձ և սիրով հանձն կառնենք աղքատությունն ու մուրացկանությունը: Միայն թե այս բարկությունից ազատվենք: Եվ ով որ այս խոսքերից թերանալով՝ խաբի այս ուխտին և նենգությամբ հեռանա սուրբ Ավետարանի վրա տված երդումից ու այս բազմության միաբանությունից, թող նա բաժանվի – հեռանա, ինչպես Հուդան, որ պոկվեց – հեռացավ

սուրբ առաքյալների գնդից, և այսպիսինի բաժինը, առանց ապաշխարության ու թողության, թող նրա /Հուդայի/ հետ լինի՝ մատնված անշեշ բոցին, որ Աստված է պատրաստել սատանայի ու նրա արքայականների համար: Իսկ ինչ վնասներ կամ գերություններ և երկրաշարժեր այս երեք աշխարհներին հասնեն, այդպիսի անձից ու նրա գործակիցներից վրեժխնդիր Աստվածը թող հավիտյան պահանջի: Իսկ բարի ու օգտակար պահպանությունը, որ երեք աշխարհների բազում հոգիներից պիտի պարգևի փրկիչ Քրիստոսը՝ մեզ հետ առժամանակ համաձայնելու շնորհիվ, թող այն էլ մնա ժառանգություն՝ ի փրկություն քո ոգու թողության և քո տոհմի՝ հավիտենից – հավիտյան»:

Լսելով այս բոլոր խոսքերը երեք աշխարհների ազատներից և տեսնելով բոլորի սարսազողու երդումով կնքված միաբանության Ավետարանը, որի առաջ ուխտեցին և ավանդեցին կնքով, ինքը՝ Հայոց զորավար ու Մամիկոնեից տեր Վարդանն էլ արտասովալից հանձն առավ պատճառաբանությամբ առժամանակ վիրավորվել հանուն երեք աշխարհների և նրանց տղամարդկանց ու կանանց:

(Փարպ., ԻԷ)

Այսպես բոլորը միաբանված հանձն առան թագավորի հրամանը կատարել կեղծ ուրացությամբ և, գնալով մոխրանոցի տունը, նրանց կեսը, ո՛չ բոլորը, ցույց տվեց, պատճառաբանությամբ և ոչ ճշմարտությամբ, երկրպագություն սնոտի պաշտամունքին: Իսկ ոմանք, թեպետ գիտեին անկասեցնելի գլորումը, տենչալով աշխարհիս փառքերին՝ անկեղծ Աստծո փառքը փոխեցին աշխարհիս եղծանելի ու անցավոր կյանքի հետ: Եվ այս տեսնելով Պարսից թագավորը և արքունի բոլոր մեծամեծներն ու մոգերը անհուն խնդությամբ տեսակ – տեսակ նվերներ էին մատուցում իրենց աստվածներին: Այնօր մեծ ուրախության խրախճանք կատարեցին հաշվելով, որ դրանով անշարժ հաստատվեց իրենց թագավորությունը, այնուհետև կարող են ապրել խաղաղու-

թյամբ, առանց երկյուղելու բոլոր թշնամիներից: Եվ երեք աշխարհների՝ Հայոց, Վրաց և Ադվանքի տանուտերներին և սեպուհներին թագավորական հանդերձներ հագցնելով զարդարեցին, այլև տեսակ-տեսակ ուրիշ բազմաթիվ պարզևներով ու պատիվներով, գյուղերով ու ագարակներով՝ յուրաքանչյուրին որքան որ պետք էր՝ հարստացրին ամենքին: Ապա նրանց հրաժեշտի պատրաստելով՝ շտապեցրին, որ յուրաքանչյուրը շուտ հասնի իր աշխարհը: Նրանց հետ էլ դնելով սուտ վարդապետների մի բազմություն, որ մոգեր են կոչվում, հորդորում էին սովորել այն ծիծաղելի փչոցների ուսմունքը և քիթումառութով քրթմնջալու լեզուն, որ ավելի չէր, քան օձահմանների ու որովայնախոսների մրմռոցը: Պատվիրեցին երեք աշխարհներում խաբեության դպրոցներ բացել և բոլոր բնակիչներին՝ տղամարդկանց և կանանց, սովորեցնել մոգերի ուսմունքը:

Նրանք համաձայնեցին և հանձն առան իրենց հետ տանել մոգերի բազմությունը: Ապա գնացին հրաժեշտ տալու թագավոր Հազկերտին ու արքունի դրան մեծամեծ ավագանուն: Ժամանակավոր ուրացածներից յուրաքանչյուրն իր իմացածի ու կարեցածի չափ սուտ գովեստներ ու կեղծ շնորհակալություններ էր մատուցում թագավորին, Արյաց ամենայն ավագանուն, մանավանդ չարաթույն Միհրներսեհին: Եվ յուրաքանչյուրի մտքի մեջ էլ շնորհակալության պատճառն այս էր. «Բոլոր թագավորները, որ ձեզնից առաջ կային այդ գահի վրա և ձեր նախնիներն էին, սիրում էին մեզ և հոգում էին մեր երջանկության ու մարմնավոր օգուտների մասին: Բայց դուք մեր նկատմամբ ցույց տվիք առավել մեծ սեր, քանի որ մտածեցիք ծանոթացնել նաև հավիտենական կյանքին և այն պարզևել մեզ: Եվ եթե ձեր նախնիներին ծառայել էինք ամենայն հոժարությամբ և ամենայն տեղ՝ ուր որ մեզ հրամայեցին, ապա պարտավոր ենք ծառայություն մատուցել ոչ թե յուրաքանչյուրը մեկ անձի տեղ, այլ որպես բազմաթիվ անձեր մեկ անձի մեջ, և պետք է գիշեր ու ցերեկ անձանձիր հպատակ-

վենք մեր օգուտի մասին հոգացող թագավորությանդ, քանի որ փութացիր հոգալ նաև մեր մոլորյալ ոգու փրկության համար»...

Ապա երեք աշխարհների՝ Հայքի, Վիրքի և Աղվանքի նախարարները, հրաժեշտ տալով և իրենց հետ առած մոզերի բազմության խմբերը, յուրաքանչյուրն իր աշխարհը դարձավ, ճանապարհին էլ բազում անգամ հաստատելով սուրբ Ավետարանի վրա տրված նույն ուխտը: Բաժանվելով նաև միմյանցից՝ յուրաքանչյուրն իր աշխարհը գնաց, խոստանալով ժամանակին իրար հայտնել, Աստծո հրամանի համաձայն, այն գործերի մասին, որ ծրագրեցին կատարել: Սակայն Պարսից Հազկերտ արքան Վրաց Աշուշա բղեշխին, Սյունյաց իշխան Վասակի երկու զավակներին՝ Բաբիկին ու Ատրներսեհին, չարձակեց Հայոց մյուս նախարարների հետ, առաջիկա գործերի անորոշությունը նկատի առնելով՝ նա կասկածով զգուշանում էր:

(Փարպ., ԻԸ)

Եվ չնայած նեղված էր (8) չգնալով, այլև կամովին իրեն արգելելով, առժամանակ տանում էր վիճակը, հոգալով ընկերների պետքերը, ինչպես իր տան ու անձի համար, մանավանդ Վրաց բղեշխ Աշուշայի և Սյունյաց իշխան Վասակի որդիների, որոնց պատանդ պահեց այնտեղ՝ իր պալատում Հազկերտ թագավորը Պարսից:

(Փարպ., ԼԱ)

...Իսկ թե կայսրն (9) ուրիշ կերպ մտածի և իր օգուտը չճանաչի, ապա ես (10), որ մինչ Վրաց մարզպան էի (11) ու Աղվանից դուռն իմ ձեռքին էր, Հոնաց բազում զորապետներ ինձ հետ բարեկամացել էին ուխտով ու երդմամբ:

(Փարպ., ԽԵ)

Հազվերտ թագավորի տասնյոթերորդ տարում Վիրքի Աշուշա իշխանն արքունի դրանն ավագներին աղաչեց՝ բազում ու անհամար նվերներ տալով յուրաքանչյուրին, մանավանդ բոլորից շատ՝ անօրեն հազարապետ Միհրներսեհին, որպեսզի մեծ ջանքերով ու սաստիկ աշխատությամբ կարողանա համաձայնեցնել միջնորդելու Հազվերտ թագավորի առաջ, որ նա իրենց պարզևի Մամիկոնյան տոհմի երանելի նահատակ Հմայակի որդիներին, որոնց որպես մահապարտների, Սյունյաց նենգավոր իշխան Վասակը խլել էր դայակներից, տարել արքունիք, որպեսզի այնտեղ սպանվեն, երբ դեռ շատ էին փոքր: Մարդասեր աստվածը, նրանց հայրերի սուրբ արյան բարեխոսությամբ փափկացրեց թագավորի սիրտը՝ և սա կատարեց բոլորին անհավատալիորեն մեծ թվացող խնդիրքը, պարզևեց Աշուշային՝ իբրև շատ սիրելի ու վաստակավոր մարդու:

Աշուշան տեսնելով այսքանը և թագավորից մեծ պարզևն ընդունելով, վեր կացավ և պալատում ամենքի առաջ ընկավ հատակին, թավալվեց այս ու այն կողմ և ապա սկսեց գլուխը գետնին զարկել. այսպես երկրպագություն էր կատարում: Եվ թագավորն ու մյուս բոլորը տեսան այս ու մեծապես զարմացան, թե մարդն ինչ էր անում: Թագավորը նրան հարց տվեց. «Վրաց Բդեշխ, այդ ինչ տեսակ նոր գործ էր, որ դու այսօր ցույց տվիր մեզ»: Եվ Աշուշան պատասխանելով ասաց. «Բարերա՛ր արքա,, դուք ինձ նոր այնպիսի պարզև շնորհեցիք, որպիսին ձեր ծառա ընկերակիցներիցս ոչ ոք չէր ստացել ձեզանից, և ես էլ պարտավոր էի ձեզ երկրպագել մի այնպիսի երկրպագությամբ, որպիսին երբեք տեսած չլիներ ձեր որևէ ուրիշ ծառայից»:

Թագավորն ու ավագների ամբողջ բազմությունը, Աշուշայից լսելով այս խոսքերը, նրան հույժ գովեցին ու մեծապես զարմացան:

/Փարպ., ԾԹ/

...Սուրբ Վարդանի եղբայր ու նահատակ Հմայակ Մամիկոնյանի կինը, որն իր մտավոր արժանիքներով ամբողջ Հայաստան աշխարհի բոլոր կանանց մեջ եղավ առավել բարձրն ու անվանին, իր որդիներին դաստիարակեց ու խրատեց Վրաց աշխարհում, Վրաց բղեշխ Աշուշայի տանը, որովհետև ինչպես առաջուց էինք գրել, Հմայակի այդ որդիներին Վրաց Աշուշա բղեշխը խնդրել էր Պարսից արքա Հազկերտից և բերել հանձնել էր իրենց մորը, որի անունն էր Չվիկ, քանզի Չվիկի քույրն էլ, որի անունն էր Անուշվոռ, կնության էր տրված Վրաց Աշուշա բղեշխին:

(Փարպ., ԿԲ)

Եվ մինչդեռ Վահանն այսպիսի հուզումնալից տարակուսանքի մեջ էր (12), Վրաց աշխարհում հանկարծակի խռովալից հուզումներ եղան: Վախթանգն (13) անօրեն բղեշխ Վազգենին սպանեց Պերոզ արքայի քսանհինգերորդ տարում: Այդ լսեցին Հայոց աշխարհի մարդիկ, որոնցից շատերն այդ տարի Աղվանքում էին գտնվում, կովում էին ապստամբ բերդաբնակների հետ (14), և բոլոր նրանց գորագլուխն էր Զարմիր Հազարավուխտը: Եվ Հայոց աշխարհում էլ Ատրվշնասպ Յոզմանդյանն էր մարգալան: Իսկ քրիստոնյա հայ մարդիկ, որ այն տարի այնտեղ կռվի մեջ էին, ավելի շատ վիրավորվում ու մաշվում էին ուրացությամբ այն ժամանակ անբարեհաճ դարձած Հայոց ետին իշխանների արհամարհանքներից ու նախանձությունից, քան թե պարսիկ գորագլուխների բռնի գործողություններից: Եվ նրանք այն ժամանակ, երբ իմացան Վրաց արքայի ապստամբության մասին, ուրախալից սրտով երջանկացան: Որովհետև նրանց լուր էր հասել, թե Վրաց արքան ասում է. «Ես ոչ ոքի թույլ չեմ տա, որ կռիվ տեսնի, այլ այնքան հոնաց գորքեր կհանեմ, որ պարսից գորքերը չկարողանան դիմադրել»: Այս լուրով գորացած քրիստոսասերներն ականկալում էին իրենց անձերի օգուտը... Սակայն վախենում էին,

թե միգուցե պարսից գորագլուխները հայոց գորքերը հավաքեն և արքունիք տանեն:

Բայց Քրիստոսը նրանց այդպիսի տարակարծություններից ազատեց, և նրանք եկան Հայք (15): Հասնելով Շիրակ գավառի (16) այն դաշտը, ուր բանակել էր Հայքի մարզպան Ատրվշնասպ Յոզմանդյանը, և նրա մոտ Հայքի հազարապետ Վեհվեհնամն էր գտնվում,- այստեղ Հայոց նախարարներից մի քանիսն իրենց մեջ խորհուրդ արին: Նրանք գիտեին, որ վաղուց ի վեր Վահան Մամիկոնյանը տրտմության ու տարակուսանքների մեջ է կեղծ մոգության պատճառով, և ասացին. «Մեր և նրա փրկության համար շատ պատեհ է այս ժամը: Նա կապրի իր խղճմտանքով, և մենք էլ կազատվենք անվերջանալի կասկածանքներից և հարածամ տանջանքներից, որոնց ծառայում ենք հոգեմաշ վրեժխնդրությամբ: Վրաց այդ արքան քաջ է: Ով գիտե, գուցե և բազումոգորմ Աստվածը մեզ տեսնի վտանգի մեջ և օգնության հասնի: Եվ մենք էլ Վրաց հետ միասին, թերևս կարողանանք մի քիչ նեղը գցել պարսիկներին»: Այսպես խորհեցին հայ նախարարներից մի քանիսը, որ քիչ էին և նրանց խորհուրդը լսելի եղավ նաև ուրիշներին...

Այնուհետև համարձակները մի գիշերում իրենց մտածածը հայտնեցին Վահան Մամիկոնյանին, որը լսելուց հետո ամենքին ասաց. «...Բայց միաբանել այն խորհուրդին, որ դուք եք մտածել, և ձեզ ասել, թե լավ է ձեր խորհուրդը, իրականացրեք այն, ես չեմ կարող ասել և չեմ համարձակվում, որովհետև քաջ գիտեմ Արյաց ուժն ու հանդգնությունը և հոռոմների թուլությունն ու խաբեությունը... Իսկ Վրաց արքայի ու Հոնաց գորքերի մասին որ ասում եք, Վիրքն առանձին վերցրած թույլ երկիր է՝ սակավամարդ այրուձիով: Բայց հոները, ով իմանա, կհամաձայնեն գալ թե ոչ. նրանք մեջտեղ չկան և չեն էլ երևում»:

(Փարպ., ԿԶ)

Իսկ հայ ամբարիշտ նախարարներից ոմանք Հայոց մարգպան Ատրվշնասպին խրատ տալով ասացին. «Վրաց թագավորն ապստամբել է և կամենում է հոներին բերել, սակայն դեռ չի բերել: Հայերը դարձյալ կայսեր մոտ են մարդ հղել, գորք խնդրելու, Բայց մեջտեղ դեռ ոչինչ չի երևում: Իրենք էլ դեռևս կազմ ու պատրաստ չեն՝ ինչպես պետք է...»:

(Փարպ., ԿԷ)

Նրանք (17) շուտափույթ կերպով դեսպան ուղարկեցին Վրաց Վախթանգ թագավորի մոտ, որպեսզի նա, իր խոստման համաձայն, հոն գորք տա իրենց: Սա էլ ժամավաճառ խոսքերով ձգձգում էր իր անելիքը, և հետո էլ ինչ – որ մի երեք հարյուր հոն հավաքեց և ուղարկեց Հայք: Եվ ձմեռվանից մեկ ամիս չանցած ինչ – որ պատճառաբանությամբ փութով նրանց վերստին իր մոտ կանչեց: Եվ Հայոց աշխարհին օգնական մնաց Քրիստոսի գործությունը, որին ապավինել էին հույսով, իսկ մարդկանցից ոչ ոք չկար, որ օգներ նրանց:

(Փարպ., Հ)

Այնուհետև եկան (18), հասան Ծաղկետուն գավառը (19) և ցանկացան մի քիչ հանգստանալ Վարշակի կոչված ջերմուկի (20) մոտ, երբ Վրաց թագավոր Վախթանգից դեսպանը լուր բերեց, թե «Վրաց երկիրը մեծ գորք է եկել, և ես, տեսնելով, որ չեմ կարող դիմակայել, խույս եմ տվել Վրաց սահմանակից Հայոց լեռները և այստեղ եմ մնում»: Դեսպանը Վախթանգից ուներ նաև խաբեական նամակ, որի մեջ գրած էր, թե հրաման եմ տվել, որ հոնաց գորքը գա, դեռ չի եկել: Բայց մինչև դուք գաք, նրանք էլ կհասնեն, և այնուհետև դուք, մենք ու հոները նրանց կոչնչացնենք: Սակայն ինձ թվում է, թե երբ հոները հասնեն, մենք անելու բան էլ չենք ունենա. նրանք են գործն ավարտելու, քանի որ հրաման եմ տվել, որ անհամար բազմություն գա»:

Եվ քանի որ Ավետարանով ու խաչով տված երդում ունեին Վրաց Վախթանգ թագավորի հետ, Հայոց գորավար Վահան Մամիկոնյանը, բոլոր ավագ տանուտերներն ու սեպուհները, Հայոց ամբողջ զորքով անհապաղ հասան Վրաց թագավորի մոտ և բանակելով Կանգարք գավառի (21) մի վայրում, սակավ ինչ հանգստացան: Այստեղ Վրաց թագավոր Վախթանգը կեղծ ու խաբեական խոսքերով մոլորեցում էր Հայոց գորավար Վահան Մամիկոնյանի ու Հայոց մյուս տանուտերների մտքերը՝ մերթ ասելով, թե «Միհրանը ձեր գալու մասին լսելով՝ խույս տվեց Վրաց սահմաններից, Աղվանք փախավ երկյուղից», մեկ էլ թե. «Երկու օրից հոնաց զորքերը կհասնեն»: Ժամադիր խաբեության երկու օրն էլ անցավ, երրորդն էլ, չորրորդ օրվան ձգեց պայմանադրությունը, նրանից հետո էլ՝ վեցերորդին, յոթերորդին: Հետո էլ Վրաց և Հայոց զորքերից խուզարկու մարդիկ ուղարկեց: Երբ սրանք էլ իջել էին ինչ – որ դաշտավայրային տեղեր, այնտեղ էլ ցույց տվեց շատ կրակների լույսեր ու զինված մարդկանց նմանվող ծառակոճղեր՝ Ալեքսանդր Մակեդոնացու խաբեության նման (22): Հետո էլ ասում էր. «Հոնաց զորքերը մեզ մոտ այս լեռները չեն գալիս, այլ ասում են՝ այստեղ, դաշտում մեզ ցույց տուր հայերին, որպեսզի հավատանք քո ամեն խոսքին, որ ասել ես մեզ ու երդվել»: Այնուհետև իբր ասել են,- Ինչ որ մեզ հրամայես, կկատարենք, ապա թե ոչ, չենք հավատում, թե հայերը քեզ հետ միաբան են: Իսկ որ դա արդարև տեսնենք, հետո պարսիկներին մեզ թողեցեք, դուք այլևս գործ չունեք: - Այսքանից հետո էլ Վրաց թագավորն ավելացրեց, - Արդ եթե դուք դաշտը չիջնեք, իսկ հոնաց զորքն էլ, ինձ չհավատալով, դաշտավայրից դեպի վեր ոչ մի տեղ չշարժվի, և Միհրանն էլ վերադառնա ու Վիրքն ավերի, ձեր գալուց ինձ ինչ օգուտ»:

Եվ Հայոց զորքը, որ ուխտադիր էր Վրաց թագավորի հետ, սուտ թե ճշմարիտ նրա բոլոր ասածները ջանում էր կատարել՝ Ավետարանին տված երդման երկյուղից: Եվ թեպետ ժամանակը

տոթ էր, ստիպված էին իջնել Ճարմանայնու դաշտը (23): Հայոց իշխաններից ոմանք հաջող բան չէին համարում իրենց Վիրք իջնելը, և թեկուզ այս մասին շատ անգամ ասացին, քանի որ իրենց հավատացողներ չկային, իրենք էլ ստիպված եղան լռել: Հայոց զորքն իջավ Վիրք, բանակեց նախահիշյալ տեղում, և երեք թե չորս օր էլ չանցած Միհրանը եկավ, հասավ ու բանակ դրեց Հայոց զորքին դեմ–հանդիման, Կուր անունով գետի մյուս ափին: Հայոց բանակը տեղափոխվեց պարսից բանակից հեռու մի այլ տեղ և օթևաններ դրեց: Եվ Հայոց զորքից շատերը, մոռացած Աստծո ուխտի ահը, ոտնահարելով Ավետարանի ահավոր երդումը, այն գիշեր գաղտնի պատգամագնացությամբ խոսեցին Պարսից զորքերի մեջ գտնվող իրենց սիրելիների հետ, թե «Մենք Հայոց զորավար Վահանի բռնությամբ և ոչ թե մեր սրտի կամքով ենք ընկել այս վիճակի մեջ: Բայց մեր մտքերն ու ցանկությունները ձեզ հետ են: Եվ գիտենք, որ ձեր հպատակությունից դուրս չենք գալու, այլ մեր անձերի վրա մինչև այսօր մեղքեր ենք բարդել՝ ի վնաս մեզ: Բայց հիմա դո՛ւք գիտեք. թե որ մեր այս բանը երբեք չէք հիշի և մեզ ներողություն կշնորհեք, առավոտյան, երբ գանք կովի վայրը, մենք էլ ինքներս ու մեզ հետ էլ շատերին վերցրած՝ կփախչենք բանակից»: Եվ նրանք իրենց այս խոսքերը հաստատեցին՝ պարսիկների ուխտի երդում ընդունելով:

Հաջորդ օրը պատերազմի դաշտ հասնելով՝ այնժամ Վրաց արքան խոսեց Հայոց զորավար Վահանի և Հայոց ուրիշ տանուտերների ու սեպուհների հետ, ասաց. «Լավ եղավ, որ մենք այսօր ենք կովում պարսից զորքերի դեմ, քանզի հենց մենք էլ բավական ենք սրանց, չեն դիմանա մեր առաջ: Իսկ եթե այսօր էլ մենք ուշացնեինք, հոները գալու էին, և հաղթական անունն ու ավարի օգուտն իրենք էին տանելու»:

Եվ մինչև այս ժամն էլ ձգձգելով՝ նա խաբում էր կեղծ խոսքերով:

(Փարպ., ՀԳ)

Վրաց արքայի սուտ ու անպիտան խոսքերից վրդովված էր Հայոց զորավար Վահան Մամիկոնյանը: Ծանոթանալով նաև Հայոց զորքի թուլությանը, լքածներին ու մեղկացածներին, որոնք բոլորովին նման չէին ուրիշ ժամանակների եռանդուն ու հոժարակամ զորականներին, այնուամենայնիվ Վահան Մամիկոնյանը հայոց զորագնդերը կազմեց ու պատրաստվեց ըստ պատերազմի օրենքի: Եվ աջ թևը տալով Բարշղ Վահևունու ու Սատոն Գաբեղինու ձեռքը, իսկ ձախ թևը՝ Վրաց արքա Վախթանգին հանձնելով, կենտրոնական մասն ինքը վերցրեց՝ երանելի Արշավիրի երեք որդիների և Գնունյաց երանելի տիրոջ հետ միասին: Եվ երանելի ասպետ Սահակին ու Սյունյաց Բաբգենին էլ իր ու Բարշղի արանքում կանգնեցրեց:

Կռիվը դեռ չէր սկսվել, մինչդեռ պարսից և հայոց կողմերը կանգնած էին ճակատ ճակատի, միմյանց դեմ – հանդիման, և նրանք, որ այնօր ընդունելու էին նահատակության պսակը, Վերին զորությունը նրանց ցույց տվեց, և նրանք մտքի աչքերով, նահատակությունից առաջ, հայտնապես տեսան իրենց դեմքերի անծածուկ ահագնափոխությունը: Բնական մահկանացու տեսքից փոխվեցին, ընդունեցին վերին զորությունների՝ հրեշտակների կերպարանքը: Մանավանդ Հայոց զորավար Վահանի եղբոր՝ քաջարի Վասակ Մամիկոնյանի դեմքը, որ փառավորվեց Աստծո լուսապսակով, և սրբի շատ ընկեր – նիզակակիցներ, նայելով նրա փայլակնացայտ դեմքին, - որ նման էր մեծ մարգարե Մովսեսի փառավորված դեմքին, - չէին հագնում դիտելուց: Եվ նրա մեծ եղբայրը՝ Հայոց զորավար Վահանն էլ տեսավ այդ ու սաստիկ զարհուրած՝ անմիջապես հասկացավ, որ սա իրենից ու այս զագրելի կյանքից հեռացել, գնում է հրեշտակների բանակը, և հենց այսպիսին է այն բանակի զորականների տեսքն ու կերպարանքը:

Հայերն ու պարսիկները հարձակվեցին միմյանց վրա: Հայոց զորավար Վահանը և Կամսարական երեք եղբայրները միասին հարձակվելով իրենց թևի թշնամիների վրա՝ ցանուցիր արեցին,

փախուստի մատնեցին պարսից զորքերից շատերին, քշեցին–անցկացրին Կուր գետի մյուս կողմը և պարսից զորական երևելի մարդկանցից շատ շատերին էլ քաջաբար կոտորեցին: Այնտեղ Մամիկոնեից քաջ սեպուհ Վասակը նիզակով ուժգնորեն զարկեց մի հզոր տղամարդու և տապալեց, բայց և հանկարծակի կոտորեց իր նիզակը: Քաջ Վասակ Մամիկոնյանը մի ուրիշ նիզակ փնտրեց և գտնելով՝ այնտեղից շտապ վերադարձավ ուրախությամբ: Եվ հետո հանդիպելով Շիրակի տեր Ներսեհ Կամսարականին, որը նոր էր կոտրել իր նիզակը և ուրիշն էր փնտրում, քաջ Մամիկոնյան Վասակը ձայնը զգած կանչեց. «Շտապի՛ր նիզակ գտնել, Ներսե՛հ, և արագ դարձիր, ե՛կ, քանզի էլ երբեք չենք կարողանա այսպիսի սքանչելի վաճառի ժամ գտնել, երբ մահն անմահություն է պարգևում, ժամանակավորը՝ հավիտենություն, ապականացուն՝ անապական կյանք: Շտապի՛ր, քանզի չենք ապրելու հավիտենաբար, և չլինի, թե անունից ու փառավոր վախճանից վրիպելով՝ անանուն ու անպիտան մահվամբ այս կյանքից հեռանանք»: Այս ամբողջը հենց իրենից՝ սուրբ այր Վասակ Մամիկոնյանից լսած լինելով, հավաստի երդումով քանի՛ անգամ մեզ պատմել է ինքը՝ Շիրակի տեր Ներսեհ Կամսարականը:

Մինչդեռ Հայոց զորավար Վահան Մամիկոնյանն իր երանելի եղբայր Վասակի ու Արշավիր Կամսարականի երկու որդիների հետ այսպես ճակատում էր, Հայոց և Վրաց բոլոր գնդերը հանկարծ միանգամից ետ դարձան ու դիմեցին փախուստի: Ընդ որում նենգավորներից շատերն էլ իրար կանչելով, անհանգիստ աղաղակում էին, թե «Հայերը փախա՛ն, ձեզ փրկեցե՛ք»: Եվ որովհետև վերին ամենագեթի զուգակշռող աջը իր ծածուկ ու անքնին կանխատեսությամբ մարտիրոսական բախտ է շնորհում ոչ թե փութաջանության ու ջերմեռանդության համար,՝ ապա Հայոց քաջ զորավար Վահան Մամիկոնյանը և նրա ուխտապահ մյուս ընկերները, որ ախորժելով տենչում էին մարտիրոսության բա-

Ժակն ըմպել, սակայն չեղան արժանի՝ այնուհետև իրենց երիվարների սանձերը դարձնելով՝ իրենք էլ հետևեցին հայոց փախստականներին: Հայոց զորավար Վահան Մամիկոնյանը եկավ – հասավ պարսիկներից ծանր վիրավորված Բաբգեն Սյունիին, որին նստեցնելով իր նծույզի վրա, պատերազմից հանեց ու փրկեց կյանքը:

Իսկ նրանք, որ տենչում էին մարտիրոսության և սուրբ ապետ Սահակի ու սուրբ քաջ Վասակ Մամիկոնյանի հետ միասին արժանացան ու նահատակվեցին այնօր, այս են անունները... (24):

Իսկ Հայոց ամբողջ զորքերը, որոնց հետ և Վրաց անպիտան զորքը՝ իրենց Վախթանգ թագավորով հանդերձ, ցրվելով սպառվեցին: Նրանց հետապնդելով՝ պարսից զնդերը շատերին կոտորեցին, շատ – շատերն էլ այլևայլ տեղեր փախչելով փրկվեցին:

Բայց Հրահատ Կամսարականի ձին ուժեղ վազքի ժամանակ նրան վայր գցեց, և քանի որ հետիոտն էր մնացել, պարսիկները հասան ու բռնելով տարան Միհրանի մոտ: Միհրանը նրան տեսնելով շատ ուրախացավ. խիստ խոսքերով տանջում էր նրան և կապոտել տվեց ու կարգադրեց պահել զգուշությամբ: Հետո Հայոց աշխարհում ուր էլ գնար, տանում էր իր հետ: Նրա հետ բռնված էին նաև Սյունյաց մի սեպուհ՝ Յագդ անունով, և մի քանի ուրիշները Վրաց աշխարհից:

(Փարպ., ՀԴ)

Հայոց զորավար Վահան Մամիկոնյանը ճանապարհ ընկավ, եկավ – հասավ Այրարատ գավառը և Վաղարշապատ քաղաքում, իր ուխտապահ նախարարների ու Հայոց զորքի հետ միասին, պատարագների ուխտ կատարեց Աստծո տանը և նահատակված կույսերի վկայարաններում...

Մինչդեռ նրանք ցանկանում էին մի քիչ հանգստանալ կրած տառապանքներից և ոգի առնել, հանկարծ Վրաց կողմերից եկան

դիվոտած ու խելացնոր մարդիկ, որոնք ուստանում Հայոց զորավար Վահանի մոտ նրա զորքերին մոլորեցնելու և երկպառակության մղելու նպատակով սկսեցին սուտ խոսքեր ասել, պատմել խաբեական տեսիլքներ, որ չէին տեսել: Բոլորի առաջ նրանք ասում էին, թե «Ողջ ու կենդանի են սքանչելի ասպետ Սահակն ու քաջ սեպուհ Վասակ Մամիկոնյանը: Նրանք մեզ ուղարկել են ձեզ մոտ, որ ասենք, թե «Երբ դուք փախաք Վրաց կովից, մենք, ծանր վիրավոր, մնացինք կռվատեղում, Աստծո ազդեցությամբ, մեր մարմինների վրա եղած սաստիկ վերքերի ցավը հաղթահարելով, մերթ սողալով, մերթ մեզ քարշ տալով՝ հասանք իրար մոտ և գլորվելով ընկանք դժնիկների խիստ թանձր թփերի մեջ: Եվ Աստծո ցուցումով մեր վրա հսկում էր հոգևոր մի քահանա մարդ Տեղաց անապատից: Նա նույն ժամին մեկ – մեկ մեզ շալակելով տարավ այնտեղից, պարսկական մի հրասախի չափ հեռացրեց՝ դեռ չիմանալով, թե ով ենք մենք կամ որ գավառից, այլ իր առաքինությունից դրդված, որպես մարդկանց, որոնք վերքեր էին ստացել Աստծո համար: Նա կամենում էր մեզ պահել կամ երբ վախճանվեինք, մեր ոսկորները մի տեղ ամփոփել՝ հոգուտ իր տենչացող հոգու: Ապա այն մարդն այդ տեղից էլ մեզ հեռացնելով մի ապահով վայր, ինքը նոր միայն հանգստացավ: Այնուհետև գնաց իր կացարանը և, հետո առնելով մի տղայի, մեզ համար բերեց հասարակ կերակուր և ջուր: Բերածները մեզ մատուցելով՝ աղաչում էր, որ ճաշակենք: Եվ սրբի ձեռքից առնելով, մեր կարողության չափ ընդունեցինք կերակուրը, մի քիչ զորացանք: Եվ նա տեսնելով, որ արդեն ուշքի գալով՝ աչքներս բաց ենք արել, այնուհետև սկսեց մեզ հարցնել, թե որտեղացի ենք կամ որ գավառից: «Քանզի ձևերից ու կերպարանքներից ազատ մարդիկ եք երևում,- ասաց նա: Եվ այն մարդու առաքինությունը տեսնելով՝ մենք, ստույգը պատմելով մեր մասին, ասացինք անուններս: Իսկ նա լսելով՝ փառք տվեց Աստծուն, ապա այն տղային մեզ մոտ թողնելով, գնաց իր կացարանը: Իսկ մյուս գիշերը գրաստ բերե-

ցին, մի ուրիշ տղայի հետ, մեզ գրաստի վրա բարձրացրին և երեքով մեզ օգնելով, տաքան այն անապատը, ուր իրենք էին բնակվում: Թաքցրեց մեզ այնտեղ, իր մոտ պահեց շատ օրեր ու բժշկեց, և մենք առողջացանք Աստծո գործությամբ: Եվ ինչպես հակառակորդ դևի սովորությունն է՝ աստվածատյաց մարդկանց ականջներին փսփսալ, նրանց հորդորով սկսեցին անձանձրույթ փնտրել մեզ, որսացին և կամենում էին սպանել և պարսիկերից փառքի ու պատվի արժանանալ: Այս սուրբ վանականը բազում անապատ վայրերում և խորածորների քարանձավներում է մեզ ծածուկ պտտեցրել: Բայց վախենում է բերել ձեզ մոտ: Մտածում է, որ կարող են հետքերը քննելով գտնել մեզ և սպանել: Ուրեմն, արդ, փութացեք այդտեղից ուղարկել մի մեծ գունդ՝ հավատարիմ զորագլխով, որ մեզ տանեն ձեզ մոտ, որպեսզի, հասնելով ձեզ, միասին վրեժխնդիր լինենք մեր ճշմարիտ հավատի համար...

Վիրքից եկած դիվահար մարդկանց այս բոլոր խոսքերը, հայ մարդկանցից շատերի ցանկությունն ու հավանությունը, առավել ևս կանանց անդադրում շտապեցնելն ու անհամբերությունը, որ բոցի պես վառվում էին նրանց խորհուրդների մեջ, և ոչ ոք չէր կարողանում հանգցել, - այս բոլորը լսեց ամենախմաստուն ու զգայուն Հայոց զորավար Վահան Մամիկոնյանը և ասաց. «Դրանք չարախորհուրդ մարդկանց խոսքեր ու խորհուրդներ են, իրենք էլ իրենց էությամբ՝ չարախնդիր: Նրանք իմացել են, որ գարնանը պարսից զորքեր են գալու Հայոց երկիրը, մտածել են, թե ահա այսպես կարող ենք պառակտում զցել ուստանում եղած հայկական զորքի մեջ և ցրել այս ու այնտեղ, ապա թե Պարսկաստանից մի փոքր գունդ զորք էլ գա, կկարողանա ձերբակալելով ոչնչացնել նրանց: Իսկ թե խոսքերս հակառակ չթվային, ես թույլ չէի տա, որ այն աշխարհակործան մարդիկ ողջ - ողջ գնային մեր Հայոց աշխարհից...»:

Այնժամ հավատալով անխոհական ու թեթևամիտ մարդկանց, մանավանդ նահատակվածների կանանց, նրանց տանեցի-

ներին ու դայակներին՝ Մամիկոնեից սեպուհ Մուշեղին, մի մեծ այրընտիր գնդով, այն շողոքորթ ու խաբեբա մարդկանց հետ ուղարկեցին անօգուտ գործի՝ մի ճանապարհով, որը չգիտեին: Եվ խաբեբաները նրանց տարան Վրաց երկիրը, սկսեցին ման ածել սատանայի ետևից, որի արբանյակներն էին իրենք: Եվ կեղծ ու խաբեբայական շատ պատճառներ իրար կարկատելով՝ նրանք ասում էին. «Սպանողներից փախչելով՝ թաքստոցներում էին պահվում՝ փոխելով այլևայլ քարանձավների խորխորատներն ու բարձր լեռների ծառախիտ կատարները»: Եվ այսպես խելքահան արած՝ բազում օրեր ման էին ածում Մամիկոնեից սեպուհ Մուշեղին ու նրա հետ գտնվող գնդին, մինչև որ ավարտվեցին ձմեռային սառնամանիքների հողմաշունչ ու ցուրտ օրերը:

(Փարպ., ՀԷ)

Եկավ գարնանային ծաղկանոցների բուրումնալից հովի, մերկ չքավորների երագած ավետավոր ջերմության ժամանակը: Նրա հետ էլ հանկարծակի եկավ, Հայոց աշխարհը հասավ Զառմիհր Հազարավուխտը՝ պարսիկ անհամար ու ընտիր զորքով: Շուտափույթ անց կացավ Երասխ գետի կամուրջը և այն օրն էլ բանակ դրեց Արտաշատ կոչված գյուղաքաղաքում: Հայոց աշխարհի ուխտանենգների հաղորդած վստահելի տեղեկությամբ նա գիտեր, որ Հայոց զորքի կեսը Վիրք է գնացել, և Հայոց սպարապետ Վահան Մամիկոնյանը լոկ մի խումբ նախարարներով ու սակավաթիվ այրուձիով է գտնվում ոստանի մեջ:

(Փարպ., ՀԸ)

Հազարավուխտը կարգադրեց երկու Կամսարականների կանանց պահել ըստ քրիստոնյաների օրենքների, ինչպես ինքը հաստատ գիտեր լսածներից՝ պահել սրբությամբ և ամենայն զգուշությամբ: Իսկ ինքը Ողաքից իջավ Բաայան գավառը (25) և բանակեց Դու կոչված գյուղի մոտ, որ Աղբերականց կամ Արծաթ-

աղբերք դաշտում (26) էր գտնվում: Այնտեղ մի օր մնաց, և արքունիքից դեսպան եկավ հրովարտական, որի մեջ Պերոզ թագավորը նրան գրով տեղեկացնում էր, թե ամբողջ Արյաց ուժով դիմում է Հեփթաղների (27) վրա և նրան հրամայում էր գնալ Վիրք, Վրաց թագավոր Վախթանգին կամ բռնել, կամ սպանել, կամ էլ վռնդել իր աշխարհից, իսկ Միհրան տոհմից (28) Շապուհին իր գորքով մարզպան թողնել Հայոց աշխարհում:

(Փարպ., ՀԹ)

Հրովարտակն (29) ստանալով և ունկնդրելով թագավորի հրամանը՝ Հազարավուխտն այնտեղ թողեց Շապուհին՝ պարսիկ այրուձիով ու ընտիր գնդով, նրա հետ էլ՝ Սյունյաց տեր Գդիհունին՝ Սյունյաց բոլոր գավառների գորքով, և ինքը փութով գնաց Վիրք: Այնտեղ հասնելով՝ իր մոտ հավաքեց ուխտանենգներին, որոնք դավաճանելով Վախթանգ թագավորին և կեղծելով երդումն Ավետարանի վրա, գալիս էին Հազարավուխտի մոտ: Նրա շուրջը հավաքվեցին նաև նրանք, որոնք արքայից արքայի հետ միաբան էին: Եվ Հազարավուխտը մեկին թագավորություն խոստացավ, մյուսին՝ գահ, պատիվ ու բազում պարգև, մյուսներից յուրաքանչյուրին էլ՝ ինչի որ կարիք ունեւ: Այսպես Վրաց աշխարհից շատ – շատերին միաբանեցնելով՝ զորք կազմեց: Եվ Վախթանգ թագավորն էլ, տեսնելով, որ իր մարդիկ ստելով թողին իրեն ու գնացին Հազարավուխտի մոտ, իսկ Հայքն էլ ինքն անձեռնհաս է ու վտանգված, խույս տվեց Վրաց աշխարհից, գնաց, հասավ Եգեբ աշխարհի կողմերը (30):

(Փարպ., 2)

Հազարավուխտի Վիրք գնալուց հետո Շապուհը մնաց Ոքաղում և ջանում էր կատարել Հազարավուխտի հրամանը՝ փնտրում էր Վահան Մամիկոնյանին, որպեսզի նրան անպատրաստ գտնի և սպանի:

(Փարպ., 2Ա)

«...Դեսպան ուղարկեցին Վիրք, Հազարավուխտի մոտ, ինձ էլ այստեղ՝ ձեզ մոտ ճանապարհեցին, որ փութաք հավաքվել իրար մոտ և հնար գտնել, որպեսզի ոտքի կանգնեք և՛ դուք, և՛ աշխարհն Արյաց» (31):

(Փարպ., 2Ե)

Վրաց աշխարհում լսելով Պերոզի սպանվելու և Պարսից անթիվ բազմության կոտորածի մասին, Հազարավուխտն ընկավ զարհուրելի վարանումի մեջ և շտապեց գնալ – հասնել Պարսից երկիրը:

(Փարպ., 2Է)

«...Իսկ երբ Հազարավուխտը գնաց Վիրք և ինձ (32) այնտեղ թողեց իբրև գնդի զորագլուխ, թե այդուհետև Վահանը մեզ ինչքա՛ն նեղություն պատճառեց իր քիչ մարդկանցով...

...Որովհետև երբ Հայքն իր այնպիսի ազատներով մերն էր, Վիրքն ու Աղվանքը բնավ չէին համարձակվում իրենց մտքերը ծռել և ուրիշ որևէ բան խորհել»:

Եվ թագավոր Վաղարշն այսպիսի օրինակելի խոսքեր լսեց Միհրանից, Հազարավուխտից ու Արյաց ամբողջ ավագանուց:

(Փարպ., 2Ը)

«...Իսկ երբեմն իմ ավելորդներից էի ծախսում վանքի պետքերի համար: Սակայն Աղվանքից, Վիրքից, Սյունիքից և Արշարունիքից բերածներս, դրանց հետ նաև քո եղբորորդիներից ստացածները, յուրաքանչյուրի տվածը որոշակիությամբ գրած, մնացին վանքում (33):

(Փարպ., Թուղթ.)

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Խոսքը վերաբերում է Ադան Արծրունուն՝ Վահան Մամիկոնյանի դաստիարակին:
2. Հաղամակերտը գտնվում էր Մեծ Հայքի թագավորության Վասպուրական աշխարհի Մեծ Աղբակ գավառում և Արծրունյաց տոհմի ոստանն էր:
3. Վրաց և Աղվանից եկեղեցիներն այստեղ հիշվում են, որովհետև Փարպեցու օրոք Հայոց, Վրաց և Աղվանից եկեղեցիները մի ամբողջություն էին կազմում Հայոց կաթողիկոսի գլխավորությամբ:
4. Այսպես դիմում է Պարսից արքա Հազկերտ Բ-ին (439-457 թթ.) նրա հազարապետ Միհրներսեհը:
5. Սա հատված է Հազկերտ Բ-ի՝ Հայոց նախարարներին ուղղված հրովարտակից, որով Պարսից արքայից արքան պահանջում է դավանափոխ լինել:
6. Այսինքն՝ կրոնափոխ լինելուց հրաժարվելու՝ հայ նախարարների նամակը:
7. Տե՛ս Մատթեոս, Ժ, 27:
8. Խոսքը վերաբերում է Հայոց սպարապետ Վարդան Մամիկոնյանին:
9. Այս ժամանակ Բյուզանդիայի կայսրն էր Թեոդորոս Բ-ն (408-450 թթ.), որին դիմել էին ապստամբած հայերը՝ օգնություն ստանալու ակնկալիքով:
10. Սա հատված է այն նամակից, որը Վասակ Սյունեցին գրել է Վարդան Մամիկոնյանին՝ նրան հորդորելով չհեռանալ Հայքից: Նամակի գոյությունը բացահայտվում է Տիգրանում կայացած ատյանում:
11. Վասակ Սյունեցու՝ Վրաց մարզպան լինելու մասին վկայում է նաև Եղիշեն:
12. Վահան Մամիկոնյանը տարակուսանքի մեջ էր դավանափոխ լինելու պատճառով:
13. Սա Քարթլիի (Վիրքի) թագավոր Վախթանգ Գորգասալն է, որը ծնվել է 5-րդ դարի կեսերին, մահացել 502 թ.: Գորգասալը միշտ կրել է գայլի գլուխ հիշեցնող մի սաղավարտ (կամ դրա վրա պատկերված է եղել գայլ կամ գայլի գլուխ): Այդ պատճառով պարսիկները նրան կոչել են Գորգասալ, որ թարգմանաբար նշանակում է Գայլագլուխ: Վրաստանում Վախթանգ Գորգասալը համարվում է կիսաառասպելական ազգային հերոս:

14. Այն տեղեկությունը, որ Զարմիհր Հազարավուխտի գլխավորությամբ Աղվանքում կոիվ էր տեղի ունենում բերդաբնակների դեմ, վկայում է, որ ինչպես Հայքում և Վիրքում, այնպես էլ Աղվանքում ապստամբական իրավիճակ է եղել:
15. Գրաբար բնագրում հիշատակվող Հայք տեղանունը աշխարհաբար թարգմանության մեջ գրվել է «Հայաստան», որը մենք ուղղել ենք՝ պահպանելով «Հայք» ձևը, որն ավելի ճիշտ է քանի որ «Հայքը» և «Հայաստանը» պատմաաշխարհագրական տարբեր հասկացություններ են:
16. Շիրակը Մեծ Հայքի թագավորության Այրարատ աշխարհի գավառներից էր և տարածվում էր Արագածից հարավ – արևմուտք: Գավառը պատկանել է մի քանի նախարարական տոհմերի, ինչպես՝ Կամսարական, Դիմաքսյան:
17. Ակոռի գյուղի մոտ պարսիկների դեմ տարած հաղթական ճակատամարտից հետո Վահան Մամիկոնյանի կողմնակիցներն են դեսպան ուղարկում Վրաց Վախթանգ թագավորի մոտ:
18. Վահան Մամիկոնյանի ու նրա կողմնակիցների մասին է խոսքը:
19. Ծաղկեոտն կամ Ծաղկոտն գավառը Մեծ Հայքի Այրարատ աշխարհի հարավային գավառներից է: Մինչև աշխարհացույցյան վարչական բաժանումը Ծաղկեոտն գավառը Կոզովիտ գավառի հետ կազմել են Կովզի երկիրը, որը տարածվում էր Մասիսի թիկունքում: Կովզի երկրի լեռնային տարածքում՝ Ծաղկանց լեռների շուրջն առաջացել է Ծաղկեոտն գավառը, իսկ հովտային շրջաններում՝ նոր վարչական միավոր, որը կոչվել է Կոզովիտ: Ծաղկեոտն գավառը Հայոց արքա Արշակ Բ-ի (350-368 թթ.) օրոք պատկանում էր Գնունի նախարարական տոհմին:
20. Վարշակի ջերմուկը գտնվում էր Ծաղկեոտն գավառում՝ Արածանիի ակունքների շրջանում:
21. Կանգարքը Մեծ Հայքի թագավորության Գուգարք աշխարհի գավառներից է: Թեև ըստ «Աշխարհացույց»-ի Գուգարքի բոլոր գավառները միացվել են Վիրքին, և դա հիմք է տվել ուսումնասիրողներին 387 թվականից Գուգարաց աշխարհն ամբողջությամբ տեսնելու Վրաց կազմում, սակայն ըստ Ղազար Փարպեցու Կանգարքը սահմանագավառ է Վիրքի և Հայքի միջև և պատկանում է վերջինիս:
22. Պարսիկների դեմ պատերազմում թշնամու վրա ազդեցություն թողնելու համար Ալեքսանդր Մակեդոնացին իրոք օգտագործել է կրակներն ու ծառակոճղերը որպես միջոց, որի մասին տեղեկություն կա

- «Պատմութիւն Ալեքսանդրի Մակեդոնացոյ» (Վենետիկ, 1842, էջ 96) աշխատության մեջ:
23. Ճարմանայնու դաշտը գտնվում էր Վիրքում, Կուր գետի ափին:
 24. Բ. Ուլուքաբյանը կարծում է, որ ըստ երևույթին այստեղ մի հատված է պակասում բնագրից, որն ակնհայտ է:
 25. Բասյան (Բասեան) կամ Բասեն գավառը Մեծ Հայքի Այրարատ աշխարհի արևմտյան գավառն է: Մեծ Հայքի թագավորության՝ 387 թ. բաժանումից հետո գավառի արևմտյան սահմանագիծը պարսկաբյուզանդական պետական սահմանագծի մի հատվածն էր: Իր աշխարհագրական դիրքի պատճառով գավառը ռազմավարական նշանակություն ուներ:
 26. Արծաթաղբերք դաշտը գտնվում է Բասեն գավառում: Այստեղ էր գտնվում Դու գյուղը:
 27. Հեփթաղները Պարսկաստանի հյուսիս – արևելքում ապրող ռազմատենչ ցեղեր էին, որոնք հաճախ անհանգստության մեջ էին պահում Պարսկաստանի սահմանները: Այս ընդհարումն էլ ճակատագրական եղավ Պարսից արքայից արքա Պերոզի (459-484 թթ.) համար, որտեղ Պարսից զորքը ծանր պարտություն կրեց՝ կորցնելով նաև իր թագավորին:
 28. Միհրան տոհմը Պարթև Արշակունիների մի ճյուղն էր, որը վերջիններիս տապալումից հետո (224 թ.) մնաց երկրում և սերտաճեց Սասանյան արքայատոհմի հետ:
 29. Դա Պերոզ արքայի հրովարտակն է, որի մասին խոսվում է նախորդ տեղեկության մեջ:
 30. Եզեր աշխարհը տարածվում էր Վիրքից արևմուտք, մինչև Պոնտական (Սև) ծովն ընկած հատվածը: Այն հարավում սահմանակից էր Հայոց Տայք աշխարհին և ընդգրկում էր Փասիս գետի ավազանը:
 31. Հեփթաղների դեմ մղած պատերազմում ծանր պարտություն կրելուց և Պերոզ արքայի սպանվելուց (484 թ.) հետո Պարսից արքունիքը կատարվածի լուրը դեսպանների միջոցով հասցնում է տեղական իշխանավորներին, որպեսզի նրանք, մեկնելով արքունիք, ստեղծված իրադրությունից միասին դուրս գալու ելք գտնեն:
 32. Պերոզից հետո թագավոր դարձած Վաղարշին (484-491 թթ.) Միհրան – Շապուհը ներկայացնում է Հայքի վիճակը, քանի որ նրան Հազարավուխտը թողել էր Հայքում, իսկ ինքը՝ մեկնել Վիրք:
 33. Սա մի հատված է Ղազար Փարպեցու Թղթից, որը հեղինակը գրել է Վահան Մամիկոնյանին:

«ԱՇԽԱՐՀԱՑՈՒՅՑ»¹³ (1)

Ընդհանուր Ասիայի տասնութերորդ երկիրը Սարմատիայի կեսն է, որը բաժանվում է Ռիպեա լեռների արևելյան ծայրով, Թանայիս գետով, Մեոտիս ծովակով և արևմուտքում տարածվում մինչև Պոնտոսի ծով, իսկ այնտեղից ծովեզերքով անցնում դեպի արևելք՝ մինչև Կուռաքսի գետաբերանը, որը կոչվում է Ագռավի, ապա՝ Կովկասյան լեռներով և Վիրքի ու Աղվանքի սահմանագծերով հասնում մինչև Կասպից ծովը և Սվանասի գետաբերանը: (Այժմ Սվանաս գետը հայտնի չէ):

(Շիր. Մատեն., էջ 285)¹⁴

Ասիայի տասնիններորդ երկիրը Կողքիսն է, այսինքն՝ Եզերը, որը գտնվում է Պոնտոսի ծովից արևելք, Սարմատիայի մոտ: Արևմուտքից սահմանն անցնում է Դոակոն գետով մինչև Կովկասյան լեռները՝ դեպի նրա այն լեռնաբազուկը, որը բաժանում է Կողքիսը Վիրքից: Այստեղ Կողքիսը մասամբ սահմանակից է նաև Մեծ Հայքին՝ մինչև Կապադովկիական Պոնտոսը:

(Կողքիսը) բաժանված է չորս փոքրիկ երկրամասերի՝ (2) Մանլիոի, Եզրնիկեի, որն Առանձնակ Եզերն է, որի միջով ոլորապտույտ հոսում է Փասիս գետը համանուն քաղաքի մոտով: Ապա՝ և Ղազվիվիկեի և Ճանիվի, որ Խաղտիքն է: Այստեղից է հո-

¹³ «Աշխարհացույց»-ի աշխարհաբար տեքստը տե՛ս Անանիա Շիրակացի, Մատենագրություն, Թարգմ. Ա. Գ. Աբրահամյանի և Գ. Բ. Պետրոսյանի, Եր., 1979, էջ 258-311:

¹⁴ «Աշխարհացույց»-ի տեղեկությունների գրաբար բնօրինակը տե՛ս «Մատենագիրք Հայոց», հ. Բ, Անթիլիաս, 2003, էջ 2137-2192:

սում Մեգալոս- Պոտամոս գետը: (Կողքիսն) ունի նաև այլ գետեր՝ Ակամսիսը, այսինքն՝ Վոհը, որը գալիս է Մեծ Հայքից: /Կողքիսն/ ունի նաև հինգ քաղաք՝ Զիգանտոն, Կոտան, Ռոդյուպոլիսը, Աթինան, Ռիզոն և այլ բազմաթիվ եմպոռիոններ, այսինքն՝ ծովեզրյա (նավահանգստային) գյուղաքաղաքներ, որոնցից է Տրապիզոնը:

(Շիր. Մատեն., էջ 288-289)

Ընդհանուր Ասիայի քսաներորդ երկիրը Վիրքն է, որը գտնվում է Եգերից արևելք, Սարմատիայի մոտ և տարածվում է մինչև Կովկասյան լեռները՝ Աղվանքի և Հայքի (3) սահմանները՝ Կուր գետով: (Վիրքի) գավառները հետևյալներն են. Կղարջքը, որն սկսվում է Վոհ գետից և անցնում մինչև Տայքի հյուսիսը: Այս գավառը վերցված է Հայքից (4): Շավշեթ և Արտահան գավառները, որոնք (նույնպես) վերցված են Հայքից (5): (Արտահանի միջով) հոսում է Կուր խոշոր գետը, որն անցնում է Տայքի Կող գավառով և Զավախքի ստորոտով իջնում Սամցխե և դառնում դեպի արևելք, այնուհետև անցնում է Վիրքի վերին երկրամասով՝ իրարից բաժանելով հետևյալ գավառները՝ Թորը, Գոռաթիսիսը, Տանիս-իսը, որի բարձունքում գտնվում է Դեկիցիսե բերդը, ապա՝ Մանգլուացիորը, Քուիշափորը և Բողնոփորը, որոնք տարածվում են մինչև Պարվար գավառը: Այստեղ Կուրը շրջանցում է Տփլիս քաղաքը: Բայց վերջին երեք փորակը վերցված են Հայքից (6):

Կուր մեծ գետի հյուսիսում, Թավր գավառի հանդեպ, գտնվում են Արգուեթի լեռները համանուն գավառով: Այդ կողմերումն են գտնվում Դվան դաշտը, Աղչաբետիս-իս, Գուերդիս-ձի-րի և Կոսիս (գավառները), որոնք տարածվում են մինչև Սացիսումեթ գավառը՝ Կովկասի ստորոտը, որտեղից հոսում է Լեխ գետը, որը, անցնելով հարավ, թափվում է Կուր գետի մեջ: Նրա մոտ գտնվում են Կոնիս-իս (7), Ցիսրաչմա (8), Բազալեթ (9), Մոկուրիս-իս գավառները, որոնք (տարածվում են) մինչև Արագվ գետը:

Մա սկիզբ է առնում Կովկասյան լեռներից, հոսում է հարավ, Ախալցխե բերդի մոտով անցնում է Մցխեթ քաղաքի և այն բլրի միջով, որտեղ գտնվում է Սուրբ Խաչը, ապա թափվում Կուր գետը և սահմանագծում Վիրքի (10) վերին երկրամասը:

Կուր գետն այստեղից առաջ շարժվելով, անցնում է Տփլիսի մայրաքաղաքով՝ նրա մոտ թողնելով Պարվար գավառը, ապա՝ Ծոբովոր, Կողբովոր, Ձորովոր գավառները համանուն գետերով, մինչև Հնարակերտ քաղաքը, որոնք վերցված են Հայքից (11):

Սրանից հարավ Ջավախքի լեռնադաշտերն են բազմաթիվ լճերով, որոնք լիքն են զանազան տեսակի ձկներով: Ապա՝ Թռեղք (12) և Տաշիր (գավառները), իսկ նրանցից հարավ՝ Կանգարք գավառը, որոնք բոլորն էլ հանված են Հայքից (13): Իսկ այս գավառների հանդեպ, Կուրի հյուսիսային կողմում, գտնվում են հետևյալ գավառները՝ Կխուեթ (14), Խերկ, Լրծո (15), Թիանեթ, Ծոբենոր, Օուքեթ (16), Ձելեթ, Վելիսցիխե, Քուելդաբա, Շուլք:

(Շիր. Մատեն., էջ 289-290)

Ընդհանուր Ասիայի քսանմեկերորդ երկիրը Ալբանիան է, այսինքն՝ Աղվանքը, որը գտնվում է Վիրքից (17) արևելք: Մահմանակից է Սարմատիային Կովկասյան լեռներով և տարածվում է մինչև Հայքի (18) սահմանը՝ Կուր գետի մոտով, թեպետև՝ այստեղից մինչև Կուրը (եղած երկրամասը) վերցված է Հայքից (19): Բայց մենք կնկարագրենք Աղվանքի բուն այն երկրամասը, որը գտնվում է Կուր մեծ գետի և Կովկասյան լեռների միջև: Նախ՝ Վիրքին (20) սահմանակից գավառներն են. Եխնի (Խինի) (21) գավառը՝ Աղվան գետի վրա, ապա Կամբեճան գավառը՝ Կուր գետի վրա: Նրանից հարավ Վարազմանավառ բերդն է Կուղրաթ գյուղաքաղաքով...

(Շիր. Մատեն., էջ 290)

(Ընդհանուր Ասիայի) քսաներկուերորդ երկիրը Մեծ Հայքն է, ունի տասնհինգ փոքր երկրամասեր, որոնք հետևյալներն են. առաջին..., տասներեքերորդը Գուգարքն է՝ Վիրքի (22) մոտ, տասնչորսերորդ երկրամասը Տայքն է՝ Եգերի մոտ...

(Շիր. Մատեն., էջ 291)

Մեծ Հայքի տասնչորսերորդ երկրամասը Գուգարքն է, որը գտնվում է Ուտիքից արևմուտք: Ունի հետևյալ ինը գավառները. Ջորափոր, Կողբափոր, Ծորոփոր, Տաշիր, Թոեղք, Կանգարք, Վերին Ջավախք, Արտահան, Կղարջք: Գուգարքում կա անալուք, հաճարածառ, սերկևիլ և տոսախ: Գուգարքն այժմ Վիրքի կազմում է, վերցված է Հայքից (23):

Մեծ Հայքի տասնհինգերորդ երկրամասը (24) Տայքն է, որը սահմանակից է Գուգարքին: Տայքում (25) կառուցված են ամրություններ և բերդեր: Ունի ութ գավառ: Արևելքում գտնվում է Կող գավառը, որտեղից սկիզբ են առնում Կուր գետի ակունքները՝ Կրիակունք գյուղի մոտից: Եվ Կուր գետը հոսում է արևմուտք երկայնանիստ գավառով, ապա դառնում է դեպի հյուսիս, Արտահանի միջով և իջնում Սամցխե (գավառը), հետո դառնում է արևելք և հոսում մինչև Կասպից ծովը: Կող գավառից արևմուտք՝ Բերդացփոր, Պարտիզացփոր և Ճակք գավառներն են դեպի արևելք, իսկ դեպի հարավ գտնվում են Բուղխա, Ոքաղե և Ագորդացփոր գավառներն իրենց համանուն գետակներով, որոնք իրար խառնվելով, թափվում են Վոհ գետը: Նրանցից արևմուտք գտնվում է Արսյացփոր (գավառը) Պարխար լեռների փեշերին, որտեղից հոսում է Վոհ գետը, որը գալիս է Սպերից, անցնում է Թուխարք բերդի մոտով և ուղղվում Կղարջք (գավառը), իսկ այնտեղից էլ անցնում է Եգր, Նիգալ ու Մրուղ և Մրիտ գավառներով ու թափվում Պոնտոսի ծովը, որին եգերացիք Ակամսիս են անվանում, իսկ Խաղտիքը՝ Կակամար: Տայքում կա թուզ, թթու նուռ, աղտոր, սերկևիլ, պտղախունկ և նուշ:

(Շիր. Մատեն., էջ 297-298)

Ընդհանուր Ասիայի քսանիններորդ երկիրը Պարսկաստանն է, որը բաժանվում է չորս մասի...

Քուստի Կապկոհ (26), որը գտնվում է Կովկասյան լեռների կողմը, ուր կան հետևյալ տասներեք գավառները. Ատրպատական, Արմն, որը Հայքն է, Վարճան, որը Վիրքն է, Ռան, որը Ադվանքն է, Բալասական, Սիսական, Առե, Գեղան, Շանճան, Դլմունք, Դմբավանդ, Տապրստան, Ռվան, Ամլ, որոնց մասին մեր կողմից խոսք կլինի ստորև:

(Շիր. Մատեն., էջ 303-304)

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «Աշխարհացույցը» կարևոր սկզբնաղբյուր է Հայաստանի և նրա հարևան երկրների պատմաաշխարհագրական քննության համար, և դա է պատճառը, որ այն դարձել է պատմաբանների տարբեր սերունդների ուսումնասիրության առարկա: Պատմագիտության մեջ տարակարծություններ կան «Աշխարհացույցի» հեղինակի և ժամանակի հարցի շուրջ: Ուսումնասիրողների մի մասը գտնում է, որ այն 5-րդ դարի գործ է, և նրա հեղինակը Մովսես Խորենացին է, իսկ մյուս մասը կարծում է, որ 7-րդ դարի գործ է, իսկ հեղինակն է Անանիա Շիրակացին: Տարակարծությունների համար հիմք են սկզբնաղբյուրի՝ մեզ հասած երկու խմբագրությունները՝ ընդարձակ և համառոտ, որոնք էականորեն տարբերվում են միմյանցից: Ուսումնասիրողները երկու խմբագրությունները քննության են առնում՝ ընդհանրացնելով նրանց տեղեկությունները, որից հետո լուծում են աղբյուրի հեղինակի և ժամանակի հարցը: Մեր մոտեցումը փոքր-ինչ այլ է: «Աշխարհացույցի» երկու խմբագրությունների քննությունից հանգում ենք այն եզրակացության, որ խմբագրություններից յուրաքանչյուրը պատմական տարբեր ժամանակաշրջանների արտահայտություն է՝ ընդարձակը՝ 5-րդ դարի, իսկ համառոտը՝ 7-րդ դարի: Ընդարձակ խմբագրության հեղինակ ենք համարում Մովսես Խորենացուն, իսկ համառոտ տարբերակի խմբագիր ենք կարծում Անանիա Շիրակացուն: Այս աշխատանքում մենք օգտագործել ենք «Աշխարհացույցի» ընդարձակ խմբագրությունը:

2. Գրաբար բնօրինակում «երկրամասի» փոխարեն գրված է «աշխարհ»: Բանն այն է, որ 5-րդ դարի պատմիչների երկերում և «Աշխարհացույց»-ում «աշխարհ» բառն ունի և՛ երկրի, և՛ երկրամասի իմաստ, որի համար էլ այս հատվածում նշվում է «աշխարհ փոքունս», այսինքն՝ երկրամաս: Երբեմն երկրամասի իմաստով նույնացվել են նաև «աշխարհ» և «գավառ» հասկացությունները, սակայն հիմնականում գոյություն է ունեցել երկրի երկաստիճան վարչական բաժանում, երբ աշխարհը բաժանվել է ավելի փոքր աշխարհների, իսկ վերջիններս էլ՝ գավառների:
3. Աշխարհաբար թարգմանության մեջ բնագրի «մինչև ցՀայոց սահմանն» արտահայտության «Հայոց» տեղանունը թարգմանվել է «Հայաստան», որը մեր կարծիքով ճիշտ չէ, քանի որ «Հայաստանը» և «Հայքը» տարբեր պատմաաշխարհագրական հասկացություններ են, և «Աշխարհացույց»-ում Ընդհանուր Ասիայի քսաներկուերորդ երկիրն էլ հիշատակվում է «Մեծ Հայք» և ոչ թե «Մեծ Հայաստան» ձևով, ուստի մենք պահպանեցինք «Հայք» գրաձևը:
4. Այստեղ ևս թարգմանության մեջ «ի Հայոց»-ը թարգմանվել է «Հայաստանից», որը մենք ուղղել ենք «Հայքից»: Տե՛ս նախորդ ծանոթագրությունը:
5. Աշխարհաբար տեքստում «Հայաստանի» փոխարեն «Հայք» ուղղումը մերն է: Տե՛ս ծանոթ. 2:
6. Աշխարհաբար տեքստում «Հայաստանի» փոխարեն «Հայք» ուղղումը մերն է: Տե՛ս ծանոթ. 2:
7. Գավառանունը գրաբար բնագրում հիշատակված է «Խառնիսխն» ձևով:
8. Այս գավառանունը գրաբար բնագրում հիշատակվում է «Յխրասձմայա» ձևով:
9. «Բազալեթ» և «Մտկուրիս-խն» գավառանունները «Աշխարհացույց»-ի վենետիկյան ձեռագրում բացակայում են:
10. Բնչպես չի կարելի նույնացնել «Հայք» և «Հայաստան» տեղանունները, այնպես էլ ճիշտ չէ «Վիրք» և «Վրաստան» տեղանունների նույնացումը, որոնք պատմաաշխարհագրական տարբեր հասկացություններ են: Ուստի, հավատարիմ մնալով բնագրին, թարգմանչի ներկայացրած «Վրաստան» տեղանունը փոխել ենք «Վիրք»-ով:
11. Այստեղ ևս թարգմանչի նշած «Հայաստանը» փոխել ենք «Հայք»-ով: Տե՛ս ծանոթ. 2:
12. Աշխարհաբար թարգմանությունում գավառանունը ներկայացված է «Տոեխք» ձևով: Մենք, հավատարիմ մնալով բնագրին, պահպանեցինք «Թոեղք» անվանաձևը: Գավառանունը «Թոեղք» ձևով հիշատակվում է

- նան Մեծ Հայքի նկարագրության մեջ Գուգարք աշխարհի գավառանունները թվարկելիս:
13. Աշխարհաբար թարգմանությունում գրված է Հայաստան: Մենք, հավատարիմ մնալով բնագրին, պահպանել ենք «Հայք» անունը: Տե՛ս ծանոթ. 2:
 14. Բնագրում գրված է Խվեր: Կխուեթն ու Խվերը նույն գավառանվան տարընթերցումներն են:
 15. Բնագրում գրված է Էրծույ: Լրծո անվանաձև առաջացել է Էրծույի առաջին տառի տարընթերցումից:
 16. Ծուբեթ, Ձելեթ, Վելիսցիլե, Քուելդաբա, Շուջբ գավառանունները բացակայում են «Աշխարհացույց»-ի վենետիկյան հրատարակության մեջ՝ գրաբար բնագրում:
 17. Քանի որ «Վիրքն» ու «Վրաստանը» պատմաաշխարհագրական տարբեր հասկացություններ են, մենք, հավատարիմ մնալով գրաբար բնօրինակին, աշխարհաբար տեքստի «Վրաստանը» փոխել ենք «Վիրքով»: Տե՛ս ծանոթ. 9:
 18. Աշխարհաբար տեքստում գրված է «Հայաստան»: Տե՛ս ծանոթ. 2:
 19. Աշխարհաբար տեքստում գրված է «Հայաստան»: Տե՛ս ծանոթ. 2:
 20. Աշխարհաբար տեքստի «Վրաստան» տեղանվան փոխարեն մենք գրել ենք «Վիրք»: Տե՛ս ծանոթ. 9:
 21. «Խինի» անվանաձևը գրաբար բնագրում չկա:
 22. Աշխարհաբար տեքստում գրված է «Վրաստան»: Տե՛ս ծանոթ. 9:
 23. Աշխարհաբար տեքստում գրված է «Հայաստան»: Տե՛ս ծանոթ. 2:
 24. Աշխարհաբար տեքստում գրված է «գավառ»: Ելնելով աշխարհաբար թարգմանության սկզբունքից՝ մենք օգտագործել ենք «երկրամաս» բառը, որն իմաստով ավելի է համապատասխանում :
 25. Այս նախադասությունը գրաբար բնագրում չկա: Աշխարհաբար տեքստում «Տայք» տեղանվան փոխարեն գրված է «Գուգարք», որը ճիշտ չէ: Նախ, որ այդ հատվածը վերաբերում է Տայքի նկարագրությանը, և երկրորդ՝ իր բերդերով և ամրություններով հայտնի է Տայքը:
 26. Քուստի Կապկոհը Պարսկաստանի վարչական չորս բաժանումներից մեկն էր:

ՄԵՔԵՈՍ, ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ¹⁵

Այս Խոսքովը, որ Անուշիրվան կոչվեց (1), իր թագավորության ժամանակներում, առաջ քան այս ապստամբությունը (2), հզորացրեց երկիրը, քանզի խաղաղասեր և աշխարհաշեն էր... Այս Խոսքովն իր թագավորության ժամանակներում գրավեց Ադվանից Ճորա Պահակը (3), ձերբակալեց եգերացիների արքային, կռվով վերցրեց պիսիդացիների Անտիոքը և գերելով նստեցրեց թագավորական ապարանքի մեջ...

Ապա եկավ Գողոն Միհրանը (4) 20 հազարանոց սպառազեն զորքով ու բազմաթիվ փղերով, նա իր հետ ուներ բազում սատարողներ անթիվ ցեղերի բանակներից, հոնական ցեղերի, որոնք բնակվում են Կովկասի լեռնակողմերում, արքայից հրաման եղավ, որ անգավակ անեն Հայոց աշխարհի տղամարդկանց. խարխլել, քանդել, հիմնահատակ ավերել և անխնա հողին հավասարեցնել: Նա եկավ, բայց թե տեղ-տեղ անմատույց ամրոցներում մնացած մարդիկ փրկվեցին և կամ թե փախստական գնացին հեռավոր աշխարհներ: Սակայն շատերը չկարողացան ճողոպրել, քանզի ում գտնում էին, սուրը քաշում սպանում էին: Սա մի ճակատամարտ տվեց Վիրքում և պարտվեց: Եկավ Հայաստան և սուտ երդմամբ գրավեց Անգղը (5):

(Մեք., Թ)¹⁶

¹⁵ Մեքենսի տեղեկությունների աշխարհաբար թարգմանությունը տե՛ս Մեքենս, Պատմություն, Եր., 2005:

Այնժամ Խոսրով արքան (6) նվերներով Մորիկ թագավորի (7) մոտ անվանի մարդիկ ուղարկեց և գրեց այսպես. «Տո՛ւր ինձ իմ հայրերի և նախնիների թագավորության գահն ու երկիրը և ուղարկի՛ր ինձ զորք՝ օգնության, որով կարողանամ զարկել իմ թշնամուն, վերականգնի՛ր իմ թագավորությունը, և կլինեմ քո որդին: Եվ կտամ քեզ Ասորիքի կողմերը, ամբողջ Արվաստանը մինչև Մծբին քաղաք, իսկ Հայոց երկրից՝ Տանուտերական իշխանության աշխարհը (8) մինչև Այրարատ ու մինչև Դվին քաղաք, մինչև Բզնունյաց ծովեզրը (9)՝ մինչև Առեստավան (10), Վրաց աշխարհի մեծ մասը՝ մինչև Տփլիս քաղաք, և խաղաղության ուխտ կնքենք մեր միջև մինչև երկուսիս մահը, և թող անխախտ լինի այս երդումը մեր և մեր որդիների միջև, որ թագավորելու կլինեն մեզնից հետո:

(Մեր., ԺԱ)

Եվ հաստատվեց (11) թագավորության աթոռին և կայսերը տված խոստումները կատարեց, տվեց նրանց ամբողջ Արվաստանը մինչև Մծբին (12) և Հայոց աշխարհը, որ իր իշխանության տակ էր. Տանուտերական տունը մինչև Հրազդան գետը, Կոտայք գավառը (13), մինչև Գառնի ավանն ու մինչև Բզնունյաց ծովի եզրը՝ մինչև Առեստավան, և Կոգովիտ գավառը (14) մինչև Հացյուն և Մակու: Իսկ Վասպուրական գնդի կողմը (15) պարսից արքայի ծառայության տակ էր: Հայոց նախարարներից շատերը հունաց բաժնից (Էին), իսկ քչերը՝ պարսից: Տվեց նաև Վրաց աշխարհի մեծ մասը՝ մինչև Տփլիս քաղաքը:

(Մեր., ԺԲ)

¹⁶Մեբեռնի տեղեկությունների գրաբար բնագիրը տե՛ս «Մատենագիրք Հայոց», հ. Դ, Անթիլիաս, 2005, էջ 453-565:

Պարսից գորքերը փութով հասան Մրծվին: Լուր տրվեց Հերակլ կայսերը, թե Խոռյամը եկավ Մրծվին: (Կայսրը) առավ իր գորքերն ու գերիներին և վերադառնալով Մարաց անառիկ աշխարհով՝ եկավ հասավ Փայտակարան (16): Լուր տրվեց Խոսրովին, թե Հերակլը վերադարձավ, հասավ Փայտակարան և կամենում է Աղվանքով անցնել Վրաստան: Հրաման տվեց իր գորավար Շահր Վարազին, որ (նրա) ճանապարհը փակի:

(Սեբ., ԼԸ)

Թեոդորոս Ռշտունին ջարդում է իսմայելացիներին և ազատում ավարն ու գերիներին, որը նրանք վերցրել էին Արծափքում (17):

Իսմայելացիների մեկ այլ գորք սրի է մատնում Այրարատից մինչև Տայքի, Վիրքի և Աղվանքի սահմանները...

...Իսկ այն գորքը (18), որ Այրարատի կողմերում էր, սրի մատնեց մինչև Տայքի, Վիրքի և Աղվանքի կողմերը, վերցրեց ավարն ու գերիներին և եկավ անցավ Նախճավան (19)՝ այն գորքի մոտ, որը կոիվ էր մղում Նախճավանի բերդի դեմ: Սակայն չկարողացան գրավել այն:

(Սեբ., ԽԵ)

Այնժամ թագավորն (20) ու իր ողջ գորքերը նգովեցին Ռշտունյաց տիրոջը (21), զրկեցին նրան իշխանական աստիճանից, նրա փոխարեն ուրիշ այր ուղարկեցին և նրա հետ 40 մարդ: Երբ նրանք գնացին հասան նրա մոտ, բռնեցին նրանց, կապեցին և (ոմանց) տանել տվին Բաղեշի (22) բերդը, իսկ ոմանց՝ Բզնունյաց կղզիները (23): Ինքը գնաց մտավ Աղթամար կղզին և այն կողմերի գորքերին հրաման տվեց, որ յուրաքանչյուրը գնա ամրանա իր գավառում: Նրա հետ միաբան էին Վիրքը, Աղվանքն ու Սյունիքը, որոնցից ամեն մեկը, ըստ նրա հրամանի, գնաց իր աշ-

խարհը և ամրացավ այնտեղ: Իսկ Վահևունյաց տեր Թեոդորոսը գրավեց Արփայք բերդը (24), իսկ նրա որդի Գրիգորը, որը Ռշտունյաց տիրոջ փեսան էր, և Վարազ Ներսէի Դաշտկարինը ամրացան դրսում և բռնացան գանձերի վրա, քանզի այնտեղ էին աշխարհի՝ եկեղեցու, իշխանների և վաճառականների ողջ գանձերը:

Իսկ Կոստանդին արքան, երբ այս լսեց, կամեցավ զորքերի բազմության համար ավար առնել և գնալ ձմեռել Հայաստանում, որպեսզի մեջտեղից վերացնի երկիրը, բայց կաթողիկոսը և Մուշեղը հայոց ամենայն իշխաններով հանդերձ տեղնուտեղը երեսնիվայր ընկան և բազում աղաչանքներով ու արտասովալից պաղատանքներով խնդրեցին ողորմել, որպեսզի իրենց հանցանքներից իսպառ չբարկանա և երկիրը կորստյան չմատնի: Անսաց արքան նրանց պաղատանքներին և արձակեց այնտեղից զորքերի բազմությունը, իսկ ինքը 20 հազարով գնաց Այրարատ: Հասնելով Դվին՝ նստեց կաթողիկոսաբանում: Մամիկոնեից տեր Մուշեղին արքան կարգեց հայոց հեծյալների զորապետ և նրան երեք հազարով ուղարկեց Սեպհական գնդի կողմերը (25): Նմանապես իր զորքերից ուղարկեց Վիրք, Աղվանք և Սյունիք՝ (26) քակտելու նրանց միաբանությունը: Սյուն զորքերը նստեցին Արփայքի շուրջը՝ և՛ լեռնակողմում, և՛ դաշտակողմում: Վրացիները թեպետ միառժամանակ չկամեցան հնազանդվել, սակայն հետո ենթարկվեցին ծառայության: Բայց Աղվանքը, Սյունիքը և Սեպհական գունդը չհնազանդվեցին, որոնց ավարառելով՝ նրանք (հույները) տարան՝ ինչ որ գտան և այնտեղից վերադարձան արքայի մոտ:

(Մեբ., ԽԸ)

*Թեոդորոս Ռշտունին ջարդում է հունաց զորքերին, գրավում
Տրապիզոնը, գնում Մավիհասի մոտ և ստանձնում իշխանությունը
Հայաստանի, Վիրքի, Աղվանքի և Սյունիքի վրա...*

...Եվ երբ անցան ձմեռային օրերը, Մեծ Զատիկին մոտ հոռոմը փախավ և ընկավ Տայք: (Արաբներն) այնտեղից հանեցին, և այլուրեք չկարողացավ դադար առնել, այլ փախստական գնաց մինչև ծովեզր: Իսկ /արաբներն/ ավերեցին ողջ երկիրը, գրավեցին նաև Տրապիզոն քաղաքը և տարան հույժ բազում ավար ու գերություն:

Սրանից հետո Ռշտունյաց տեր Թեոդորոսը գնաց Դամասկոս՝ Իսմայելի Մավիհաս իշխանի մոտ և ներկայացավ նրան մեծամեծ ընծաներով: Եվ Իսմայելի իշխանը նրան տվեց ոսկեդեն և ոսկեթել հանդերձներ ու նույնօրինակ մի վառ (27): Իբրև իշխանություն տվեց նրան Հայաստանը, Վիրքը, Աղվանքն ու Սյունիքը մինչև Կապկոհ և Ճորա Պահակ և պատվով ուղարկեց նրան: Իսկ նա (Ռշտունին) նրա հետ պայման էր դրել՝ այդ երկր/ներ/ը (28) բերել ի ծառայություն:

(ՍԵՐ., ԽԹ)

*Իսմայելացիների մյուս բանակը, որ արշավում էր դեպի Վիրք,
հողմահարվում է ձմռան բքից*

Եվ եղավ՝ աշնանային ժամանակն անցնելուց հետո, երբ ձմեռը մերձեցել էր, Իսմայելի զորքը եկավ և նստեց Դվինում: Մտածում էր գնալ, կոտորել Վիրքը սրով սուսերի: Խոսեց նրանց հետ սպառնալից հրամանով, որ կա՛մ գան իրենց ծառայության, կա՛մ թողնեն երկիրն ու գնան: Բայց նրանք չհամաձայնեցին այդպես անել, այլ նրանց դեմ պատրաստվեցին պատերազմի: Եվ իսմայելացին կռվով գնաց նրանց վրա՝ իսպառ կոտորելու նրանց:

Այնինչ նրանք ճանապարհ ելան, նրանց վրա հասան ձմեռվա ցուրտն ու ձյունը, որի պատճառով շտապեցին Ասորեստանի կողմերը և Հայաստանում որևէ անիրավություն չգործեցին:

Իսկ Հայոց իշխանները, որը հունաց բաժնից, որը՝ տաճիկների, Համագասպը, Մուշեղը և մյուս բոլորը, մի վայր գալով, միաբանվեցին ու միմյանց հետ ուխտ կապեցին, որ իրենց մեջ սուր և արյունահեղություն չլինի, և ձմեռային օրերն անցկացրին խաղաղությամբ, որպեսզի նաև շինականներին փրկեն: Քանզի Ռշտունյաց տերը հիվանդացավ, գնաց մտավ Աղթամար կղզի և չէր կարողանում դուրս ելնել կամ ինչ-որ բան մտածել: Երկիրը բաժանեցին ըստ յուրաքանչյուրի հեծյալների թվի, ու կարգեցին ոսկու և արծաթի հարկահավաքներ:

Այստեղ կարելի էր տեսնել դժվարին չքավորության աղետները, ինչպես հիվանդներն են դադարում խոսելուց, երբ նեղում է ցավը, այդպես եղան: Քանզի մարդիկ փախուստի կամ թաքուստի տեղ չունեին, և ոչ էլ ներքուստ էին խնայում, այլ նման էին մեկին, որը ծովն ընկնի և չկարողանա ելք գտնել:

Իսկ երբ Ռշտունյաց տերը այդ տեսավ, իսմայելացիներից իր համար գորքեր խնդրեց, որպեսզի հային հարվածի ու հալածի, իսկ վրացիներին կոտորի սրով սուսերի (29):

(Մեր., Ծ)

Արդ երբ հասան գարնանային ժամանակները, Մորիանոսը (30) Իսմայելի գորքի դեմ պատրաստվեց պատերազմի. համառելով մտածում էր իր գործն ավարտել: Տաճիկն արշավեց հույն/եր/ի վրա, որ կռիվ էին մղում Նախճավանի բերդի դեմ, զարկեց նրանց և կոտորեց սրով սուսերի, իսկ մնացածներին փախստյան մատնեց: Մորիանոսը փախչելով՝ գնաց ընկավ Վիրք: Իսկ Իսմայելի գորքը վերադարձավ նրանց մոտից, պաշարեց Կարին (31) քաղաքը և կռիվ մղեց նրանց դեմ, բայց նրանք

չկարողացան կռվով դիմադարձ կանգնել նրանց, բացեցին քաղաքի դռները և հնազանդվեցին ի ծառայություն:

(Սեբ., ԾԲ)

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Սա պարսից արքայից արքա Խոսրով Անուշիրվանն է (531-578 թթ.):
2. Խոսքը վերաբերում է 571 թվականին Վարդան Մամիկոնյանի (Կրտսեր Վարդան) գլխավորությամբ բռնկված ապստամբությանը:
3. Ճորա Պահակը գտնվում էր Կասպից ծովի ափին, այժմյան Դերբենդի մոտակայքում: Այստեղով են իրականացվել հյուսիսկովկասյան ցեղերի բազմաթիվ արշավանքները դեպի հարավ:
4. Գողոն Միհրանն այն պարսիկ զորավարներից էր, որոնք Վասակի որդի Վարդան Մամիկոնյանի 571 թ. գլխավորած ապստամբությունից հետո ուղարկվեցին Հայք: Նա հաջորդել է Սուրեն մարզպանի սպանվելուց հետո Հայք ուղարկված Վարդան Վշնասպին, որը ոչ մի գործ չկարողացավ կատարել, մի տարի մնաց ու ետ գնաց:
5. Անգղը բերդաքաղաք էր, որը գտնվում էր Մեծ Հայքի Այրարատ աշխարհի Ծաղկոտն գավառում: Հայտնի է 450 թ. ապստամբական դեպքերով:
6. Սա Պարսից արքայից արքա Խոսրով Բ Փարվեզն է (590-628 թթ.):
7. Սա Բյուզանդիայի կայսր Մավրիկիոսն է /582-602 թթ./:
8. Տանուտերական իշխանության աշխարհը Մարզպանական Հայաստանի ներքին չորս վարչական միավորներց մեկն էր, որի մեծ մասն ըստ 591 թ. պարսկա-բյուզանդական համաձայնագրի անցավ Բյուզանդիայի տիրապետության տակ:
9. Բզնունյաց ծովը Վանա լիճն է:
10. Առեստավանը գտնվում էր Վասպուրական աշխարհի Առբերանի գավառում, Վանա լճի հյուսիսարևելյան ափին:
11. Խոսքը վերաբերում է Պարսից արքայից արքա Խոսրով Բ Փարվեզին:
12. Մծբինը պարսկա-բյուզանդական սահմանի մոտ գտնվող կարևոր ռազմավարական նշանակություն ունեցող բերդաքաղաք էր և հաճախ էր հարձակման ենթարկվում թե՛ պարսիկների և թե՛ բյուզանդացիների կողմից:
13. Կոտայք գավառը պատմիչներից առաջինը հիշատակում է Մեբեոսը: Գավառանունը հիշատակվում է նաև «Աշխարհացույց»-ի համառոտ

խմբագրությունում: Նրա ընդգրկած տարածքը ներառվում է «Աշխարհացույց»-ի ընդարձակ խմբագրության «Ոստան Հայոց» գավառում, որն Արշակունիների արքունի ոստանն էր: Արշակունիների արքայատոհմի վերացումից հետո Պարսից արքունիքը մասնատեց «Ոստան Հայոց» գավառը, որի հետևանքով նրա տարածքում առաջացան մի քանի նոր գավառներ, որոնց թվում նաև «Կոտայքը»:

14. Կոգովիտը Այրարատ աշխարհի գավառներից էր և տարածվում էր Մասիսի թիկունքում: Այստեղ էր գտնվում Դարույնք անառիկ բերդը: Գավառն ուներ ռազմավարական կարևոր նշանակություն, որի համար էլ այս գավառում Հայոց արքա Արշակ Բ-ն (350-368 թթ.) կառուցեց Արշակավան քաղաքը, որը սակայն կարճ կյանք ունեցավ:
15. Վասպուրական գնդի երկիրը կամ կողմը Մարգականական Հայաստանի ներքին չորս ռազմավարչական բաժանումներից մեկն էր:
16. Փայտակարանը Մեծ Հայքի թագավորության տասնհինգ աշխարհներից մեկն էր: Տարածվում էր Ուտիք աշխարհից արևելք՝ Երասխ (Արաքս) գետի երկայնքով: Պատմական այս դեպքերի ընթացքում Փայտակարանն արդեն միացված էր Ատրպատականին:
17. Արծափը գտնվում էր Մեծ Հայքի Այրարատ աշխարհի Կոգովիտ գավառում, Դարույնքից հյուսիս - արևմուտք:
18. Խոսքը իսմայելացիների (արաբների) զորքի մասին է:
19. Նախճավանը Մեծ Հայքի Վասպուրական աշխարհի գավառներից էր համանուն քաղաքով: Գտնվում է Երասխից արևելք, նրա ձախ ափին:
20. Խոսքը Բյուզանդիայի կայսր Կոստանդ Բ-ի (641-668թթ.) մասին է:
21. Ռշտունյաց տերը Հայոց իշխան Թեոդորոս Ռշտունին է (639-654 թթ.):
22. Բաղեշն առաջին անգամ հիշատակվում է Սեբեոսը: Բերդաքաղաքը գտնվում է Վանա լճի հարավ - արևմտյան կողմում:
23. Բզնունյաց կղզիները Վանա լճի կղզիներն են, որոնք են՝ Աղթամար, Լիմ, Կոուց, Չքատան, Ծիպանի, Արտի և այլն:
24. Արփայք բերդն առաջին անգամ հիշատակվում է Սեբեոսի երկում, տեղադրությունն անորոշ է:
25. Մեպհական գնդի երկիրը կամ Վասպուրական գնդի երկիրը Մարգականական Հայաստանի ներքին չորս ռազմավարչական միավորներից մեկն էր:
26. Մյունիքը Մեծ Հայքի 15 աշխարհներից մեկն էր: Այն նաև Մարգականական Հայաստանի ներքին վարչաքաղաքական միավորներից մեկն էր:

27. Ըստ Ստ. Մալխասյանցի՝ «վառը» ծագում է պարսկերեն *bar*-ից, որը գուցե ծագել է պահլավերեն *var*-ից և նշանակում է «քող» և ապա՝ «դրոշակ»: Տե՛ս Սեբեոս, Պատմություն, Եր., 2005, էջ 368, ծանոթ. 524:
28. Գրաբար բնագրում նշված է «...ածել գերկիրն զայն ի ծառայութիւն», որից պետք է եզրակացնել, որ հիշատակված ողջ տարածքը մեկ վարչական միավոր է եղել, որի տնօրինությունը հանձնվել է Թեոդորոս Ռշտունուն:
29. Գ. Աբգարյանը գտնում է, որ «...խոսքը ոչ թե վրացիների, այլ Վրաստանում գտնված հույների մասին է,...» (Պատմութիւն Սեբեոսի, աշխատասիրությամբ Գ. Վ. Աբգարյանի, Եր., 1979, էջ 359, ծան. 651):
30. Խոսքը հույն գորավարի մասին է:
31. Կարին քաղաքը Մեծ Հայքի թագավորության Բարձր Հայք աշխարհի Կարին գավառի վարչական կենտրոնն էր, ներկայիս Էրզրումը:

**ՄՈՎՍԵՍ ԿԱՂԱՆԿԱՏՎԱՑԻ,
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԱՂՎԱՆԻՑ ԱՇԽԱՐՀԻ¹⁷**

Հունանի որդիներն են՝ Եղիսան, որից էլ առաջացել են սիկի-լիացիները (1) և աթենացիները, Թարշիշը, իսկ սրանից՝ վրացի-ները և տյուրենացիները (2) ու Կիտրիսը, որից էլ և՛ հռոմեա-ցիները, և՛ լատինները, և՛ հռովդացիները (3):

(Կաղանկ., Ա-Բ)¹⁸

Սակայն այստեղ մեզ օգնում է քերթողահայր Մովսեսը (4), որը նկարագրում է Արտավազդի պատերազմելը հռոմեացիների դեմ: Նա Ատրպատականի բազմաթիվ գորքերը հավաքելիս՝ այն-տեղ կանչեց Կովկասի լեռնական հզոր ցեղերին, Աղվանքի ու Վրաստանի գորքերը, շարժվեց Միջագետք և սրանց ուժով հա-լածեց հռոմեացիներին:

Իսկ երբ Արտաշեսը հարձակվեց Երվանդի վրա, սա գտնվում էր Աղվանքի սահմաններում՝ Ուտի գավառում (5): Մա այնտեղ է թողնում իր զորքը և ինքը գնում է իր մայրաքաղաքը: Արտաշեսը, գալով Աղվանք, Աղվանքի զորքը միացնում է իր զորքին և դուրս է գալիս Գեղամա ծովակի (6) ափը. Այս զորքերով հալածում է Երվանդին և ինքը տիրում հայերին:

¹⁷ Մովսես Կաղանկատվացու տեղեկությունների աշխարհաբար թարգմա-նությունը տե՛ս Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, Եր., 1969:

¹⁸ Մովսես Կաղանկատվացու տեղեկությունների գրաբար բնագիրը տե՛ս «Մատենագիրք Հայոց», հ. ԺԵ, Անթիլիաս, 2011, էջ 32-437:

Այս ժամանակներում աղվանները միաբանվում են բոլոր լեռնականների հետ, որոնց միանում են մասամբ նաև վրացիներ ու մեծ բազմությամբ շարժվում են դեպի Հայաստան: Արտաշեսը նրանց դեմ համախմբում է իր զորքերը և բանակ է զարկում Կուր գետի մոտերքը:

(Կաղանկ., Ա-Ը)

Իսկ երբ Տրդատը (7) վախճանվեց, մի ոմն Սանատրուկ Փայտակարան (8) քաղաքում դարձավ Աղվանքի թագավոր և ընդդեմ կանգնեց հայերին: Տրդատի որդի Խոսրովը Անտիոքոսին բերում է հունական զորքերով, Բագարատին՝ արևմտյան բանակով, բերում է նաև վրաց բղեշխ Միհրանին: Այս բոլորի հետ միանալով՝ Խոսրովը շարժվում է Աղվանքի վրա:

(Կաղանկ., Ա-ԺԲ)

*...Սուրբ Գրիգորի թոռ սուրբ Գրիգորիսի՝ Աղվանքի ու
Վրաստանի կաթողիկոս ձեռնադրվելը և սրա Աղվանք գալը՝
երկրում քրիստոնեություն տարածելու համար, ապա նրա
նահատակությունը և նրա մասունքների բերումը*

...Այնուհետև (9) ստանձնելով նաև քահանայապետությունը՝ գնում և քրիստոնյա է դարձնում Վրաստանն ու Աղվանքը...

...Որովհետև տասնհինգ տարեկան հասակում մանուկ Գրիգորիսին ձեռնադրում են Վրաստանի և Աղվանքի եպիսկոպոս, ուր մեկնելով՝ լուսավորում է երկու երկրներն էլ ու նրանց քրիստոնյա դարձնում: Եկեղեցիներ է կառուցում համապատասխան շենքերի ու քաղաքների, ձեռնադրում է քահանաներ, հորդորում է սուրբ պաշտամունքի՝ միշտ տոնելով սրբերի հիշատակը:

(Կաղանկ., Ա-ԺԴ)

Վաչեից մինչև Բարեպաշտ Վաչագանը երեսուն տարի Ադվանքը մնաց առանց թագավորի, որովհետև պարսից ամենաչար և անհավատ թագավոր Պերոզը զայրացած մոլեգնում էր ինչպես մի կատաղած շուն և կամենում էր միանգամայն վերացնել երկրի ամբողջ թագավորությունը, քանդել եկեղեցիները, ջնջել քրիստոնեությունը և իր իշխանության մեջ կարգել ու հաստատել մոգության դիվապաշտությունը, որի համար նրա պղծալից ձեռքով Քրիստոսի բոլոր երանելի և սուրբ նահատակների անմեղ արյուն էր թափվում. անթիվ ու անքանակ անմեղ մարդիկ չարի սրով խողխողվում էին, այլև կանայք երեխաների հետ միասին արտասվահառաչ ձայներով գերվում ու դառն ստրկության էին քշվում օտար երկիր: Հայոց, վրաց և ադվանից բազմաթիվ նախարարների դիվապաշտական մոգության մեջ քաշելով (Պերոզը) կործանեց. այդ անում էր ոմանց վրա բռնի ուժ գործադրելով, ոմանց պարզևներով մեծամեծ իշխանություն տալով: Զանազան տեղեր ասորուշաններ կանգնեցրեց, որի շնորհիվ ուժեղանում էր աղետի աստվածների կրակավառ պաշտամունքը:

(Կադանկ., Ա-ԺԶ)

*Պատմական տեղեկություն սուրբ Մեսրոպի և
նրա ընկերների մասին*

...Մեկը (10), որ առաջ վարդապետ էր եղել և որ սուրբ հոգու հովանավորությամբ երեք ժողովուրդների՝ հայերի, ադվանների ու վրացիների համար տառեր էր ստեղծել, դրանից հետո գնաց սուրբ Երուսաղեմ՝ ուխտադրության:

(Կադանկ., Ա-ԻԷ)

*Հյուսիսայինների արշավանքը ամբողջ Աղվանք, Հայաստան ու
Վրաստան և Մեսրոպի աշակերտների նահատակությունը*

Այդ ժամանակներում Ռոսմոսոքյան (11) թագավորը իր զորքերն ու Թոբեյան բանակը միացրեց, հավաքեց նաև հոների բոլոր զորքերը և անցավ Կուր գետի այս կողմը՝ տարածվելով Ուտիք գավառում: Իր բանակը բերեց, բանակեցրեց Խաղխաղ (12) քաղաքի մոտ: Այդտեղ երեք զորավարներ ընտրելով՝ նշանակեց մեծ բանակի հրամանատարներ ու նրանց հրամանատարության տակ խմբավորեց տասնմեկ զորքերի բազմությունը, և հրամայեց երեք մասի բաժանել, հարձակվել Աղվանքի, Հայաստանի ու Վրաստանի վրա:

(Կադանկ., Ա-ԻԹ)

Այդ ժամանակ (13) լուր հասավ պալատ, թե խազիրները մեծ զորքով դուրս եկան Ճորա դռնից ու մտան մեր երկիրը: Շապուհը մեծ զորահավաք արեց, հավաքեց ասորիներ, խորասանցիներ, խորագմներ, էլ ավելի Ատրպատականի պարսից քաջերին, հայեր, վրացիներ, աղվաններ և Կովկաս լեռան տասներկու լեզվով խուժադուժ ցեղեր: Անհամար զորքերով վեր կացավ – գնաց նրանց դիմագրավելու:

(Կադանկ., Բ-Ա)

*Անօրեն Հազկերտի կողմից Աղվանքի վտանգվելը և Հայոց
զորավար Վարդանից փրկություն գտնելը*

...Հայ քաջերը, ոչ մի տեղից օգություն չգտնելով, ապավինում են բարձրյալի վերին ամենակալ զորությանը, հայոց զորքը բաժանում են երեք մասի. Առաջին մասը հանձնում են Ներշապուհ Ռմբոսյանին, որ պահպանի Ատրպատականը, երկրորդ մասը

տալիս են հայոց Վարդան գորավարի ձեռքը, որպեսզի Վրաստանով անցնի, գնա Ճորա մարզպանի վրա, որ եկել, ավերել էր Աղվանքի եկեղեցիները:

Իսկ երանելի Վարդանը չգիտեր անիծված ուրացող Վասակի դարանագործության մասին. Վասակը հայոց գորքի՝ Աղվանք գալուց առաջ պարսից մարզպան Մերսեբուխտին հայտնում է, որ հայոց գորքը բաժանել են մասերի և Վարդանին քիչ գորքով ուղարկել են այդ կողմը... Մերսեբուխտը, հաշվի առնելով Վասակի քաջալերանքները, չի մնում Ճորա կողմերը, այլ հավաքում է իր գորքի ամբողջ բազմությունը, արագությամբ գալիս, անցնում է Կուր մեծ գետը և հանդիպում է Վարդանին Վրաստանի սահմանների վրա՝ Խաղխաղ քաղաքի դիմաց, որը Աղվանքի թագավորների ձմեռանոցն էր:

(Կադանկ., Բ-Բ)

...Սուրբ հոգու ընտիր անոթ Մեսրոպ երանելին Աղվանք եկավ մեր Երեմիա հայրապետի ու Եսվաղեն թագավորի մոտ: Սրանք կամավոր կերպով ընդունեցին նրա ուսուցչությունը ըստ աստծուց նրան շնորհված այն պարգևի, որ սուրբ հոգին նրա միջոցով հայերին ու վրացիներին տառեր տվեց... Այստեղ վերահսկիչ թողեց իր աշակերտ Հովնաթանին, քահանաներ նշանակեց պալատում ու վերադարձավ Հայաստան: Այդտեղից անցավ Բյուզանդիա՝ Թեոդոս թագավորի մոտ և այնտեղից վերադառնալով, աշակերտների հետ շրջում էր: Լսելով, որ Գարդմանում (14) հեթանոսական աղանդ է մնացել, Սյունիքից անցնում, գալիս է Գարդմանի իշխան Խուրի մոտ և նրա միջոցով հեթանոսական կրոնի հետևողներին ուղղության է բերում, իսկ ինքը Վրաց Աշուշա բդեշխի հրավերով գնում է Վրաստան նույն գործով:

(Կադանկ., Բ-Գ)

Իսկ Հերակլես մեծ կայսրը, երբ տեսավ, որ պարսից թագավորը խույս տվեց իրենից, դադարեց նրան հետապնդելուց: Ասպատակեց Ատրպատականի կողմերը մինչև այն տեղը, որ կոչվում է Գայշ Ավան (15), ուր ամրոցներ կային և շոգ ամիսներին պարսից թագավորների կողմից ընտրված էր իբրև հովասուն ու առողջարար վայր և գտնվում էր Մարաստանի սահմաններում: Ավերում, քանդում ու գերեվարում է ամբողջ երկիրը և այնտեղից վերադառնալով, կամենում է ձմեռել Աղվանքի, Վրաստանի ու Հայաստանի կողմերում: Այստեղից գրություն է գրում այդ երկրների իշխաններին ու առաջնորդներին, որպեսզի իրենց կամքով ընդառաջ ելնեն իրեն, ընդունեն և ձմռանը իր և իր զորքի կարիքները հոգան: Այլապես իր առջև կհամարվեն հեթանոսներ, կգրավվեն նրանց ամրոցները, և իր զորքերի ձեռքով կգերեվարվեն այդ երկրները:

(Կադանկ., Բ-Ժ)

Այս բոլորից հետո հորդացած հեղեղը (16), հորձանուտ գետը դիմեցին դեպի Վրաստան և շրջապատեցին պաշարեցին փափկասուն, վաճառաշահ, հոչակավոր մեծ Տփղիս քաղաքը: Հայտնի է դառնում նաև մեծ կայսր Հերակլիոսին (17): Նա հավաքում է իր զորքի բոլոր ուժերը, գալիս շտապ հասնում է իր նիզակակից օգնականին, և երբ նա մատուցում է թագավորական ընծաներ ու նվերներ, (թագավորն) ընդունում է, չափազանց ուրախանում են միմյանց տեսնելով: Ապա այնուհետև այնտեղ պետք էր տեսնել աղետը թշվառ մարդկանց, որոնք փակված էին բերդում: Թշվառություն թշվառության ետևից նրանց վրա էր գալիս, բայց սպասելի ժամանակը դեռևս չէր հասել: Այնպես եղավ, որ Խոսրովն իմացավ երկու մեծ թագավորների հանդիպման մասին: Նախքան այն քաղաքը պաշարելը շտապ կարգով ուղարկում է նրանց օգնելու և քաղաքը պահպանելու զորք՝ սրտոտ ու քաջ պատերազմող իր զորապետ Շարհապադին, սրա հետ իր թիկնապահներից

ու դոնապահներից ընտիր հեծյալներ՝ մոտ հազար մարդու: Երբ քաղաքի բնակիչները տեսան ուղարկված օգնականին հաղթանդամ ու վարժ զինակիցներով, չափազանց ոգևորվեցին ու սկսեցին ծաղրել երկու թագավորներին, չնայած տեսնում էին հյուսիսի ու արևմուտքի զորքերի անթիվ բազմությունը, որ լեռների նման ճակատ էին կազմել քաղաքի շուրջը. երկիրը թնդում ու ցնցվում էր բազմությունից. Սրա հետ մեքենաները, քառանիվները և հոռմեական ճարտարագործների ձեռքով պատրաստված տեսակ-տեսակ այլ գործիքներ, որոնցով նրանք անվրեպ կերպով մեծամեծ քարեր էին նետում փլուզելու պարիսպը: Նաև տեսնում էին մեծամեծ, քարալից, ավազալից ուռուցիկ տիկերը, որոնցով մեծ Կուր գետը, որ հոսում է քաղաքի մի կողմով, ետ դարձնելով՝ հոսանքը պարսպի դեմ էին ուղղում: Բայց նրանք ոչ մի բանից չթուլացան, այլ քաջալերում էին միմյանց և նրանց քանդածները տեղնուտեղը շինում ու վերականգնում էին:

Իսկ երբ երկու թագավորների զորքերն էլ լքվեցին, տկարացան, հոգնեցին, նաև քիչ չէր մարտում ընկած հետևակների թիվը, թագավորները միմյանց հետ խորհրդակցեցին ու ասացին. «Ինչի համար է մեր զորքերի այսպիսի կորուստը. չէ որ երբ հզորին կապենք, ինչպես կամենանք, նրա տունը կողոպուտի կենթարկենք: Այնժամ նախանձախնդիր մեծ կայսր Հերակլեսը մտածեց և կարգավորեց, թե ինչ է պետք անել: Իրեն օգնելու եկած մարդուն ասաց. «Դարձի՛ր դու և քո զորքով խաղաղությամբ այս տարի գնա՝ քո տեղը, որովհետև մենք տեսնում ենք, որ դուք զով երկրի բնակիչ էք և չեք կարող դիմանալ, երբ Ասորեստանի ամառային տապախառ շոգերը վրա հասնեն, ուր Տիգրիս մեծ գետի ափին պարսից մայրաքաղաքն է: Մյուս տարի, երբ շոգ ամիսները կանցնեն, կշտապես վերադառնալ այստեղ, որպեսզի կատարենք մեր մտադրությունը, իսկ ես չեմ դադարի մարտնչել պարսից թագավորի դեմ և վտանգի ենթարկելով՝ նեղություն կպատճառեմ

նրա երկրին ու բնակիչներին: Եվ խելամտությամբ այնպիսի հնարներ կգործադրեմ, մինչև որ իրենց միջոցով կատարվի»:

Եվ երբ քաղաքի բնակիչները իմացան նրանց լքումի ու տկարանալու մասին, ավելի հպարտացան իրենք իրենց մեջ ու սկսեցին իրենց կորստյան պատճառ հանդիսացող խաղը խաղալ: Բերեցին մի մեծ դդում, դրա վրա նկարեցին հոների թագավորի պատկերը՝ մի կանգուն երկայնությամբ և մի կանգուն լայնությամբ. Աչքերի արտևանդանների փոխարեն ճյուղեր գծեցին, որ ոչ ոք չէր կարող նշմարել: Նույնպես արեցին մորուքի լերկ ու այլանդակ տեղը, իսկ մի թիզ լայն քթի տեղը բեղեր գծեցին այնպես, որ ամեն ոք կարող էր ճանաչել: Բերին, դրեցին նրանց հանդիման պարսպի վրա ու գոռալով գորքերին, ասում էին. «Ահավասիկ ձեր կայսր թագավորը. դարձե՛ք, երկրպագեցե՛ք սրան. սա Ջեբու խաքանն է»: Եվ նիզակները վերցնելով ձեռքները՝ նրանց աչքի առաջ ծակոտում էին նրա պատկերին նմանեցրած դդումը: Նույնպես խայտառակում, ծաղր ու ծանակի ենթարկում, անարգում էին նաև մյուս թագավորին՝ պիղծ ու արվամոլ կոչելով: Այս տեսնելով ու լսելով՝ թագավորները քենով լցվում, փքվում, ոխակալվում, շարժում էին իրենց գլուխները և իրենք իրենց նգովում էին, որ դրանց թագավորության ենթակա բնակիչներից ոչ ոք չազատվի, մինչև որ նախատինքների վրեժը չլուծվի, որոնցով իրենք ծաղրվեցին նրանց կողմից: Եվ իրենց երեսները դարձնելով՝ նույն սպառնալիքներով գնացին:

(Կաղանկ., Բ-ԺԱ)

Ապա այնուհետև Խոսրովի երեսունվեցերորդ տարում օգոստոսական կայսրը մտադրվեց հնարքներ ստեղծել, թե ինչպե՛ս արդյոք կարողանա բուժվել անասելի վշտից ու նախատինքներից: Նաև իր ամբողջ թագավորության ընթացքում իրեն էր միաբանել հռոմեական արքունիքը, որին օգնության կոչեց՝ ճեղքելու Կովկաս մեծ լեռը, որ փակում է հյուսիսարևելյան կողմը, բանա-

լու Չորա դարպասները, հանելու բարբարոսների բոլոր ցեղերը և նրանց միջոցով ետ մղելու պարսից թագավոր գոռոզ Խոսրովին: Այնժամ պատրաստում է իր իշխաններից Անդրե անունով մեկին..., և ուղարկում է նրան անհաշիվ հարստության խոստումներով, հանձնարարելով ասել, թե «Թող միայն օգնեն ինձ իմ վրեժխնդրության մեջ, ես էլ հանձն եմ առնում լիացնել գազանաբարո, ոսկեսեր, վարսավոր ցեղի ծառավը»:

Արդ՝ հյուսիսի արքայի հաջորդը, երբ այս լսեց, որ նրա թագավորության երկրորդն էր՝ Ջերու խաքան անունով, և լսեց մեծ պարզենների խոստմունքը, սրա հետ նաև պարսից արքային ենթակա բոլոր երկրները ասպատակելով ավարի առնելը, ապա լրիվ համաձայնությամբ պատասխան տվեց, ասելով. «Ես վրեժխնդիր կլինեմ թշնամու նկատմամբ. Ես կգամ անձամբ իմ քաջ զորքով, նրան օգնության կհասնեմ և կգոհացնեմ նրա սիրտը պատերազմական գործողությունների մեջ իմ սրով ու աղեղով, ինչպես որ ինքը ցանկանա»:

Այդ ժամանակ այն իշխանի հետ ուղարկում է թվով մոտ հազար ընտիր հեծյալ՝ զորեղ, կորովաձիգ, աղեղնավոր մարդիկ, որպեսզի հաստատեն այն քննված պայմանները: Դրանք հանկարծակի խուժեցին Չորա լեռնանցքով՝ բանի տեղ չդնելով քաղաքապահներին ու պարսից արքայի գումարտակները, որոնք տեղավորված էին լեռնանցքում, այլ սլացան ինչպես արծիվներ Բռառ (18) մեծ գետի մոտով, իրենց դեմ դուրս եկողներից ոչ ոքի չխնայելով: Ճանապարհ ընկան Վրաստանով և եգերացիների երկրով, կտրեցին անցան ծովով ու հասան արքայական պալատը:

(Կադանկ., Բ-ԺԲ)

Եվ մինչդեռ նա (19) իր հայրենիքի զանազան վայրերում կարոտ ու սեր էր սփռում, հանկարծակի կրկին ոռնաց հյուսիսային հողմը և կոծեց Արևելյան մեծ ծովը (20): Եկավ վրա հասավ ոչնչացնող մեծ գազանը Շաթ կոչված իր արյունարբու որդու հետ:

Նախ նա ուղղվեց Վրաստանի դեմ, դիմեց Տփղիս քաղաքի վրա. առաջվա քաջ տղամարդկանցից քաղաքի ներսում ոչ ոքի չգտնելով, տեղին համարեց կուտակված վրեժը լուծել նրանց կողմից հասցված նախկին նախատինքների համար: Եվ երբ քաղաքը պաշարեց ու սկսեց մարտնչել ու նեղել նրա մեջ գտնվող բնակիչներին, վերջիններս էլ դուրս եկան նրա դեմ: Մոտ երկու ամիս ծանր պայքարեցին, իզուր ջանալով իրենց վախճանի ճակատագիրը փոխել: Իրենց արյան թափվելու ահը, որ այդտեղ լինելու էր շուտով, տագնապահար էր անում նրանց:

Այնժամ նրանց վրա մոնչաց սարսափելի գազանը, բավակա-նաչափ մարդկանց իր կորյունների համար որսաց և խեղդեց, որ-ջերը լցրեց որսով և իր գորքերը լիացրեց հափշտակությամբ: Բո-լորը միասին իրենց սրերը բարձրացրին ու դիմեցին դեպի պա-րիսպները. այդքան բազմություն միմյանց վրա դիզվելով, ավելի բարձր դարձան, քան պարիսպները: Մութ ստվեր ընկավ քաղա-քի ողորմելի բնակիչների վրա: Նրանց անդամների հոդերը խախտվեցին, բազուկները թուլացան, պարտության մատնվեցին, ետ նետվեցին պարսպից և խուճապի մատնվեցին, ինչպես որ-սորդների ծուղակների մեջ բռնված ճնճղուկներ: Ոչ ոք չկարողա-ցավ հասնել իր տունը՝ սարսափելի գույժը հաղորդելու, իր սիրե-լի ամուսնուն պատվեր տալու, իր արգանդից ծնվածին սիրելու կամ ծնողների ծնողական սերը մտաբերելու, այլ սարսափահար եղած ջանում էին թաքնվելու՝ ոմանք տանիքների վրա, ոմանք խողովակների մեջ, իսկ շատերն էլ լցվեցին եկեղեցիները և բռնե-ցին սեղանի անկյուններից:

Նրանց գոռում-գոչումները, հառաչանքները նմանվում էին մաքիների մեծաքանակ հոտի մայունին, գառների կամ մայրերի ողբին՝ իրենց ձագերի համար: Նրանց ետևից ընկած էին անո-ղորմ հնձողները, որոնց ձեռքերը արյան վտակներ էին հոսեց-նում, ոտքերը տրորում էին դիակները, իսկ աչքերը տեսնում էին կարկուտի տեղատարափի չափ դիակների կույտերը: Երբ ողբե-

րի ու վայնասունների ձայները դադարեցին, ու ոչ մի մարդ չագատվեց, ապա կոտորողները նույնպես հասկացան, որ իրենց սրերը հագեցան: Բռնած բերեցին նաև երկու իշխաններին. Դրանցից մեկը պարսից թագավորական կուսակալ էր, իսկ մյուսը քաղաքի բուն բնակիչներից՝ Վրաստանի իշխանական տոհմից էր: Երբ դրանք ձերբակալված ներկայացվեցին թագավորին, վերջինս հրամայեց փորել-հանել դրանց աչքերը իբրև հատուցում այն բանի, որ իր պատկերը կույր նկարեցին՝ իրեն անարգելիս: Դաժան չարչարանքներով խեղդամահ արին նրանց՝ ողջ-ողջ հանելով մաշկը նրանց անդամներից: Ապա ձգեցին, հարմարեցրին, խոտով լցրին դրանք ու կախեցին պարսպի բարձունքից:

Նույն ժամանակ ձեռք բերին հավաքված գանձերի արկղերը և բազմաքանակ ավարներով ծանրաբեռնված բերում շեղջ առ շեղջ, կույտ առ կույտ լցնում էին իրենց բռնակալի առջև: Այնքան շատ բերեցին ու լցրին նրա առաջ, մինչև որ ձանձրացավ նայել ու դիտել ոսկու և արծաթի անբավ անհամար տաղանդները: Իսկ եկեղեցիների զարդերը, ականապատ, մարգարտաշար սպասները ու՛վ կարող է նկարագրել:

Արդ՝ երբ կատարեց ըստ իր կամքի և հրամայեց ամբողջ ավարը դուրս բերել այնտեղից, ինքը գանձերով վերադարձավ իր տեղը, իսկ պատերազմող զորքերը հանձնեց իր Շաթ որդուն, որին հրամայեց դաստիարակների, քաջ մարդկանց հետ միասին շարժվել Աղվանքի սահմանները...

...Թե՛ բաժակները, թե՛ ըմպանակները ոսկեջրած քանդակազարդ արծաթից էին, որոնք բերված էին Տփղիսի ավարից: Այդպես էլ եղջյուրե ըմպանակները, թասաձև փայտե մեծ գդալները, որոնցով արգանակն էին խփշտում...

(Կադանկ., Բ-ԺԴ)

Նրանք (21) մտան երեք երկրների՝ Հայաստանի, Վրաստանի և Աղվանքի լեռնային նեղ ճանապարհները: Այդտեղ ընկճվելով

Հյուսիսի հոշոտող առյուծից՝ Ջեբու խաքանից, իր գիշակեր կորյունին՝ Շաթին, հասցնում է սոսկալի բոթը, թե «Ինձ վրա ավագակներ են հարձակվել, ու այլևս չես տեսնելու իմ երեսը, ես հանգիստ չմնացի ապահով վիճակի մեջ, այլ ձգտեցի այս անկարգ, անպատշաճ թագավորությանը, որ ինձ չէր հասնում: Իմ ամբարտավան դառնալու հետևանքով ընկա նաև այս բարձրությունից: Արդ՝ դու մի՛ դանդաղիր կոտորել քեզ հետ բոլոր ժողովուրդներին և ձգտի՛ր դրանց ձեռքից ազատվել. որովհետև եթե դրանք նախապես լսեն իրողությունը, կշտապեն /նույնը/ քեզ համար պատրաստել, իսկ այդ դեպքում ես կկորչեմ և անժառանգ կմնամ:

(Կադանկ., Բ-ԺԶ)

Այդ ժամանակ իսկույն ժամանում է գուժաբերը և ասում է, թե՝ <<Պարսկական գորքը մտավ Պերոզ քաղաքը և գերեվարեց մորդ՝ եղբայրներիդ հետ միասին>> (22)... Դառնացած արագ անցնում է իրեն ենթակա իր հայրենիքի սահմաններից Կուր գետի այն կողմը գտնվող Կապիճան գավառը (23) և այնտեղ նրանց դեմ ճակատամարտում է ոչ այնպես վայրիվերո, այլ մտածված ու կշռադատված: Իր անվախ կովի հետևանքով գլխից վերք է ստանում, սակայն Քրիստոսի զորեղ աջի օգնությամբ այնպես կտրուկ և ուժեղ հանդես եկավ, որ թշնամուց մինչև անգամ մի մարդ էլ կենդանի չմնաց: Այդտեղից մեծ ու պանծալի անունով դադար է առնում Վրաստանի սահմաններում: Երկրի իշխող Ատրոներսեհը, որ մի մեծապատիվ մարդ էր և հռոմեական թագավորությունից ստացել էր եռակի գահերեցության (24) տիտղոս, այդտեղ այցելում է նրան, ինքն իր ձեռքով փաթաթում է նրա վերքը և նրա քաջարի հաղթությունը համարում է մեծ ուրախություն: Այդ ժամանակ խաղաղ ու անքակտելի դաշինք են կապում միմյանց հետ, ու Ջվանշիրը օգնական գորք է վերցնում վրացիներից, աճապարում է ամենից առաջ արշավել Ուտիք (25). Այդտեղ պարսից զորքից ում որ գտնում է, տեղն ու տեղը սրի

ճարակ է դարձնում: Եվ չափազանց շտապ հասնում է իր ձմեռանոցային քաղաքի վրա ու նույն ձևով է վարվում, մինչև անգամ չափահասներին ու արգանդից նոր ծնված մանուկներին բռնի կերպով կորզում է...

...Այս ամենը տեսնելով՝ հայոց ու վրաց նախարարները մտածում են իրենց սերունդից նրան կին տալ: Իսկ նա կին է առնում Արուիճան տոհմից Սիսական (26) նահանգի իշխանի դստերը, որի համար Սյունիքն ընդմիշտ ուրախանում է:

(Կադանկ., Բ-ԺԹ)

Նա (27) ցոփ կյանք չէր անցկացնում, այլ ամբողջ օրը զբաղվում էր երկրի հոգսերով: Կովկաս լեռան շուրջ բնակվող վայրենաբարոներին իմաստուն կերպով գիտակցության էր բերում: Այսպիսով Վրաստանի սահմաններից մինչև Արաքս գետը տեղաբնակ միահեծան մեծությամբ:

(Կադանկ., Բ-ԻԱ)

Նույնիսկ Ասորեստանից, Ատրպատականից, Այրարատից ու Վրաստանից, մինչև իսկ Հնդկաստանից գալիս էին նրա (28) մոտ նրան տեսնելու և լսելու նպատակով:

(Կադանկ., Բ-ԻԲ)

Խորհրդակցություն այն մասին, թե երբ անիծվեց Քաղկեդոնի չար ժողովը (29) և Աղվանքն այդ աղանդից գերծ մնաց, վրացիները հայերից բաժանվեցին, և թե Աբրահամ կաթողիկոսն Աղվանքի համար ինչ արեց

Բյուզանդացիների թվականության քառասուններքերորդ տարին էր, երբ Հայաստանը քրիստոնյա դարձավ, Աղվանքի՝ քրիստոնյա դառնալուց 270 տարի առաջ: Հայերի քրիստոնյա

դառնալուց 180 տարի անցած՝ հայոց կաթողիկոս Բաբգենի ժամանակ Քաղկեդոնի աշխարհակործան ժողովի առթիվ տեղի ունեցավ քննաժողով: Հույները, ամբողջ Իտալիան, հայերը, աղվանները և վրացիները միաբանված նգովեցին Քաղկեդոնի չարափառ (հերձվածող) ժողովը և Լևոնի տոմարը բյուզանդական բարեպաշտ թագավորներ Զենոնի ու Անաստասի հրամանով: 878 տարի անցնելուց հետո՝ հայոց կաթողիկոս Աբրահամի ժամանակ վրացիները անիծյալ Կյուրոնի միջոցով բաժանվեցին հայերից. սրանց հետ բաժանվեցին նաև հույներն ու Իտալիան: Իսկ աղվանները չհեռացան ուղղափառությունից և հայերի հետ միաբանվելուց: Կյուրոնի ընդդեմ դառնալու առթիվ Աբրահամը շրջաբերական նամակում նրա մասին բոլոր ազգերին մեղադրականներ է գրում՝ հոգևոր սրով կտրելով ու դեն նետելով: Նախ հայտնում է աղվաններին, նրանց իմացնում է և իր նամակում այսպես է գրում. «Թե հայերի աթոռակալությունից առաջ հաստատվել է Աղվանքի աթոռակալությունը (30). նրա մեզ հետ համաձայն լինելով և նրանց կամակցությամբ մենք ու աղվանները նգովեցինք, գրեցինք Կյուրոնին՝ ըստ մեր հայրերի կանոնական հրամանի, որ գրեցին բյուզանդացիների վերաբերյալ, և մնում է ընդմիջտ: Նույն բանը հրամայեցինք նաև վրացիների վերաբերյալ, այն է՝ ամենևին չպետք է շփվել նրանց հետ ո՛չ աղոթելիս, ո՛չ ճաշելիս, ո՛չ էլ խմելիս, ո՛չ բարեկամությամբ, ո՛չ դայակությամբ. աղոթելու չպետք է գնալ այն խաչի մոտ, որ Մցխեթ վայրով է հոչակված. չպետք է գնալ նաև Մանգլիսի խաչը, նրանց մեր եկեղեցիներում չպետք է ընդունել, իսկ ամուսնական կապերից ամենևին պետք է հեռու մնալ. միայն կարելի է առևտուր անել նրանց հետ այնպես, ինչպես հրեաների հետ:

(Կաղանկ., Բ-ԽԷ)

Ինը դասակարգության պատճառով (31) եկեղեցական գլխավորները քմահաճ կերպով ըստ իրենց գոռոզ բնավորության Աբ-

րահամին պատրիարք են կարգում հայերին, Աղվանքի համար արքեպիսկոպոս են դնում, իսկ վրացիների համար՝ մետրոպոլիտ: Վրաց մետրոպոլիտը, որի անունն էր Կյուրոն, չենթարկվեց և վճռեց հակառակվել, իսկ Աբրահամ հայրապետն ասում էր, որ Աղվանքը վրացիներից ավելի առաջ է հավատացյալ դարձել, նրանց հասնում է եպիսկոպոսապետություն: Այս վիճաբանությունից ելնելով, վրացիները դիմեցին ուղղափառ հավատին և դարձան քաղկեդոնականներ:

(Կադանկ., Բ-ԽԸ)

Միմոնից հետո Աղվանքի հայրապետական աթոռն է նստում երջանիկ Միքայելը և ապրում է երեսունհինգ տարի: Սրա օրոք Աղվանքի իշխաններն ամուսնանում էին իրենց արյունակիցների հետ. այսպես՝ Վախթանգի որդի Վարազմանի թոռ Վարազոն իր թոռնակից Վարդանուհուն է առնում: Տեր Միքայելն արգելում է նրան՝ ասելով, թե մի՛ հանդգնիր առնել, որովհետև թոռնակիցներ եք: Իսկ նա, կորստյան միտք հղանալով, գրում է վրաց կաթողիկոս Թալիլեին, որ այս վերջինն օրհնի իր անօրինական ամուսնությունը: Իսկ այն չարափառ մարդն այսպես է առաջարկում. «Եթե դուք ընդունում եք իմ դավանանքը, օրհնված եք, իսկ եթե մնում եք աղվանից ավանդություններին հավատարիմ, ձեր գործն է»: Այդ ժամանակ Աղվանքի կաթողիկոս Միքայելն իրեն ենթակա ուխտի ժողով է անում և իր մոտ է կանչում հռչակավոր Սողոմոնին, որ մաքենացիների սուրբ ուխտի առաջնորդն էր, իսկ այդ ուխտը իր ժամանակին Հայաստանի պարծանքն էր: Եվ նրանց բոլորին հավաքեցին Շամքորի բերդ (32) վանքում, որոնք միաբան ժողովով նգովեցին Վարազդյի տունը: Միննույն ժամին արաբները հասան և մոր գրկում սրով փողոտեցին նրա մի որդուն, իսկ մյուս որդուն ձին տարավ, սպանեց: Ժողովականները նամակ գրեցին վրաց եպիսկոպոս Թալիլեին. թե՛ »Ինչու հանդըգնեցիր սուրբ առաքյալների աշակերտների կողմից տրված կա-

նոնները քանդել, որոնք (աշակերտները) հավաքվելով Անտիոքում, Պողոս Սամուսատցուն վտարեցին սուրբ եկեղեցուց և սահմանեցին կանոնական օրենքներ. «Թե ոչ որ չպետք է հանդգնի իր արյունակցի հետ ամուսնանալ, և դա սուրբ Աթանասի կանոնական հրամանն է, որ այդպիսի ամուսնությունը ոչ թե ամուսնություն է, այլ պոռնկություն: Նաև երանելի Բարսեղն է այս առթիվ խոսել: Արդ՝ մենք՝ ուղղափառ ժողովս, քեզ նգովեցինք բոլոր հերձվածողների հետ, իսկ արդարադատ Քրիստոսին կհատուցենք բազմապատիկ փառք»:

(Կաղանկ., Գ-ԺԳ)

Երեք տարի հետո եկավ Մսլիմանը, ավերեց Դերբենդը և մտավ Խազիքը, որտեղից չկարողացավ դուրս գալ: Ապա թողեց ամեն ինչով կազմ ու պատրաստ բանակը, մինչև անգամ հարձերին իր վերջապահներին հանձնեց: Եռանշահիկ Վաչագանին՝ Աղվանքի ազնվական իշխանին, որը քաջ, կորովի աղեղնավոր էր, իր ամբողջ զորքով իրեն վերջապահ նշանակեց, որի ետևից ընկնելով, խազիրները պարտվեցին ու փախուստի մատնվեցին: Այսպես ազատվելով Մսլիմանը գնում է Վրաստանի կողմով...

(Կաղանկ., Գ-ԺԶ)

Հայոց երկու հարյուր ութսունվեց թվականին տասներկու հազար հեծյալներ, հանկարծառաւ լինելով Բաղդատից, արշավում են Աղվանք: Այդտեղ հոգ է տանում Սահլի Սմբատյանը, որ զարմիրհական արքաների տոհմից էր... Նույն տարին միննույն իշխան Սահլի Սմբատյանը ձերբակալում է ապստամբ Բաբանին, որը մարդախողխող, աշխարհավեր, արյունարբու գազան էր, և հանձնում է ամիրմուսնիի ձեռքը: Իր վաստակների դիմաց արքունիքից մեծ վարձատրություն է ստանում: Իրավունք է ստանում Հայաստանի, Վրաստանի ու Աղվանքի վրա՝ բոլորին տիրելու արքայական իշխանությամբ:

Բայց հայոց երկու հարյուր ութսունյոթ թվականին... իշխանաց իշխան Հովհաննեսը, որ տեր դարձավ Հայաստանին, Վրաստանին ու Աղվանքին, արքունիքից կրկին անգամ խնդրեց երեք երկրները՝ Բուլղարը, Խոյտան, Փատգոսը (33)...

...Հաջորդ տարին Հայաստան եկավ Բուղան, Տփղիս քաղաքում սպանվեց Իսմայիլյան Սահակը, և Բուղան երեք տարի իշխեց Հայաստանի վրա...

(Կադանկ., Գ-Ի)

Նույն տարին անօրեն արաբը երկրորդ անգամ գալիս է Հայաստան և սրա հրամանով Պարտավի արքունիքից դուրս է գալիս ներքինին Հայաստան գալու։ Սա լիրբ ու անաստված մի մարդ էր, ուր որ նրա ոտքը ընկնում էր, ավերում, քանդում էր աստծու եկեղեցիները... Երբ նա Հայաստան հասավ, Սմբատը ժամանակավորապես փախստական դարձավ։ Նա գրավեց Սմբատի ամրոցը... Նույն տարին արշավեց Վրաստան, սրա դեմ դուրս եկան վրաց երկու քաջ զորավարներ՝ Գևորգ իշխանը և սրա Արևես եղբայրը, բայց երկուսն էլ չարաչար կերպով սպանվեցին նրա ձեռքով։

(Կադանկ., Գ-ԻԱ)

Տեր Երեմիան՝ սրա ժամանակ երանելի Մեսրոպը գիր ստեղծեց Աղվանքի համար. սա մեծ ջանքով գիր ստեղծեց նաև հայերի ու վրացիների համար...

Տեր Վիրոն իշխեց երեսունչորս տարի։ Սա Հայոց, վրաց և աղվանից գերիներին ազատեց Շաթ խագրից...

Տեր Միքայել, իշխեց երեսունհինգ տարի, սա սարկավագ էր Շաքիից և իր մոտ կանչեց մաքենացիների վանահայր Սողոմոնին ու անիծեց Աղվանքի իշխաններին, որոնք ամուսնացել էին իրենց եռապորտ ազգականների հետ, և որոնց անմիջապես

պատիժ վրա հասավ ու ոչնչացան: Սրանց հետ նգովեցին նաև վրաց Թալիլե առաջնորդին:

(Կադանկ., Գ-ԻԳ)

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Միկիլիացիները կամ սիցիլիացիները Բտալիայի հարավում գտնվող Միցիլիա կղզու բնակիչներն էին:
2. Տյուրենացիները Բտալիայի հյուսիս-արևմուտքում գտնվող Տյուրենիայի հնագույն բնակիչներն էին:
3. Հռովմացիները Հռոդոս կղզու բնակիչներն էին:
4. Խոսքը պատմահայր Մովսես Խորենացու մասին է:
5. Ուտիքը Մեծ Հայքի տասնհինգ աշխարհներից մեկն էր: Նրա գավառներից էր նաև Ուտի Առանձնակը, որտեղ գտնվում էր Պարտավ քաղաքը: Մովսես Կադանկատվացու օրոք Ուտիք աշխարհը միացված էր Աղվանքին:
6. Գեղամա ծովակը Սևանա լիճն է:
7. Սա Հայոց Տրդատ Մեծ (297-330 թթ.) թագավորն է:
8. Փայտակարանը Մեծ Հայքի տասնհինգ աշխարհներից մեկն էր Վարդանակերտ, Փայտակարան և այլ քաղաքներով: Տարածվում էր Արաքսի աջ ափին և հասնում մինչև Կասպից ծով: Փավստոս Բուզանդն այս երկրամասը կոչում է Կասպից աշխարհ:
9. Տեղեկությունը վերաբերում է Գրիգոր Լուսավորչին:
10. Խոսքը վերաբերում է Մեսրոպ Մաշտոցին:
11. Ռոմանոսքը հոների թագավորի՝ գրական ճանապարհով հորինված անունն է ըստ Վ. Առաքելյանի: Տե՛ս Մովսես Կադանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, Եր., 1969, էջ 281, ծանոթ. 123:
12. Խաղխաղը որպես Հայոց, իսկ հետագայում որպես Աղվանից թագավորների արքունի ձմեռոց, հիշատակում են Ագաթանգեղոսը, Եղիշեն և Ղազար Փարպեցին: Բնակավայրը հայտնի է նաև 450 թ. այստեղ տեղի ունեցած ճակատամարտով, ուր հայ-աղվանական միացյալ ուժերը հաղթանակ տարան պարսից զորքի դեմ:
13. Սա պարսից Ռուզբեյան Շապուհ թագավորի օրոք էր:

14. Գարդմանը Մեծ Հայքի Ուտիք աշխարհի գավառներից էր՝ համանուն բերդով: Արշակունիների օրոք Գարդմանը Ուտիք աշխարհի նախարարների աթոռանիստն էր:
15. Գայլ ավանը Ն. Ադոնցը նույնացնում է պարսից թագավորների ամառանոց Գանձակի հետ: Տե՛ս Մովսես Կաղանկատվացի, Պատմություն..., էջ 282, ծանոթ. 142:
16. Խոսքը վերաբերում է խազիրների իշխանի՝ Աղվանք կատարած արշավանքին, որից հետո նրանք դիմում են դեպի Վիրք:
17. Սա Բյուզանդիայի կայսր Հերակլիոսն է (610-641 թթ.):
18. Բռառ գետը Վ. Առաքելյանը տեղադրում է Դերբենդի մոտերքում: Տե՛ս Մովսես Կաղանկատվացի, Պատմություն..., էջ 282, ծանոթ. 145:
19. Խոսքը վերաբերում է Աղվանքի Վիրս կաթողիկոսին:
20. Արևելյան մեծ ծովը Կասպից ծովն է:
21. Խոսքը խազիրների մասին է:
22. Գուժկանը գալիս է Աղվանից Ջվանշիր թագավորի մոտ և հայտնում լուրը:
23. Կապիճան գավառը նույն Կամբեճանն է, որն ըստ «Աշխարհացոյց»-ի Աղվանից աշխարհի գավառներից էր և տարածվում էր Կուր գետից հյուսիս:
24. Գահերեցությունը ավատատիրական աստիճանակարգությունում բարձր տիտղոս էր: Ավատատիրական Հայաստանում կային գահերեց և գահակալ իշխաններ:
25. Ուտիքը Մեծ Հայքի արևելյան նահանգներից էր, որը տարածվում էր Կուր գետի երկայնքով, նրա աջ ափին: Պատմության այս հատվածում Ուտիքը միացված էր Աղվանքին:
26. Միսական նահանգը Մեծ Հայքի թագավորության Սյունեաց աշխարհն էր, որն ըստ «Աշխարհացոյց»-ի ուներ տասներկու գավառ:
27. Խոսքը Աղվանքի իշխան Ջվանշիրի մասին է:
28. Խոսքը դարձյալ Ջվանշիրի մասին է:
29. Քաղկեդոնում հրավիրված 4-րդ եկեղեցական տիեզերական ժողովը կայացել է 451 թվականին: Այն դատապարտեց միաբնակներին՝ նրանց համարելով հերձվածողներ: Հայոց եկեղեցին չի մասնակցել այդ ժողովին և չի ընդունել նրա դրույթները՝ այնուհետև հանդես գալով երկաբնակության դեմ:
30. Սա պատմական անճշտություն է: Վ. Առաքելյանը գտնում է, որ Հայոց կաթողիկոսը չէր կարող նման նամակ գրել, և դա ոչ այնքան հեղինակի հորինածն է, որքան՝ գրիչների, քանի որ Կաղանկատվացու երկի ամե-

նահին գրչագրում (1289 թ.) կա մի հատված, որը կեղծիք է, որովհետև ականհայտորեն երկաթագիրը ջնջված է և վրան բոլորովին ուրիշ տառերով շարադրված է այդ հատվածը: Տե՛ս Մովսես Կաղանկատվացի, Պատմություն..., էջ 287, ծանոթ. 222:

31. Ինը դասակարգությունը եկեղեցական հետևյալ աստիճանակարգությունն է՝ պատրիարք, որ է՝ հայրապետ, արքեպիսկոպոս, որ կոչվում է եպիսկոպոսապետ, մետրոպոլիտ, եպիսկոպոս, քահանա, սարկավագ, կիսասարկավագ, գրակարդաց, սաղմոսերգու:
32. Շամքորի բերդը գտնվում էր Հայոց Արևելից կողմանքում՝ պատմական Ուտիք աշխարհում, Տիգրանակերտից հյուսիս-արևելք:
33. Այս երեք երկրների աշխարհագրական տեղադրվածությունը որոշակիորեն հայտնի չէ: Ըստ տեղեկության դրանք պետք է լինեին Հայաստանին, Վրաստանին և Աղվանքին սահմանամերձ երկրներ, որոնց հավակնում էր տիրել իշխանաց իշխան Հովհաննեսը:

ՀՈՎՀԱՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ, ՏԱՐՈՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ¹⁹

Արդ, մինչ Տրդատն (1) ու սբ. Գրիգորը պատրաստվում էին անցնել գնալ Կոստանդիանոս թագավորի մոտ, եկան հասան Ապահունյաց գավառի (2) Մանձկերտ (Մանազկերտ) քաղաքացյուղը: (Այդ ժամանակ) հյուսիսցիների արքան զորք հավաքեց, եկավ վրաց իշխանի (3) վրա. նրան փախստական արեցին, բերին մինչև Կարին (4) քաղաքը և ամբողջ երկիրը ավերելով՝ քառասուն և ութ հազար հոգի գերի տարան: Ուստի երբ վրաց իշխանի պատգամաբերը հասավ Տրդատ թագավորի մոտ և օգնական զորք խնդրեց, թագավորը երեսուն հազար զինվոր տվեց Ապահունյաց իշխանի ձեռքը և ուղարկեց վրաց իշխանին օգնելու: Սրանք (մոտ) մեկ ամիս գնացին, ապա նոր հասան, ուստի և գերյալներից միայն մի փոքր մասը կարողացան ետ դարձնել: Երեք իշխանների ձերբակալեցին և այնտեղ սահմանապահներ (ուղեկալներ) թողնելով, իրենք վերադարձան թագավորի մոտ:

(Հովհ. Մամիկ., Գլ. Ա, էջ 50)²⁰

Իսկ երբ օրվա բոլոր արարողություններն ավարտվեցին, եկան թագավորին (5) ներկայացան Վրաստանում եղած զորքերը: Երեք իշխաններին և չորս հարյուր հոգի էլ (գերված) ընտիր մարդկանց բերին ներկայացրին թագավորին, որը տեսնելով՝

¹⁹ Հովհան Մամիկոնյանի տեղեկությունների աշխարհաբար թարգմանությունը տե՛ս Հովհան Մամիկոնյան, Տարոնի պատմություն, Եր., 1989:

²⁰ Հովհան Մամիկոնյանի տեղեկությունների գրաբար բնագիրը տե՛ս «Մատենագիրք Հայոց», հ. Ե, Անթիլիաս, 2005, էջ 981-1126:

թագավորը չափազանց ուրախացավ և իր գոհությունը հայտնեց Աստծուն, որ թշնամիներին իր ձեռքը մատնեց, ապա առավ նրանց և ուղարկեց Ողական ամրոցը (6): Իսկ իրենք առաջ շարժվելով՝ բազում օրեր գնացին, մինչև որ հասան Հռոմ քաղաքը և բավական երկար այստեղ մնալուց հետո մեծաշուք պատվով ետ վերադարձան: Ցնծագին ուրախությամբ եկան անցան Եկեղյաց գավառը (7), այստեղից էլ երեք օր հետո դուրս եկան և եկան հասան Պալուսյաց աշխարհը (8): Երբ հասան Կուառս գյուղը, որովհետև խիստ հոգնաբեկ էին, մեկ օր հանգիստ առան:

Արդ երբ իշխանները Վրաստան գնացին և գերիներին ետ դարձրին, Աղձնիքի իշխանին, որին Դրով էին ասում, այնտեղ (9) սահմանապահ թողեցին:

(Հովհ. Մամիկ., Գլ. Ա, էջ 53)

Բայց թշնամիներից նրանք (10), որ փախստական գնացին մինչև Հարք, Հարքի իշխանը վեց տեղից հարձակվելով կոտորեց նրանցից ութ հազար հիսունվեց մարդ: Եվ Վրաստան էլ մտնելով՝ նրանք շատ տեղերում ջարդ կրեցին (11), այնպես որ ովքեր իրենց գավառը (իմա՝ աշխարհը-Վ.Վ.) հասան, ընդամենը վեց հազար էին, մինչդեռ երբ Տարոն մտան՝ հիսունութ հազար էին: Այս բոլորը տեղի ունեցան (Տրդատի և մյուսների) Հռոմից գալուց հետո, բայց գործվեցին Աղձնյաց նենգավոր իշխանի ձեռքով:

(Հովհ. Մամիկ., Գլ. Ա, էջ 58)

Վահանի (12) որդի Տիրանի մահվան և Աղի ծովի ափին տեղի ունեցած պատերազմի մասին

Շարադրածս այսքան պատմություններից հետո մեծ սուգ պատեց մեր խաղաղաբնակ երկրին. Վահանը կնքեց իր մահկանացուն, գնաց միանալու իր հայրերին, և թաղվեց սբ. Կարապետի

դռանը՝ իշխելով Տաքոնի և Ապահունիքի վրա երեսուն տարի: Մինչ այդ Վահանի որդի Տիրանը իր հոր և վրաց իշխան Վաշդենի խորհրդով ելավ գնաց պարսից Խոսրով (13) արքայի դուռը՝ դեռևս Հերակլ կայսեր (14)՝ Պարսկաստանի վրա գալուց առաջ: Այնտեղ որդեգրվեց Խոսրովի կողմից, որպես հոգեզավակ, կարգվեց Հայաստանի մարզպան և մի մեծ բանակի գլուխ անցած արշավեց գնաց հունաց վրա, իբր թե նրանց դեմ պատերազմելու համար: Սակայն կայսրին (գաղտնի) լուր ուղարկեց, թե դու մի վախեցիր իմ գալու պատճառով, այլ մի որևէ քաղաք հանձնիր իմ տնօրինությանը, որպեսզի այնտեղ կուտակեմ հայոց բոլոր զորքերին և մնամ քո թիկունքում որպես օգնական: Իսկ կայսրը սիրով բարեկամության ուխտ է կապում՝ ոչ միայն հայոց և պարսից մարզպան կարգել նրան, այլև նշանակել բովանդակ հռոմեների դեմեսլեկոս (15):

Այս բոլորը լսելով՝ վրաց Վաշդեն իշխանը սուրհանդակ է ուղարկում և Խոսրով արքային հաղորդում, թե նենգությամբ դավաճանեց քեզ Տիրանը և անցավ հունաց կողմը: Ուղարկիր, ասում է, ութ հազար հեծյալ զորք Վանանդ (16) գավառը, ես կբռնեմ նրան ու կհանձնեմ քո ձեռքը:

Այնժամ թագավորը կանչում է վրաց իշխանի որդի Ջոջիկին, որին ինքը մարզպան կարգեց, իսկ Սյունյաց իշխանին հրամայեց ձեռակոծ անել և վտարել, որպես նենգավոր ու խաբեբա ազգի: Ապա Վաշդենի մոտ ուղարկեց հինգ հազարանոց մի զորաբանակ: Այստեղ Վաշդենը նամակ է գրում Տիրանին, թե շատ չարչարվեցիր օտարության մեջ, եկ միանանք և միասին որևէ բան մտածենք պարսից արքայի նկատմամբ:

Երբ Տիրանը վերցրեց նամակն ու կարդաց, հենց նույն օրը մեկ այլ նամակ հասավ իրեն Վաշդենի քրոջ որդի Համամից, դրանով հաղորդում էր Վաշդենի նենգության մասին, և թե ինչ նպատակ ունեւր Պարսկաստանից եկած զորաբանակը: Տիրանն էլ շուտափույթ նամակ է ուղարկում Վաշդենին և շատ խիստ

ամոթանք տալիս նրան այդպիսի գաղտնածածուկ դավաճանական գործերի համար: Վաշդենը զայրացած բռնել է տալիս Համամին և կտրում նրա ձեռքերն ու ոտքերը: Այնուհետև առնում է պարսկական զորքը, անցնում Ճորոխ գետն ու հարձակվում Համամի քաղաքի վրա, որը Տամբուր էր (17) կոչվում. Հրի ու սրի մատնեց և քաղաքն ամբողջությամբ գերի վերցրեց: Քաղաքի սրբազան եպիսկոպոս Մանկնոսը սաստիկ անեծքներ թափեց իշխանի գլխին, որի համար իշխանը պարսիկներին հրամայեց կոտորել սուրբ Սիոն կոչվող եկեղեցու քահանաներին: Բայց եպիսկոպոսը լռելյայն աղոթեց առ աստված, և միայն հետևյալ խոսքերը բարձրաձայն արտասանեց. «Թող խոպան ու ավերակ դառնա քաղաքն այս և թող մինչև հավիտյան երբևէ չգտնվի մեկը, որ բնակվի այստեղ: Եվ այդպես ասելով ինքն իրեն նետեց գոհասեղանին՝ հենց սբ. Պենդեկոստեի օրը (18), մինչև Քրիստոսի պատարագն սկսվելը:

Եվ հաջորդ օրվա առավոտյան, մինչդեռ նստած էր Տամբուրա քաղաքի դարպասի մոտ՝ երկնքի ամպերից ճայթած կայծակների շանթերը հրով այրեցին նրան: Համամը, սակայն, հետո վերաշինեց քաղաքը և իր անունով կոչեց Համամաշեն: Իսկ Մանկնոսի անեծքը հիրավի կատարվեց. միայն մի գիշերվա մեջ երեք հազար հոգի սատակեցան-ռչնչացան, մնացյալները փախան հեռացան ու քաղաքն էլ ավերակ դարձավ: Այս նույն տարում հզորացավ Հերակլը, ելավ եկավ սպանեց Խոսրովին, ապա մտաբերեց իր և Տիրանի միջև կնքված պայմանը, կարգեց նրան ամենայն հայոց մարզպան, իսկ ինքը ետ դարձավ գնաց Կոստանդնուպոլիս:

Դրանից ուղիղ ութը տարի հետո հանկարծակի երևաց Աբդոահիմը՝ Մահմեդի քրոջ որդին (19), իր ամբողջ ազգատոհմով, բազում մարդկանցով, առած իր հետ նաև տասնևութ հազար հեծյալ զինվորներ, եկավ և հայոց երկիրը հարկի տակ դրեց: Այնժամ Տիրանը հրամայեց իր բոլոր զորքին գուպար կազմել և պատերազմի պատրաստվել: Սակայն վրաց Ջոջիկ իշխանը՝

Վաշդենի որդին, ժամանակը հարմար գտնելով, ապստամբեցնում է բովանդակ Հայաստանը, որպեսզի չգնան Տիրանին զորավիզ: Երբ Տիրանը տեսավ այս բաները, հասկացավ, որ ամեն ինչի վերջը հասել է, ուստի հետևյալ պատվիրանը տվեց իր այն ութ հազար զորքերին, որոնք կամավոր էին եկել միացել իրեն.

-Ով ժողովուրդ Քրիստոսի, լավ է մեզ մեռնել, քան Աստծո եկեղեցին (անհավատ) տաճիկներին հարկատու եղած տեսնել: Եվ վաղ առավոտից սկսեցին հավաքվել Գրգուռ լեռան (20) ստորոտում, հարավային կողմի դաշտավայրում: Համախմբվեցին և պատերազմի մեջ մտան, որը լուսաբացից մինչև ժամը երեքը տևեց: Եվ մինչդեռ տաճկաստանցիները փախուստի էին դիմում, հանկարծ նկատեցին, որ Անձնացյաց Սահուռ իշխանը ապրստամբեց, կռվից դուրս բերեց իր զորքը և սուրը հայոց զորքի դեմ դարձրեց: Բայց Տիրանը երկու բանակները ճեղքելով մոտեցավ, դուրս եկավ Սահուռի դեմ ու ձայն տվեց. -Կա՛ց, ուրացող Սահուռ, դա Քրիստոսն էր, որ քեզ իմ ձեռքը հանձնեց: Ապա սրով հարվածեց, կտրեց Սահուռի գլուխը և ինքն էլ, երկու իշխանների հետ միասին, հենց նույն տեղում կնքեցին իրենց մահկանացուն: Այնուհետև (թշնամիները) հայոց զորքերին բոլոր կողմերից մեջտեղն առնելով՝ բոլորին էլ կենաց ավարտի հասցրեցին: Իսկ նրանք, որ փախստական եղած ազատվեցին, անցան մորաթախ Օձ քաղաքի կողմերը: Բայց պարսիկների կողմից բոլոր նահատակվածները կան հենց այնտեղ ամփոփված՝ վկայարանի դիմաց, որի անունն էլ վերակոչվեց Սուրբ Բանակ: Ապա Աբդուհիմը անցավ դեպի Հարք (21), Բասեն (22), Վրաստան, Ջավախք (23) և Վանանդ (24) գավառները, բոլորին հարկատու դարձրեց և ետ վերադարձավ գնաց Տաճկաստան:

(Հովհ. Մամիկ., Գլ. Բ, էջ 112-114)

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Սա Հայոց թագավոր Տրդատ Մեծն է (297-330 թթ.), որը Գրիգոր Լուսավորչի հետ պատրաստվում էր մեկնել Կոստանդիանոս կայսեր (323-337 թթ.) մոտ՝ խաղաղության և բարեկամության դաշինք կնքելու համար:
2. Ապահունիքը Մեծ Հայքի թագավորության Տուրուբերան նահանգի գավառներից էր, որի միջով հոսում էր Արածանի (Արևելյան Եփրատ) գետը:
3. Այստեղ վրաց առաջնորդը կոչվում է ոչ թե «թագավոր», որն անկախ պետականության խորհրդանիշ է, այլ «իշխան», որը ցույց է տալիս, որ այս ժամանակ, այսինքն՝ Հայոց Տրդատ Մեծ թագավորի օրոք, Վիրքը կամ Վրաստանը ոչ թե թագավորություն էր, այլ իշխանապետություն և գտնվում էր այլ պետության գերիշխանության ներքո: Այդ երկիրը պետք է լիներ Մեծ Հայքը: Սա նկատելի է ոչ միայն այս տեղեկությունից, որ վրաց իշխանը նահանջում է Կարին և օգնական զորք ստանում Հայոց թագավորից, այլև այս մասին հիշատակում են 5 դ. հայ պատմիչ Մովսես Խորենացին, ինչպես նաև 11 դ. վրաց հեղինակ Լեոնտի Սրովելին:
4. Կարինը Մեծ Հայքի թագավորության Բարձր Հայք նահանգի գավառներից էր, որի կենտրոնն էր Կարին քաղաքը, որը ներկայիս էրզրում քաղաքն է Թուրքիայում:
5. Այստեղ դարձյալ խոսքը Տրդատ Մեծ թագավորի մասին է:
6. Ողական ամրոցը գտնվում էր Տուրուբերան նահանգի Տարոն գավառում: Այն նախապես պատկանել է Սլկունի նախարարական տոհմին, իսկ նրանցից հետո եղել է Մամիկոնյանների նստավայրը:
7. Եկեղյաց գավառը կամ Եկեղիքը գտնվում էր Մեծ Հայքի Բարձր Հայք աշխարհում: Այս գավառը նախաքրիստոնեական շրջանում հայտնի էր որպես Անահտական գավառ:
8. Պալունյաց աշխարհը Պալունիքն է, որը Մեծ Հայքի Վասպուրական աշխարհի գավառներից էր:
9. Այն տեղեկությունը, որ Աղձնիքի իշխանը, որը նաև բղձխ էր, Վրաստանում կարգվում է սահմանապահ հյուսիսից ներխուժող թշնամիների դեմ, վկայում է, որ Տրդատ Մեծի օրոք Վիրքը եղել է Մեծ Հայքի ռազմաքաղաքական ենթակայության ներքո, որի պատճառով էլ Հայոց թագավորը հոգում է նրա սահմանների անվտանգությունը:

10. Այստեղ խոսքը վերաբերում է հյուսիսից հարձակված հոների, որոնք պարտություն էին կրել Տարոնում՝ Տրդատ Մեծի դեմ մղած ճակատամարտում:
11. Բնագրում գրված է «Եւ ի վիրս մտեալ՝ ի բազում տեղիս կոտորեցին»: Վ. Վարդանյանը գտնում է, որ այսպիսի ընթերցումը սխալ է և գրվածքի բուն մտքին էլ հակասում է, ուստի թարգմանել է այնպես, որ հյուսիսցիներն են կոտորվել Վիրքում: (Տե՛ս Հովհան Մամիկոնյան, Տարոնի Պատմություն, Եր., 1989, ծանոթ. 47):
12. Այս Վահանը Սմբատ Մամիկոնյանի որդին է:
13. Սա Պարսից արքա Խոսրով Բ Փարվեզն է (590-628 թթ.):
14. Սա Բյուզանդիայի կայսր Հերակլն է (610-641 թթ.):
15. Դեմեսելեոսը զինվորական բարձր աստիճան էր Բյուզանդական կայսրությունում:
16. Վանանդը Մեծ Հայքի Այրարատ աշխարհի գավառներից էր:
17. Տամբուր քաղաքը գտնվում էր Խաղտիքում և նույնացվում է նոր ժամանակների Համշենի հետ: Տամբուրի և Համշենի պատմաաշխարհագրական նույնացման մասին վկայում է Հովհան Մամիկոնյանը նշելով, որ վերակառուցելով Տամբուրը՝ Համամ իշխանն այն անվանում է Համամաշեն, որից էլ առաջացել է անվան կրճատ «Համշեն» ձևը:
18. Պենդակոստեի օր - նշանակում է Հիսներորդ. տոն օր, որը կատարվում էր գատկի տոնի 2-րդ օրվանից հիսուն օր հետո:
19. Այստեղ արդեն տեղեկացվում է արաբական արշավանքների մասին:
20. Գրգուրը Հայկական Տավրոսի լեռնագագաթներից է: Գտնվում է Վանա լճի հարավարևմտյան ափին:
21. Հարքը Մեծ Հայքի Տուրուբերան աշխարհի գավառներից էր: Գտնվում էր Արածանիի հովտում:
22. Բասենը Մեծ Հայքի Այրարատ աշխարհի արևմտյան գավառն էր: Գտնվում էր Մուրց և Արաքս գետերի խառնարանում: Սահմանակից էր Բարձր Հայք, Տայք և Տուրուբերան աշխարհներին:
23. Ջավախքը Մեծ Հայքի Գուգարք աշխարհի արևմտյան գավառն էր: Թեև ըստ «Աշխարհացոյց»-ի Ջավախքը Գուգարքի մյուս գավառների հետ հանվել է Մեծ Հայքի կազմից և միացվել Վիրքին, սակայն այստեղ Վիրքն ու Ջավախքը հիշատակվում են հավասար հարթության վրա՝ որպես գավառներ:
24. Վանանդը Մեծ Հայքի Այրարատ աշխարհի գավառներից էր: Հայտնի էր նաև Վերին կամ Անփայտ Բասեն անվամբ: Տարածվում էր Ախուրյան գետի հովտում:

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ (Ը-Թ ԴԱՐԵՐ)

ՂԵՎՈՆՂ, ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ²¹

Տաճիկների (1) միջև տեղի ունեցող պատերազմի ժամանակ (2) հարկատվությունից դադարեցին Հայաստանը, Վիրքն ու Ադվանքը, երեսուն տարի ծառայելուց հետո: Նրանք երեք տարի ապստամբ մնացին: Իսկ չորրորդ տարում մեր Հայոց աշխարհին տիրեց հյուսիսային ազգը, որ կոչվում էր խազիրներ(3): Նրանք պատերազմում սպանեցին Գրիգոր իշխանին, բազում նախարարների և վրաց ու ադվանից իշխաններին: Ասպատակ սփռելով մեր Հայոց աշխարհը՝ բազում գավառներ և ավաններ գրավեցին, ապա վերցնելով ավարը և գերյալներին՝ գնացին իրենց երկիրը:

(Ղևոնդ, Գլ. Դ)²²

Իսկ Սմբատ կուրապաղատը և նրա հետ եղող նախարարները գնալով մեկնեցին մեր երկրից (4) և անցնելով (սահմանը)՝ հունաց թագավորից խնդրեցին բնակության քաղաք և արոտավայրեր իրենց ոչխարների հոտերի համար, և նա տվեց այն

²¹ Ղևոնդի տեղեկությունների աշխարհագրաբար թարգմանությունը տե՛ս **Ղևոնդ**, Պատմություն, Եր., 1982:

²² Ղևոնդի տեղեկությունների գրաբար բնագիրը տե՛ս «Մատենագիրք Հայոց», հ. Զ, Անթիլիաս, 2007, էջ 735-851:

քաղաքը, որ Փույթ է կոչվում՝ Եգեր աշխարհի (5) կողմերում:
Նրանք այնտեղ բնակվեցին 6 տարի (6):

(Ղևոնդ, Գլ. Ժ)

Արդ (7), չհիշելով շատ լեզուներ, որոնցով այս սքանչելի փրկչական աստվածագիտությունը տարածվեց(8), միայն քչերին կհիշեմ, առաջին՝ մեր հունաց, երկրորդ՝ հռոմայեցոց, երրորդ՝ եբրայեցոց, չորրորդ՝ քաղդեացոց, հինգերորդ՝ ասորվոց, վեցերորդ՝ եթովպացոց, յոթերորդ՝ հնդկաց, ութերորդ՝ ձեր՝ սառակինոսներիդ, իններորդ՝ պարսից, տասներորդ՝ հայոց, տասնմեկերորդ՝ վրաց, և տասներկուերորդ՝ աղվանից (լեզուները):

(Ղևոնդ, Գլ. ԺԴ)

Կառավարչի իշխանությունն ունեցած ժամանակ Եզիտը (9) դեսպան հղեց հյուսիսի արքային, որին Խաքան են կոչում (10) և խնդրեց խնամություն հաստատել նրա հետ, որպեսզի այդ միջոցով խաղաղության ուխտ հաստատի իր և խազարաց գորքի միջև: Խազարաց արքան, հավանելով նրան, կնության տվեց իր քրոջը, որի անունն էր Խաթուն և նրա հետ առաքեց բազում նաժիշտներ, աղախիններ և ծառաներ: Սակավ ժամանակ ապրելուց հետո Խաթունը վախճանվեց, և ընդհատվեց նրանց միջև եղած խաղաղության ուխտը, քանզի նրա մահը համարեցին դավի նենգության արդյունք: Բազում գորք հավաքելով՝ (Խաքանը) հանձնեց զորավարներից մեկին, որի անունն էր Ռաժթարխան՝ Խաթիրլիթբեր տոհմից, և առաքեց մեր աշխարհի վրա, որը Եզիտի ձեռքում էր: Ասպատակ սփռելով Կուր կոչված հզոր գետի հյուսիսային կողմերում, առան բազում գավառներ՝ Հեջար, Քաղա, Ոստան Մարգպանյան, Հաբանդ, Գեղավու, Շաքե, Բեխ, Խենի, Կամբեխճան, Խողմագ: Այս գավառները Աղվանից աշխարհում են: Վերցրին և Բաղասական ցանկալի դաշտը... Առան և վրաց իշխանության երկրից յոթ գավառ՝ Շուչք, Քուեշկափոր (Քուեշ կափոր),

Ձելթդ /Ձելթ/, Ծուքթթ, Վելիսցիխե, Թիանթթ և Երկ (Խերկ): Հավաքելով գերիների բազմությունը և բազում ավար՝ դարձան իրենց բնակավայրերը: Իսկ այն պոռոտախոս հողակապավորը, որն ուներ մեր Հայոց աշխարհի հրամանատարությունը (11), չկարողացավ գլուխ բարձրացնել, այլ միայն իբրև անբան կծկվել-թաքնվել էր, նրան ոչինչ էր թվում երկրի կործանումը:

(Ղևոնդ, Գլ. ԼԱ)

Քանզի, երբ Հայաստանի նախարարները տեսան իրենց վրա կախված սարսափելի վտանգը, մահը հանձն առան և ձեռնամուխ եղան մի բանի, որ չէին կարող իրագործել, վասնզի փոքրաթիվ էին: Սակայն լավ համարելով քաջությամբ մեռնել, քան աղետալի կյանք վարել, ձեռնամուխ եղան ապստամբության (12) և մերժեցին Իսմայելին հնազանդվել:

Սույն դեպքերի սկիզբը կատարվեց Արտավազդի ձեռքով, որ Մամիկոնյան տնից էր: Գնալով Դվին մայրաքաղաքը, մեծ չափով կազմակերպեց իր զորքը, ստացավ զենք ու պատերազմի գործիքներ, զինվեց զրահով ու սաղավարտով, ամենայն սպառազինությամբ և իրեն մտերիմ ձևացրեց Իսմայելի զորքերին իբր թե կամենում էր մարտնչել նրանց թշնամիների դեմ:

Բաժանվելով նրանց շրջանակից՝ նա հասավ Շիրակ գավառի Կուսայրի գյուղը և սպանեց գլխավոր հարկահանին ու նրա մոտ եղած ամեն ինչը վերցնելով՝ ամբողջ տնով գնաց Վրաց աշխարհի կողմերը՝ իր հետ տանելով մեր երկրի բազմաթիվ նախարարներին:

Լուր հասավ Դվին քաղաք, թե Հմայեկի որդիները այդպիսի դառն ոճիք էին գործել: Մահմետը (13) շուտափույթ բազում զորք հավաքեց, (վերցնելով) նաև Աշոտի որդուն՝ Սմբատին (14), հայոց սպարապետին և այլ նախարարների ու նրանց հետապնդելով հասավ Վրաց աշխարհի այն գավառը, որ կոչվում էր Սամցխե (15): Գրավելով կիրճերը՝ նա ավարի մի մասը խլեց և

նրանց հալածելով փախցրեց Հայոց աշխարհից: Իսկ նրանք գնացին ու պատսպարվեցին Եգեթաց աշխարհում, և նա (Արտավազդը) ստանձնեց Եգեթաց իշխանությունը, ինչպես նաև Վեռիայի, այսինքն Վիրքի:

(Ղևոնդ, Գլ. ԼԴ)

Սրա օրօք (16) չարաչար մահվամբ սպանվեց նաև Վրաց իշխանը, քանզի բարձրացնելով նրա ոտքերից ու ձեռքերից, մատաղ հասակը մեջտեղից կտրեցին: Այսպես, իբրև սպանդի տարված գառն, նա հրաժարվեց այս կյանքից :

Այս ամեն չարիքները գործելուց հետո (Մուսեն) մեկ տարի անց սատակեց (17):

(Ղևոնդ, Գլ. Խ)

Սրանից հետո եկավ Մուսեի եղբայր Ահարոնը (18)՝ Մահմետի որդին, ազահ ու արծաթասեր:

Սրա իշխանության օրերին նրան հակառակորդ էր եղբայրը՝ Ուլբեղլան, և միմյանց նկատմամբ եղած հակառակության պատճառով նա բաժանեց և տվեց եղբորը Ատրպատականն ու Հայաստանը՝ Վիրքով ու Աղվանքով հանդերձ (19): Իր չար բարքի համաձայն, մեր երկրի վրա կարգեց անսանձ և ժանտաբարո անասովածությամբ հրամանատարներ, որոնք Աստուծո երկյուղը նույնիսկ միտք չէին ածում:

(Ղևոնդ, Գլ. ԽԱ)

Ապա երբ այսպես ունեցվածքից զուրկ մնացին, մերկ, բոքիկ ու սովամահ և, իրենց ապրուստի միջոց չգտնելով, քաշվեցին փախստական գնացին (20) Հունաց աշխարհը: Նրանց թիվը ասվում է թե 12 հազարից ավելի էր, կանանցով ու մանուկներով հանդերձ, և նրանց առաջնորդներն էին Ամատունյաց տոհմից Շապուհը, նրա որդի Համամը և ուրիշներ Հայաստանի նախա-

րարներին ու նրանց հեծյալներից: Անօրեն չարաշուք թշնամին փախստականների ետևից իր զորքով հետամուտ լինելով՝ հասավ Վրաց սահմանը՝ Կող գավառը (21): Ընդ որում մարտի մեջ մտնելով, փախուստի մատնվեց, և ումանք սատակեցին, իսկ իրենք (փախստականները) անցան Ակամսիս գետը (22), որը Տայքի կողմերից բխելով, գնում է հյուսիսարևմուտք, անցնելով Եգե-րաց երկիրը՝ մտնում է Պոնտոս (23):

(Ղևոնդ, Գլ. ԽԲ)

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հայ պատմիչները տարբեր անուններով են կոչել արաբներին: Ամենատարածված ձևը տաճիկն է:
2. Խոսքը Աբդուլահ իբն ալ-Ջուբայրի ապստամբության մասին է, որը ծագեց նախքան Աբդ-ալ-Մալիք խալիֆայի (685-705 թթ.) իշխանության գլուխ անցնելը և ճնշվեց վերջինիս կողմից:
3. Խազիբները կամ խազարները հյուսիսային Կովկասում ապրող ցեղեր էին, որոնք արդեն 7-րդ դարում ունեին իրենց պետությունը խաքանի գլխավորությամբ: Խազարները հաճախ էին շարժվում հարավ՝ ասպատակելով Հայաստանը, Վիրքն ու Աղվանքը:
4. Դժգոհ լինելով արաբների՝ Հայաստանում վարած ծանր քաղաքականությունից, հատկապես հայ նախարարներին ֆիզիկապես ոչնչացնելու դեպքերից, նախարարների մի մասը փրկության միջոց էր համարում Բյուզանդական տիրապետության տակ անցնելը:
5. Ըստ «Աշխարհացոյց»-ի՝ Եգերը կամ Կողքիսը գտնվում էր Պոնտոսի ծովից արևելք՝ Սարմատիայի մոտ: Արևմուտքից սահմանն անցնում էր Դռակոն գետով մինչև Կովկասյան լեռները՝ դեպի նրա այն լեռնաբազուկը, որը բաժանում է Եգերը Վիրքից: Այստեղ Եգերը մասամբ սահմանակից էր նաև Մեծ Հայքին՝ մինչև Կապադովկիական Պոնտոսը:
6. Ըստ պատմիչի՝ դժգոհության լուրը հասնում է խալիֆա Վլիթին, և նա նոր կառավարիչ է ուղարկում Հայաստան՝ հանձին Աբդ-Ազիզի, որը հրովարտակներով հայ իշխաններին համոզում է Հայաստան վերադառնալ և երդումով հավաստիացնում նրանց՝ ըստ իրենց սովորու-

- թյան: Վստահ լինելով արաբների ուխտադրությանը, հայ նախարարները վերադառնում են Հայաստան՝ անջատվելով Հունաց կայսրից:
7. Սա հատված է Լևոն Դ կայսեր (717-741 թթ.)՝ Օմար խալիֆային (717-720 թ.) գրված պատասխան նամակից:
 8. Խոսքը քրիստոնեության տարածման մասին է:
 9. Սա Արմինիայի ոստիկան Եզիտ իբն Ուսայդ ալ-Մուլամին է (752-754 թ.թ.), որը կոչվում էր «հրամանատար դատավորության և հարկապահանջության»:
 10. Խոսքը խազարների թագավորի մասին է, որին խաքան էին կոչում:
 11. Այստեղ հեղինակը նկատի ունի Արմինիայի արաբ ոստիկան Եզիտին:
 12. Խոսքը 774-775 թթ. ապստամբության մասին է:
 13. Սա արաբ ոստիկանն էր, որի նստավայրը Դվինն էր:
 14. Աշոտն ու Սմբատը Բագրատունյաց նախարարական տոհմից էին: Սմբատ Բագրատունին այս ժամանակ հայոց սպարապետն էր (752-775թթ.):
 15. Այս գավառը նույնացվում է Ախալցխայի շրջանի հետ:
 16. Խոսքը Մուսե խալիֆայի (785-786 թթ.) մասին է:
 17. Մուսեի օրոք գազանաբարո սպանություններ արաբները կիրառել են նաև հայ իշխանների նկատմամբ:
 18. Ահարոն կամ Հարուն ալ-Ռաշիդ խալիֆան իշխել է 786-809 թթ.:
 19. «...Հայաստանը՝ Վիրքով ու Աղվանքով հանդերձ» արտահայտությունը վկայում է, որ այս երեք երկրները մտել են մեկ՝ Արմինիա վարչական միավորի մեջ, որի կառավարիչների նստավայրը Դվինն էր:
 20. Խոսքը հայ նախարարների արտագաղթի մասին է, որը մեծ չափերի հասավ արաբական տիրապետության շրջանում:
 21. Կոդն ըստ «Աշխարհացոյց»-ի Մեծ Հայքի Տայք աշխարհի գավառներից է:
 22. Ակամսիս գետն ըստ «Աշխարհացոյց»-ի բխում էր Մեծ Հայքի Բարձր Հայք աշխարհից և կոչվում էր նաև Վոհ: Համապատասխանում է այժմյան Ճորոխ գետին: Ակամսիսի ստորին հոսանքը վրացիներն անվանում են Էգրիսծղալի (Էգրո ջուր):
 23. Պոնտոս ասելով նկատի ունի Պոնտական (Սև) ծովը:

ԱՆԱՆՈՒՆ ԶՐՈՒՑԱԳԻՐ
(ԿԱՐԾԵՑԵԱԼ ՇԱՊՈՒՆՆԻ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ),
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ²³

[5]...Ապա ձեռքը մեկնեց արեւելք (1) ու գրաւեց Հայոց աշխարհը, Աղուանքը եւ (Վիրքն ու Լազ(ի)կաց աշխարհը, որ է՝) Ափխազքը (2): (Այսպէս) բռնացաւ արեւելքի, արեւմուտքի ու հարաւի վրայ:

(Անանուն Զրուց., Բ)²⁴

[7] Ապա Յունաց Հերակլ արքան (3) միաբանեց բոլոր Փրանկաց, Յունաց, Մեծ Հայքի եւ Ափխազաց երկրները, եւ ճանապարհ ընկնելով դէպի արևելք՝ եկաւ հասաւ Թէոդոսիոս/պոլիս, որ Կարին (4) քաղաքն է:

(Անանուն Զրուց., Գ)

[10] Իսկ Հերակլէս թագաւորը բանակ էր դրել Կարնոյ քաղաքում՝ եւ սկսել էր այն պարսպի կառուցումը, որ քանդել էր Պարսից Խորիան գորավարը: Վաճառականի կողմից ուղարկուած մարդը հասաւ Հերակլ արքայի մօտ, եւ նա միացրեց Հայոց, Վրաց եւ Աղուանից, Միջագետքի, Յունաց եւ Փրանկաց զօրքերն ու առաջ շարժուեց գնաց Վասպուրական (5):

(Անանուն Զրուց., Գ)

²³ Անանուն Զրուցագրի տեղեկությունների աշխարհաբար թարգմանությունը տե՛ս **Անանուն Զրուցագիր** (Կարծեցեալ Շապուի Բագրատունի), Պատմութիւն, Եր., 2011:

²⁴ Անանուն Զրուցագրի տեղեկությունների գրաբար բնագիրը տե՛ս «Մատենագիրք Հայոց», հ. Թ, Անթիլիաս, 2008, էջ 1006-1052:

[78] Եւ Աշոտ Բագրատունին (6) մեռաւ, ու Հայոց երկրում /տանը/ թագաւոր դարձաւ Սմպատը՝ (7) Աշոտի որդին, իսկ սա մի հպարտ (գոռոգ), պատերազմասէր եւ իմաստնաշատ (առատամիտ) մարդ էր։ Եւ սրա թագաւորութեան ընթացքը (ճանապարհը) յաջող անցաւ։ Իսկ նրան թագադրեց (թագ կապեց) (եւ շատ էր սիրում նրան) Հոռոմոց արքայ Ռոմանոսը։ Ու նա տիրեց ողջ Հայոց աշխարհին եւ իր ձեռքը վերցրեց Հայաստանն (Հայք) ու (Տ)այքը (8), Վիրքն ու Աղուանքը, Վրաց դաշտն (9) ու Փարիսունքը (10), Աշորնիքն (11) ու Արևիքը (12), Բաղքն ու Պարտաւ (13) ավանը։ Նա նաեւ գրաւեց /եւ/ տիրեց Փայտակարանին (14), որ Տփլիսն է, Վաղարշապատին ու Դվինին, Վայոց ձորին ու Նախջ(եւ)անին...

(Անանուն Զրուց., Դ)

[83] Եւ երբ Հայոց թագաւոր Սմպատն այս լսեց (15), հրամայեց հրովարտակ գրել (ուղարկել) Հեր Ապումարի որդիներին (իսկ նրանք չորս եղբայրներ էին). նրանց գրել տուեց հետեւեալը.

«Սմպատից՝ Հայոց եւ Վրաց թագաւորից ու տիեզերակալից՝ Ապումարի որդիներիդ, որ այժմ ունէք Զարեւանդ գաւառի (16) տիրակալութիւնը եւ Հեր քաղաքաւանը՝ Պարսից (սահմանա)գլուխը...»:

(Անանուն Զրուց., Դ)

[85] Եւ երբ Սմպատ արքան լսեց նրանց (17) նամակի (ընթերցումը), հրամայեց գրել նրանց այսպէս.

«Հայոց եւ Վրաց եւ շատ երկրների (գաւառների) ինքնակալ թագաւոր Սմպատից՝ Ապումարի Ալի եւ Մահմէտ որդիներին...»:

(Անանուն Զրուց., Դ)

[101] Երբ Սմպատ թագաւորն այս (18) լսեց, հրաման արձակեց (հանեց) ամբողջ Հայոց երկրին եւ Վրաց, Աղուանից... Տայոց (երկրներին): (Նաեւ լուր) ուղարկեց Վասպուրականի իշխան Ապումրվանին՝ «Ա՛ռ քո գորքը եւ ե՛կ ինձ մոտ»:

(Անանուն Զրուց., Դ)

[123] Այդ ժամանակ Սմպատը կամեցաւ խնամիրութիւն հաստատել Լազ(ի)կե(ա)ց թագաւորի հետ, որ Ափխագներն են: Եւ Ափխագաց Դատոս արքայի (19) դստերը կին բերեց իր որդի Մուշեղին, ու դրանով նրանք բարեկամացան միմեանց հետ: Եւ ապա Սմպատ թագաւորը մտադրուեց գրաւել Ափխագաց այն գաւառ/ներ/ը, որ մօտ էին Շիրակի գաւառին (20) (որ սրանք են)՝ Կանգարքը (21), Գոգշենը (22), Ձայլցեղը, Կողը (23) եւ Արտահանքը. (դա՛) որովհետեւ Սմպատը մեծ ձգտումներով /մեծահար/ ու յանդուգն /ամբարտաւան/ մարդ էր, եւ նրա թագաւորութեան ժամանակը յաջող էր անցել:

[124] Այդ ժամանակ Ափխագաց Դատոս թագաւորը (լուր) ուղարկեց Հայոց թագաւոր Սմպատին. «Քեզ չեմ տայ իմ հայրենի գաւառ/ներ/ը»: Բայց նա (Սմպատը) դադար չառաւ: Երբ նրան չլսեց, նա (Դատոսը) լուռ մնաց մինչեւ ձմռան օրերը, ապա իր մօտ կանչեց իր փեսայ Մուշեղին ու զնդան դրեց: Եւ Մուշեղը /լուր/ ուղարկեց իր հայր Սմպատին՝ ասելով, թէ «Այն գաւառների համար, որ խլել ես Ափխագաց թագաւոր Դատոսի ձեռքից, ահա, կապել ե ինձ երկաթէ կապանքներով»:

[125] Իսկ երբ Սմպատն իմացաւ (լսեց) դա, զօրաժողով արեց եւ շատ ազգեր հաւաքեց (ժողովեց) ու (պատերազմի) ելաւ Ափխագաց երկրի վրայ: Եւ ելաւ հասաւ Նաւհանաց երկիրը՝ (24) այն գիւղը, որ կոչւում է Գորի, (իսկ այնտեղ նստած էր Ափխագաց թագաւորը, ու Մուշեղն էլ՝ իր հետ): Եւ կտրեց (Սմպատն) այն գետի ջուրը, որ շրջապատում էր բերդի շուրջը: Բայց քաղաք

մտնելու հնար (ճար) չկար՝ սառոյցի (պաղի) պատճառով, քանի որ /այն/ կապել էր ամբողջ դաշտը:

[126] Սմպատը մտաւ Ափխազաց երկիրը եւ առհասարակ աւարի ենթարկեց երկիրն ու եկաւ հասաւ Արտահան գաւառը (աշխարհը), իսկ նրա հետ /այս/ բազմամբոխ (գորքն էր):

Արեւելից իշխան Սմպատը՝ բազմաքանակ (բազում) գորքով, Փառիս/ոս/ի իշխան Հմա/յ/ե/ա/կը՝ բազում հեծեալներով, Աղծ-նե(ա)ց (25) իշխան Գրիգորը՝ բազմաքանակ գորքով, Գորոգուի (26) իշխան Վասակը՝ բազում հեծեալներով, Վայոց ձորի իշխան Ապուշամբը՝ բազմաքանակ գորքով, Տայոց իշխան Գոռամը՝ բազում հեծեալներով, Ճողբաց (27) իշխանը՝ բազմաքանակ գորքով, Տարունոյ (Տարօնի) իշխան Գագիկը՝ բազում հեծեալներով, Վասպուրականի իշխան Գորգենը՝ բազմաքանակ գորքով, Մոկաց (28) իշխան Աշոտը՝ բազում հեծեալներով, Անձեւացե(ա)ց (29) իշխան Համակարը՝ բազմաքանակ գորքով, Կորդուաց (30) իշխանը՝ բազում հեծեալներով, նաեւ Պարսից աշխարհից՝ բազմաթիվ ուրիշներ:

[127] Եւ (շրջա)պատել էին սառց(աջր)ի շուրջն, /ու/ հնար չկար նրա/նց/՝ Գորի գիւղը գրաւելու: Սմպատ թագաւորը եւս տարակուսանքի մէջ էր: Բայց Վասպուրականի իշխան Գորգենը բացատրեց (ասաց) իր ազատանիին, (թէ) որն է հնարը (ճարը), եւ ապա նրանք իրենց ձիերին նոր պայտերով (լուսնօք) պատրաստեցին (կազմեցին), հաւաքեց (յաջողացրեց) նաեւ քաջ մարդկանց՝ Գնունեաց տոհմից (ազգից), Քաջբերո(ւ)նեաց տոհմից, Գաբեղենից տոհմից, Զինական տոհմից, Գազրիկան տոհմից, Գնթունե(ա)ց տոհմից:

[128] Եւ ինքը Գորգենը՝ (մի) քաջ մարդ, առաւօտեան լուսանալուն (պէս) եկաւ (իսկ Սմպատը տխուր (տրտում) կանգնած էր նաեւ՝ երբ Գորգենը եկաւ Սմպատի առջեւ): Գորգենը հարցրեց /ասաց/. «Ինչո՞ւ ես տխուր կանգնել, արքա՛յ»: Իսկ Սմպատն ասաց. «Ապա ի՞նչ անենք, իմ որդի Գորգե՛ն»: Եւ Գորգենն ասաց.

«Ինձ հրաման տո՛ւր, ու ես քո որդուն կը բերեմ քեզ մոտ»: Բայց Սմպատ թագաւորը ծիծաղեց նրա խօսքի վրայ: Եւ Գորգենն ասում է. «Մի՛ ծիծաղիր, թագաւո՛ր»: Իսկ Սմպատը հարցնում (ասում) է. «Մի՞թէ հնար (ճար) է լինելու, (որ) թոչունի նման թոչէիր, որդի Գորգէն»: Եւ Գորգենն ասում է. «Թագաւո՛ր, հրա-ման տո՛ւր եւ ինքդ անհոգ եղի՛ր»:

Իշխանները նայում էին ու հարցնում. «Ի՞նչ է կամենում անել Վասպուրականի իշխանը»: Եւ ծիծաղում էին իրար հետ ու կա-տակի տալիս նրան: Բայց թագաւորն ասաց. «Գնա՛, որդի Գոր-գէն»:

[129] Եւ Գորգէնը ելաւ գնաց ազատանիի մօտ ու յայտնեց /պատմեց/ թագաւորի հրամանի մասին: Եւ Վասպուրականի քաջ երիտասարդները հեծան, (հեծաւ) եւ ինքը Գորգէն Արծրունին, ելան ու գնացին ցրտից պնդացած սառոյցի վրայ: Եւ երբ մօտե-ցան գիւղին, Ափխազաց թագաւորի զօրքը ելաւ՝ գրաւելու սառոյ-ցի եզրը, ու (արդէն) նրանց (հայերին) իրենց որսն էին համարում: Իսկ սրանք գալիս էին լուռ ու անձայն (լուռ ի լուռ), որովհետեւ Գորգէն իշխանը պատուիրել էր իր ազատանիին՝ ասելով, թէ՛ <<Պատրաստուած գնացե՛ք, բայց խաբեցե՛ք Ափխազաց զօրքին ու մի կողմ հեռացե՛ք>>: Եւ (այդ կերպ) գնացին (հասան) ցամաքին մօտ ու յանկարծակի աղաղակեցին (ձայն տուեցին), իսկ ձայնի վրայ Ափխազաց զօրքերը փախուստի մատնուեցին սրանց առջեւ. եւ շրջապատելով (մէջ առնելով) նրանց՝ սրի քաշեցին /ու/ սկսեցին կոտորել նրանց:

[130] Ափխազաց թագաւորը լսեց յանկարծակի (բարձրացած) աղմուկը, ելաւ տանիքը, բարձր ձայնով աղաղակեց ու հարցրեց /ասաց/. «Ո՞վ ես. այդ քաջ արեան գործ է, տուր ինձ արիւնդ»: Եւ Գորգէնն ասաց. «Ես Վասպուրականի իշխանն եմ, իսկ դա որդին է իմ քեռու՝ Սմպատ թագաւորի»: Եւ բռնելով (առնելով) Ափխա-զաց թագաւորին ու Սմպատի որդի Մուշեղին՝ բերեց Սմպատ թագաւորի առջեւ: Եւ (այդպէս) զարմացան բոլոր (իշխանա)տոհ-

մերը (ազգերը), որ Մմպատի հետ էին: Իսկ Ափխազաց թագաւորը համաձայնութեան եկաւ, տուեց Կանգարքը, Գոգշէնն ու Կողը, եւ խաղաղութիւն հաստատեցին (արեցին) իրար միջեւ:

(Անանուն Զրուց., Դ)

ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Այստեղ խոսքը վերաբերում է Մավրիկիոս (Մորիկ) կայսեր (582-602 թթ.) արշավանքներին:
2. Ափխազը ավելի վաղ շրջանի հայկական աղբյուրներում հիշատակվում է Կողքիս, Եգերք, Լազիկա անուններով և ընդգրկում է Արևմտյան Վրաստանը:
3. Հերակլ կայսրը իշխել է 610-641 թթ.:
4. Կարին քաղաքը Մեծ Հայքի թագավորության Բարձր Հայք աշխարհի կենտրոնն էր: Այն Թեոդոսիոպոլիս է կոչվել ի պատիվ Թեոդոսիոս Բ կայսեր, որը 5-րդ դարում վերակառուցեց քաղաքը: Կարինը ներկայիս էրզրում քաղաքն է Թուրքիայում:
5. Վասպուրականը Մեծ Հայքի թագավորության 15 աշխարհներից մեկն էր, իսկ Հերակլի օրոք Մարգալանական Հայաստանի 4 ներքին բաժանումներից մեկը:
6. Սա Հայոց թագավոր Աշոտ Ա Բագրատունին է (885-890 թթ.):
7. Սա Հայոց թագավոր Սմբատ Ա Բագրատունին է (890-91 4թթ.):
8. Տայքը Մեծ Հայքի թագավորության 15 աշխարհներից մեկն էր: Գտնվում էր երկրի հյուսիս-արևմուտքում: Սմբատ Ա-ի օրոք այն առանձին վարչական միավոր էր Բագրատունիների գերիշխանության ներքո:
9. Ըստ Վ. Առաքելյանի «Վրաց դաշտ» էր կոչվում այն շրջանը, որի կենտրոնն էր Ցուրտավ քաղաքը:
10. Փարխունքը նույնացվում է Մեծ Հայքի Արցախ աշխարհի Քուստի-Փառնես կամ Փառիսոս գավառի հետ:
11. Աշորնիքի տեղադրությունը որոշակի չէ, թեև «Հայաստանի և հարակից երկրների տեղանունների բառարանում» Աշորնիքը նույնացվում է Մեծ Հայքի Այրարատ աշխարհի Արշարունիք գավառի հետ, որը Երասխաձորն էր:
12. Արևիքն ու Բաղքը Մեծ Հայքի Սյունեաց աշխարհի գավառներից էին:

13. Պարտավը գտնվում էր Մեծ Հայքի Ուտիք աշխարհի Ուտի Առանձնակ գավառում: Եղել է Աղվանից մարզպանության մայրաքաղաքը:
14. Փայտակարանը Մեծ Հայքի Փայտակարան աշխարհի, որը կոչվում էր նաև Կասպից երկիր, կենտրոնն էր, իսկ Տփիսիսը՝ Վիրքի մայրաքաղաքը: Տփիսիսն ու Փայտակարանը նույնացվում է նաև Թովմա Արծրունու «Պատմությունում»: Փայտակարան տեղանունը Պ. Մուրադյանը բացատրում է որպես «արքունի քաղաք» (պահլ. paytaxaran)
15. Այսինքն՝ երբ Սմբատ արքան իր քույր Հրանուշից լսում է նրա ամուսնու՝ Դերենիկի՝ ուրիշ կնոջ, որը Հերի տիրակալ Ապումսրի դուստրն էր, սիրելու մասին:
16. Հերն ու Զարևանդը Մեծ Հայքի Պարսկահայք աշխարհի գավառներն էին՝ նույնանուն քաղաքներով: Գտնվում էին Ուրմիո լճից հյուսիսարևմուտք:
17. Խոսքը Հերի տիրակալ Ապումսրի որդիների մասին է:
18. Խոսքը Մոսուլի ամիրայի՝ Սմբատ Ա-ին ուղղված սպառնալից նամակի մասին է, որով պատերազմի կոչ էր արվում:
19. Ըստ Վ. Առաքելյանի Դատոսը Արևմտյան Վրաստանի («Ափխազաց») թագավոր Կոստանդինն է (894-929 թթ.), մինչդեռ Մ. Դարբինյան-Մելիքյանի ենթադրությամբ Դատոս անվան տակ հանդես է գալիս 988 թ. Սմբատ Բ-ի (977-990 թթ.) և Դավիթ կյուրոպաղատի դեմ պատերազմած Թեոդոս Գ Ափխազաց թագավորը (տե՛ս ծանոթ. 233):
20. Շիրակը Մեծ Հայքի Այրարատ աշխարհի գավառներից էր, տարածվում էր Ախուրյան գետի երկու ափերին:
21. Կանգարքը Մեծ Հայքի Գուգարք աշխարհի գավառներից էր, որն ըստ «Աշխարհացույցի» Գուգարքի մյուս գավառների հետ հանվել էր Մեծ Հայքի կազմից և միացվել Վիրքին:
22. Գոգշենը, Ջայլցեղը սահմանամերձ գավառակներ պետք է լինեին, որոնք սակայն չեն հիշակակվում «Աշխարհացույց»-ում:
23. Կողը Մեծ Հայքի Տայք աշխարհի հյուսիսարևելյան գավառն էր, հյուսիսից սահմանակից էր Գուգարք աշխարհի Արտահան գավառին, իսկ արևելքից՝ Այրարատ աշխարհի Վանանդ գավառին:
24. Սա Նավհանաց երկրի միակ հիշատակությունն է, որից Վ. Առաքելյանը եզրակացնում է, որ թերևս գործ ունենք աղավաղված տեղանվան հետ (տե՛ս ծանոթ. 240):
25. Աղձնիքը Մեծ Հայքի հարավային աշխարհներից մեկն էր: Տարածվում էր Ծովք ու Տուրուբերան աշխարհներից հարավ:

26. Գործողու կամ Գոռոգ ամբողջ գտնվում էր Մեծ Հայքի Արցախի աշխարհի Մյուս Հաբանդ գավառում:
27. Հողբաց իշխանի տիրույթների տեղադրվածությունը առայժմ որոշակի չէ, թեև այն անվանապես նման է աղվանական ճիղք ցեղագավառին:
28. Մոկքը Մեծ Հայքի ամենափոքր աշխարհն էր: գտնվում էր Վանա լճից հարավ: Սահմանակից էր Տուրուբերան, Վասպուրական, Կորճայք և Աղձնիք աշխարհներին:
29. Անձնացիքը Մեծ Հայքի Վասպուրական աշխարհի հարավային գավառներից էր: Տարածվում էր Ջերմ գետի հովտում:
30. Կորդուքը Մեծ Հայքի Կորճայք աշխարհի ամենամեծ գավառն էր: Գավառանունը երբեմն տարածվում էր ամբողջ աշխարհի վրա:

**ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԴՐԱՍԽԱՆԱԿԵՐՏՑԻ,
ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ²⁵**

Ըստ Երեմիայի՝ Թորգունը Ասքանազյան ազգին իրեն է ենթարկում և տիրում Թորգումի տանը, որովհետև մեր ազգը երիցության կարգով նախ Ասքանազն էր իր անունով սահմանել, որի մասին իր տեղում կասեմ: Իսկ նախնի Հավանից Հունաց Եղիշան է, որից սերում են սիկելացիներն ու աթենացիները, Թարսիսից՝ վրացիներն ու տյուրենացիները, իսկ Կիտիիմից՝ հռոմեացիները: (Հովհ. Դրասխ., էջ 15)²⁶

Տիգրանը ծնում է Բաբին, Տիրանին, Վահագնին: Վերջինիս մասին ասում էին, թե նա քնարահարությամբ է կովել վիշապների հետ և հաղթել: Եվ նրան համեմատում էին նահատակված քաջ Հերակլի հետ: Վահագնի մասին ասվում է, թե Վրաց աշխարհում նրա հասակի չափով մի արձան էր կանգնեցվել և զոհերով այն մեծարվել (1):

(Հովհ. Դրասխ., էջ 25)

Այսպիսով (2), եկեղեցու նահապետության խորհուրդը ամբողջությամբ տարածվեց նաև մեր աշխարհում՝ բոլորը մեկտեղ դասակարգելով իննի (3), Վրաց և Աղվանից գլխավոր արքեպիս-

²⁵ Հովհաննես Դրասխանակերտցու տեղեկությունների աշխարհաբարը տե՛ս Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցի, Հայոց պատմություն, Եր., 1996:

²⁶ Հովհաննես Դրասխանակերտցու տեղեկությունների գրաբար բնագիրը տե՛ս «Մատենագիրք Հայոց», հ. ԺԱ, Անթիլիաս, 2010, էջ 357-584:

կոպոսների հետ միասին, որոնց համար արքեպիսկոպոս էին նշանակվում նրա միջոցով: Իսկ Մեքաստիայում (4), Մելիտենեում (5) և Մարտիրոսաց քաղաքում (6) մետրապոլիտներ էին նշանակում: Ըստ սահմանված վիճակների քանակի՝ հաստատում էին նաև եպիսկոպոսներ, քահանաներ, սարկավագներ, կիսասարկավագներ, դպիրներ և սաղմոսերգուներ, որոնք բոլորը տարածվելով հայաստանյաց եկեղեցիներում՝ դրանք զարդարում էին ի փառս Աստծո:

(Հովհ. Դրասխ., էջ 51)

Այսպես այդ ժամանակներում գալիս է Մեսրոպը և բերում մեր լեզվի նշանագրերը, որոնք կարծես նրան պարգևել էին Աստծո նախախնամությամբ: Մեծն Սահակի (7) հրամանով /Մեսրոպը/ իսկույն հավաքում է խոհեմ, խելացի, սրամիտ, բարեհնչուն ձայն ունեցող մանուկներ և տարբեր գավառներում դպրոցներ է բացում ու մեծ ջանքեր թափելով ուսուցանում: Մեսրոպը դրանից հետո գնում է Վրաստան (8), այնտեղ էլ նրանց լեզվի համաձայն ստեղծում է նշանագրեր և կարգում ուսուցիչներ և դպրոցներ:

(Հովհ. Դրասխ., էջ 57)

Իսկ հետո հռոմեական աշխարհի բարեպաշտության այդ ժամանակներում Հայոց մեծ հայրապետ Բարգենը (9) Հայոց, Վրաց, Աղվանից եպիսկոպոսների ժողով է անում Նոր քաղաքում (10), Հայոց եկեղեցիների մայր սուրբ կաթողիկեում..., որոնք նույնպես մերժեցին Քաղկեդոնի ժողովը... սուրբ Գրիգորի հիմքի վրա էին հաստատված (11): Եվ այդ ժամանակներում հռոմեական, հայկական, վրացական և աղվանական աշխարհներում հաստատվել էր բոլորի համար հավասար ու բարեպաշտ մի հավատ..., մերժելով Քաղկեդոնի ժողովը:

(Հովհ. Դրասխ., էջ 65)

Այս Մովսեսը (12) սուրբ կաթողիկեի վաներեց Կյուրիովնին (13) իր նախորդների օրինակով ձեռնադրում է վրաց նահանգի, գուգարացիների և եգերացիների (14) արքեպիսկոպոսության համար: Իսկ հետո Մովսեսի վախճանին մոտիկ Կյուրիոնը, մերժելով ճշմարիտ կարգերը ու կրոնի ուղղությունը, որ այդ կողմերի /մարդիկ/ սովորել էին մեր ուղղափառ հայերից, ետ է թեքում... Քաղկեդոնի ժողովին իր փառամոլ գոռոզությանը հետևելով ու դավաճանելով երկրի նախահայրերին: Հետո անմիջապես ի դերև է ելնում նրա մտածած դավաճանությունը: Իսկ Մովսեսը նրա դեմ բազում մարտեր մղելով՝ աստվածամերձ խրատներով և բարի խոսքերով նրան կշտամբում էր հրեական հայիոյական հերետիկոս մոլորությունից դառնալու դեպի ճշմարիտ ուսմունքը՝ ըստ սուրբ հայրերի դավանության: Բայց նա չի ցանկանում դեղ վերցնել իմաստուն բժշկից, և ապա իսկույն հասնում է մեծն Մովսես հայրապետի վախճանը, որը հայրապետական աթոռին նստել էր երեսուն տարի:

(Հովհ. Դրասխ., էջ 69)

Բայց Աբրահամ մեծ հայրապետը (15) քրիստոսաավանդ կարգ ու կանոնով և առաքինահրաշ աշխատանքով ջանք է թափում, որպեսզի թերևս հնարավոր լինի Կյուրիովնին և նրան հնազանդվողներին ետ դարձնել մոլոր ճանապարհից: Բայց նրանք թերևս այնքան ճշմարտությունը չէին հարգում, որքան ընչաքաղցությունը, և փառամոլ բարքի բույսերը վերընձյուղելով՝ աճեցնում էին: Եվ այսպիսով Լևոնի մարդադավան տոմարը (16) փոխանակում էին երիցս երանելի սուրբ Գրիգոր Լուսավորչի առաքելական ավանդի հետ, որ (Գրիգոր Լուսավորիչը) նրանց համար բացել էր ճշմարիտ աստվածագիտության լույսի դուռը: Այնուհետև Աբրահամ մեծ հայրապետը քաջ Սմբատի (17) և այլ նախարարների հրամանով Դվին քաղաքում բազմաթիվ եպիսկոպոսների ժողով արեց աստվածային անբիծ նախախնամությամբ

ուշադրությամբ քննելով Աստվածաշունչը, և նրանք ճշմարիտ իմացությամբ ծանոթանալով սուրբ հայրերի դավանությանը՝ նգովեցին Կյուրիոնին՝ Քրիստոսի եկեղեցու պառակտիչին և անօրեն հերետիկոսության բոլոր հնազանդյալներին ու համախոհներին: Եվ նրանց ենթարկեցին մեր աշխարհի ուղղափառ դավանանքին հետևողների ցավագին անեծքին, (այն է)՝ բնավ չմիաբանվել նրանց հետ, ովքեր Կյուրիոնի հետևից շեղվեցին դեպի հերետիկոսությունը, նրանց հետ չհաղորդակցվել, առևտուր չանել և խնամիության միջոցով ազգակցություն չհաստատել, որպեսզի միմյանց հետ այդպիսի բարեկամության պատճառով չխաթարվի մեր ճշմարիտ դավանանքի անբիծ ու ուղիղ հավատը, և չխախտվեն առաքելական մատյանների գլուխների ցանկերը:

(Հովհ. Դրասխ., էջ 75)

Այդ բանը տեսնելով (18) ու վախենալով եկած ավագակների ահից՝ Թեոդորոսը (19) և մյուս նախարարները ընկան հազարացիների (20) ծառայության տակ՝ մահվան հետ ուխտ կնքելով և դժոխքի հետ դաշինք կոելով: Եվ այդպիսով հեռու էին մնում կայսրից: Իսկ կայսրը մեծ զորք գումարելով՝ շարժվում գնում է Հայաստան՝ այն իրեն ենթարկելու, բայց նրան ոչ ոք չենթարկվեց, բացի Վրաց աշխարհից:

(Հովհ. Դրասխ., էջ 89)

Սրա օրոք (21) տաճիկների զորագլուխ ոմն Բառաբային, որը գտնվում էր Հայաստանում, սաստիկ կոտորածով քշում և հյուծում է Վրաց Ներսեհ իշխանը՝ նրան մատնելով փոխուստի:

(Հովհ. Դրասխ., էջ 97)

Եվ ապա ձեռք գցելով (22) հյուսիսային կողմերի՝ մեծ Կովկասի ծործորների վրա, հովիտներում ու երկայնագոգ ձորերում

բնակված ազգերին իրեն է ենթարկում, նաև ամբողջությամբ իր ազդեցության տակ է գցում Գուգարքի խռովարար ժողովուրդներին և Ուտի գավառի (23) ավագակային մարդկանց՝ նրանցից վանելով մարդադավ ավագակությունը, բոլորին դարձնում է օրինավոր ու հնազանդ և նրանց համար առաջնորդներ և իշխաններ է կարգում: Սիրով ու միաբանությամբ իր հետ կապելով եգերացիների թագավորին՝ նա այդպես այցելում էր նրան, մինչև անգամ որպես որդի համարվելով, նրան միշտ ծառայելու համար մտերմաբար պարտավճար էր բերում:

(Հովհ. Դրասխ., էջ 143)

Իսկ նրա երեք որդիները՝ (24) արքունի տան գահերեցները, և բարեկամները գնում էին դագաղի հետևից, բացի Սմբատից, որը Հայոց իշխանաց իշխանն էր: Նա գնացել էր Գուգարքի կողմերը՝ այնտեղի ժողովուրդներին նվաճելու համար, այդ պատճառով նա չկարողացավ հասնել Ժամանակին... Հետո նրանք պատրաստեցին թագավորական տապան և նրան դրեցին իր հայրերի գերեզմանոցում:

Իսկ դրանից հետո լուրը հասնելուն պես արքայի որդի Սմբատը խիստ վշտահար հեծեծանքով սեփական Երազգավորք (25) կալվածքից գալիս հասնում է Շիրակավան: Մեծ կաթողիկոսը գնալով համոզում, մխիթարում ու հանգստացնում է նրան՝ չփոխվելով իր ազնիվ ու բարեբարո բնավորությունից: Այնուհետև նրա մոտ է գալիս Վրաց մեծ իշխան Ատրներսեհը՝ ցավակցություն ու վշտակցություն հայտնելու համար:

Եվ քանի որ Հայոց սպարապետ Աբասը՝ Աշոտ արքայի եղբայրը, գտնվում էր Վանանդի իշխանության կողմերում, սովորության համաձայն նախ նրան թյուր հրահանգ է հասնում՝ նրա մոտ մտնելու, սփռվելու և սգո տխուր խոսքեր ասելու համար: Դրանք սիրով և հոժարությամբ ընդունելով՝ Աբասը չէր կամենում նրանից առաջ գնալ Սմբատի մոտ, մտածելով, թե գուցե

դրանք իմանալով՝ նրանցից յուրաքանչյուրը դավի և դրժի իրեն: Եվ նա չէր կարող վերցնել այն, ինչ կամենում էր, որովհետև ձգտում էր թագավորությունը ինքը նվաճել: Եվ ըստ լսած պատասխանի՝ չգնալը ավելի անպատշաճ էր համարվում: Եվ առանց ինչ-որ փաստի ու առանց հուզվելու, շփոթվելու, աղմկելու պատճառի անտեսում է դրանք և գնում ու հանդիպում է Սմբատի հետ ու նրա վրայից հանում է նրա հագած թագավորական սևաթույր զգեստները: Սմբատը նրան մեծարում է մեծամեծ ու պատվական ընծաներով, և նա նորից վերադառնում է Աբաս սպարապետի մոտ: Վերջինս բարկանալով ոմանց քությունից, թե նրա հասցեին Սմբատի մոտ վատ խորհելուց՝ (Ատրնեքսեհին) բռնում, կապում է երկաթյա շղթաներով և զցում Կարուց բերդի (26) բանտը: Այնուհետև նրանցից յուրաքանչյուրը սաստիկ աղմուկ ու աղաղակ էր թափում մյուսի գլխին: Եվ Սմբատն ու Աբասը, իրենց մոտ կուտակելով մեծ հեծելազոր, մարտնչում են միմյանց դեմ և երկրում քիչ խառնակություն ու ավերածություն չեն կատարում: Այնտեղ մեծ կաթողիկոսը, կանգնելով նրանց միջև, մտածում էր խոսել խաղաղության մասին, և խնդրում էր Ատրնեքսեհին արձակել իր տեղը և չեզոքացնել տեղացող հրաբորբոք բարկությունը: Իսկ սպարապետը խորամանկելով և հավանություն ցույց տալով՝ ասում է. «Ատրնեքսեհը այստեղից ինձ կտա երկու ամրոց, որ հափշտակել է իմ քրոջ ամուսնու՝ Գուրգենի ձեռքից, հետո իր որդի Դավթին կթողնի ինձ մոտ որպես պատանդ, և ես նրան բաց կթողնեմ խաղաղությամբ»: Եվ կնքելով ձեռագիր երդմնագիրը՝ տալիս է մեծ հայրապետին: Եվ ապա երբ առավ իր խնդրածը, դարձյալ խաբվելով այն դրժող դևից՝ բաց չի թողնում Ատրնեքսեհին և նույնիսկ արհամարհում է մեծ կաթողիկոսի միջնորդությունը: Դրա վրա տրտմելով, սրտի դառնությամբ հուզվելով ու մեծ խռովությամբ խոժոռվելով՝ մեծ հայրապետը ելավ ու այնտեղից գնաց Շիրակ գավառը: Իսկ սպարապետն

իմանալով այդ մասին, թերևս խուժան ավագակներից սաստիկ բարկանալով, գնում հասնում է ամրոցի դուռը և մտնելով ներս՝ դադար է առնում պարսպի ամրոցի պատերի տակ:

Այնուհետև մեծ զորք հավաքելով՝ Սմբատը ասպատակում է Աբասի ընդարձակ շենքերը, որոնք գտնվում էին ամրոցի շուրջը, ուր գաղթել, թաքնվել ու պահվել էր գավառի բնակչությունը, և թալանում է արի մարդկանց ու ընտիր երիվարների (վրայի) զենքերը և ժամանակավորապես նրան պահում է բերդում, որպես բանտում: Եվ շատ օրեր նա հաճախակի այդ բանն էր անում, որից նեղվելով, տագնապի և տարակուսանքի մեջ ընկնելով, ճար չկարողանալով գտնել, եղբորորդուն հեզությամբ պատանդներ վստահելով՝ նրանից խնդրում է նրա որդուն՝ իր համանուն Աշոտին, իր եղբայր Շապուհի որդուն, որպեսզի նա էլ ազատի ու իրեն տա Ատրնեբսեհին: Իսկ այն խաղաղասերը ամեն ինչում չէր վրիպում նրա՝ պատանդները տալու խնդրից: Նա վերցնում բերում է Ատրնեբսեհին, մխիթարում և մեծապատիվ շքեղությամբ ուղարկում իր աշխարհը:

(Հովհ. Դրասխ., էջ 147-149)

Այնուհետև քաղաքացիներին (27) իսկապես նվաճելով, իրեն ենթարկելով ու ձեռք բերելով՝ բոլորին զցում է իր ազդեցության տակ: Նա հոգ է տանում նրանց մասին և ոմանց հաճելի խոսքերով, ոմանց ունեցվածք տալով՝ գրավում է իր կողմը: Ըստ որում Վրաց մեծ կուրապաղատն ու նրա համախոհները, հավանելով նրա գեղեցիկ կարգերին ու ուղղությանը, հնազանդվում էին նրան: Ըմբոստացողներին էլ համարձակ զորությամբ ու բռնիորեն նեղելով՝ իրեն է հնազանդեցնում: Եվ այսպես ձգտելով ընդլայնում էր իր տերության ճանապարհները հյուսիս-արևմուտքից մինչև Կարին քաղաքը (28), իսկ այնտեղից էլ Կղարջքով (29) այն կողմ անցնելով ու հասնելով մինչև մեծ ծովի (30) ափը, եգերացիների սահմանները, Կովկասյան մեծ լեռան ստորոտները՝ գրա-

վելով գուգարացիներին ու Ծանաքքը (31), (հասնելով) մինչև Ալանաց դուռը (32) և գրավելով նաև նրանց երկաթյա դռնով ամրոցը: Իսկ այնտեղից էլ (հասնելով) մինչև հարավային կողմը, (այն է)՝ Կուր գետով մինչև Տփխիս քաղաքը, ինչպես նաև Ուտի գավառը մինչև Հունարակերտ քաղաքը և Տուս ու Շամքոր: Եվ այդպես ընդարձակելով իր տերության սահմանները և դնելով արքունի հարկերի, տուրքերի ու մաքսերի լծի տակ՝ իր քաջամարտության գենքը տնկում է որպես հաղթության նշան:

(Հովհ. Դրասխ., էջ 165)

Իսկ վշտասեր, չարասեր Ափշին ոստիկանը, լսելով կատարված այդպիսի ոճիրների, Սմբատի դավադիր փախուստի, ինչպես նաև Հայոց զորքը լուծարվելու ու հեռանալու, մեծամեծ ավագանու նենգության և այլոց շեշտակի երկպառակության մասին, իր կամքը կատարելու համար այդ պահը հարմար ժամանակ է համարում: Եվ չարությամբ մտածելով ու առաջնորդվելով՝ նա վեր է կենում ու սաստիկ հեղեղի նման մոնչալով գալիս է, որպեսզի հորդահոս ջրի նման սարսափեցնելով ողողի Հայաստանն (33) ու թագավորի գլխին թափի իր դառն թույնը: Եվ մեկնելով Ուտի գավառ՝ գալիս է Գուգարաց ու Վրաց կողմերը, որպեսզի կա՛մ նախ նրանց նվաճի, կա՛մ խառնաշփոթություն գցի նրանց մեջ, որպեսզի Սմբատի փախուստը իրենից որևէ տեղ երբեք չհաջողվի: Եվ քանի որ այն կողմերի նախարարները չհամաձայնվեցին նրա հետ ապստամբվել, և նա էլ չկարողացավ ուժ գործադրելով մոտենալ նրանց անմատչելի ամրոցին՝ դարձյալ գնաց Հայոց Վանանդ գավառը... Եվ նա գնում պաշարում է Կարուց ամրոցը, որը (գտնվում է) Վանանդ գավառում: Այնտեղ էին թաքնվել, պահվել ու ճգնավորի կյանքով էին ապրում Հայոց տիկիներ՝ Սմբատի կինը, և նրա հարսը, որը եգերացիների արքայի դուստրն էր և այլ ազնվականների կանայք:

(Հովհ. Դրասխ., էջ 181-183)

Բայց Վրաց մեծ կուրապաղատ Ատրնեքսեիը անխռով ու հաստատուն կերպով պահում էր խաղաղության դաշինքն ու սիրո միաբանությունը Սմբատ արքայի հետ՝ բոլոր բաներում իր ամբողջ մտքով, զորությամբ ու մեծ պատկառանքով հնազանդվելով նրան իբրև իր հորը, կամ թե սրանից առավել իբրև ծառա իր տիրոջից կամավոր կերպով կրելով երկյուղի սահմանը չափավոր մոլուցքով և իր աչքերը մեծ զգուշությամբ միշտ հառելով արքային, իրեն վստահելով նրան: Դրան էլ ավելի հավանելով՝ Սմբատ արքան բազմաբեղուն նախախնամությամբ նրան բերում է իր մոտ ու հոգ տանում նրա մասին: Ապա նրան թագադրում է մեծապատիվ ճոխությամբ և թագավորին վայել գեղահարմար զարդերով, ինչպես նաև զենքերով զարդարելով՝ և նրան թագավոր է կարգում Վրաց աշխարհի վրա ու դարձնում իր տերության երկրորդ մարդը: Ուստի ընդունելով արքայական պատվի առաջադիմությունը՝ նա դրա համար թերևս ոչ թե ամբարտավանում էր, այլ միշտ խոնարհվելով՝ տեղի էր տալիս, դյուրին ու հանդարտ մտքով շարունակ իրեն պահելով Սմբատ արքայի հետ կնքած դաշինքի մեջ՝ (պատիվ) էր տալիս առաջին հանդիսադիր բարի կարգերի համաձայն:

Դրանից հետո ուստիկան Ափշինը դարձյալ խաբվելով ճիշտ կարծված առանձին լեզվագարներից և նենգամիտ խաբեություն նյութելով իր սրտում, սկսեց շրջել քաղաքներում՝ իբր դրանք նվաճելու համար: Եվ ապա չվում, գնում ու հասնում է Տփլիս քաղաքը, իսկ այնտեղից իբր հողմից քշվելով, փոթորկի նման հանկարծակի դիմում գալիս է Շիրակ գավառի կողմերը՝ իր միտքը շրջելով դեպի հին մոլորությունը և հույսը դնելով գաղտնի կախարդների վրա, որպեսզի թերևս կարողանա նենգ հնարագիտությամբ դավել Սմբատ արքային: Շտապ մի փոքր գունդ կազմելով՝ թագավորը սաստիկ տագնապով ընկնում է Տայոց ամրոցի կողմերը՝ իր սիրեցյալ Ատրնեքսեի կուրապաղատի կալվածք-

ները: Իսկ երբ ոստիկանը տեսավ, որ անհնար է արքային դավաճանել, որ փորձել էր մեկ, երկու, երեք անգամ, դարձյալ այն բարությունից (դրդված)՝ բարեսիրության ու գթության համար արքայի նկատմամբ ցուցաբերում էր (անկեղծ) վերաբերմունք:

(Հովհ. Դրասխ., էջ 187-189)

Իսկ արքան (34) դարձյալ մեկնում գնում է Երասխաձորի (35) գագաթը, Նախճրաձոր գյուղը՝ այնտեղ ձմեռելու, որովհետև ոստիկանը ցանկացավ հյուսիսային ձմեռային ցուրտ ժամանակն անցկացնել Դվինում... Իսկ այն ժամանակ Վրաց Ատրնեբսեի թագավորը սրընթաց ոտքերով շտապում էր պատվասիրությամբ տեսնելու Սմբատ արքային և նրա հետ միասին հանդիսավոր ձևով տոնելու գատկի մեծ պասի օրը: Նա արքայի կողմից ուղարկվեց բազմաբաշխ ու երևելի ընծաներով:

(Հովհ. Դրասխ., էջ 201)

Այդ ժամանակներում եգերացիների Կոստանդին թագավորը, տարվելով այլանդակ ու դժնի բարքով և աչքերը ոչ թե դեպի ճշմարտությունը, այլ դեպի չար խորհուրդները բարձրացնելով, զորք է գումարում և շարժվում գնում է հյուսիսային կողմերը, Կովկասյան լեռների ծործորները, միաժամանակ նաև գուգարացիների աշխարհի ու այն (ցեղերի) վրա, որոնք բնակվել էին Ալանաց դռան մոտ, որպեսզի նրանց նվաճի ու գցի իր ձեռքի տակ: Եվ քանի որ այդ ցեղերը հնազանդվել ու նվաճվել էին Սմբատ արքայի ձեռքով, Վրաց Ատրնեբսեի թագավորը շուտափույթ (նամակ) է գրում եգերացիների թագավորին, որը նրա փեսան էր, որպեսզի նա իր սրտից ցրի, հեռացնի, կորցնի դատարկ, սին, ապիրատ ու սնոտի խորհուրդը ու մոլեգին մտքով չհակառակվի ոչ վեհագույններին և ոչ էլ իրեն: Իսկ երբ նրա ականջները փակվեցին, և նա հեռացավ խոսքերն ունկնդրելուց ու չբերվեց իմաստուն խորհրդի, ապա Սմբատ արքան մեծ զորքով հախուռն հարձակ-

վելով ու իր հետ վերցնելով նաև Վրաց թագավորին, նրանք զորքով միասին ընդառաջ գնացին Կոստանդինին: Իսկ նա երբ տեսավ, որ չի կարող նրանց դեմ կանգնել, ետ դառնալով թաքնվում է ապահով վայրերում՝ նրանից խնդրելով հաշտություն: Իսկ արքան իր աներ Ատրնեբսեհին և իր նախարարներից մի քանիսին ուղարկում է՝ նրա հետ խոսելու խաղաղության մասին: Երբ նրանք միմյանց դեմ դուրս եկան ու զբաղվեցին ինչ-որ բանով, Ատրնեբսեհի հրամանով արքայի նախարարները հանկարծակի բռնեցին եգերացիների թագավորին ու բերեցին նրա առաջ իբրև այծի ուլ, որը (մինչ այդ) առյուծի նման բնից դուրս գալով՝ ձգտում էր ցրել, կոտորել ազգերին: Իսկ Սմբատ արքան Վուրի աշխարհում գրավելով բազում ամրոցներ և այդ կողմերում կուսակալներ կարգելով ու վերցնելով Կոստանդին Եգերացուն, բերում է իր հետ և երկաթյա շղթաներով բանտ գցում Անի ամրոցում: Սակայն ոչ թե քամահրելով, այլ կրկին մեծարելով ավելացնում է նրան անհրաժեշտ հանդերձանքն ու ապրուստի միջոցները՝ ըստ իր բարեսիրտ կամքի: Եվ նրան այդպես միայնակ չորս ամիս պահում է փակի տակ: Իսկ երբ նա տեսավ եգերացիների երկպառակությունը, որոնք շեշտակիորեն անջատվելով՝ պատրաստվել էին Կոստանդինից ավելի զորեղ մեկ ուրիշին կարգել իրենց թագավոր, և երբ նա ստույգ կերպով իմացավ այդ մասին, չէր վախենում նրան շտապ արձակել ու նշանակել իր տերության թագավոր: Նախ նրա համար, որ նա փեսա էր դարձել Վրաց թագավորին՝ դրանով նրան շողոքորթելով, և երկրորդ՝ որպեսզի թերևս որպես իր սանը, նա այնուհետև գտնվեր հնազանդության մեջ և իրեն երախտահատույց լիներ: Եվ ապա նրան հազցնում է թագավորական զգեստներ, նրա գլխին դնում մարգարիտներով ընդելուզված ոսկյա խույր, մեջքին կապում ականակուռ ոսկյա գոտի, նրա ուղևորության կարիքների համար պատրաստում է գեղեցիկ այլ իրեր ու նրան զորք տալով՝ ուղարկում է իր աշխարհը: Եվ երբ նա գնաց հաստատվեց ու որպես միապետ իշխեց իր

սեփական տերության վրա, Սմբատ արքայի նկատմամբ դրսևորեց հնազանդություն, մտերմություն ու համախոհություն՝ նրա կողմից իր հանդեպ ցուցաբերած հայրական հոգատարության համար, նրան համարելով իրեն հաճելի ու բաղձալի անձնավորություն: Բայց Վրաց թագավորը է՛լ ավելի չարանալով Կոստանդինի արձակելու պատճառով, որպես թե նա այդ արել էր ի հեճուկս իրեն, դրանից հետո նա իր բարեսիրտ պարզևատուի՝ Սմբատի դեմ գրգռում էր մարտիկներին ու զինում, թեպետ ոչ բացահայտորեն: Իսկ Սմբատը, զարմանալով նրա թերահավատ կարծիքի վրա, բանի տեղ չէր դնում նրա՝ դեպի չարը միտվող վարմունքը, այլ իրեն միշտ հաղթահարում էր ի սեր նրա, որովհետև երբեք չէր կարծում, թե նա խռովասեր է:

(Հովհ. Դրասխ., էջ 203-207)

Ապա այն պատվական նախարարներից Հասան անունով մեկը, որ արքայի (36) ամբողջ տերության իշխանն ու հրամանատարն էր, և չկար մեկը, որ համարձակվեր ձեռք բարձրացնել նրա դեմ, ինչպես նաև ինքը՝ թագավորը, միշտ լսում էր նրա խոսքին, նույն ինքը Ակիտոփելը, ազդվելով չարից ու ձեռք գցելով ձախորդ ու անզգամ բաների, խորհում էր արքային սպանելու մասին: Եվ նրանց միջև գցելով չար անջրպետ՝ նա արքայից, Վանանդացիներից, Հավնունիներից ու այլ նախարարներից հեռացնում էր իր գլխավոր համազգիներին, թվով մոտավորապես տասնհինգ մարդու: Եվ իր կորուստը թաքուն պատրվակ բերելով՝ Վրաց թագավորի հետ նրանք որոշում են սպանել Սմբատին, և դրա փոխարեն նրան /Հասանին/ կարգել Հայաստանի կուսակալ (37), միայն թե նա նրանց հետ չար գործերի մասնակցի: Իսկ նա իսկույն հրապուրվում է դրանցով, և այնուհետև նրանք միասին ձեռնամուխ են լինում արքայի սպանության գործին: Եվ ապա ոմն Հավնունու՝ Հասանի աներոջը, որ համաձայնել էր նրանց չար մտադրությանը, քաջալերելով ուղարկում են սպանելու արքային, նրա հա-

մախոհներին ու կողմնակիցներին: Նրանք գնում են արքային ծառայելու պատրվակով և նրանցից թաքցնելով իրենց մութ մտադրությունները փնտրում էին հարմար պահ: Իսկ Վրաց թագավորը և Ալիստփել երկրորդը, (այսինքն)՝ Հասանը, և նրանց մյուս համախոհները, երբ պայմանավորվել էին արքային սպանել Հավնունու հետ միասին, որին էլ առաքեցին, հույս ունեին կցմցել անտեղի սպանության (պատճառները), բայց սրտնեղությանը չդիմանալով՝ նրանք շատ մեծ զորքով շտապ դուրս են գալիս Շիրակ գավառի կողմերը: Հասանը տեղնուտեղը Անի ամրոցը տալիս է Ատրնեբսեհին, իսկ իրենք կանգնում ու դադար են առնում Երազգավորքի արքունական ապարանքում, որովհետև Սմբատ արքան գտնվում էր Տաշիրի սահմաններում: Այնուհետև ոմանք արքային մեկ առ մեկ հայտնում են գործած դավաճանության և Ատրնեբսեհի, Հասանի ու նրանց համախոհների մասին, որոնք պատրաստ եկել-հասել ու բույն էին դրել Երազգավորքում: Իսկ երբ դեպքերը ստուգապես հայտնի դարձան, նա ավագակի շտապողականությամբ անմիջապես հասնում է Շիրակ գավառը: Այնուհետև Ատրնեբսեհն ու Հասանը երբ տեսան, որ սպանության մտադրությունը գլուխ չի գալիս, նրանց պատում ու պաշարում է ահն ու երկյուղը: Նրանք հաճախակի թալանում էին նրանց, ովքեր ընկնում էին իրենց ձեռքը, (թալանում էին) նաև Անի ամրոցում պահվող շատ ունեցվածք և փախչում, գնում ու ընկնում էին Տայքի ապահով տեղերը: Իսկ երբ աղմուկ-աղաղակի գուժը տարածվում էր արքայի տերության բոլոր կողմերում, պատերազմող ու կռվող ամբողջ զորքը, հանդիսավոր ձևով անցնելով, առհասարակ բոլորը դառնում են միաբան, սպառազինվում են նույն ձևով, հագնում ճշմարտության նույն գրահը և մի գոտիով արիաբար ամրացնում իրենց մեջքերը: Նրանք իրենց մահը իբրև ճշմարիտ կյանք էին համարում թագավորի վրեժխնդրության համար: Եվ այդպես երբ բոլորը մեկտեղ գնում հավաքվում են թագավորի մոտ, վերջինս չվում գնում է՝ դիմադրելու չար

ոստիկանին (38) և մյուս ապստամբներին: Նրանք երբ հասնում են Ատրնեքսեի տերության երկրներին, ամեն ոք առանձին-առանձին Դավթի նման իրեն զինելով նահատակության համար, պարսատիկով խփում էին ոչ միայն վիթխարի հսկային, այլ նաև բազմաթիվ կովոդ մարդկանց և շատ արյուն էին թափում: Բայց արքան նրանց չներեց՝ ասելով, թե «Այն անձը որ մեղք գործի, նա էլ կկորչի»: Նա սուրը հեռացնում ու բաժանում էր անմեղ մարդկանցից և պահանջում էր իր ձեռքը տալ վնասակարներին: Ուստի և Ատրնեքսեի անձամբ խոստովանվում է չարամիտ դավադրությունը և արքայից մեղքերի թողություն հայցում: Իսկ հեզահամբույր այդ մարդը, այն ընդունելով պարկեշտ մտքով, նրան հաշտության ձեռք է մեկնում ու նրա որդուն որպես պատանդ վերցնելով՝ բերում է իր հետ: Եվ իրեն դավոդ իր նախարարներին առհասարակ նրանից խլելով՝ նա բոլորի աչքերը կուրացնում է, իսկ ոմանց էլ ուղարկում է հռոմեական արքայի, ոմանց՝ եգեբացիների թագավորի մոտ: Եվ այսպես ասես աստվածային նախախնամությամբ նա կրկին հաստատում է իր թագավորությունը:

(Հովհ. Դրասխ., էջ 209-213)

(Ոստիկանը) (39) երբ այն (40) ընդունեց, իսկույն հետապնդում էր Սմբատին՝ նրան տանելով, մղելով ու հանելով մինչև Վրաց աշխարհը, մինչև որ նա ընկնում է Կղարջքի անմատչելի ամրոցները... Բայց Յուսուֆ ոստիկանը ամառային բոլոր եղանակներին մոնչալով իբրև անվանդակ առյուծ ու որսի պատրաստվելով Սմբատի դեմ՝ շատ օրեր այդպես սպասում էր: Սակայն այդ ժամանակ նրան չկարողացավ որևէ վնաս տալ՝ բարձր լեռներում, խոր ձորերում, քարանձավներում ամրացված լինելու պատճառով, և նա դարձյալ շարժվում գալիս է Դվին քաղաքը:

(Հովհ. Դրասխ., էջ 217—219)

Քանի որ չար ավագակները մեր աշխարհը դեռևս պահում էին չար գերիչների ձեռքում, այդ պատճառով և էս (41) աստվածային հրամանով հալածվելով թափառեցի քաղաքից քաղաք՝ Աղվանից արևելյան կողմերում գնալով մեծ իշխան Սահակի ու նրանց թագավոր Ատրներսեհի մոտ, որ գտնվում են Կովկասի հյուսիս-արևելքում: Այդ ժողովուրդները մեզնից են, և նրանց ոչխարների հոտերը մերն էին: Եվ նրանցից յուրաքանչյուրին համապատասխան ապրուստի քիչ ծախսեր չէր կարգում՝ որպես պարտապան մեզ վճարելով ամեն մեկի պետքերը: Եվ մենք այնտեղից գնացինք Գուգարքի կողմերը ու այնտեղ բնակվեցինք՝ տիրոջից ակնկալելով մեր փրկությունը:

(Հովհ. Դրասխ., էջ 221)

Այնտեղից վերադառնալով (42)՝ օդապլացի նման նա չվում գնում է Գուգարքի կողմերը, և գրավելով այն ու իր տերության ամրոցները՝ զցում է իր հպատակության տակ: Այնտեղից հանկարծակի մեծ արագությամբ հասնում է հագարացիների զորքի վրա, որ գտնվում էր Վրաստանի (43) մայրաքաղաք Տփլիսում: Եվ այնտեղ ումանց սրո ճարակ էր տալիս, իսկ պատվական մարդկանցից ումանց բռնելով՝ շղթայակապ պահում էր բանտում, որպեսզի գրավաթափ անելով՝ նրանց փոխանակեր այն քրիստոնյաների հետ, որոնք բռնված էին չար ոստիկանի ձեռքով: Եվ ապա վերցնելով շատ առ ու ավար՝ նա այնտեղից վերադառնում է դեպի Տաշիրքի գավառը: Եվ լսելով, որ իսմայելյան զորքը թաքնվել, նստել ու դադար է առել Աղստևի ապահով ու խոր ձորերում, նա այնուհետև իր զորքից ընտրելով մոտավորապես երկու հարյուր մարդու գնում հարձակվում է հագարացու զորքի վրա, մեծ կռիվ տալիս, նրանց բոլորին սրի քաշում և առ ու ավարով վերադառնում է դեպի իր բանակը: Եվ իսկույն չվում-գնում է իրեն միշտ սիրելի իշխան Գուրգենի մոտ, և այնտեղ

միասին խելացիորեն հոգալով բոլորի կարիքները՝ նա անցնում-գնում է Արշարունյաց ամրոցների կողմերը: Այնուհետև այն ապականողները այլևս չհարձակվեցին նրա տերության վրա:

Երբ այս բանը տեսան Վրաց թագավորն ու իր զորքը, թե Տերը այցելեց նրան, պաշտպանեց ու հաջողություն բերեց բարի գործերի մեջ, դրանից հետո վարվելով հարթ ու հավասար կերպով, մի կամքով ու մի մտքով և թագադրելով նրան թագավոր են կարգում իր հոր փոխարեն: Նրան ինքնակալի աստիճան են տալիս ու նրա ապագան հանձնում ամենակալ Աստծուն:

(Հովհ. Դրասխ., էջ 245-247)

Իսկ ես (44) այդտեղ պանդխտելով ժամանակի հալածանքների պատճառով, մնացել էի Գուգարքի ու Վրաստանի (45) միջև, խոհեմ Ատրնեբսեհին մոտիկ, որն այն նահանգի թագավորն էր: Չնայած նա ինձ բազմիցս հյուրասիրեց ու առատ ուտելիքներով պատիվ տվեց, սակայն երկար ժամանակ այնտեղ պանդխտ մնալով, ինչպես երբեմն Իսրայելը Կեղարի վրանում, շատ ավելի տրտմելով, տառապում էի՝ ակնկալելով ու սպասելով Տեր Աստծու փրկությանը: Հետո մեր սասանման ու վրդովմունքի մասին լսելով՝ Կոստանդնուպոլսի Նիկողայոս մեծ պատրիարքը ինձ գրում է հետևյալ թուղթը.

«...Տեր իմ, կարծում եմ՝ քո աստվածասիրությանը անհայտ չէ մեր սրտի անպակաս ցավը և հույժ տրտմությունը՝ Հայոց, Վրաց ու Աղվանից քո միացյալ ու հավատացյալ հոտերի համար, որոնց հասան դառն տագնապ, չարչարանք ու նեղություններ սարակինոս ու իսմայելյան բռնակալների կողմից... Այսպիսով, եթե հարմար թվա ձեր սրբությանը, ուրեմն նախ անհրաժեշտ է ամեն ժամ ի վերուստ օգնության կանչել աստվածային նախախնամությունը, ձեռքերը վերև բարձրացնել ու ամբողջ սրտով ամենակալ Աստծուն կանչել գթության ու ողորմության Հայոց, Վրաց ու Աղվանից (աշխարհների) քո հոտի համար ու մտածել ընդհանուրի

օգուտի մասին: Եվ ապա բնավ չանսալ դրանց կորստյանը և ջանալ ամեն ինչով և ամեն ինչում առհասարակ բոլորին խրատել աստվածային գիտությամբ: Եվ Քրիստոսի ավանդած խոսքով կապել ու արձակել, ինչպես իշխանությամբ իսկ ընդունեցիք պատվերը երկնքում ու երկրի վրա և դադարեցնել գոնե չար թշնամանքը, որ կա միմյանց նկատմամբ՝ թույլ չտալով մնալու վայրենի գազանների մեջ, որ բարկացած դիմում են միմյանց սպանելու: Եվ պետք է դառնալ դեպի մարդկային մտածողությունն ու քրիստոնեական խաղաղությունը, որով փրկություն կբերվի Հայոց, Վրաց, Աղվանից աշխարհների մնացած մարդկանց:

Ես՝ նվաստս, նախապես շտապեցի գրի առնել ու փոքր-ինչ տալ ձեզ սիրո հորդորման պատճառը: Այս կարգի թուղթ առաքեցինք Աբխազիայի ավագ կուրապաղատին՝ խրատելով լսել ձեզ, մոռանալ միմյանց դեմ ընդհարումը, նայել սիրով, միաբանությամբ և լինել հաշտ ու խաղաղ միմյանց և Հայոց ու Աղվանից բոլոր իշխանների հետ, միաբանվել և մարտնչել ամբարիշտ թշնամու՝ Ապուսիճի որդիների դեմ, որպեսզի դուք ընդհանրապես չկորչեք, և ձեր մերձավոր ազգերը չսասանվեն: Այսպիսով, ձեր սրբությունը պետք է և՛ դեմ առ դեմ, և՛ թղթով, և՛ պատգամով, և՛ եպիսկոպոսներով, և՛ քահանաներով, և՛ սուրբ մարդկանցով ձգտի վերացնել դրանց թշնամանքը, առանց անհոգ խոսքի հետևել խնամակալություններին, մաղթել դառնալու դեպի լավագույնները, փրկական խորհուրդներն ու գործերը: Որովհետև այսպես միախոհ ու միաբան լինելու դեպքում ձեր աշխարհին այլևս ոչ մի չարագործ չի կարողանա (վնասել): Մինչ դուք այդ այդպես կկարգավորեք, ապա մեր ինքնակալ ու աստվածապսակ թագավորը հարկ եղած ժամանակ մեծ գորք կուղարկի ձեզ օգնելու համար: Նաև արխագների կուրապաղատն ու ավագը և Հայոց իշխաններն ու մեծամեծները միաբանվելով մեր գորքի հետ, Աստծու մեծ օգնությամբ ու ձեր մեծ քահանայագործու-

թյամբ կռվելով թշնամու՝ սատանայի կարծեցյալ կորած սպասավորի դեմ, ավելի բարձր կգտնվեն:

Այն ժամանակ հակառակության մեղավորությունը, որ ապիրատությամբ դրեցին միմյանց դեմ, և՛ դուք, և՛ մենք առհասարակ դրանց թողություն կշնորհենք: Եվ յուրաքանչյուրի իրավունքը յուրաքանչյուրին ընձեռեցեք, որպես և վայել է ձեր սրբությանը, որպեսզի սկզբից ամեն մեկի միջոցով տարվի ու հաստատվի քահանայավարության կարգը...»:

Իսկ ես ընթերցելով այս (թուղթը), ընդունելով Քրիստոսի սիրով և սույն մտքի ու սույն խորհրդի մեջ համոզելով՝ հաստատեցի Վրաց թագավորին, մինչև որ նա խոստովանվեց հետևյալ խաղաղությանը, սիրուն ու միատարր միաբանությանը բոլորի՝ Հայոց, Վրաց աշխարհների իշխանների ու տերերի հետ, իհարկե այդ մասին տալով երդմնագիր:

(Հովհ. Դրասխ., էջ 267-271)

Բայց Սմբատի որդի Աշոտը (46), որին Հայաստանի (47) վրա թագավոր էին կարգել Վրաց թագավորն ու նրա զորքը, անընդհատ տեղափոխվում էր իր տերության այս կամ այն ամրոցը: Նա բազմաթիվ կռիվներ է մղում և քաջագործություններ ցուցաբերում բոլոր թշնամիների՝ ոչ միայն սարակինոսների, այլ նաև վրացիների ու գուգարացիների դեմ, որոնք անիրավացիորեն էին դատում նրա մասին:

(Հովհ. Դրասխ., էջ 273)

Հետո արքայորդի Աշոտ թագավորը (48) չվում գնում հասնում է Գուգարքի կողմերում (գտնվող) այն մեծ ամրոցը, որը վրացերեն Շամշուղե (49), այսինքն **Երեք նետ** է կոչվում: Քանի որ նրա հայրը (50) սեփականացրել էր այդ ժողովուրդներին ամրոցի ամբողջ շրջակայքով, երկու՝ Վասակ և Աշոտ եղբայրներին, որոնք Գնթունիների (51) տոհմից էին, այդ

նահանգի բերդապահներ ու վերակացուներ է կարգում: Իսկ սա նույն հնազանդության կարգով նրանցից պահանջում էր գալ իր մոտ հավատարիմ ծառայության: Եվ որովհետև նա այնտեղ քիչ ու սակավ օրապարեն է գտնում իր զորքի համար,, այդ պատճառով զորքը ուղարկում է մոտակա գավառը՝ գնալու և հոգալու իրենց ապրուստը, մինչև ինքը այնտեղից ետ դառնա: Եվ ինքը (Աշոտը) այնուհետև իր գեղեցիկ եղբոր՝ Աբասի հետ երկու հարյուր հիսուն մարդկանցով գնում տեղավորվում ու դադար է առնում այն ամրոցի մոտ, որը Սակուրեթ (52) էր կոչվում: Իսկ Վասակն ու Աշոտը երբ տեսան, որ ամբողջապես պակասել է հեծելագործի քարավանը, ու որևէ մեկի կողմից չկա անմիջական օգնություն, այնուհետև խտանալով, ստվարանալով, աքացի տալով՝ միաժամանակ թաքուն իրենց զորքն էին հավաքում՝ իրենց հետ վերցնելով նաև իրենց սիրելիներին, որոնց համալրում էին Տփխիսի ու Կովկասի ձորերի զորագնդերը, մոտավորապես չորս հազարից ավելի սուսերաձիգներ, վահանավորներ, նիզակավորներ, վաղակավորներ (սուր ունեցողներ): Եվ ապա անսպասելիորեն հարձակվում են ու ասպատակում: Իսկ նրանք, երբ տեսան, որ իրենց շրջապատել են ավազակներն ու զորքի բազմությունը, ապա բազմապաղատ արցունքներով օգնության էին կանչում Տեր Աստծո բարձր բազուկին, որը կարող էր միայնակ հազարներին հալածել: Եվ իրենց խաչակնքելով՝ ահագին դրդոյունով ճակատամարտ էին տալիս և զենքով, ձիերով արիաբար, առնաբար հարձակվելով նրանց վրա՝ անմիջապես ճեղքում են նրանց ռազմաճակատի վահանափակ բազմության խմբերը ու նրանց ետ դարձնում: Եվ միայն երկու հարյուր մարդով բնաջնջում, քշում ու հալածում են նրանց չորս հազարանոց սպառազինված զորքը: Նրանցից ոմանց սպանում են սրի բերանով, նետերի սլաքներով, նիզակների տեգերով: Սարակինոսներից ոմանց բռնում սպանում էին, ոմանց էլ քթերն ու ականջներն էին կտրում: Իսկ քրիստոնյաներին խնայելով ու

կողոպտելով՝ թողնում էին, որ գնան-հեռանան, բայց նրանցից գրեթե ոչ մեկը չէր կարողանում փախչել, բացի միայն Վասակից, որը մի քանի մարդկանցով փախչում ընկնում է Շամշուղե ամրոցը: Ահա սա այսպես իրագործելով, ինչպես Գեդեոնի նկանակը դարձյալ գլորվելով օտարների բանակի մեջ ու նրանց բնաջնջելով, ինքն Աշոտը իր եղբոր հետ ետ է դառնում ու ուրախությամբ մեծ հաղթանակով, բազմաթիվ ավարով գնում է Վրաց աշխարհի կողմերը, իրենց միշտ սիրելի Գուրգեն իշխանի մոտ:

(Հովհ. Դրասխ., էջ 297-299)

Հետո արքայորդին (53) մեկնում գնում է Վրաց մեծ իշխան Գուրգենի մոտ և նրանից ստանալով մեծ գորք՝ դարձյալ գալիս հասնում է Վաղարշապատ քաղաքը: Եվ այս անգամ ես ոչ թե թույլ տվեցի, որ նրանք կովով հարձակվեն միմյանց վրա, այլ շարժեցի նրանց միտքը, և նրանք ունկնդրում էին իմ բարի խրատները ու (դրանք) հասկանալով՝ միմյանց նկատմամբ սեր էին դրսևորում:

(Հովհ. Դրասխ., էջ 303)

Իսկ երբ սա այսպես իր կամքով կատարվեց (54), ապա նա չվում գնում է Շիրակ գավառը, թագավորի մոտ և սիրալիր սրտով իր մոտ է կանչում իր եղբայր Աբասին, որին իշխանաց իշխան էր կարգել և նրա աներոջը՝ Վրաց Գուրգեն իշխանին՝ չիմանալով, որ նրանք են իր դեմ նյութել չարակն նախանձով դավաճանություն: Եվ երբ նրանք միմյանց հանդիպում են Որոմանի գյուղում, նա բազմապարզ և բարությանբ թագավորներին վայել պատիվ է տալիս նրանց:

Եվ որովհետև նրանց չի հաջողվում այն տեղում բացել նրանց կորստյան դուռը՝ ըստ երկնային նախախնամության, (թագավորը) հեռանում է նրանց մոտից, գալիս ու առանց ինչ-որ կասկածանքի տեղավորվում է Երազգավորք քաղաքագյուղում: Իսկ

նրանք, մտածելով սիրո պատրվակով թագավորին դավելու մասին և որոգայթներ նյութելով, հանկարծակի հարձակվում են նրա վրա՝ գաղտնի ջարդելու համար: Բայց մի փոքր առաջ իրազեկ լինելով այդ մասին՝ թագավորը շտապ իր հետ վերցնում է իր եղբայր Աբասի տղային, Երազգավորքի գաղթականներին և հազիվ ճողպարելով խարդավանական որսորդության խայծից, շարժվում գնում է Ուտի գավառը:

Իսկ նրանք գալով ու չկարողանալով գտնել այն, ինչ կամենում էին, ամաչելով ու ետ մնացած գաղթականներին վերցնելով, վերադառնում են:

(Հովհ. Դրասիս., էջ 305-307)

Բայց Աշոտ թագավորը (55) Դվին քաղաքը պատրաստեց իբրև իր կամակատարը, ապա գնալու համար նրանց մոտից ետ դառնալով՝ նա մեկնում է Վրաց աշխարհը ու այնտեղ իր հետ վերցնելով Վրաց թագավոր Ատրնեսեհին, նրանք երկուսով Գուրգեն իշխանի դեմ կռիվ են սկսում և իրենց վրեժն են լուծում նրանցից, ովքեր նենգորեն ու չարակնորեն նրան անիրավ ահ ու աշխարհավեր կործանում պատճառեցին: Թեպետև մյուս թագավոր Աշոտը և արքայորդի Աբասի եղբայրը հավաքվում ու գրոհում են Գուրգենի վրա, սակայն չկարողանալով պատերազմի կանոններով նրանց դիմադրել, ամրանում են խոր հովիտներում և լեռների մեջ ընկած անտառախիտ խոր ձորերում: Բայց այդ վայրերի անձուկ տեղերը չէին կարողանում իսպառ արգելել ավազակների ասպատակությունները նրանց վրա, այլ միշտ վահանակի զորքի բազմությունը իբրև ինչ-որ ասպարափակ մի բան, զինված աղեղներով ու սրերով, կովում էին նրանց դեմ և նրանցից շատերին վիրավորելով՝ գետին էին փռում, մինչև որ նրանք խոսում են հնազանդությամբ ու խաղաղությամբ: Եվ մեր աշխարհին նրանց ձեռքով ինչ ավերածություն և սասանում որ բերվեց, կրկին որպես տույժ նրանք են նորոգում: Եվ մինչդեռ

այսպես նրանք մոտ էին միմյանց միջև խաղաղություն հաստատելուն, իսկույն Ուտի գավառից Աշոտ թագավորի մոտ գուժկան է հասնում՝ հայտնելով նրան իր աներ Սահակ իշխանի շարժվելը դեպի Ուտի գավառ, նրանց կողմից առհասարակ ուժգնորեն այն ամրոցների կողոպտումն ու հափշտակությունը, որոնք գտնվում են Ձորոփորում (56), իր երկրի գաղթականներին իր տերության ամրոցները տանելը, իր հաստատվելը, մնալն ու նստելը գավառի լեռնային կողմում: Այս բանը լսելով՝ շատ հարուստ ու բազմահանճար Վրաց Ատրնեբսեի թագավորը մի կողմ է դնում իր քեռորդու՝ Գուրգենի պատրաստ գործը, որ իր ձեռքի տակ կար: Եվ թողնելով այդ մասին հոգալու մեկ այլ տեղում ու հարմար ժամանակ, հոժարությամբ իր մոտից անմիջապես ուղարկում է Հայոց Աշոտ թագավորին՝ Սահակ իշխանի գործը գլուխ բերելու համար: Բայց նա իր գորքը թողնում է Ետևում, իր թիկունքում և միայն մոտավորապես երեք հարյուր ընտիր մարդկանցով շատ շտապ գալիս հասնում է Ձորոփոր: Եվ նախ տեսնում են, որ Կայան կոչված բերդը հափշտակել է Սահակ իշխանը, և որ այնտեղի բանտում է գտնվում Սյունյաց տեր Վասակը, որին հանում ու արձակում է իր հոր տունը, ինչպես նաև ազնվական կանանց, որոնք նրա հետ էին որպես գերիներ:

(Հովհ. Դրասխ., էջ 311)

Բայց դրանից հետո (57) բացահայտվում է քանանացի Վասակ Գնթունու ապստամբությունը, որին վստահված էր Շամշուլդե ամրոցի պահպանությունը: Երբ գլուխ չի գալիս նրա մտածած դավաճանությունը, նա փախչում է Աշոտի մոտից, որը Շահանշահ էր անվանվում: Եվ անձնատուր լինելով Վրաց Գուրգեն իշխանին՝ (Վասակ Գնթունին) խոստանում է նրան տալ մեծ ամրոցը, միայն թե նա իր նահանգից նրան տա Կրուստ ամրոցը: Իսկ նա անմիջապես կատարելով Վասակի խնդրանքը և

երդմնագիր կնքելով՝ տալիս է տանելու նրան: Նա հավատարիմ լինելով երդմանը և դուրս գալով ամրոցից՝ չվում գնում է Գուրգեն իշխանի մոտ: Եվ քանի որ նախքան այդ Վուրի աշխարհի հեծելագործի կողմից սպանվել էր Վասակի եղբայր Աշոտը, դրա համար, երբ նա մեկնում է, ամրոցը վստահում է իր կրտսեր սաներին: Իսկ երբ նա հանդիպում է Գուրգեն իշխանին, իսկույն վերցնելով նրան՝ այնտեղից ետ է դարձնում, բերում ամրոցի դռան մոտ և պահանջում այն իրեն տալ: Իսկ ամրոցի պահակները չկամեցան տալ, մինչև որ իրենք չստանան Վասակին: Երբ իշխանը կռիվ է սկսում ամրոցի մարդկանց դեմ, պահապանները անմիջապես հայտնում են Շահանշահին, և նա աճապարելով գալիս է գործը գլուխ բերելու: Եվ երբ նա եկավ այդ տեղը, Գուրգենը հեռացվեց ամրոցի դռնից: Բայց պահապանները ամրոցը նրան էլ չկամեցան տալ, մինչև որ իրենք չստանան Վասակին: Իսկ նա շրջապատելով և պաշարելով՝ սպասում էր հարմար պահի այն գրավելու համար: Բայց Գուրգենը մեծ երդմամբ պահապաններին համոզում էր Վասակին նրանց տալ, ապա պահանջում են զորք ուղարկել, որպեսզի ամրոցը նրանց տան: Իսկ իշխանն ուղարկում է մոտավորապես երեք հարյուր քաջակորով աղեղնավոր, վահանավոր ու սուսերավոր մարդկանց, որոնք երբ հասան նրանց առաջ, գաղտնի բացեցին մուտքի դռները, և նրանք բոլորը լցվեցին ամրոց: Իսկ ամրոցի մարդիկ, ճանաչելով իրենց խաբող մահառիթ ու նենգավոր շունչը, որ պատրաստել էին կատարել, և ներքին բերդը լքելով ու հեռանալով, հարձակվում են վերին բերդի վրա՝ սաստիկ կռիվ տալով Գուրգենի զորքի դեմ, որպեսզի թերևս կարողանան նրանց դուրս հանել: Իսկ Աշոտը չիմանալով իրողությունը՝ կարծում էր թե ամրոցի մարդիկ միմյանց հետ ընդհարվելով՝ կռվում են: Եվ ապա ինքը դրսից կռվում էր վերին բերդի դեմ, իսկ նրանք վերևից ներքև բացականչելով՝ արքային հասկացնում էին հակասության պատճառները, որպես թե նրա համար է այդ

պատերազմը իրենց կողմից իրագործվում Գուրգենի ազնվական զորքի դեմ: Իսկ նա ձայն էր տալիս նրանց՝ ասելով. «Եթե ինձ համար եք ձգտում այդպիսի կոիվների, ապա ինչու իմ առաջ չի բացվում այդ դուռը, որպեսզի ես մտնեմ և հեշտությամբ կատարեմ այդ հանդեսը և առատորեն ձեզ տամ բոլոր բարիքները»: Եվ ապա նրա առաջ բացվեց ամբողջ դուռը, և ներս մտնելով նա իսկույն ձերբակալում է Գուրգենի ամբողջ զորքին: Եվ մի քանի օր անց նրանց բոլորին զրկում է աչքերից, քթերից ու ականջներից: Այնուհետև հյուսիսային այդ ցեղերը նվաճվելով նրա կողմից, հնազանդվում են ծառայելու նրան, և Աստծու հաջող նախախնամությամբ նա առաջ էր գնում ու հզորանում:

(Հովհ. Դրասխ., էջ 317-319)

Իսկ Աշոտը (58), երբ գնում հասնում է ուտիացիների աշխարհը, տեսնում է, որ բոլորն իրենից երես են թեքել, անցել գնացել ու փախել են, և դրանից հետո նրան ոչ մի օգնական չգտնվեց, բացի մի քանի աննշան մարդկանցից: Երբ նրան անհայտ են մնում այդ դեպքերն ու աղետները, դիմում է օտարության և գնում է եգերացիների թագավորի մոտ՝ աներկբա հույսով իր հետ ունենալով սիրո նախկին դաշինքը, որպեսզի թերևս իրեն ախորժեղի պտուղներ քաղի նրանից: Իսկ եգերացիների թագավորը, հանդիպելով Աշոտին ու նրան ընդունելով բազմապատիկ պարգևներով, սիրալիք սրտով, ամեն ինչով ու ամեն բանում ամբողջ սրտով մարմնով ու զորությամբ միանում էր նրան: Եվ ապա նրան տալով մեծ օգնություն ու գումարելով մեծ զորք՝ գրեթե օդագնաց երիվարներով, երկաթակուռ զրահներով, զարհուրեցուցիչ սաղավարտներով, լանջապանակ երկաթազամ տախտակներով, ամուր վահաններով, զենքերով, զարդերով ու նիզակների տեգերով սպառազինվելով՝ այդ ամբողջը տալիս է նրա ձեռքը, որպեսզի նրանց միջոցով թշնամուց վրեժ առնի: Հեծելագնդով խմբովին անմիջապես գալով ու հասնելով, և շատերին մի մարդու նման

խրախուսելով՝ նա մտածում էր կարել-կարկատել մոտակա դեպքերի ելքը ու անհապաղ իրենց զենքը թափել թշնամիների վրա:

(Հովհ. Դրասխ., էջ 323)

Այստեղ արքունի դռան մի խորհրդատու, որի անունը իրենց լեզվով Մոնոս էր, խոսելով ամիրապետի հետ, հնարագետ փաստեր էր մեջ բերում, որ Պարսից, Հայոց, Վրաց և Աղվանից ոստիկան Յուսուֆին, որին հենց ինքն էր բռնել-բերել ամիրապետի մոտ, խնդրում էր արձակել բանտից ու կապանքներից և հաստատել նույն առաջին նահապետության գահի վրա, քանի որ, ասում է, նա հանճարեղ մարդ է, կովոդ, հոյակապ ու ահարկու լսողների ու տեսնողների համար:

(Հովհ. Դրասխ., էջ 327)

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Վիրքում Վահագնի պաշտամունքի մասին այս տեղեկությունը հանդիպում է նաև Մովսես Խորենացու երկում:
2. Այստեղ խոսքը Մեծ Հայքի կաթողիկոս Ներսես Ա Մեծի (353-372 թթ.) մասին է, որը 354 թ. Աշտիշատում գումարեց առաջին եկեղեցական օրենսդիր ժողովը հոգևոր գործունեության մասին:
3. Իննի դասակարգման մասին վկայում է նաև Մովսես Կաղանկատվացին (Բ-ԽԸ):
4. Մեքաստիան քաղաք էր Փոքր Հայքում, Եփրատ գետի աջ ափին:
5. Մելիտենեն քաղաք էր Փոքր Հայքում:
6. Մարտիրոսաց քաղաքը Մարտիրոսապոլիսն է, որը գտնվում էր Մեծ Հայքի Աղձնիք աշխարհում:
7. Սա Հայոց կաթողիկոս Սահակ Ա Պարթևն է (388-439 թթ.):
8. Գրաբար բնօրինակում գրված է «ի Վիրս», այսինքն՝ Վիրք:
9. Բաբկենը Հայոց կաթողիկոս է եղել 506-512 թթ.:
10. Նոր քաղաքը նախկին Վարդգեսավանն է, որը Հայոց Վաղարշ Ա թագավորի (114-146 թթ.) կողմից կառուցապատվելուց և պարսպապատվելուց հետո կոչվեց Վաղարշապատ, իսկ հետո նաև՝ Նոր քաղաք: Քաղաքը կոչվել է նաև Էջմիածին:

11. Այստեղ թերևս խոսքը Դվինի 506 թ. եկեղեցական ժողովի մասին է, որը պաշտոնապես ճանաչեց միաբնակ դավանանքը, իսկ նեստորականությունն ու երկաբնակությունը (քաղկեդոնականությունը) համարվեցին հերձված:
12. Սա Մովսես Բ Եղվարդեցի Հայոց կաթողիկոսն է (574-604 թթ.):
13. Սա Վրաց կաթողիկոս Կյուրիոնն է (599-616 թթ.), որի օրոք՝ 608 թ., Վրաց եկեղեցին բաժանվեց Հայոց եկեղեցուց:
14. Եգեթացիների երկիրը Եգեթքն էր, որն ըստ «Աշխարհացույց»-ի նույնացվում է Կողքիսի հետ և գտնվում էր Պոնտոսի ծովից արևելք՝ Մարմատիայի մոտ: Արևմուտքից սահմանն անցնում էր Դռակոն գետով մինչև Կովկասյան լեռները՝ դեպի նրա այն լեռնաբազուկը, որը բաժանում էր Կողքիսը Վիրքից: Այստեղ Կողքիսը մասամբ սահմանակից էր նաև Մեծ Հայքին՝ մինչև Կապադովկիական Պոնտոսը:
15. Սա Աբրահամ Ա Աղբաթանեցի Հայոց կաթողիկոսն է (607-610 թթ.): Վ. Առաքելյանը կարծում է, որ Աբրահամ Ա-ն հայրապետել է մինչև 615 թվականը: /Տե՛ս Ուխտանէս եպիսկոպոս, Հայոց պատմութիւն, Եր., 2006, ծանոթ. 260/:
16. Խոսքը վերաբերում է Հռոմի Պապ Լևոն 1-ինի տոմարին, ըստ որի Քրիստոսը մարդ էր երկու բնությամբ:
17. Սա Սմբատ Բագրատունի Խոսրով Շումն է, որի մասին հիշատակում է Մեթեոսը:
18. Խոսքը արաբական նվաճումների մասին է:
19. Սա Հայոց իշխան Թեոդորոս Ռշտունին է (639-654 թթ.):
20. Խոսքն արաբների մասին է, որոնք հայ պատմիչների գործերում հայտնի են նաև տաճիկ, իսմայելյացի, սառակինոս անուններով:
21. Խոսքը Իսրայել Ա Օթմսեցի կաթողիկոսի (667-677 թթ.) մասին է:
22. Այստեղ խոսվում է 862 թվականից «իշխանաց իշխան Հայոց և Վրաց», իսկ 885-890 թթ. «թագավոր Հայոց և Վրաց», Բագրատունյաց արքայատոհմի հիմնադիր Աշոտ Ա Բագրատունու մասին:
23. Այստեղ Ուտի գավառը կարելի է հասկանալ երկու իմաստով: Կամ հեղինակը նկատի ունի Ուտիք աշխարհը, և այս դեպքում նույնացվել են «աշխարհ» և «գավառ» հասկացությունները, կամ էլ դա Ուտի Առանձնակ գավառն է, որն ըստ «Աշխարհացույց»-ի Ուտիք աշխարհի գավառներից մեկն է:
24. Խոսքը Աշոտ Ա Բագրատունու որդիների մասին է, որոնք մասնակցում էին իրենց հոր՝ Աշոտ արքայի հուղարկավորությանը:

25. Երազգավորքը գտնվում էր Մեծ Հայքի Այրարատ աշխարհի Շիրակ գավառում, Ախուրյան և Կարս գետերի ջրկիցում: Կամսարականներից հետո այս տարածքն անցավ Բագրատունիների իշխանության ներքո և Սմբատ Ա-ի (890-914 թթ.) ու Աշոտ Բ-ի (914-929 թթ.) օրոք, 890-928 թթ. այն դարձավ Բագրատունիների արքայանիստը:
26. Կարուց բերդը կամ Կարսը գտնվում էր Մեծ Հայքի Այրարատ աշխարհի Վանանդ գավառում, Ախուրյան գետի աջակողմյան վտակ Կարս գետի ափին: 928 թ. այն դարձավ Բագրատունի թագավորների նստավայրը: 961 թ. Անիի՝ մայրաքաղաք հռչակվելուց հետո Կարսը դարձավ Բագրատունիների կրտսեր ճյուղի՝ Կարսի կամ Վանանդի թագավորության մայրաքաղաքը:
27. Խոսքը Դվինի ազատագրման մասին է, որի ոստիկանին և հրամանատարին Սմբատ Ա թագավորը ձերբակալելով շղթայակապ ուղարկեց Լևոն կայսերը, իսկ բնակչությանն իր կողմը գրավեց:
28. Կարին քաղաքը նույնանուն գավառի կենտրոնական քաղաքն էր, որը ներկայիս Էրզրում քաղաքն է Թուրքիայում:
29. Կղաքքը Մեծ Հայքի Գուգարաց աշխարհի գավառներից էր (վրաց.՝ Կլարջեթի):
30. Հեղինակն այստեղ նկատի ունի Սև ծովը:
31. Ծանարքը տեղադրվում է Վիրքից հյուսիս՝ Ալանաց դռնից արևմուտք:
32. Ալանաց դուռը անտիկ շրջանում և միջնադարում ունեցել է ռազմավարական կարևոր նշանակություն: Այստեղով հյուսիսկովկասյան ցեղերը բազմիցս են ներթափանցել հարավ և ասպատակել ամբողջ երկրներ: Այս է պատճառը, որ այդ կիրճը հարավից միշտ ամրացվել է՝ հյուսիսային ցեղերի ասպատակություններից խուսափելու համար:
33. Գրաբար բնօրինակում գրված է «գտունս Թորգոմեան»:
34. Խոսքը Սմբատ Ա թագավորի (890-914 թթ.) մասին է:
35. Երասխաձորը Մեծ Հայքի Այրարատ աշխարհի գավառներից էր: Կոչվել է նաև Արշարունիք: Նախապես եղել է Արշակունիների արքունական կալվածքը, այնուհետև նվիրաբերվել է Կամսարականներին, իսկ վերջիններիս՝ պատմական թատերաբեմը թողնելուց հետո հիշատակվում է որպես Բագրատունիների կալվածք: Այս գավառում է գտնվել նաև Նախճրաձոր գյուղը:
36. Խոսքը Սմբատ Ա արքայի մասին է:
37. Գրաբար բնագրում գրված է ոչ թե «կուսակալ», այլ «հրամանատար»:
38. Գրաբար բնօրինակում «ոստիկան» բառի փոխարեն գրված է «ոսոխ», որը կարծում ենք ավելի ճիշտ է:

39. Խոսքը Յուսուֆ ոստիկանի մասին է:
40. Խոսքը այն տուրքի մասին է, որը (մոտավորապես վաթսուն հազար դահեկանի չափ) Սմբատ Ա թագավորը տվեց Յուսուֆ ոստիկանին:
41. Այստեղ Հովհաննես Դրասխանակերտցին խոսում է իր մասին:
42. Խոսքը Սմբատ Ա արքայի որդի Աշոտ Բ Երկաթի (914-929 թթ.) մասին է, որը Շիրակ գավառում ռազմական հաջողությունների էր հասել արաբների դեմ պայքարում:
43. Գրաբար բնագրում գրված է «Վրաց»:
44. Խոսքը վերաբերում է Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցուն (898-929 թթ.):
45. Գրաբար բնագրում գրված է «Վրաց»:
46. Խոսքը Սմբատ Ա-ի որդի Աշոտ Բ Երկաթի (914-929 թթ.) մասին է:
47. Գրաբար բնօրինակում գրված է «Հայաստանեայց» տեղանունը, որը կարծում ենք աշխարհագրորեն ավելի լայն հասկացություն է, քան «Հայքը»:
48. Խոսքը Աշոտ Բ Երկաթ թագավորի մասին է:
49. Շամշուղեն բերդաքաղաք էր Մեծ Հայքի Գուգարք աշխարհի Տաշիր գավառում, ներկայիս Վրաստանի Հանրապետության հարավում գտնվող Սամշվիլե (Շամշուղա) գյուղից հարավ: Բերդաքաղաքը Արշակունյաց շրջանում պատկանում էր Գուգարքի հայ բղեշխներին:
50. Այսինքն՝ Սմբատ Ա թագավորը (890-914 թթ.):
51. Գնթունիները նախարարական տոհմ էին, որ տիրում էին Մեծ Հայքի Այրարատ աշխարհի Նիգ գավառին:
52. Սակուրեթը բերդավան էր Մեծ Հայքի Գուգարք աշխարհի Մանգլյաց փոքր գավառում: Ավերվել է երկրաշարժից 12-րդ դարում:
53. Խոսքը Աշոտ Բ Երկաթ թագավորի մասին է, որը մինչ այդ Դվինում բախվել էր իր հորեղբոր որդի Աշոտի հետ:
54. Այսինքն՝ Աշոտ Բ Երկաթը հաղթեց ու պատժեց Ուտի գավառի Մովսես իշխանին:
55. Սա Աշոտ Բ Երկաթ (914-929 թթ.) թագավորն է:
56. Ձորովորը Մեծ Հայքի Գուգարք աշխարհի գավառներից էր, որն ըստ «Աշխարհացույց»-ի միացվել էր Վիրքին:
57. Խոսքը Վասպուրականի Գագիկ թագավորի (908-943 թթ.) և ոստիկան Մբուկի հարաբերությունների մասին է:
58. Խոսքը Շահանշահ Աշոտ Բ Երկաթ թագավորի մասին է, որի դեմ ապստամբել էր Յլիկ Ամրամը:

ՈՒԽՏԱՆԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ
ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ²⁷

Յաբեթի սահմանները

Մարաստանից մինչև Գաղիքովն հիւսիսային կողմն (է), եւ երկրների անուններն են՝ Ատրպատական, Աղուանք, Ամագոնիա, Մեծ Հայք եւ Փոքր (Հայք), Վիրք, Կապադովկիա, Պամփղագովնիա (1), Գաղատիա, Գաղիա, Կողքիս, Մեծ Սպանիա եւ ուրիշներ:

(Ուխտան., Ա-Ժ)²⁸

Իսկ սրա (Տիգրանի) աւագ որդին Բապ Տիրանն էր, որի քաջութեան գովքը երգիչները երգում էին պարերգերի մեջ: Ասում են նաեւ, /թէ/ սրան աստուածացրել են Վրաց երկրում, եւ նրա հասակի չափով արձան կանգնեցնելով՝ պաշտում էին զոհեր (մատուցելով), ասում է մեզ Պատմագիրը ստույգ կերպով (2):

(Ուխտան., Ա-ԻԵ)

Արտաւագդը (3) զայրացած հրամայեց զորքեր ժողովել Ատրպատականից, նաեւ Կովկաս լեռան բնակիչներին, Աղուանքի, Վիրքի, Խաղտիքի զորքերը, եւ սրանցով իջնելով Միջագետք՝ հալածեց ու փախուստի մատնեց հռոմեացիների զորքերին:

(Ուխտան., Ա-Լ)

²⁷ Ուխտանեսի տեղեկությունների աշխարհաբար թարգմանությունը տե՛ս Ուխտանես եպիսկոպոս, Հայոց պատմութիւն, Եր., 2006:

²⁸ Ուխտանեսի տեղեկությունների գրաբար բնագիրը տե՛ս «Մատենագիրք Հայոց», հ. ԺԵ, Անթիլիաս, 2011, էջ 446-646:

*Խոսքովի (4) արշաւանքը Պարսից վրայ եւ Արտաւանի (5)
մահուան համար վրեժխնդիր լինելը*

Իսկ Արտաւանին սպանելուց եւ Սասանի որդի Արտաշիրի թագաւորելուց յետոյ միւս տարի Հայոց արքայ Խոսրովը սկսեց զօրածողով անել եւ հաւաքեց Աղուանից, Վրաց, Լինաց, Ճղբաց, Կասբից զօրքերը, մեծ քանակութեամբ հանեց նաեւ Հոնաց զօրքերը եւ ուրիշ շատ զօրքեր այլ ազգերից... Ապա (Խոսրովը) զօրքերի այդքան բազմութեամբ շարժունեց գնաց Արտաշիրի (6) դէմ, եւ ճակատամարտ տալով՝ փախուստի մատնեց նրան:

(Ուխտան., Ա-Ծ)

Սրա (7) ժամանակ տեղի ունեցաւ Վրաց բաժանումը Հայոց միաբանութիւնից Վրաց առաջնորդ Կիւրոնի ձեռքով, եւ (վրացիները) հաճեցին կցորդակից դառնալ Քաղկեդոնի չար աղանդին՝ փոխելով սուրբ հայրերի օրէնքները և մոռանալով աստուածային ուխտը:

Իսկ Կիւրոնը ձեռնադրութիւն էր ստացել Հայոց կաթողիկոս Մովսէսից (8), որի մահից յետոյ աթոռը գրաւեց Աբրահամը, որ վերելում ասացինք: Իսկ Կիւրոնի մասին, թէ որտեղից էր, կամ որ գաւառից ու գիւղից, եւ կամ ինչ ձեւով եկաւ Հայաստան՝ մի փոքր կպատմեմ պատճառը: Սա աշխարհով ու ազգութեամբ վրացի էր՝ Ջաւախք գաւառի Սկուտրի կոչուած գիւղից, եւ ուներ վրացերէն ու հայերէն կրթութիւն եւ գնալով հռոմէացիների երկիրը՝ այնտեղ տասնհինգ տարի բնակուեց Կողոնիա կոչուած գաւառում:

Եւ այնտեղ ապրեց մի մեծ գիւղաքաղաքում, որ կոչուում է Նիկոպոլիս (9) Գալլ կոչող գետի ափին: Եւ սովորեց ու վարժուեց նրանց գրուածքներին եւ մնացեալ չարարուեստ գիտութեանը, որով (էլ) մեզնից բաժանուեց: Եւ այնտեղից վերադառնալով եկաւ Հայաստան՝ Հայոց Մովսէս կաթողիկոսի մօտ: Եւ բնակուեց նրա

մօտ՝ Սուրբ կաթողիկէում, որը Դուին քաղաքում էր, քանի որ այն ժամանակ այնտեղ էր Հայոց հայրապետութեան աթոռը: Եւ նա (Մովսէս)/ նրան նշանակեց Սուրբ կաթողիկէի վանացերեց, նաեւ (դարձրեց) քորեպիսկոպոս՝ նրան վիճակաթեմ տալով (ամբողջ) Այրարատեան գաւառը: Եւ (Կիւրոնն) այնտեղ մնաց հինգ տարի:

Ապա այդ ժամանակներում վախճանուեց Վրաց կաթողիկոսը, եւ երկրի իշխաններն ու նախարարները Մովսէս կաթողիկոսի մօտ մարդիկ ուղարկեցին՝ եպիսկոպոսներով հանդերձ՝ խնդրելու իրենց համար առաջնորդ: Իսկ նա մտածեց, որ իր տանից տայ նրանց առաջնորդ՝ երկու կողմերի հաւատը միաբան ու հաւատարիմ (պահպանելու) համար, միաժամանակ նաեւ հաստատելու համար նախորդ հայրերի ուխտը, որոնք եղել էին իրենից առաջ: (Ուստի) ձեռնադրեց Կիւրոնին, ինչպէս սկզբում ասացինք՝ համարելով նրան իւրային, կարծելով թէ նա իբր վստահելի ու աներկմիտ է եղել իր նստավայրում, անգիտանալով նրա սրտում ծածուկ (պահուածը): (Եւ) ուղարկեց նրան ուղեկցութեամբ Պետրոս եպիսկոպոսի, որը Վրաց երկրից էր, եւ այլ նախարարների, որոնք մեծ պատուով եկել էին նրա (Պետրոսի) հետ:

Իսկ երբ Կիւրոնը հասաւ իր իշխանութեան վիճակը եւ իրենց քաղաքը, որ կոչւում է Մցխեթայ, իր մօտ հաւաքեց եպիսկոպոսներին երկրի լաւագոյն (հոգեւոր) այրերի հետ միասին, նաեւ իշխաններին ու նախարարներին, եւ նրանց միջոցով ամբողջ երկիրն առհասարակ գցեց իր իշխանութեան տակ: Ապա երբ տեսաւ, (որ) ամեն բան յաջողուեց իր կամքին համապատասխան, այնուհետու մտքին նենգ խնդիր դրեց եւ եպիսկոպոս ձեռնադրեց մի խումիկ նեստորականի, որի անունը Կիս էր, որը խստութիւն է (նշանակում): Քանզի իսկապէս էլ խիստ էր եւ խստութեամբ ու չորութեամբ վարուեց Տիրոջ կողմնակիցների նկատմամբ, ցասումով բարկացրեց Տիրոջը: Սա (Կիսը) նրա մօտ եկաւ հոռոմների Կողոնիա գաւառից, (որտեղ) բնակւում էր Զուտարիմայ կոչուող

գիւղում, Նիկոպոլիսի մերձակայքում, եւ (այ)/ երկուսն էլ Գայլ գետի ափին են, ինչպէս որ նախորդ տեղում ասուեց: Եւ կարծում եմ, որ (Կիւրոնը եւ Կիսը) ոչ միայն գաւառակից էին իրար կամ գիւղակից, այլեւ աղանդակից եւ ուսումնակից էին չար վարդապետներից (սովորած) չար ուսմունքով:

Եւ (Կիւրոնը) ձեռնադրեց նրան օտարատեսուչ, այսինքն՝ աղանդաւոր եպիսկոպոս: Եւ միաբանուեցին իրար հետ, ինչպէս Արամը Եփրեմի (հետ), եւ դառնալով Արամի որդին եւ Հռոմեղի որդին՝ չար խորհուրդ խորհեցին, եւ տագնապեց նրանց անձը: Որի մասին զօրութիւնների Տէրն ասում է՝ <<Թող այն խորհուրդը չմնայ>>: Եւ դարձեալ մի այլ չար խորհուրդ՝ նման Կիւրոնի և այն խուժիկի /խորհրդին/, որով Տէրը սպառնում է մարգարէին՝ <<Թող այն խորհուրդը հաստատուն չմնայ եւ կամ թէ՛ նրանց հաւատայ>>: «Ճանաչեց, ասում է, այս Վասակը այն Վասակին, որ ննջեց սրբերին սպանելուց յետոյ՝ լցուած նենգութեամբ ու դաւաճանութեամբ, հակառակ ճշմարտութեան իրենց սրելով»: Եւ այդպէս Կիւրոնը լծակից լինելով Քաղկեդոնի ժողովի անհաւատութեանը, ինքն իր մէջ ծածուկ հաւանութեամբ պահելով նրանց դաւանանքը, վաղուց ներկուած երկաբնակների գոյնով, թէպէտ եւ խուժիկից դարձեալ նորոգուեց՝ արդ՝ այդ խուժիկին ձեռնադրեց եպիսկոպոս, ինչպէս ասացինք, որից Մովսէս Հայոց կաթողիկոսն անտեղեակ էր, մինչեւ որ բացայայտուեց նրանց նենգ մտադրութիւնը, որ վաղուց ի վեր ծածուկ պահուած էր:

...Սրա (10) քսանհինգերորդ տարում Կիւրոնն աթոռակալեց Վրաց աշխարհի կոթողիկոսութիւնում: Եւ սաւուղաբար երկու տարի միայն ճշմարտութեանը հնազանդուեց: Ապա դրանից յետոյ սկսեց ամբարշտանալ ու ստել ճշմարտութեանը եւ իր հայրապետութեան երրորդ տարում ձեռնադրեց խուժիկին:

Ապա այս բանն իմացաւ Մովսէսը, որը Յուրտաւի եպիսկոպոսն էր (որն այժմ կոչւում է Գաջենք), որը ինքն էլ Կիւրոնից էր

ընդունել ձեռնադրութիւնը, քանի դեռ (Կիւրոնը) ուղղափառութեան մէջ էր՝ իր հայրապետութեան առաջին տարում: Իր իսկ նամակներում հէնց Կիւրոնը յիշատակում է այս բանը: Արդ Յուրտաւի եպիսկոպոսը բանաւոր եւ ապա նամակի միջոցով տեղեկացնում է Մովսէս հայրապետին Կիւրոնի կողմից կատարուածների մասին՝ խուժիկ եպիսկոպոսի վերաբերեալ եւ մնացեալ գործերի, որ նա արել էր, (եւ) որոնց (Մովսէս Յուրտաւեցին) տեսնելով կամ իմանալով (ուրիշներից)՝ ստոյգ վերահասու էր եղել: Նաեւ թէ նա քաղկեդոնական դաւանանքն ունի՝ իրեն կեղծաւորութեամբ վարագուրելով, ինչպէս որ հէնց ինքն է պատմում իր նամակներում:

Արդ՝ այս երանելի եպիսկոպոսը, որի մասին ասացինք թէ ճշմարտաբար եւ բարեփառ կերպով էր իրեն պահում իբրեւ խաղաղութեան միջնորդ երկու կողմերի՝ հայերի ու վրացիների միջեւ: (Իրօք), ասես թէ՝ երկուսի միջեւ խաղաղութեան եւ հաւատի հաստատութեան միջնորդ լինէր, ինչպէս պատմում է «Գիրք թղթոցում»: Քանզի /հէնց/ խաղաղութեան էլ միջնորդ էր եւ ունէր հայերէն ու վրացերէն կրթութիւն: Քանի որ իր մանկութեան հասակում գնացել էր Յուրտաւ գիւղաքաղաքը եւ այնտեղ դաստիարակուել էր ու սովորել մեր եւ վրաց դպրութիւնները՝ աշակերտելով այն աթոռը տիրակալող երանելի եպիսկոպոսներին, որոնք նրանից առաջ էին: Ապա իրեն եւս շնորհուեց Տիրոջից՝ երեսուն տարեկանում յաջորդելու այդ աթոռին:

Արդ՝ երբ Մովսէս կաթողիկոսը լսեց Կիւրոնի արածների մասին, տարակուսանքի մէջ ընկած հոգս էր անում եւ սգում, ինչպէս Սամուէլը Սաուլի վրայ՝ ասելով Աստուածաշնչի խոսքերը, թէ «Զոջացի, որ Սաուլդին թագաւոր դարձրեցի Իսրայէլի վրայ»: Եւ այսպէս Կիւրոնի պատճառով սգալով՝ իր մտքում ելք էր որոնում /ծանր/ վիճակից: Ապա այնուհետեւ, սիրալիր նամակ է գրում Կիւրոնին եւ ուղարկում Ստեփանոս եպիսկոպոսի միջոցով, որն իր պալատում էր: (Նամակում) որոշ չափով անգիտանում էր նրա

արածներին, որպէսզի գուցէ կարողանայ գրաւել նրան եւ իմանայ նրա մեղկ մտքերը:

Արդ՝ գրում է, որ նախ զգոյշ լինի (իր) վարքում եւ արարքներում եւ հաստատուն մնայ ճշմարիտ հաւատքի մէջ, նաեւ հեռու լինի Քաղկեդոնի հայեցողական աղանդից: Միաժամանակ եւ խուժիկ նեստորականի մասին է գրում, որպէսզի նրանից իմանայ ստոյգը: Իսկ նա տակաւին դեռեւս թաքցնում էր խաբելով պարզամիտներին եւ ժամանակաւորապէս փարատելով կաթողիկոս Մովսէսի միտքը: Եւ այս (ամենը) հայոց անիշխանութեան ժամանակ էր, քանզի վերացած էր Արշակունեաց ազգի թագաւորութիւնը, եւ մեր երկիրը երկու մասի էին բաժանել պարսիկներն ու հռոմէացիները:

(Ուխտան., Բ-Ա)

*Հայոց կաթողիկոս տէր Մովսէսի նամակը
Վրաց կաթողիկոս Կիրոնին*

«Վրաց կաթողիկոս Կիրոնիդ եւ քո այլ աթոռակից եպիսկոպոսներին՝ Հայոց կաթողիկոս Մովսէսից եւ իմ աթոռակից այլ եպիսկոպոսներից սիրով՝ ողջո՛յն:

Նախկինում էլ, քանի դեռ մեզ մօտ էիր, խօսել ենք քեզ հետ խրատի ու մխիթարութեան խօսքեր: Ինչպէս սիրելի եղար ու աթոռակից, որպիսին որ (հիմա) էլ կաս, (այդպէս) էլ եղի՛ր, /որպէսզի/ արժանաւոր կերպով գնաս Տիրոջ ճանապարհը եւ պահես նրա պատուիրանները մաքուր սրտով եւ անկեղծաւոր հաւատով, եւ զգուշանաս վարքում եւ արարքներում, բարի հովուես եւ հովուապետես եւ զգոյշ լինես հօտիդ (համար). որ քեզ վստահուեց. նաեւ (պահես) Տիրոջ բոլոր միւս պատուիրանները. որ բովանդակուում են այդ խօսքի մէջ: Եւ կրկին եմ գրում նոյնը /թող/արժանաւորապէս գնաս Տիրոջ ճանապարհը եւ երանելի

լինես ըստ մարգարեի խօսքի. եւ չհետեւես ամբարիշտների խորհուրդներին. եւ յիշես Աստուածաշնչի Հին եւ Նոր կտակարանների բոլոր խօսքերը. որ պատուիրում են մեզ պահելու Տիրոջ պատուիրաններն ուղիղ մտքով ու ճշմարիտ խոստովանութեամբ. եւ չխոտորել Տիրոջ ճանապարհից աջ կամ ձախ: Եւ ես կցանկանայի նոյնը լսել քեզնից.

Իսկ այժմ լսում եմ. թէ քեզ մօտ հերձուածներ կան. եւ ինչ-որ չափով հաւատացի (դրան): Բայց հաւատացի. որովհետեւ վստահելի վկաների (կողմից) ծանուցուեց: Եւ լսեցինք այսպէս. թէ մի խուժիկ նեստորական մարդ եկաւ քեզ մօտ եւ քեզնից եպիսկոպոսի ձեռնադրութիւն ընդունեց: Եւ չափազանց զարմացայ. քանզի այնպիսի մարդուն արժանի էր ոչ թէ այդ պատուին արժանացնել, այլ պատժել եւ հաւատացեալների ժողովում չընդունել քանի որ գայլը երբեք չի բնակուում ոչխարների մէջ. իսկ եթէ երբեմն պատահում է. որ բնակուի. հոշոտում ա ցրում է նրանց: Նմանապէս նաեւ գողերը. որովհետեւ գողը չի գայ. եթէ չի (գալիս), որ գողանայ. սպանի ու կորցնի, ասաց մեզ Տերունական խօսքը: Որովհետեւ այնպիսիները գողեր են. աւագակներ եւ յափշտակող գայլեր: Եւ դարձեալ սուտ առաքեալներ (են) եւ նենգաւոր ծառաներ. Բայց կերպաւորում են ոչխարների զգեստներով, իսկ ներսից յափշտակող գայլեր են: Այնպիսիներից մեզ գգուշանալ հրամայեց քաջ հովիւը. որն իր անձը զոհաբերեց ոչխարների համար, եւ յետոյ վրէժի հատուցման օրն է հատուցելու նրանց՝ դէպի ձախակողմը (նրանց) առանձնացնելով (եւ) ասելով. «Գնացեք, իմ կողմից անիծուածներ». եւ դրա շարունակութեան խօսքերը: Եւ դարձեալ թէ «Հեռացեք ինձնից, բոլոր անիրաւ ծառաներդ. քանզի չեմ ճանաչում ձեզ»: Նաեւ կիսելու է նրանց եւ նրանց մի մասին անհաւատների հետ է գցելու եւ ուղարկելու այն տեղը, որը պատրաստուած է սատանայի ու նրա հրեշտակների համար:

Արդ գիտենք, որ անգիտութեամբ ես արել այդ: Այժմ դարձիր եւ զղջա՝ ապաշխարութեամբ հանդերձ, եւ արցունքներով ասա՝

դու մարգարեի խօսքը. «Տէր, մի յիշիր իմ մանկութեան եւ անգիտութեան մեղքերը»: Եւ այլեւս այն խուժիկին բնակութեան տեղ չտաս հաւատացեալների մէջ: Եւ մեծ սաստումով պատուիրիր, որպէսզի նրան ոչ ոք իր տանը չյանդգնի ընդունել, կամ որեւէ ձեռով նրան ողջոյն կամ բնակուելու տեղ տայ քո իշխանութեան սահմաններում: Եւ դարձեալ թող քո հաւատացեալները երբեք ողջոյն չտան նրան, քանզի աստուածային պատուիրանից հրաման ենք առել ողջոյն չտալ այդպիսիներին: Իսկ դու (ինքդ) ապաշաւիր արտասուքով եւ աղքատներին ողորմութիւն /բաժանելով/, եւ ապաշխարիր մեծ գղջումով, որովհետեւ ապաշաւելը մեղքերից դադարել է (նշանակում): Քանի որ, եթէ մեղք գործես՝ պէտք է յետ կանգնես, ասում է, եւ եթէ ուղղուես պէտք է շարունակես, եւ երբ յետ դառնաս՝ պէտք է նաեւ հոգոց հանես եւ հեծեծաս:

Արդ՝ կը վերադառնան դէպի Աստուած (նրանք), ովքեր խնդրում են նրան, գրուած է /Աստուածաշնչում/, քանզի Աստուած միայն դարձն է պահանջում: Ասում է՝ «Դարձէք դէպի ինձ, եւ ես կը դառնամ դէպի ձեզ»: Արդ՝ մի՛ լինիր չարի յիշատակ, եւ չես լինի չարիքների գտնող, /եւ/ քանի որ բազմաթիւ պատուիրանների յիշատակութիւն ունես՝ զանց մի՛ արա բարի գործերը:

Արդ՝ սրանք Սուրբ Գրքից քեզ պատուէր, որ սիրես քո Տէր Աստծուն, քանզի այս է Աստծոյ պատուիրանը, որ սիրենք նրան մաքուր սրտով եւ անկեղծաւոր հաւատով: Որովհետեւ գրուած է. «Միրիր քո Տէր Աստծուն քո ամբողջ սրտով ու զօրութեամբ», եւ մնացեալը եւս: Այս է առաջին պատուիրանը, եւ բոլոր Աստուածաշունչ գրքերը այս խօսքն են բովանդակում: Արդ՝ պահիր սուրբ հայրերի հաւատն ու խոստովանութիւնը, որ իրենք դաւանեցին, եւ նոյնը մեզ աւանդեցին երեք հարիւր տասնութը, որոնք Նիկիայում էին, եւ հարիւր յիսունը, որ Կոստանդնուպոլսում էին, եւ երկու հարիւրը, որ Եփեսոսում էին:

Իմացիր /նաեւ/ այն, որ արքայից արքայ Կաւատի ժամանակ պահանջ եղաւ հաւատքների քննութեան, եւ հոռոմները Քաղկեդոնի հաւատքն ընդունեցին, իսկ մեր եւ ձեր երկրները հրաժարուեցին ու հեռացան, եւ դեռեւս գրաւոր կայ եւ պահուում է մեր եւ ձեր հաւատի միաբանութիւնը: Արդ՝ մի՛ դրժիր մեր հայրերի ուխտը, որ երկուսի միջեւ կնքուեց, եւ մի՛ հեռացիր մեր միաբանութիւնից, մի թողնիր մանկութեան ուսմունքը եւ մի մոռանայ աստուածային ուխտը: Եւ ձայնակից մի լինիր հոռոմներին եւ քո սրտով մի՛ դառնայ դէպի Եգիպտոս, այլ յիշիր, (թէ) ինչու դուրս ելար Նոր Եգիպտոսից եւ հոռոմների՝ փարաւոնի (նման) թունաւոր աշխարհից /դէպի/ քեզ փչող (հողմից) եւ չար վերակացուներից ու դառը ծառայութիւնից: Մի յանդիմանուիր մարգարեից, թէ՛ «Նրանք չմնացին Տիրոջ ուխտին /հաւատարիմ/ եւ նրա պատուիրանով չկամեցան ընթանալ»: Եւ մի այլ տեղում (ասում է), թէ՛ «Դարձան իրենց սրտերով դէպի Եգիպտոս»: Արդ՝ մի յենուիր եղեգնեայ կոտորուած ցուպին, որովհետեւ եթէ յենուես, քո անձինքիչ վնաս չես հասցնի:

Մի քանդիր հայրենի պարիսպը, որ սուրբ հայրերը հաստատեցին հաւատի վեմերով: Որովհետեւ ով քանդում է պարիսպը, օձը խայթում է նրան, եւ ով գլորում է վեմը իր անձն է կորստի մատնում: Արդ՝ հաստատուն պահիր երեք սուրբ ժողովների խոստովանութիւնը, որ մեր ու ձեր հայրերը հաստատեցին իրար միջեւ միաբանական գրով, որը դեռեւս գոյութիւն ունի: Եւ փախիր անչափ հեռու Քաղկեդոնի պիղծ ժողովից ու Լեւոնի անընդունելի տոմարից: Եւ նգովիր բոլոր հերձուածողներին՝ առաջիններին, միջիններին ու վերջիններին, որոնց սուրբ հայրերը նգովեցին, եւ մենք ենք նգովում, եւ վերացրու ամենայն չարը /քո/ միջից: Քանզի գրուած է. «Վերացրե ք, ասում է, չարը ձեր միջից»: Եւ դարձեալ, թէ՛ «Ելէք նրանց միջից ու բաժանուէք, եւ պիղծերին մի՛ մօտեցէք, եւ ես ձեզ կ'ընդունեմ», ասում է Տէրը: Արդ՝ այն

խուժիկին հալածիր քո երկրից եւ աշխարհից, (որ) դարձեալ թունաւոր արմատը վեր չբարձրանայ եւ նրանով շատերը չպղծունեն:

Յիշի՛ր, որ եկար բնակուեցիր այս Սուրբ կաթողիկէի հովանու տակ եւ քո սրտի հաւատարմութեամբ ծառայեցիր հոգեւոր ծառայութեան շնորհիւ, որ քեզ վստահուեց մեր կողմից: Եւ մենք վստահեցինք քո (ցուցաբերած) կեանքին, քո սիրոյ դիմաց կատարեցինք քո կամքը այդ երկրում քեզ առաջնորդ նշանակելով: Քանի որ թէւ ազգով ու բնակութեամբ այդ երկրից էիր, սակայն շատ վաղուց հեռացել, օտարացել էիր՝ հռոմեացիների երկիրը գնալով: Իսկ Հոգու շնորհը, որ քեզ կոչեց այդ հոգեւոր կոչման, ասես ինչ-որ ըմբռնումով ձգեց եւ հանեց քեզ երկաթէ հնոցից եւ հռոմէների բռնութեան հալածածների միջից, որովհետեւ Տիրոջ փառքը ծովի կղզիներում է, եւ նրա անունը թող փառաւորուի բոլոր հեռաւոր տեղերում:

Արդ մի եղիր քո եւ քո ժողովրդի կորստեան պատճառ, որ պէսզի մի՛ արացել քո պատճառով Տիրոջից նզովք հասնի քո երկրի ժողովրդի վրայ՝ ըստ մարգարէի ասածի, թէ «Նզովքները կուտեն երկիրը, որովհետեւ մեղք գործեցին նրա բնակիչները, եւ քչերը մարդ մնացին»: Եւ դարձեալ թէ՝ «Կ'առաքի Տէրը քեզ անարգանքն ի պատիւ եւ փառքը կը հանի քեզնից»: Եւ դարձեալ, թէ՝ «Երբ Տէրը կը ստեղծի ամեն ինչ, կը բարձրացնի իր ձեռքը մեծամտի վրայ ու նրանց, ովքեր (իրենց) անձերն իմաստունների շարքին են դասում, եւ (ովքեր) խորհուրդ խորհեցին, բայց ո՛չ Տիրոջով»:

Արդ՝ այս բաները մեծ վշտից ու սրտի նեղութեամբ գրեցի քեզ: Քանզի Աստծոյ սէրն է ստիպում մեզ ասել ճշմարտութեան խօսքերը, որ Նրա համար են:

Ողջ եղի՛ր Տիրոջով: Եւ այս նամակին քո պատասխանը, ըստ Աստծոյ կամքի՝ թող որ մենք լսենք: Ողջ եղի՛ր Տիրոջով»:

(Ուխտան., Բ-Բ)

*Հայոց կաթողիկոս տէր Մովսէսի նամակի պատասխանը
Վրաց կաթողիկոս Կիրոնի կողմից*

«Սրբասէր եւ պատուական իմ տէր, Հայոց կաթողիկոս Մովսէսիդ, եւ քո բոլոր աթոռակից եպիսկոպոսներին Վրաց կաթողիկոս Կիրոնից խոնարհ երկրպագութեամբ եւ սիրով՝ ողջո՛յն, եւ իմ բոլոր աթոռակից եպիսկոպոսներից կրկնակի խոնարհությամբ եւ երկրպագութեամբ ողջո՛ւյն եւ օրհնութիւն ձեզ Սուրբ Խաչիցս:

Ձեր նամակները, որ գրել էիք, ստացանք եւ վերահասու եղանք, եւ այն պատգամները, որ տուել էիք, լսեցինք եպիսկոպոսից. եւ որ նամակով ա խօսքով հոգացել էիք մեզ (համար) խրատական վարդապետական խօսքով, նաեւ յանդիմանել էիք՝ որպէս տէր, վարժապետ եւ հոգեւոր հայր, որպիսին եւ էք իսկապէս, երկրպագեցի եւ շնորհակալ եղայ ձեր հոգեւոր սիրուց: Բայց ես իմ եպիսկոպոսներով ու երկրիս երեւելի մարդկանցով խորհուրդ էի արել (եւ) օրէնք համարել՝ չարգելել յետ դառնալու բոլոր նրանց, ով գղջում է եւ ապաշխարում: Իսկ երբ իմացանք նրա չարութիւնը՝ կրկին հեռացրեցինք մեզնից եւ արգելեցինք, որ մարդիկ նրան ողջոյն տան:

Իսկ որ գրել էիք, թէ հերձուածներ կան ձեզանում, մենք եւս չէինք հաւատացել, Բայց յետոյ հաւատացինք՝ վստահելի վկաների (ասելու) պատճառով: Ահա մենք ինքներս իսկ ասացինք մեր կողմից արածները: Եւ որ գրել էիք արքայից արքայ Կաւատի ժամանակի մասին, գիտենք, որ այդպէս է եղել, ինչպէս որ շատ անգամ լսել ենք: Եւ ինչ որ մեր եւ ձեր հայրերի միաբանութեան, ուխտի եւ հաւատի հաստատութեան մասին էինք գրել, մենք անփոփոխ պահպանում ենք այն: Եւ ինչ որ մեր եւ ձեր երկրների մասին էիք գրել ու ասել միաբանութեան վերաբերեալ, որ մեր ժամանակ է, մենք նոյն միաբանութիւնն էլ պահպանում ենք եւ չենք փոփոխում: Իսկ որ խուժիկի համար էիք հաստատել ձեր հրամանները զրաւոր ու բանաւոր, ինչպէս քիչ վերելում գրեցինք,

շուտ ենք հեռացրել նրան մեզնից եւ մերոնց հրամայել ենք չընդունել նրան:

Իսկ մենք ամեն ինչով հնազանդ ենք ձեզ եւ ձեր հրամաններին: Ողջ եղէք Տիրոջով եւ մեզ համար աղօթք արէք:

(Ուխտան., Բ-Գ)

*Հայոց կաթողիկոսի նամակի եւ Կիւրոնի պատասխանի
հանգամանքները, թէ որտեղ գտնուեց եւ ինչպէս*

Արդ Հայոց կաթողիկոս Մովսէսի այս նամակը եւ Կիւրոնի պատասխանը «Գիրք թղթոցում» չգտանք՝ արտագրելու համար, եւ մեծ ջանքերով հազիւ կարողացանք գտնել. Որովհետեւ ես վարդապետներից ոմանցից վաղուց լսել էի, թէ Կիւրոնի կորստեան սկիզբը Մովսէսի ժամանակ եղաւ: Եւ ապա սակաւ չափով սկիզբը տալիս է Կիւրոնը իր պատասխան նամակում, որ գրուել է Հայոց կաթողիկոս Աբրահամի ժամանակ: Եւ ասում է այսպէս: «Հայոց հայրապետ Մովսէսն. ասում է, որը քեզնից առաջ (էր) այդ աթոռին, մեզ գրեց խուժիկի մասին, այլ ոչ թէ հաւատի խնդիրների վերաբերեալ» (որը, (սակայն), յետոյ կարդում ենք իր իսկ նամակում):

Արդ մենք այդ գրածից իմանալով այդպիսի նամակի մասին, եւ վստահելի մարդկանցից /էլ/ լսելով, ինչպէս ասացինք, սկսեցինք փնտրել եւ գտանք Տփլիսի քաղաքում, որ Վրաց նահանգում է. Կովկաս լեռան ստորոտում, Կուր կոչուող գետի վրայ: Քանզի մի քահանայ, որի անունը Կիրակոս էր, գտել էր վրաց գրքերում եւ հէնց ինքը մեծ չարչարանքով արտագրել ու թարգմանել էր մեր լեզուով: Գրաւոր տուեց մեզ. քանզի ինքը շատ լավ գիտեր վրաց գիրն ու լեզուն: Եւ մենք վերցնելով ստոյգ քննութեամբ գրեցինք ձեր հարցասիրութեան /փարատման համար/:

(Ուխտան., Բ-Դ)

Կիրոնի երկիւղի եւ կասկածների մասին

Արդ քանզի Կիրոնը յանդգնեց համարձակօրէն հակառակուել Հայոց կաթողիկոս Մովսէսին, ինչպէս (հակառակուեց) Աբրահամին, թէպէտ արդէն (այդպիսի) երկունքի ցաւով բռնուած էր, որովհետեւ վախենում էր, առաջին՝ որ Մովսէսի մեծ երախտիքից պարտուի ու ամոթով մնայ, եւ երկրորդ՝ որպէսզի մնար այլ ժամանակի, երբ անօրէնութիւնը ծնունդ (կ'առնէր), ինչպէս որ (իսկապէս) եղաւ: Քանզի Հայոց կաթողիկոս Մովսէսը մեռաւ, եւ վրայ հասաւ Կիրոնի ժամանակը եւ խաւարի իշխանութիւնը:

Քանզի այն խուժիկը, որի մասին խօսեցինք, որ Կիրոնի կորստեան սկզբնապատճառը եղաւ, իբրեւ իժի ձագ թաքնուած էր քարերի ծակերում ու ծերպերում, (ուստի) եւ (Կիրոնն) ինքն իրեն այս կամ այն բանն էր յերկրում եւ մեղքերի պատճառներ առաջացնում: Քանզի պատասխանը թերի էր եւ թեթեւակի խօսքերով ու կասկածանքներով էր արտայայտուած եւ վախժիւնելով էր անում, եւ ասում (էր)՝ «Համարեցի, թէ օրենքով եմ այն արել՝ չարգելել որեւէ մէկին զղջման գալ», եւ կամ թէ (ասում էր)՝ «Մենք մեր հայրերի դրած ուխտը հաստատուն ենք պահում», եւ մնացեալ բաները: Բայց այս խօսքերը խորամանկութեամբ էին ասում, քանզի իրեն նենգութեամբ թաքցրել էր: Ասում էր՝ «Այն խուժիկին հեռացրել ենք եւ մերոնց հրամայել ենք նրան ողջոյն չտալ», իսկ ինքը բոլորովին չէր բաժանում նրանից, թէպէտեւ ծածուկ, բայց պահում էր նրան մինչեւ անօրէնութեան մեջ իր բացայայտուելու ժամանակը:

Բայց նախքան նրա չարութեան ի յայտ գալը, որ եղաւ մինչեւ Աբրահամի երրորդ նամակի պատասխանը, որ գրեց Կիրոնը անօրէն ու թունաւոր խօսքերով, քանի որ տակաւին թաքնուած էր պահում իրեն կեղծաւորութեան վարագոյրով, (ապա) նաեւ չէր մտաբերում Սուրբ Գրքի խօսքերը, որ առակներով ու օրինակներով պարսաւում է կեղծաւորներին եւ միաժամանակ իմացնում

պատիժն (ու) պատուհասը: Քանզի աստուածայիններից մէկն ասում է, թէ կեղծաւորի լոյսը ճշմարտապէս խաւար է: Եւ մէկ ուրիշն (ասում է), թէ՛ կեղծաւորներն իրենց խօսքերով ու դէմքերով որոշ բաներ հաւատալի են ցոյց տալիս: Եւ դարձեալ, թէ մէկի մասին խօսքով ասում է, թէ փիլիսոփայ է, մինչդեռ փիլիսոփայ չէ, այլ այնպիսի կերպարանք է ընդունում, թէ իբր արուեստի գործի մասին է պատմում, իսկ ով որ ներքուստ փիլիսոփայ էր, արտաքինով դարբին երեւաց: Ահա վար բերուեց նրա դիմակը, որով ծածկուել էր նա, եւ բացուեց նրա խաբէութիւնը, եւ պարզուեց, որ ներքուստ ազնուական էր, արտաքուստ՝ ծառայ: Եւ այսպէս կեղծաւոր տեսքը կամենում են երկու դէմքով ցոյց տալ:

Եւ սրանք սատանայի գործեր (են): «Նաեւ սատանան է լոյսի հրեշտակի կերպարանք ընդունում», ասում է աստուածային առաքեալը: Իսկ ինքը Տէրն ասում է. «Տեսնում էի սատանային երկնքից ընկնելիս՝ իբրեւ կայծակը: Եւ դա որովհետեւ կեղծաւորութեամբ էր պահում իր բնակատեղին, որտեղից ընկաւ: Քանզի կամեցաւ, որ ինքն աւելի վեր լինի բոլորից. սիրելով փառքը՝ չհասաւ նրան, ինչին ձգտում էր, եւ եղաւ գրկուած նրանից, ինչ որ ունէր ամբողջապէս: Եւ լոեց այն փառաբանութիւնից, որի մէջ կարգուած ու սահմանուած էր:

Արդ՝ Կիւրոնն այսպիսի մտքով շարժուեց՝ իրեն ծածուկ կեղծաւորելով: Նա չգիտէր /Մուրբ/ Գրքի խօսքը, թէ՛ «Լոյսի դէմ յանդիման խաւարը յայտնի է դառնում», եւ ինչ որ սրանց նման (է): Եւ դարձեալ, թէ՛ «Այլատեսակ ինչ /էլ/ լինի, թաքուն մնալ չի կարող»: Արդ՝ Կիւրոնը այսքանով եւ այսպիսի բաներով հինգ տարի մնաց՝ երկու տարի Հայոց կաթողիկոս Մովսէսի ժամանակ եւ երկու տարի նրա մահից յետոյ մինչեւ Աբրահամի ժամանակը, որը Մովսէսից յետոյ յաջորդեց հայրապետութեան աթոռին:

Իսկ Աբրահամի առաջին տարում [Կիւրոնը] սկսեց անօրէնութիւն գործել եւ բացայայտել իր չարութիւնը: Քանզի երբ յաճախացան Աբրահամ կաթողիկոսից նրան առաքուած գրութիւն-

ները, ապա այնուհետեւ (Կիւրոնը) նրա դէմ պատասխան տուեց իր երրորդ նամակում. «Կամենում էք, թէ չէք կամենում, մեր հաւատն, ասում է, այդ է»: Բայց թեպէտեւ նախապէս նրան գրել էր Վրթանէս Քերթոզը, որը սուրբ Գրիգորի աթոռի տեղապահն էր, եւ իմացել էր նրա չարութեան չափը, բայց քանի որ այդ ժամանակ հայրապետ չկար, նա չկարողացաւ ոչ մի բան հնարել, միաժամանակ եւ Հայոց երկիրը երկուսի էր բաժանուած: Եւ նա տարակուսանքի մէջ լինելով ոչ մի բան չկարողացաւ հնարել, ո՛չ հոգեւոր սաստումով եւ ոչ մարմնաւոր պատժով, քանի որ հոգեւորը տակաւին հաստատուած չէր, իսկ մարմնաւորը հեռու էր եւ օտար:

Իսկ Սմբատը, որի մասին ասացինք, թէ Հայոց մարզպան էր(11) /մի/ բարի, բարեպաշտ եւ հաւատարիմ, ուղղափառ հատուքի մէջ հաստատուն մարդ՝ գիտէր Կիւրոնի մտքերը, որ ձայնակից եղաւ հոռոմներին, (բայց) չկարողացաւ կայսրին իմացնել եւ ոչ էլ արքային ծանուցել Կիւրոնի արածները, քանզի գիտէր, որ ոչ մի օգուտ չի լինի: Միաժամանակ նաեւ իմացել էր կայսեր մտադրութիւնը, որ Կիւրոնի հետ միաբան է, եւ նրա հրամանով է այս բանը, քանզի (դա) մեզ կարծել է տալիս Կիւրոնի խօսքը, որ իր նամակի մէջ գրում է Աբրահամին ու Սմբատին, թէ «Թող Աստուած պահպանի կայսրին, որը մեր աշխարհը պահպանեց»: Եւ դարձեալ, թէ «Աստուած թող փառաւորի արքային, քանզի նա փառաւորուեց»:

Եւ արդարեւ այնպէս եղաւ Կիւրոնը, որ մարդկանց փառքն աւելի սիրեց քան Աստծունը, եւ յույսը դրեց իր բազկի զօրութեան վրայ եւ չլսեց մարգարէի կողմից (ասուածը), թէ՛ «Մի յուսացէք մարդկանց որդի իշխանների վրայ, որովհետեւ նրանց մէջ փրկութիւն չկայ», եւ սրանից յետոյ ասուող խօսքը: Եւ դարձեալ՝ միւս մարգարէի (խօսքը), թէ՛ «Անիծուած է (նա), ով իր յոյսը դնում է մարդու, այլ ոչ թէ Աստծու վրայ»:

(Ուխտան., Բ-Ե)

*Թէ ինչպէս Կիւրոնը Յուրտաւի եպիսկոպոս Մովսէսին
նենգութեամբ իր մօտ կանչեց, իսկ նա չգնաց երկիւղի ու
կասկածների պատճառով, բայց յետոյ գնաց նրան յանդիմանելու
համար, թեպէտեւ խախտեց իր ուխտը*

Իսկ երբ Հայոց կաթողիկոս Մովսէսը մեռաւ, քանի որ Կիւրոնը ներքուստ կասկած ուներ Յուրտաւի եպիսկոպոսի վերաբերեալ, թէ նա է բացայայտել իր չարիքները, (ապա) մարդ է ուղարկում նրա մօտ եւ կանչում իր մօտ, քանզի երկրի իշխանների հետ միասին մտադրուել էր չարիք հասցնել նրան: Իսկ երբ նա /Մովսէսը/ իմացաւ Կիւրոնի նենգութեան մասին, յանձն չառաւ գնալ, միաժամանակ նաեւ՝ ըստ այն խօսքի, որ հրամայում է Աստծոյ առաքեալը, թէ՝ «Անիրաւ մարդուց մէկ եւ երկու անգամ խրատուելուց յետոյ հրաժարուիք», քանի որ այնպիսին խոտորուած է եւ մեղանշում է՝ ինքն իրեն դատապարտելով: Իսկ նա ոչ թէ մէկ անգամ եւ երկիցս, այլ շատ անգամ էր ճանաչել նրա չարութեան չափը (եւ) չկամեցաւ գնալ նրա մօտ:

Նաեւ իր սրտում ուխտ էր արել (Մովսէսը) բնաւ չգնալ նրան տեսնելու, քանզի խոցուած էր նրա գաղտնաձիգ նետերից, որոնցով խաւարի մէջ էր գցում նրանց, ովքեր սրտով ուղիղ են: Այլ միայն այս էր իր մտքում դրել, թէ եթէ նրան (Կիւրոնին) իմանալի դարձնեն իր իսկ գործած չարիքները, թերեւս յետ կը կանգնի եւ կը զոջայ: Քանի որ ցաւ էր (ապրում) նրա համար այն պատճառով, որ ինքը միջնորդ ու սիրոյ շաղկապ էր երկու կողմերի հայերի ու վրացիների միջեւ:

(Ուխտան., Բ-2)

Բայց ապա յետոյ գնալով խախտեց իր ուխտը «Այն պատճառով, ասում էր, որ ինձ տեսնելով՝ գուցե կամաչի այն ուխտից ու դաշինքից, որ ինձ հետ միասին կնքեցին Հայոց եւ վրաց հայրապետները երկու կողմերի միջեւ»: Եւ գնալով Տփլիս կոչուող քաղաքում հանդիպում է Կիւրոնին, որի մասին նախապէս չորրորդ ճառում (գլխում) յիշատակեցինք: Քանզի նա Սուրբ Սիոնի գաւթում էր. որ արքունի ապարանքի մօտ էր: Եւ Կիւրոնի սպասաւորները նրան տեսնելով յայտնում են սրան (Կիւրոնին): Իսկ նա նրան ընդառաջ է ուղարկում իր սպասաւորներից մէկին եւ արգելում է նրան (տեսնել) իր երեսը: Իսկ նա (Մովսէսը) գնում է Յակոբ անունով մի քահանայի տուն, որ մօտիկ էր (բնակւում) Սուրբ Սիոնին, եւ այնտեղ ինն օր մնալով ապա պատգամ է յղում Կիւրոնին: Եւ նրա հետ խօսում է դատապարտելով՝ ոչ մի բան չթաքցնելով նրանից:

«Ես. ասում է, գիտեմ, թէ ինչ թերութիւն ունէիր դու ուղղափառ եւ սուրբ հաւատի առումով, որը մեզ սովորեցրին սուրբ հայրերը՝ նախօրոք քարոզուած սուրբ առաքեալների կողմից եւ սուրբ Գրիգորի կողմից հաստատուած եւ նոյնը աւանդուած մեզ երեք սուրբ ժողովներից՝ Նիկիայի երեք հարիւր տասնութից, եւ հարիւր յիսունից, որ Կոստանդնուպոլսում (էին), եւ երկու հարիւրից, որ Եփեսոսում /էին/, եւ մեր երկու՝ Հայոց եւ Վրաց երկրները նոյնն ունէին. եւ (այժմ էլ) ունենք: Արդ՝ ի՞նչ եղաւ քեզ, ինչո՞ւ դարձար մեր անխախտ, անշարժ, հաստատուն ու սուրբ հաւատի խափանիչ, որ սուրբ հայրերի կողմից հաստատուեց եւ տրուեց նոյնը հաստատուն պահելու: Քանզի նրանք մեծ հանդեսով եւ մեծ չարչարանքով, այսահալած կործանեցին սատանային եւ նզովեցին բոլոր հերձուածողներին՝ առաջիններին, միջիններին եւ վերջիններին, մանաւանդ Քաղկեդոնի անիծեալ ժողովն ու Լեւոնի պիղծ տոմարը եւ նրանց, ովքեր նրանց հաւատացին:

Եւ մինչեւ մեր ժամանակները անխախտ կերպով հասաւ նրանց կողմից ւաւանդուածը:

Իսկ երանելի Մովսէս հայրապետը, որից դու ձեռնադրութիւն ստացար, այդ պատճառով իր տանից ընտրեց քեզ՝ համարելով քեզ վստահելի, որպէսզի մեր հայրերի ուխտն ու դաւանութիւնը հաստատուն լինի. եւ մենք ապրենք խաղաղութեամբ: Եւ քեզ վստահեց հայրապետութեան այդ աթոռը. որպէսզի հաւատացեալ ժողովրդի շաւիղներում ոչ թէ քարեր կուտակես, այլ խութ ու խոշը մաքրես նրանց ճանապարհներից: Իսկ դու այդ ամենը (իբրեւ) արգելքներ գցեցիր նրա ճանապարհներին, որպէսզի չգնան Տիրոջ ուղիղ ճանապարհներով, որով գնացին մեր հայրերը: Նաեւ այդ ապականիչ խուժիկին մէջ գցեցիր, քանզի իր մէջ ծածկուած էր թունաւոր խմորը, որ նա ուներ հնուց Քաղկեդոնի քացախոտ չարութիւնից, որ նրան էր հասել հրեական խմորագնդից: Արդ՝ ես անպարտ կը լինեմ եւ քաղուած քո միջնորդութիւնից»:

(Ուխտան., Բ-Է)

Թե ինչ է պատմում Կիւրոնի մասին սրանից յետոյ

Արդ՝ այս նա ասաց Կիւրոնին պատգամագրի միջոցով՝ իրեն մահուան ու ծեծի վտանգի տակ դնելով ինքնակամօրէն եւ ինքնայոժարութեամբ, քանզի նրան թշնամի էին բոլորը՝ իշխաններն ու ժողովուրդը՝ Կիւրոնով հանդերձ: Եւ նա /Կիւրոնը/ պատասխան չտուեց նրա այդքան բազմաթիւ յանդիմանութիւններին, այլ որպէս իժ եւ վիշապ խցել էր իր ականջները, որպէսզի չլսի ճարտար օձաթովչի ձայնը: Նաեւ ոչ մի չար բան չէր կարող խօսել նրա դէմ կամ անէլ, որովհետեւ խցում են այնպիսիների բերանները, որոնք անիրաւ բաներ են խօսում: Քանզի իր մտքում (Կիւրոնը) խորհում էր, թե՝ «Երբ Հայաստանում կաթողիկոս

նստի, դարձեալ իմ արածների մասին խնդիր է լինելու», (մտածում էր), որպէսզի գուցէ կարողանայ ինչ-որ հնարքներով այլ ձեւով խօսել, քանի որ արդէն տակաւին երկու ոտքով կաղում էր (հաւատքով):

Իսկ երանելի եպիսկոպոսը բարեյաջող վարեց մարտը՝ բազմաթիւ խօսքերով յանդիմանելով նրան, բայց ոչ մի օգուտ չարեց: Դրանից յետոյ վերադարձաւ իր թեմը՝ մեծ ընդարմացման եւ տրտմութեան մէջ ընկնելով Կիւրոնի անդարձ լինելու, միաժամանակ նրա նենգութիւնը կանխատեսելու պատճառով: Եւ իր թեմակիցներին յանձնելով Հոգու շնորհներին, նրանց պահապան թողնելով նրան, ով պահպանում էր Իսրայէլը՝ մեծ տրտմութեամբ գնաց Արագածոտն գաւառի այն վանքը, որ կոչւում է Յովհաննու (վանք) (12): Եւ այնտեղ մեծ սիրով ու պատուով ընդունուեց Բաբեղաս վանացերեցի կողմից: Եւ ապա Վրթանէս Քերթողին (13)՝ ուղղուած իր նամակում իր խոր գոհունակութիւնը յայտնեց, եւ իր սրտում դարձեալ հաստատեց Կիւրոնին (չտեսնելու) մասին իր առաջին ուխտը, (բացի) միայն՝ եթէ (նա) դառնայ դէպի ճշմարտութիւնը եւ ուղղուի:

Իսկ Կիւրոնը Յուրտաւի եպիսկոպոսի՝ իրենից հեռանալու մասին լուր է տարածում այսպէս, (իբրեւ) թէ՝ «Գիշերը գաղտնի փախաւ մեզնից իր ինչ-որ չարութեան պատճառով», նաեւ (իբրեւ թէ) նրա (Կիւրոնի) բազում խօսքերի (պատճառով), որ խօսուել էր նրա հետ հաւատքի մասին: Եւ դարձեալ յանդիմանութիւնների ու մեղադրանքների մասին ոչինչ չպատմեց դրանցից, թէպէտ եպիսկոպոսը բոլորին ամեն ինչ պատմել էր: Եւ նոյնը Կիւրոնը Աբրահամ Հայոց կաթողիկոսին գրած իր այն նամակի մէջ է ասում: «Նրան, ասում է, մենք չենք հանել մեր թեմից, այլ ինքը գիշերը փախուստով գնաց իր ինչ-որ յանցանքների պատճառով»: Եւ այսպէս անիրաւութեամբ ու ստութեամբ էր պատասխանում իւրայիններին եւ օտարներին: Քանզի ամեն մէկը, որ անիրաւ է, պատասխանի մէջ պատրաստ է, քանզի անիմաստ մտքով էր

վարուել ամենքի նկատմամբ: Որովհետեւ մեղքերում բռնուած հոգիները խելամտութիւնից էլ են ընկնում:

Արդ՝ Կիւրոնը թեպէտեւ վաղուց էր ասել ճշմարտութիւնը, ինքն [էլ] աստուած էր ճշմարտութիւնից: Քանզի սկզբից եւեթ թշնամի էր Յուրտաւի եպիսկոպոսին՝ կասկածելով, որ նա է յայտնել իր չարութեան մասին: Եւ ցանկանում էր նրա մահը, քանզի նա (եպիսկոպոսը) գիտէր Կիւրոնի ամեն ինչը ստոյգ կերպով՝ թէ՛ թաքունը եւ թէ՛ յայտնին, ինչպէս ինքն ասաց (իր) պատգամագրի միջոցով: Քանզի առաջ, մինչ դեռեւս հրապարակաւ չէր գուժուել, շատ անգամ ծածուկ յանդիմանուել էր նրա (եպիսկոպոսի) կողմից: Իսկ Կիւրոնը աստուծ էր նրան իր յանդիմանական խօսքերի պատճառով՝ նրան թշնամի համարելով. «Ատեցին, ասում է, դռների առջեւ իրենց յանդիմանիչներին եւ սուրբ խօսքերը պիղծ դարձրին»: Քանզի երբ խրատը չլսեց, ապա յանդիմանուեց, որովհետեւ՝ «Խրատն առանց յանդիմանութեան մուրը է շրջում», ասաց սրբերից մէկը:

Արդ՝ այս բոլոր կատարուածներից յետոյ Մովսէս եպիսկոպոսը Վրթանէսին նամակ է գրում Կիւրոնի վերաբերեալ՝ բազմաթիւ մեղադրանքներով լի: Եւ հէնց իր նամակներում պատմում է Կիւրոնի մասին, եւ Վրաց ինչ-ինչ իրողութիւնների օրինակը նրանց անպտղութեան պատճառով նմանեցնում է թզենու (առակի) օրինակին: Եւ խնդրում է նամակ գրել Կիւրոնին, որ թերեւս կարողանայ ինչ-որ հնար գտնել եւ ինչ-որ բանով շահել նրան: Խնդրում է նախ գրել Յուրտաւի եկեղեցուն, որ հայալեզու էին, նրանց մխիթարելու համար: Իսկ նա /Վրթանէսը/ մի իմաստուն, հանճարեղ եւ աստուածային պատուիրանին նախանձախնդիր մարդ (էր) եւ զօրավիգ ու օգնական ուղղափառ հաւատի, ճշմարտասէր եւ լի գիտութեամբ, որին իր հաւատարմութեան պատճառով տեղապահ էին նշանակել սուրբ Գրիգորի աթոռին: Իսկ նա ցաւակից լինելով եպիսկոպոսին, միաժամանակ եւ գործակից ու կողմնակից աստուածային պատուիրանին՝

Կիւրոնին նամակ է գրում՝ ծանուցելով նրան ամեն ինչ մի առ մի, ինչպէս ցոյց են տալիս քեզ նրա կողմից իր նամակում գրուածները: Նաեւ շրջաբերական թուղթ է գրում Յուրտաւի եկեղեցուն՝ լի մխիթարութեամբ, եւ յորդորում է նրանց հաստատուն մնալ ճշմարիտ հաւատքի մէջ եւ զգուշանալ նրանցից, ովքեր չեն գնում Տիրոջ ճշմարիտ ճանապարհներով: Եւ այս եղաւ մինչեւ Արքահամի ժամանակները, որ Հայոց հայրապետութեան աթոռին յաջորդեց Հայոց կաթողիկոս Մովսէսի մահից երեք տարի յետոյ:

(Ուխտան., Բ-Ը)

*Վրաց բաժանման մասին երկրորդ հանգամանքը
Մովսէսի մահուանից յետոյ*

Հայոց կաթողիկոս Արքահամի ժամանակ տեղի ունեցաւ Վրաց բաժանումը՝ լաւ ի յայտ գալով, ինչպէս մեզ ուսուցանում է «Գիրք թղթոցը»: Բայց մինչեւ այստեղ մեր կողմից այս գրուածները տեղի են ունեցել Հայոց կաթողիկոս Մովսէսի ժամանակներում, ինչպէս որ ստոյգ ձեւով պատմեցինք ձեզ. նաեւ դրան վկայում է «Գիրք թղթոցը»: Ահա համառօտ խօսքերով ըստ մեր կարողութեան նշեցինք ձեզ Վրաց բաժանման սկիզբն ու պատճառը, քանզի այս բաներն այսպէս իմացուեցին՝ մեր կողմից ստոյգ քննուելով: Իսկ նրանց նամակներից կամենում էի մեր ձեռնարկման սկզբում նրանց մասին այլ խօսքեր շարադրել, միաժամանակ եւ Կիւրոնին վերաբերող կշտամբանքին աւելացնել (խօսքեր) այս պատմութեան մէջ, որ մինչեւ այստեղ (հասաւ): Բայց (դա) կը թողնենք՝ այլ տեղում ասելու:

Իսկ նախքան Կիւրոնի եւ մեզնից նրա բաժանուելու մասին խօսքերին ու գործերին մեր կողմից ձեռնարկելը՝ կը կամենայի պատմել եւ մի այլ պատճառի (մասին), որ մենք լսել ենք շատերից բազում անգամ, չնայած գրաւոր որեւէ գրքում չենք գտել:

Թէեւ սա նաեւ դատարկաբան գրոյցներից չէ, այլ ծերերի աւանդութիւնից եւ ընթերցասէր վստահելի մարդկանցից է ասուած, որ կը կամենայի շարադրել այս պատմութեան գլուխների հերթականութեան մէջ: Բայց քանզի յաջողուեց ասել, որպէսզի չընդմիջուէր միտքը ըստ /այն/ հերթակարգի՝ ինչպէս որ պատմում է «Գիրք թղթոցում», (ապա) կասեմ յետոյ (մի) այլ տեղում:

(Ուխտան., Բ-Թ)

*Թե ինչ ձեւով Յուրտաւի Մովսէս եպիսկոպոսը գրեց Վրթանէս
Քերթողին, որպէսզի (նա) նամակ գրի իր թեմականներին ու
Կիւրոնին ու երկրի իշխաններին*

Արդ՝ Մովսէս եպիսկոպոսը նամակ է գրում Վրթանէս Քերթողին իր Յովհաննավանք գնալու առթիւ եւ նրան պատմում կատարուած ամեն բանի, այդ թւում նաեւ ձմեռային դառնաշունչ հողմերի եւ իր գոհունակութեան մասին վանքի առաջնորդից, որի անունն էր Բաբեղաս: Եւ խնդրում է շրջաբերական նամակ գրել Յուրտաւի եկեղեցուն՝ հաւատքին հաստատուն մնալու վերաբերեալ, ինչպէս որ /քիչ/ առաջ ասացինք, եւ դրանից յետոյ (գրել) Կիւրոնին ու երկրի իշխաններին:

(Ուխտան., Բ-Ժ)

*Յուրտաւի Մովսէս եպիսկոպոսի առաջին նամակը սուրբ
Գրիգորի արքայի տեղապահ Վրթանէս Քերթողին*

«Քրիստոսական հաւատքի փափագելի վիճակի սէրն ընդունող եւ ինձ հայրանման ու մերձաւոր երեւացող տէր Վրթանէս, անարժան Մովսէսից քեզ եւ քոյիներին բազում խոնարհութեամբ երկրպագութիւն, որի հետ աւելի ողջութեան հայցում:

Ծանուցում ենք մեր տիրոջը փոքր ի շատե մեզ հասած չարիքի մասին: Այնպես պատահեց, որ ես պատանի հասակում հասա Յուրտաւի եպիսկոպոսարանը, որի եկեղեցու սովորական աշակերտ եղայ: Այնտեղ ես ուսանեցի հայերէն եւ վրացերէն դպրութիւնը, այնտեղ էլ ինձ՝ անարժանիս Տիրոջ կողմից շնորհուեց՝ հասնելու վարդապետական աթոռին, իսկ դրանից յետոյ (դառնալու) բղեշխի տան դռան եպիսկոպոսը: (Բայ)/ ասեմ, որ (դա) ոչ թէ ըստ իմ արժանիքների (էր), այլ կարծում եմ, թէ /իբրեւ/ յանդիմանութիւն /էր/ Աստծոյ Որդուն ուրացողներին: Քանզի այսքան ժամանակ անցնելուց յետոյ ես եւս վերահասու եղայ, թէ ինչպէս վրացիները միայն կանաչագոյն տերեւն ունէին առանց պտղի, (թէպէտ) իրենց ըստ օրինակի՝ սաղարթալից էին ցոյց տալիս, քանզի այն նոյնն է, որի մէջ Տէրը պտուղ չգտաւ, այլ միայն տերեւ: Ըստ այսմ սրանք մարդկանց հաճոյքի համար ամեն մի պաշտամունք լիարժէք ու կատարեալ էին կարծեցնում: Իսկ երբ Կիւրոնի մասին իմացանք, որ մեծարանք է մատուցում Քաղկեդոնի ժողովի սահմանած հրեական հաւատամքին եւ հայիոյութիւն ուղղում Աստուածորդուն՝ նաեւ (հասկացանք), որ նրանց մէջ կանաչ տերեւ էլ չկար:

Այդ պատճառով ես ձայն բարձրացրեցի, թշնամի եղայ կաթողիկոս անունը (կրողին) եւ բոլոր իշխաններին ու նախարարներին եւ (ողջ) երկրին: Եւ վախճանն այս է, որ հալածուեցի: Եւ թէպէտ իմ մեղքերի պատճառով Հայոց երկիրն այժմ զրկուած է առաջնորդութիւնից, սակայն հարկ համարեցի գալ՝ ձեր սրբութեանը տեղեկացնելու (Վրաց) երկրի կորստեան եւ իմ տառապանքների մասին: Եւ նաեւ՝ թէ ինչպէս խիստ ձմեռուայ եւ բուր լինելու պատճառով կանգ առայ սուրբ Յովհաննէս Մկրտչի վանքում, որ Արագածոտնում /է/, եւ ընդունուեցի երանելի տէր Բաբեղաս վանացերէցի կողմից: Մնացեալն (էլ) այդ տղայից կը լսեք:

Բայց ես առժամայն (նամակ) գրեցի Յուրտաւի եկեղեցու հայալեզու իշխանութեանը: Հրամայեցեք եւ դուք գրել, որովհետեւ

նախանձախնդիր են ուղղափառ հաւատի հանդէպ, թող որ աղանդներից /Էլ/ առաւել զգուշանան: Գրեցէք նաեւ Կիրոնին ու երկրի իշխաններին:

Նամակի միջոցով նաեւ խրատ տուէք, (թող ինձ) բերեն: Եւ ձեր սրբութեան ողջութեան մասին տեղեկացրէք մեզ: Եւ դուք ողջ եղէք Տիրոջով»:

(Ուխտան., Բ-ԺԱ)

*Մովսէս եպիսկոպոսի նամակի պատասխանը Վրթանէս
Քերթողի կողմից*

«Քո սրբութեան ողջունագիրը ստացայ, եւ Աստծուց գոհանալով՝ ուրախացայ, որովհետեւ նախանձախնդիր էք ուղղափառ հաւատին եւ ասպնջական սուրբ հայրերի ճշմարիտ վարդապետութեանը, որ աւանդուեց մեր երկրում երանելի եւ քաջ, սուրբ ու անվախ տառապեալ սուրբ տէր Գրիգորի ձեռքով: Եւ որովհետեւ հասել ենք ապստամբ եւ վերջին ժամանակներին, (ուստի) զարմանալի չէ տեսնել (այն, ինչ) որ ձեր սրբութիւնը գրել է մեզ:

Քանզի տակաւին դեռեւս տեսնում ենք նուիրական առաքեալների զգուշացումը, թէ հերձուածներ են լինելու ձեր մէջ: Եւ նաեւ այն, թէ (նրանք) որ ընտիրներ են, ձեզանում կերելան: Սա ճշմարտօրէն քո սրբութիւնը կատարեց՝ համբերելով հալածանքների ու բազմապատիկ նեղութիւնների: Եւ ի լրումն դրան՝ միշտ պէտք է արիանալ եւ անպառակտելի մնալ մեր Քրիստոս Աստծոյ շնորհիւ եւ խելամտութեամբ պարգեւներ ստանալ Քրիստոսի մեծակարող աջից: Իսկ որ շտապում էք շատերի օգտաշահութեանը, ուրախալի է, եւ որ գնում էք դէպի ընկերասիրութիւն, օգուտ է ու տենչալի՝ ըստ այն խօսքի, թէ՝ «Ինձ համար չեմ օգուտ որոնում, այլ՝ շատերի, որպէսզի ապրեն»:

Այն նամակները, որ խնդրեցիր (գրել) հայալեզուներին, կանենք՝ Աստծոյ շնորհիւ: Նոյնպէս նաեւ Կիւրոնին եւ երկրի իշխաններին կը գրենք՝ Աստծոյ ընդառաջելով: Եւ եթէ Աստուած կամենայ, (ապա) մօտ օրերս կամենում են կաթողիկոս նստեցնել: Ձեր հոգսերը Քրիստոս Աստծոյ շնորհիւ նա կը հոգայ, իսկ մենք սատար ենք մինչեւ գործի աւարտը ըստ մեր կարողութեան: Ողջ եղիր Տիրոջով»:

(Ուխտան., Բ-ԺԲ)

Մովսէսի եւ Վրթանէսի նամակից հետոյ նաեւ փոքրիկ տեղեկութիւն

Եպիսկոպոս Մովսէսը շրջաբերական նամակ է գրում Յուրտաւ քաղաքի եւ նրա նահանգի իր թեմականներին, որ զգուշանան Քաղկեդոնի աղանդից ու նրանց նմաններից՝ տալով նրանց եղած (աղանդաւորների) օրինակները եւ /նրանցը/ որ լինելու են: Եւ նրանց վարդապետում է օրէնքներում ու մարգարէութիւններում գրուածները յանձնելով նրանց (Սուրբ) Հոգու շնորհներին: Ինչպէս մի անգամ ասացինք, գրում է նաեւ իր՝ եպիսկոպոսութեան գալու մասին եւ վրացիների մեղադրանքների, նաեւ բոլոր տեղերում պատահած իր դառը փորձութիւնների մասին է յիշատակում: Գրում է նաեւ Աստուածորդուն ուրացողներից զգուշանալու եւ Աստծոյ շնորհով ապրելու մասին:

(Ուխտան., Բ-ԺԳ)

*Մովսէս եպիսկոպոսի շրջաբերական նամակը իր
թեմականներին*

«Երկնքի ժառանգութեան վիճակեալնէ՛ր եւ սրբութեամբ Սուրբ Երրորդութեանը երկրպագողներ, երիցս երանելի անվախ տառապեալ սուրբ տէր Գրիգորի միջոցով Քրիստոսի հաւատը լի սիրով ընդունողներ, (որ) Յուրտաւի եկեղեցու հայալեզու իշխանութեան (մէջ էք), որոնց առաւել հարկ համարեցի գրել, իսկ լսողների յօժարութեամբ՝ (նաեւ) եկեղեցուդ առհասարակ բոլոր պաշտօնեաներին՝ ընդհանուր ժողովրդովդ հանդերձ՝ անարժան Մովսէսից ողջո՛յն Տիրոջով, որի շնորհիւ առաւել պահպանուած լինէք խաղաղութեան մէջ՝ Սուրբ Երրորդութեան յոյսով:

Միրելինէ՛ր, ի սկզբանէ եւեթ նրանց, ում Աստուած հաճոյ համարեց եւ կանչեց իր մեծ տէրութեան մէջ սպասաւորութեան, (եւ) ում շնորհեց ժողովրդի վերակացութիւնը, եւ կամ ում մարգարեական շնորհք տրամադրեց՝ ճանաչում (ու) տեսնում ենք (դրանց) չափազանց բարեհաճ ընտրուած: Ոմանք տեղի տուեցին եւ յօժարութեամբ անսացին կոչին, իսկ (միւս) կէտը յապաղեցին՝ (համաձայնելու) շնորհներին, եւ նրանցից ոչ մէկը չանարգուեց: Արդ՝ որովհետեւ դիպուածը մեզ եւս ուսուցանում էր աստիճանից՝ թէկուզ եւ /ըստ մի/ կարգի՝ հրաժարուել եւ առաւել եւս երկչոտների հետ երկչոտ լինել, սակայն մեր տկարութիւնից վեր էր միջնորդ լինել Աստծու եւ մարդկանց միջեւ, (բայց ըստ միւս կարգի)՝ սովորեցինք հնազանդուել: /Եւ/ քանզի ասեա հայրենիքից՝ հաւատքի ուսումնառութեան վայրից էինք կոչուել՝ Աստծոյ նախախնամութեան շնորհը համարելով, այդ պատճառով տեղի տալով՝ յօժարութեամբ անսացինք կանչին:

Դրա համար երբ յանկարծակի վերահասու եղանք շնորհակորոյսների՝ Աստուածորդուն ուղղուած հայիտութեանը, նրանց մօտ ճանաչեցինք անասելի վերքերը եւ չյանդգնեցինք ախտը ծածկել բարեհոգութեամբ: Այդպէս էլ վարուեցինք, որի պատճա-

ռով (նրանց) ամենքին թշնամի դարձանք: Եւ այնքան յանդիմանուեցինք, առաւել եւս սպառնալիքի ենթարկուեցինք քահանայապետերից եւ իշխաններից, մինչեւ որ հալածուեցինք: Բայց ինձ այնպէս է թուում, թէ ինչ (աւելի վատ) ձեռով եւ դատապարտութեան տակ ընկած կը լինէի, եթէ ախտն իմանայի ու ծածկէի: Նոյնպէս եւ նրանք խիստ ցասման են արժանի, որ լսում են եւ անտարբեր մնում, ինչպէս որ անտարբեր էլ գտնուեցին:

Ապա ուրեմն իրաւամբ թող լսեն Աստծու կողմից սպառնալիքի ենթարկուածներին, որ (արտայայտւում է) աստուածային Երեմիայով «Քահանաներն, ասում է Տէրը, չասացին՝ ո՞ւր է Տէրը, իսկ հովիւներն անիրաւ գտնուեցին իմ հանդէպ եւ ցրեցին իմ արօտի ոչխարներին. Եւ ապա ի՞նչ (է լինում) դրա դիմաց: Տէրն այսպէս է ասում. «Ո՛վ հովիւներ, որ կորցնում ու ցրում էք իմ արօտի ոչխարներին, արդ՝ ահաւասիկ եւ վրեժ կառնեմ ձեզնից, որովհետեւ լրացան ձեր օրերը խողխողման համար»:

Արդ՝ քանզի Աստծոյ սիրելի Միածին Որդու սպանողների նման ախտի մէջ ընկան, ակնյայտ է, որ ըստ նրանց օրինակի՝ չեն խուսափելու նաեւ մարմնական պատժից: Իսկ նրանք ի՞նչ պատիժ կրեցին արդեօք: Սովի (համար) նրանց կանայք դեղ դարձրին իրենց սիրասուն որդիներին, խորովեցին եւ կերան (նրանց) Տիտոսի կողմից Երուսաղէմի պաշարման ժամանակ: Եւ (Տիտոսը) նրանց վեց բիրին (սովով) սպանեց, հարիւր քսան բիրին սրով կոտորեց, իսկ յիսուն բիրին գերեզմարեց: Իսկ քաղաքում այսքան բազմութեան գտնուելու պատճառը Չատկի տօնն էր, երբ բոլոր տոհմերը մի վայրում էին կուտակուած եւ արգելափակուեցին իբրեւ բանտում: Քանզի որ օրը որ իրենց կեանքով նենգեցին Քրիստոս Աստծուն, միեւնոյն օրն էլ ընդունեցին հատուցումը: Իսկ այժմ ովքեր նրանց ախտով հիւանդանում են, ակնյայտ է, որ նրանց հետ պատժուելու են այս եւ այն (աշխարհներում):

Արդ՝ որպէսզի նրանց հետ մեզ էլ չվիճակուի լսել Աստծու սարսափելի սպառնալիքները եւ կրել այն անողորմ պատիժը, եւ եւս հարկ համարեցի այս զգուշացնող նամակի միջոցով խօսել ձեր աստուածասէր ականջներում՝ (յորդորելով) զգուշանալ Տիրոջն ուրացողների հետ հաղորդակցուելուց եւ Տիրոջն սպանողներից՝ Քաղկեդոնի ժողովը մեծարողներից: Քանզի ժողովի առաջնորդները Նեստորի աղանդակիցներն էին եւ եկեղեցու կողմից հալածուածներ, որոնք սատար գտնելով Սարկիանոս թագաւորին եւ նրա Պողքեր անունով կնոջը՝ համարեցին, որ մեր Տէր Յիսուս Քրիստոսը երկու բնութիւն ունի, ուստի մենք չպէտք է հաղորդակցուենք նրանց հետ:

Արդ՝ այս ամենն իմանալով, սիրելիներ, արքունական (ուղիղ) ճանապարհով գնանք, ո՛չ աջ խոտորուենք ու ո՛չ ձախ: Եւ այս այսչափ հարկ համարեցինք փոքրիշատէ ձեզ գրել, որպէսզի զգուշանաք այնպիսիներից: Եւ (նա), ով այս պատուիրանից յետոյ անփոյթ կը գտնուի, ինքը կը տայ Աստծու պատասխանը, իսկ մենք անպարտ կը լինենք:

Ողջ եղէք մեր Տէր Յիսուս Քրիստոսով»:

(Ուխտան., Բ-ԺԴ)

*Յուրտաւի Մովսէս եպիսկոպոսի նամակի
պատասխանը իր թեմականներից*

«Քո սրբութեան խրատատուութեան զգուշացուցիչ ողջունագիրը ստանալով, ամբողջ եղբայրութիւնս Աստծուց գոհանալով՝ մեծ ցնծութեամբ լցուեցինք, որ դու՝ (մեր) Տէրը, Սուրբ Երրորդութեան պահպանութեամբ ողջ եւ, եւ ձեզնից որբ մնացած երկրի մասին հոգում էք, որպէս արժան իսկ է:

Թող բոլոր ուղղափառ խոստովանողների աղօթքները լսի Աստուած եւ Սուրբ Հոգուն ուղարկի քեզ մօտ իբրեւ տէր ու

օգնական քեզ, զօրացնելով ձեզ, որպէսզի լինէք վերակացու եւ օգնական մեր խոտորուած կողմերի, եւ կրկին ձեր միջոցով տէրերի Տէրը Սուրբ Հոգուն քարոզի եւ հաստատի մեր երկրում ընդհանուր կեանքի խօսքը, որ յաւիտենութիւնից առաջ Հօրից էր եւ Հօր մօտ, եւ ժամանակների վերջում մեր փրկութեան համար սուրբ Կոյս Մարիամից մարմնացած եղաւ՝ ըստ ամենայնի մեզ նման՝ բացի մեղքերից, մնալով (միեւնոյն ժամանակ) Աստուած՝ այնպէս, ինչպէս որ էր առաջ՝ իր Հօր եւ Սուրբ Հոգու հետ միասին: Որի առիթով առաջին նախաժամարտակ մարգարէները մարգարեացան այն խորհրդաւոր ծածկոյթի մասին, որ յաւիտեանս Հօր հետ (է): Որը եւ երանելի Պօղոսը մեկնաբանում է, թէ՝ «Այժմ յայտնուեց Սուրբ Գրքով, եւ բոլոր ուղղափառներն ընդունեցին»:

Եւ սուրբ Գրիգորի գրով նաեւ հայաստանցիներիս վրայ հաստատուեցին հաւատը, յոյսը եւ սէրը, որոնք աստուածային Պօղոսն աւանդեց եկեղեցուն՝ հաւատն ի Հայր, յոյսն՝ ի Որդու եւ սէրն՝ ի Սուրբ Հոգի: Այս երեք պտուղները քո եւ երանելի վարդապետների շնորհիւ մեր կողմերի եկեղեցիներում լի ու լեցուն թող պահի մեր Քրիստոս Աստուածը եւ (մենք) ընդունենք մէկին վաթսուն եւ մէկին հարիւր: Թող Տէր Աստուած նորոգի քո տիրական աթոռը միեւնոյն եկեղեցում, որին վիճակուեցիր Քրիստոսին խոստովանող ուղղափառների կողմից: Ապա թէ ոչ՝ մենք ուրիշ հնար չունենք, կա՛մ /պէտք է/ ապրենք այս երկրում՝ ենթարկուելով նրանց կամքին, կա՛մ թողնենք ու գնանք:

Ողջ եղի ր, մեր տէ ր, եւ մեզ համար աղօթի՛ր»:

(Ուխտան., Բ-ԺԵ)

*Մովսէս եպիսկոպոսի խնդրանքով տէր Վրթանէս Քերթովի
գրած նամակը Յուրտաւի հայալեզու աշխարհին՝
հաւատքի մէջ նրանց հաստատուն պահելու համար*

«Սրբասեր ուղղափառներին եւ ճշմարիտներին, բոլոր վանքերի երեցներին եւ գիւղերի քահանաներին, ազատներին եւ շինականներին, ծերերին եւ պատանիներին, հայալեզու գաւառներին եւ համայն ամբողջ ժողովրդին, որ Յուրտաւի եկեղեցու իշխանութեանն էք ենթարկուում՝ Վրթանէսից եւ սուրբ եկեղեցու այլ պաշտօնեաներից՝ Տիրոջով ողջո՛յն:

Մեզ անախորժ լուր հասաւ, թէ Նեստորի եւ նգովեալ Քաղկեդոնի հերձուածը, որը Հայոց, Վրաց եւ Աղուանից միաբան եպիսկոպոսներից ու իշխաններից սոսկալի եւ անյիշատակելի նգովքներով մերժուած էր, իսկ արդ՝ կաթողիկոս կոչուածդ եպիսկոպոսներով եւ իշխաններով հանդերձ ընդունելութիւն ու մեծաբանք են անում հերձուածողներին: Լսեցինք նաեւ ձեր սրբութեան մասին, որ ունեք նախանձախնդրութիւն ուղղափառ հաւատի նկատմամբ ամբողջ բարեպաշտութեամբ, որ ի սկզբանէ հաստատուած էր ձեր երկրում, (ուստի) եւ աղօթում ենք, որ միշտ հաստատուն մնաք եւ արիանաք աներկիւղ համարձակութեամբ:

Իմացե՛ք, եղբայրնե՛ր, որ վերջին ժամանակներում ենք /ապրում/, եւ չար գազանի հրապոյրները մօտեցել են՝ ապստամբեցնելու ուղղափառ հաւատից, որպէսզի (նա) իր մոլորութեանը ընդունարան ստեղծի: Այդ պատճառով արթուն կացեք եւ հսկեցեք՝ խուսափելու անզգամներից, որպէսզի Աստծոյ պարգէներին արժանի լինենք: Եւ եթէ առաւել պէտք լինի հակառակութեան ու պատասխանի, թող մեզ գրի ձեր սրբութիւնը, եւ Ամենասուրբ Երրորդութեան շնորհիւ հասնելով ձեզ մօտ՝ կը պապանձեցնենք չարախօսների հայհոյական բերանները: Ողջ եղէ՛ք Տիրոջով»:

(Ուխտան., Բ-ԺԶ)

*Յուրտաւի հայալեզու աշխարհի պատասխանը
Վրթանէսի նամակին*

«Տեսանք ձեր ուղղափառ հաւատքի նամակը եւ լսեցինք ձեր եւ ձեր սուրբ եկեղեցու պաշտօնեաների ողջոյնը, եւ մեծ ուրախութեամբ լցուած՝ գոհացանք մեր Քրիստոս Աստծուց, ինչպէս որ երկար երաշտից պապական ծարաւ հողն ընդունելով շահեկան անձրեւը՝ ինքն իր մէջ զուարճանալով դալարութիւն է ցուցաբերում եւ անուշահոտ ծաղիկներ ցոյց տալիս նայողներին: Քանզի դուք էլ Քրիստոսի շնորհիւ անուշ բոյր էք՝ ըստ գրուածի՝ կեանքից կեանք, (եւ) ոչ միայն ձեր երկրում, այլեւ ողջ հիւսիսային կողմերում: Եւ մենք, ընդունելով ձեր կողմից գրուածը, նաեւ ցոյց տուեցինք մեր ողջ եղբայրութեանը, որոնք ախորժելով լսեցին (եւ) գոհութիւն յայտնեցին Աստծուն:

Նաեւ ձերդ վարդապետութիւնը, հոգալով մեր երկրի մասին՝ յիշեցնում է սուրբ եւ ուղիղ այն հաւատը, որ Մեծ Գրիգորը սահմանել էր այս կովկասեան կողմերում: Արդ՝ համարձակում եւ օրհնում ենք տէր Վրթանէսին. օրհնեալ լինես ամբողջ ուխտովդ հանդերձ եւ պահպանուած լինես Սուրբ Հոգով այս ծովածուփ կեանքում, որ աղօթքներով միշտ նորոգես նաեւ սուրբ Գրիգորի սուրբ աթոռը, որպէսզի խնամի մեր մոլորեալ ոչխարը՝ ըստ առաջին վարդապետների օրինակի: Քանզի մենք առանց այդտեղի օգնութեան ու թիկունքի այստեղ չէինք կարող մնալ, որովհետեւ հայրապետ անուանուած այնպիսի գոռոզ բռնաւորի ոչ ոք չի հանդիպել, եւ մենք պէտք է թողնէինք այս երկիրն ու գնայինք:

Ողջ եղի՛ր մեր Տիրոջով:

(Ուխտան., Բ-ԺԷ)

*Յուրտաւի մասին եւ այնտեղ եղած բղէշի ու
վրացիների մասին*

Մտադիր եմ մի փոքր յիշատակութեամբ շարադրել նաեւ Յուրտաւի մասին եւ (ինչ) որ նրանից յետոյ /է/: Քանզի այս Յուրտաւ անունը, որ մշտայար յիշատակեցինք պատմութեան մէջ (եւ)/ այստեղ էլ ենք յիշատակում, այն ժամանակ էր կոչում այդ անունով, իսկ այժմ յորջորջում է Գաջենք: Այն ժամանակ լի եւ ընդարձակ մայրաքաղաք (էր) մեծ եւ հռչակաւոր, իսկ այժմ փոքրացած եւ չափաւոր դարձած քաղաքագիւղ (է) այն գետի ափին, որն իր անունով կոչում է Գաջենագետ, (այն) նահանգում, որը կոչում է Վրաց դաշտ, որը երկու՝ Հայոց եւ Վրաց երկրների միջասահմանն է, նայում է դէպի Կաւկաս լեռը, (եւ) որը սահմանակից է հրաշաշեն ու հրաշալի, հռչակաւոր ու ականաւոր Տփլիս մեծ մայրաքաղաքին:

Եւ այդ Յուրտաւը եղել է նստավայրը Գուգարացւոց մեծ բղէշի, որը հիւսիսի կուսակալ էր նշանակուած մեր Արշակունի Վաղարշակ արքայի կողմից: Եւ այդ բղէշը սերուած էր Դարեհի նախարար Միհրդատի զաւակից, ինչպէս որ մեզ պատմում է ճշմարտապատում Մովսէսը (14): «Սրան, ասում է (նա), բերեց Ալեքսանդր Մակեդոնացին եւ թողեց իշխան Վերիացւոց ազգերի գերիների վրայ, որոնց Նաբուգոդոնոսորը բերեց լիբիացիների զօրքի ուժով եւ (որոնց) հետապնդելով (ու) ընկճելով՝ իր ձեռքի տակ նուաճեց եւ նրանց մի մասին տարաւ բնակեցրեց Պոնտոսի ծովի աջակողմում, ասում է Պատմագիրը, եւ այն Վերիան գտնուում է ցամաքի արեւմտեան ափին»:

Արդ՝ երբ նրանց բնակեցրեց Պոնտոսի ափին, այդ ազգն աճեց եւ բազմանալով՝ սփռուեց ծովեզրում այստեղ-այնտեղ, նաեւ շրջուեց միւս կողմի վրայ եւ ձգուեց մինչև Հայոց եւ Աղուանից սահմանները: Եւ դարձաւ ազգ եւ խիստ բազմաքանակ, իսկ երկրի անունը կոչուեց Ափխազք: Եւ սրա շուրջ գտնուող գաւառ-

ներն անթիւ են եւ նաեւ այլ գաւառներ կան Տփլիսի քաղաքի շուրջը, որ կոչուում են Ծանարք, Ջաւախք եւ Թռեղք (15): Արդ աճեցին եւ բազմացան եւ ազգ դարձան: Եւ որ իրենց նախկին երկրում անուանուում էին Վերիա, այստեղ վրացիները կոչուեցին (այդպէս)՝ ազգով, լեզուով եւ գրով, նաեւ հայրապետութեամբ ու թագաւորութեամբ հաստատուեցին: Եւ սրանց բաժանեց ու պատակտելով հեռացրեց մեզնից Կիւրոն Սկուտրացին՝ նման ու հաւասար լինելով Յուդայ Սկարովտացուն, եւ կորցրեց կործանեց այնքան բազմաքանակ ազգին՝ պատճառ լինելով նրանց կորստեան:

Բայց դու այստեղ չպետք է կշտամբես մեզ, որ իբրեւ թէ աւելորդ բան ենք գրում սա, ով ուսումնասէր, քանզի կամեցանք քիչ խօսքերով Յուրտաւի շատ յիշատակների մասին ծանուցել քեզ: Քանզի պարտ ու արժան էր /նաեւ/ զանց չառնել նրա՝ (ուս) պատկանելու (խնդիրը), քանի որ սկզբնապէս արքունի բնակավայր լինելով՝ (Յուրտաւը) նաեւ սուրբ Շուշանիկի հանգստեան վայրն է: Եւ այնտեղ դեռեւս մնում են նրա նահատակութեան չարչարանքների տեղերը եւ նրա սուրբ ու պատուական նշխարների հանգստարանը, եւ մենք բազմաթիւ անգամ գնացել ենք ու համբուրել (այդ) սրբավայրը: Իսկ նրա նահատակութեան որպիսութիւնը յետոյ այլ տեղում կը պատմեմ:

(Ուխտան., Բ-ԺԸ)

*Յուրտաւի Մովսէս եպիսկոպոսի մասին, թէ որտեղից կամ
ինչպէս եկաւ առաջնորդական պատուի. Նաեւ գովասանք
նրա մասին եւ կշտամբանք ու մեղադրանք Կիւրոնին,
երկրի իշխաններին եւ այլոց*

Սակայն (աւելի) առաջ, քան Մովսէսի վերաբերեալ մեր պատմածին անցնելը, մենք մոռացանք նախապէս յիշատակել նրա մասին (իր) գաւառը, գիւղը եւ նրա գալը եպիսկոպոսութեան

պատուի: Բայց կանցնենք այսուհետև համառօտ յիշատակելու (դրանք)՝ ըստ մեր կարողութեան: Սա Տաշիրք գաւառից էր, Մեհենկերտ գիւղից: Իր մանուկ հասակում գնաց Յուրտաւ գիւղաքաղ՝ աքը, որի մասին վերելում խօսեցինք, եւ այնտեղ դաստիարակուեց ու սովորեց, ինչպէս ինքը պատմեց իր նամակում: Եւ ուսանելով երկու ազգերի՝ հայոց եւ վրաց ուսումը եւ հասնելով արբունքի՝ ստացաւ վարդապետութեան աստիճան, իսկ դրանից յետոյ՝ բղեշխի տան եպիսկոպոսութեան աթոռը: Եւ այս բանն ինքն է վկայում (այն) նամակում, որ (գրեց) Վրթանէսին: Եւ (նա) դարձաւ երկու ազգերի՝ հայերի ու վրացիների միջեւ հաւատի հաստատութեան միջնորդ մինչեւ Կիւրոնի դաւանափոխութեան ժամանակները, քանզի նրանից էր ստացել ձեռնադրութիւն, մինչ նա /դեռ/ ուղղափառութեան հաւատքում էր: Բայց (Մովսէսն) ինքը, (իր) իւրայինները, նաեւ հայալեզու իշխանութեան առեւ-սարակ բոլոր թեմականները Կիւրոնից կրեցին վիշտ, նեղութիւն, հալածանքներ, որը եւ Վրթանէսին ուղղուած իրենց պատասխան նամակում գրեցին, թէ թողնելու են երկիրը եւ գնալու:

...Իսկ սա (Մովսէսը) աշակերտ լինելով քաջ հովիւ Քրիստոսին նոյնն ասում ու սովորեցնում էր իր թեմականներին, նաեւ յանդիմանում էր նրանց, ովքեր խորհում էին հեռացնել առողջ հաւատքից, որը (հաւատն է) առ Հայրը, առ Որդին եւ առ Սուրբ Հոգին: Նաեւ նրանց էր յանդիմանում. ովքեր խօսում էին Աստծոյ մարմնացեալ խօսքի (Քրիստոսի) միաւորութեան բաժանման մասին: Այդ պատճառով, երբ ամեն բան իմացաւ սատանայի եւ Կիւրոնի մասին՝ ատեցին նրան եւ հեռացրին իրենց եկեղեցուց, թշնամի մէկը համարելով նրան, քանզի ստոյգը խօսեց: Նաեւ մահով էին սպառնում նրան երկրի իշխանները, նախա-րարները եւ այն խաժամուժ ամբոխը, որոնք չգիտէին Տիրոջ օրենքներն ու պատուիրանները եւ նզովուած էին, որովհետեւ հրեական կատաղութիւն ունէին իրենց մէջ: Եւ այսպէս բազմա-թիւ նեղութիւններով ու չարչարանքներով հալածում էին նրան,

եւ ինչպէս ասացինք մահով սպառնում, եւ ասում էին՝ «Եկէ՛ք սպանենք նրան, քանզի դժկամելի եղաւ մեզ (համար)»: Եւ զարմանալի չէ, որովհետեւ սատանայի որդիներն են եւ ձայնակիցը նրանց, ովքեր սպանեցին մարգարէներին եւ մարգարէների Տիրոջը:

Արդ այս ամենի եւ սրանից աւելի չար բաների պատճառը Կիրոնի մէջ գտնուեց. քանզի եղաւ չար առաջնորդ եւ դարձաւ Վրաց երկրում գայթակղութեան բաշխիչ նեստորական խուժիկի հետ միասին, քանզի սա եղաւ նրանց համար որոգայթ: Երանելի Ովսէէն ասում է. «Եւ իբրեւ դարաւանդի գլխին ձգտած ցանց, որ որսորդները որսի համար հաստատեցին»: Քանզի նա մեր լի ու անթերի ուղղափառութեան հաւատը, որն ուղիղ դաւանութեամբ աւանդեցին մեզ մեր սուրբ հայրերը, նա այլատեսակ ձեւով վարդապետեց նրանց: Այլաձեւ մի բան սովորեցրեց սխալ մտքով՝ (այն) հայհոյութիւնը, որ Աստծոյ Որդուն, որի մէջ մարմնացած Բանն Աստուած անբաժանելի միասնութեամբ (է), նա բաժանում էր՝ հայհոյութիւն ներս մուծելով, մինչեւ որ բոլորն ընդհանրապէս ներկուեցին նրա երկաբնակութեան գոյնով: Եպիսկոպոսներն ու քահանաները, իշխանները, զօրավարները, զօրականները, միահամուռ բոլոր հասակի մարդիկ միեւնոյն խորհրդով վառուեցին, ինչպէս որ հուրն անտառում վառուելով՝ բորբոքւում է, եւ ամբողջ անտառն առհասարակ վառելով՝ բորբոքմամբ կիզում: Նոյն կերպ էլ նրա անկարգ խօսքերը եղան նրանց համար հուր՝ մխախառն այրելով նրանց իբրեւ ինչ-որ խռիւ: Արդ՝ այս ամենը տեսնելով՝ երանելի եպիսկոպոս Մովսէսը Սուրբ Հոգու հրով վառուեց եւ Կիրոնին մէկ անգամ, երկիցս եւ երիցս յանդիմանեց առանձին եւ վկաների ներկայութեամբ եւ եկեղեցու մէջ՝ ըստ աւետարանական խօսքի: Նաեւ բազմաթիւ անգամներ խրատական խօսքերով աղաչում էր՝ բանալով նրա (առջեւ) գրքերը եւ առաջարկելով հոգեւոր խրատը: Իսկ նա երբեք չէր ընդունում նրա խրատը, քանզի

անխրատ անձն անբժշկելի է. «Խրատուեց Բաբելոնը, բայց չբժշկուեց»՝ գրուած է: Արդ՝ երբ չկարողացաւ դիմանալ ու ծածկել նրա չարութիւնը, ապա այնուհետեւ յայտնեց (ուրիշներին), քանզի (իրենք) չիմացան եւ չմտածեցին՝ ըստ մարգարէի խօսքի, քանզի նրանց ճանապարհին անցնում էր խաւարի միջով: Բայց դրանից յետոյ եւ այնուհետեւ թշնամի եղաւ ամենքին: Բայց Կիւրոնը շատ աւելի (թշնամացաւ), քանզի նա եղաւ չարի սկիզբը: Եւ ողորմելին չգիտէր, թէ լաւ է իմաստուն թշնամին, քան անմիտ սիրելին: Եւ դարձեալ՝ «Եթէ արդարն է ծեծում քեզ, գնա՝ նրա հետ, որովհետեւ նա է, որ սիրում է քեզ»:

Արդ՝ Կիւրոնի ու նրա նմանների կողմից այնքան եւ այնպիսի հալածանքների ու տառապանքների տրուեց եւ տարուեց այս երանելի եպիսկոպոսը, մինչեւ որ թողեց երկիրն ու իր թեմը եւ հեռացաւ օտար երկիր: Իսկ երբ ինքը գրեց իր եկեղեցու թեմին, նաեւ խնդրեց գրել Վրթանէսին, որը եւ գրեց մեծ զգուշութեամբ, ինչպէս կարդում ենք այն մատեանի նամակում:

Եւ ապա գրում է (Մովսէսը) նաեւ երկրորդ նամակը եւ յիշատակում այսպէս. գոհութիւն եւ շնորհակալութիւն է յայտնում նրան (Վրթանէսին) շրջաբերական գրութեան համար, որը գրեց Յուրտաւի հայալեզու մարդկանց: «Տեսայ, ասում է, քո սրբութեան գրութիւնը՝ ողջոյնով եւ ինչ որ դրանից յետոյ է»: Դրանցից յետոյ դարձեալ խնդրում է եւ կրկին հայցում գրել Կիւրոնին: «Այս անգամ (էլ), ասում է, հրամայեցէք մի նամակ գրել Կիւրոն անունով կաթողիկոսին, երկրի իշխաններին, Պետրոս եպիսկոպոսին պարսաւելով Քաղկեդոնի ժողովը»: Եւ ապա նա յանձն է առնում, գրում է մեծ հոգացողութեամբ նրան (Մովսէսին) ամբողջովին սատար կանգնելով:

Ահա ցոյց տուեցինք քեզ Մովսէս եպիսկոպոսի ծննդեան ու դաստիարակութեան տեղը ստոյգ քննելով, եւ նրա կրած աղետն ու նեղութիւնը:

(Ուխտան., Բ-ԺԹ)

*Մովսէս Եպիսկոպոսի երկրորդ նամակը վարդապետ
Վրթանէս Քերթողին*

«Տեսայ քո սրբութեան ողջունաբեր գրութիւնը, եւ լսելով մխիթարութեան խօսքերը, որ սրա մէջ էին, գոհանալով Քրիստոս Աստծուց՝ հանգստացայ, որովհետեւ ըմբռնեցի, որ ահա կրկին դիպայ կէանքին՝ հոգալու ինձ ու աշխարհիս համար, որպէս հէնց իսկ արժան էր եւ ես վստահութիւն ունէի (դրան):

Ինչպէս որ սկիզբը յօժարութեամբ արեցիք, աղաչում եմ՝ սրբերի բարեխօսութեամբ ջանանք աւարտին հասցնել: Այս անգամ հրամայեցէք գրել մի նամակ կաթողիկոս կոչուածին, Ատրնէրսեհին, Վահանին եւ Բգրմեհին՝ պարսաւելով Քաղկեդոնի ժողովը, եւ մի յանձնարարական նամակ Պետրոսին: Եւ բոլոր օրինակները ձեր աշակերտի միջոցով ուղարկեցէք, եւ թող (ինքն էլ) գայ խաղաղութեամբ Քրիստոս Աստծու շնորհիւ, երբ պատասխանները կ'ընդունէք: Իսկ եթէ ոչ՝ ապա արդէն դուք պիտի գնաք, թէկուզ եւ չարչարուելու էք՝ յիշելով մարգարէի բերանով Տիրոջ յորդորանքը, թէ՝ «Իմ դռները դուք գնացէք, ովքեր կարող էք, եւ քարերը ճանապարհից դուրս թափեցէք, որպէսզի ոչ մի բանով չսայթաքեն իմ ժողովուրդները»: Քանզի թէպէտեւ մենք կանք, (սակայն) մեր առաջնորդի տգիտութեան եւ միայնութեան պատճառով մի փոքր վախեցանք եւ (մեր) յոյսը ձեզ վրայ դրեցինք. Քանզի նա եւս սուրբ աթոռիդ աշակերտ է մեզ հետ միասին, թէպէտ ժամանակին դատարկ մեծութիւնից է որպէս ինչ-որ գետ բազմաթիւ ուղիներից բարձրացել (եւ) իբրեւ ինչ-որ գազան դաժան ճիրաններով ու մագիլներով սպառնալի է դարձել, որին ամաչեցնում է Տէր Աստուած սուրբ Գրիգորի աղօթքներով, եւ ձեր միջոցով կտրատելու է՝ ըստ առաջին վարդապետների օրինակի, նաեւ ձայնակցելով երանելի Պօղոսին՝ խորամանկ օձի այդ ցանցը, (որովհետեւ) մեզ հասաւ Աղուանքից մինչեւ Վրաց աշխարհը Քրիստոսի Աւետարանով լի դարձնելը եւ (այն) ուրախարար

հրաւիրական խօսքը լսելը, թե՛ «Բարի եւ հաւատարիմ մշա՛կ, քեզ հետ միասին փրկուած գնդովդ ե՛կ մտի՛ր քո Տիրոջ ուրախութեան մէջ»: Թող (այնպէս) լինի, որ դուք հասնէք դրան, տէր Վրթանէս, ձեր ամբողջ ուխտով հանդերձ: Ձեր միջոցով թող եւ մենք (հասնենք)՝ մեր Քրիստոս Աստծոյ շնորհիւ:

Ողջ եղի՛ր Տիրոջով եւ մեզ համար աղօթք արա՛ւ»:

(Ուխտան., Բ-Ի)

*Մովսէս եպիսկոպոսի նամակի պատասխանը Վրթանէս
վարդապետի կողմից*

...Այն նամակը, որ խնդրեցիք կաթողիկոս անուանուածին եւ երկրի այլ իշխաններին (յղել), գրեցինք, ինչպէս որ արժան էր: Բայց այն, ինչ որ (նամակատար) սպասաւորի մասին էր գրուած, (նրան) ժամանակի դժուարութեան պատճառով հնար չեղաւ ուղարկել, տէր, անմեղադիր եղի՛ր: Թող որ քո սպասաւորը տանի եւ պատասխանները բերի, որպէսզի մենք ըստ նրա իմանալ կարողանանք: Եւ եթէ Ամենասուրբ Երրորդութեան գթութեան եւ նամակի միջոցով խաղաղութիւն լինի, ինչպէս որ յոյս ունենք, (ապա) բարի է, որ դուք կը հասնէք ձեր սուրբ եկեղեցին փառաւորուած անունով: Ապա թէ ինչ-որ չափով երկարատեւ լինի ուրացողների յամառութիւնը, պատուէր տուէ՛ք ձեր ծանօթ ու սիրելի իշխաններին, որ գրեն մեր երկրի փառաբանուած իշխանին, որպէսզի սրա հրամանով մենք էլ գնանք եւ մեր Քրիստոս Աստծոյ օգնութեամբ յանդիմանենք նրանց, որ ուղղութեան գան: Ապա եթէ մեր բազմաթիւ մեղքերի պատճառով վիճակուի հակառակ եւ ընդդէմ (խօսք) լսել, մեր ոտքերի փոշին նրանց վրայ կը թօթափենք, իսկ մենք Աստծու եւ մարդկանց կողմից անմեղադիր կը լինենք: Ողջ եղի՛ր Տիրոջով»:

(Ուխտան., Բ-ԻԱ)

*Վրթանէս Քերթողի նամակը Վրաց Կիւրոն կաթողիկոսին եւ
երկրի իշխաններին՝ Մովսէս եպիսկոպոսի
նամակի խնդրանքով*

«Վրաց սրբասեր կաթողիկոս տէր Կիւրոնին, Ատրնէրսէի եւ Վահան եւ Բգրմէի իշխաններին՝ Վրթանէսից եւ սուրբ եկեղեցու միաբան պաշտօնեաներից Տիրոջով ողջո՛յն:

Նախապէս մեր երանելի հայրապետ Մովսէսը ձեր պատուականութեանը (գրեց) խուժիկ եպիսկոպոսի խաբէութեան մասին, որպէսզի մեր երկու երկրների միջեւ նորոգաձեւում չլինի այն հաւատի, որն սքանչելի հիմնադրութեամբ հաստատուեց աներկիւղ եւ Տիրոջ քաջ տառապեալ սուրբ Գրիգորի կողմից: Արդ՝ մեր հայրերից եւ ուղղափառ վարդապետներից պատուէր ունենք ոչ միայն Նեստորի խմորից հեռանալ ու նգովել, այլեւ (նգովել) Եւտիքոսին, Եւնիմոսին, Մելիրոսին, Մարկիոնին, Մաբէլիոսին եւ այլ նմաններին, եւ առաւելագոյն եւս տիեզերակործան յիշատակութեան անարժան Քաղկեդոնի ժողովը, որոնք ճշմարիտ միաւորութիւնից յետոյ մի Քրիստոսի վրայ բաժանում եւ անջատում սահմանեցին: Այժմ լսեցինք, որ դուք Քաղկեդոնի անօրէն ժողովը ու Լեւոնի անիծեալ տոմարը ուղղափառ էք համարում եւ մեծարանքի արժանի: Որովհետեւ կրթութիւն չունէք քննելու չար հերձուածները, քանզի (դրանք) աւելի չար (ձեռով), քան թէ հրեական ուրացութիւնները, հեռացնում էին ճշմարիտ հաւատից, որ կայ Յիսուս Քրիստոսի՝ մեր Տիրոջ հանդէպ:

Արդ՝ ձեր աստուածասիրութիւնը չպէտք է դրանից աւելի վարդապետութիւն ընդունի որեւէ տեղից, բացի երեք սուրբ եւ անարատ ժողովներից, որոնք ի պատիւ Ամենասուրբ Երրորդութեան զումարեցին երեք հարիւր տասնութը՝ Նիկիայում, հարիւր յիսունը՝ Կոստանդնուպոլսում, եւ երկու հարիւրը՝ Եփեսոսում: Եւ աւելին, քան մեր եւ ձեր հայրերի ու վարդապետների հաւատի այն սահմանն է՝ չենք ընկալել եւ ոչ էլ ընդունում ենք: Իսկ ով ըն-

դունում է կամ նրանց հաւատի ականակիտ ու անբիծ սահմանմանը խառնում է ինչ-որ պղտոր հրապոյրներ, թող իմանայ, որ օտար եւ տարագիր է ուղղափառ հաւատին, քանզի հաւատով ենք սովորում հաճոյ լինել Աստծուն: Որովհետեւ վերջին ժամանակներում ենք (ապրում), որեւէ մէկը չպէտք է երկբայի: Քանզի նախ ապստամբութիւն է գալու, ուսուցանում է երանելի առաքելը, եւ նրա մասին նոյն ինքն էլ պատշաճ պատասխանում. «Եթէ որեւէ մէկը աւելին աւետարանի, քան որ մենք աւետարանեցինք, թող նգովուած լինի»: Քանզի ողջ տիեզերքում ուղղափառների եկեղեցիներում Աւետարանն ընթերցելուց յետոյ Նիկիայում սահմանուած հաւատամքն ենք կարդում, այլ ոչ թէ Քաղկեդոնի ժողովի հայիոյութիւնները: Իսկ եթէ այդպէս է, չպէտք է մեր հաւատի ամբողջ պարիսպը փորենք, որովհետեւ՝ ով հայրենի պարիսպը քանդում է, նրան օձն է խայթում, վկայում է /Սուրբ/ Գիրքը, իսկ ով գլորում է վէմը՝ այսինքն ճշմարիտ հաւատի ճշմարտութիւնը, իր անձը կորստի է մատնում:

Արդ՝ ձեր պատուականութիւնը պէտք է նախանձախնդիր լինի հայրերի ճշմարիտ հաւատին, որ հրաշքներով ու աստուածաշնորհ պարգեւներով առատացաւ մեր երկրում: Եթէ ձեր մտքում ինչ-որ երկբայութիւն կայ, եւ կամենում էք այդ առթիւ փորձ ընդունել, գրեցէ ք մեր երկրի ամբողջապէս փառաբանուած իշխաններին, որպէսզի զամ այդտեղ, եւ ինչպէս հեռաստանից նամակի պատգամով (եմ անում), նոյն կերպ Սուրբ Գրքի առերես վկայութեամբ ցոյց տամ խօսքերիս ճշմարտութիւնը: Ողջ եղէք»:

(Ուխտան., Բ-ԻԲ)

*Վրթանէս Քերթոզլի նամակը Պետրոս եպիսկոպոսին Մովսէս
եպիսկոպոսի խնդրանքով*

«Աստուածաշնորհի պատիւներով պայծառացած փառաւորեալ տէր Պետրոսին՝ Վրթանէսից եւ միաբան սուրբ եկեղեցու պաշտօնեաներից Տիրոջով ողջոյն: Երանելի առաքեալ Պօղոսը գրում է գալիքում լինելիքի մասին, թէ՝ «Ձեզանում հերձուածներ են լինելու, եւ երեւալու (է, թէ) ովքեր են ընտիրները»; Քո պատուականութեան մասին լսեցինք, թէ նախանձախնդիր եւ ճշմարիտ հաւատին եւ սիրող: Որովհետեւ ինչպէս նախկինում մեր երանելի հայրապետ Մովսէսը գրեց քո երկրին, (թէ պէտք է) հեռանալ խուժիկ եպիսկոպոսի խաբէութիւններից, այսօր էլ առաւել եւս պարտաւոր ենք փախչել Քաղկեդոնի անօրէն ժողովի հայիւններից, քանի որ հրէութիւններին է հաւասար: Իսկ այժմ մեզ վիճակուեց անախորժ լուր լսել, թէ ձեր երկրում մեծարանքներ են մատուցում այն անարժան ժողովին: Այդ պատճառով ձեր երկրից մի եպիսկոպոս գնացել է փախստական (ղարձա)/ այդ ժողովի թունաւոր ու իշատակութեան անարժան ամբարտաւանութիւնը ճանաչելով:

Արդ՝ նամակ գրեցինք այդ բաների մասին ձեր կաթողիկոսին ու իշխաններին, որպէսզի հաւատի նորոգաձեւում չլինի երկու երկրներիս միջեւ, այլ մնայ շարունակուի այն, ինչը սուրբ Գրիգորի միջոցով հաստատեց Տէր Աստուած բազմաթիւ հրաշագործութիւններով: Բայց դու առաւելագոյն խաղաղութեան պատճառ եղի՛ր, որպէսզի սուտը կորչի, իսկ ճշմարտութիւնը հաստատուի, եւ եպիսկոպոսն իր տեղը վերադառնայ: Քանզի եթէ այդ այդպէս չլինի, յաւիտենական թշնամի կը մնանք քո երկրի նկատմամբ: Իսկ եթէ գրածներիս միջոցով հակառակութիւնը չվերանայ, գրեցեք մեր երկրի իշխաններին, որպէսզի մեզ այդտեղ ուղարկեն, եւ թող լինի այն, ինչպէս Աստուած է կամենում: Ողջ եղիր»:

(Ուխտան., Բ-ԻԳ)

Թէ ինչու «Գիրք թղթոցում» գրուած չգտնուեց Կիւրոնին, Վրաց իշխաններին եւ Պետրոս եպիսկոպոսին Վրթանէսի նամակի պատասխանը, որը գրեց Մովսէս եպիսկոպոսի խնդրանքով

Այս նամակներին, որ Վրթանէսի կողմից Մովսէս եպիսկոպոսի խնդրանքով գրուեցին Կիւրոնին, վրաց իշխաններին եւ Պետրոս եպիսկոպոսին, «Գիրք թղթոցում» գրուած պատասխան չգտանք ոչ իր (հերթական) եւ ոչ էլ այլ տեղում: Նաեւ ուրիշ տեղերում չկարողացանք գտնել, բացի այլեւայլ առիթներով ու արհամարհանքով Մովսէսի կողմից մի փոքր գրուածից, որ նա գրում է Վրթանէսին իր երկրորդ նամակում, որը սրանցից յետոյ է, եւ յետոյ կը կարդաս իր տեղում: «Այն նամակն, ասում է, որ գրեցիք կաթողիկոս կոչուածին, երկրի իշխաններին եւ Պետրոսին, որը ձեզանից խնդրեցի, իմ սպասաւորը տարաւ: Եւ եկաւ պատմեց, թէ ոչ ոք չյանդգնեց նամակը ներկայացնել: Բայց յետոյ երբ տարան, (Կիւրոնը) նզովել ու նախատել է հայերիս»: Եւ դարձեալ (գրում է), թէ՝ «Բերել տուեցի համառօտ գրուած պատասխանը, հրամայեցէք կարդալ»: Եւ դարձեալ Վրթանէսն է մի քանի խօսքով յիշում Մովսէսին գրուած իր նամակում: «Իմացայ, ասում է, նամակի պատճառը, երբ ինձ պատասխան ուղարկուեց, եւ այն էլ՝ ինչ-ինչ ազատների կողմից»: Եւ դա խորհրդանիշ էր ցաւագարի ու հիւանդի, (ինչպէս) իրենց նամակներում ասում են Մովսէսն ու Վրթանէսը:

Արդ՝ ինձ թւում է, թէ արժանի ու պատշաճ չի համարուել նրանց անարժան ու անընդունելի պատասխաններն արտագրել «Գիրք թղթոցի» մէջ, ուստի եւ մեր կողմից (էլ դրանք) չգտնուեցին ու չգրուեցին, նաեւ յիշատակի ու յիշուելու (անարժան) եղան նրանց եւ մեզ (համար): Բայց կարծում եմ, որ այդ բոլորը Կիւրոնից է եղել, ինչպէս որ եղաւ իսկապէս: Որովհետեւ ոչ միայն իր եւ իշխանների պատասխանը խափանեց, այլեւ Պետրոսինը: Քանզի նա (Պետրոսը) նախանձախնդիր էր աստուածային պատուիրա-

նին, պաշտպան ուղղափառ հաւատին եւ հաւատարիմ մեր կողմին, թէպէտեւ ինքը ազգով ու երկրով նրանցից էր, ուստի եւ Վրթանէսը նրան ուղղուած իր նամակում իբրեւ գովասանք գրում է նրան, թէ՝ «Նախանձախնդիր ես, ասում է, եւ ճշմարիտ հաւատը սիրող»։ Բայց նաեւ մեղադրանք է գրում երկրի մասին, թէ՝ «Լուր հասաւ մեզ, որ ձեր երկրում մեծարանքներ են մատուցում Քաղկեդոնի ժողովին, բայց թող մեր եւ ձեր երկու երկրների մէջ նորոգաձեւում չլինի»։

Սակայն չգիտենք ստոյգ պատճառը, թէ ինչպէս եւ կամ ինչի համար Պետրոսն իրեն ուղղուած Վրթանէսի նամակին պատասխան չգրեց։ Թէպէտեւ կասկածանքով Կիւրոնի մասին ասացինք, բայց կարծում եմ, թէ մեզ համար բնաւ որեւէ պիտանի բան չգրուեց, քանզի իրենց ստահակութեան եւ ըմբոստութեան պատճառով հարկադրուեցին չգրել, բացի այն անպիտան եւ անմիտ պատասխանից, որ համառօտ խօսքերով քիչ թէ շատ յիշատակում են Վրթանէսը եւ Մովսէսը իրենց նամակներում, որ (գրեցին) միմեանց։

Արդ՝ երբ Կիւրոնին գրուած Վրթանէսի նամակները Մովսէսի սպասաւորի կողմից տարուեցին երկրի իշխաններին եւ Պետրոսին, Կիւրոնը Մովսէսի (մասնակցութեան) պատճառով կասկածի մէջ ընկաւ, թէ գուցէ (գրուածն) իր համար միջնորդութիւն է եւ միաժամանակ հաւատի խնդրով խրատ ու մեղադրանք, ինչպէս որ էր իսկ, /եւ/ ներքին բարկութիւնից ու սրտի գայրոյթից իբրեւ յարբած եւ խելակորոյս վիճակում փսխած, կամ թէ ասես ցոփացած, լուռ ու մունջ, մտքի մէջ մոմռալով, մրթմրթալով ու մոնչոցով սպառնում էր, ասում է, եւ մրոտուած ու սեւացած էր դէմքով։ Եւ անդուռ բերանով ու լեզուով նենգաբար խօսում էր եւ ասում. «Այս նամակը Երուսաղէմ քաղաքի հայրապետին կը տամ տանել, (որպէսզի) նա պատասխանի»։

Եւ այդպէս ձգտում, գնում էր խորը եւ խաւարի միջից էր խօսում, որովհետեւ հոգու աչքը խաւարել էր, մարմնի միտքը

մթնել, թողել էր Աստծուն եւ ապաւինել մարդկանց՝ Հռոմի թագաւորին եւ Երուսաղէմի հայրապետին: (Հէնց) այնտեղ ասաց, թէ «Թող Աստուած փառաւորի արքային, որովհետեւ նա փառաւորուեց». իսկ այստեղ էլ. թէ «Երուսաղէմ քաղաքի հայրապետին (նամակը) կը տամ տանել, (որպէսզի) նա պատասխանի»: Եւ սա ոչ միայն Կիւրոնն էր սպառնում ու ասում, այլեւ (նրա) բոլոր մօտիկները. եպիսկոպոսները, քահանաները, իշխանները, շինականները. նախարարները եւ խորհրդականները, միեւնոյն մտքով վառուած՝ բարկությամբ բորբոքուեցին: Եւ առհասարակ ամենքը խռովուեցին. սասանուեցին որպէս յարբաճներ. եւ նրանց ողջ իմաստութիւնն ընկղմուեց. որի մասին մարգարեն մեղադրելով ասում էր. «Վա՛յ ձեզ. որ յարբած էք եւ (այն էլ)՝ ոչ գինուց»:

(Ուխտան., Բ-ԻԴ)

Մովսէս եպիսկոպոսի երրորդ նամակը Վրթանէս Քերթողին

«Սրբասէր տէր Վրթանէսին՝ անարժան Մովսէսից Տիրոջով ողջո՛յն: Այն նամակները, որ գրեցիք կաթողիկոս կոչուածին. երկրի այլ իշխաններին եւ Պետրոսին, որ խնդրեցի ձեր սրբութիւնից, տուեցի իմ սպասաւորին տանելու: Եւ այժմ (նա յետ) եկաւ: Բայց հոգնածութիւնից չկարողացաւ մեզ մօտ գալ եւ պատմել, թէ ինչպէս ոչ ոք չյանդգնեց ներկայացնել նամակը կաթողիկոս կոչուածին: Ապա թէպէտեւ ի վերջոյ տարան, նամակն ընթերցելուց յետոյ (նա) սաստիկ բարկութիւնից գրգռուած, զայրացած սրտով եւ այլազանած՝ ցաւագարի նման նզովում ու նախատում էր, ասում է, հայերին: Եւ նամակի պատասխանը ոչ ինքը գրեց եւ ոչ էլ որեւէ մէկին գրել տուեց: «Սա կը տամ տանել Երուսաղէմ քաղաքի հայրապետին, ասաց, (որպէսզի) նա պատասխանի»:

Բայց ովքեր որ մի փոքր պատասխանել են, /նամակները/ բերել տուի քեզ՝ (իմ) տիրոջը: Հրամայեցէ ք կարդալ, եւ մեզ էլ հա-

դորդեցէ՛ք, թէ ինչ է գրուած: Ձեզ երկար չարչարեցի, Աստուած թող վարձահատոյց լինի, Բայց, աղաչում եմ մի՛ ձանձրանաք: Եւ ինչ ձեռով /էլ լինի/. թող ձեզ յանձնուի այն մոլորուած երկիրը եւ իմ տառապեալ անձը: Եւ նամակի միջոցով վերստին քաջալերիր մեզ:

Ողջ եղիր Տիրոջով»:

(Ուխտան., Բ-ԻԵ)

*Մովսէս եպիսկոպոսի երրորդ նամակի պատասխանը
Վրթանէս Քերթողի կողմից*

«Ձեր սրբութեան ողջոյնը լսեցի եւ ուրախացայ: Իմացայ նաեւ նամակի պատասխանն ինձ ուղարկելու պատճառի մասին: Բայց այն, ինչ իսկապէս գրել են ինձ ազնուականներից ոմանք, այնպէս է, (ասես) ոմանք ինչ-որ հիւանդութեան մէջ ընկած՝ չեն հասկանում, թէ ինչ են խօսում: Ասում են՝ «Մենք ունենք եւ այս հաւատը, ե՛ւ այդ օրէնքները, ե՛ւ այստեղ ենք հաղորդակցւում, եւ այդտեղ: Եթէ Մովսէսը կամենում է, թող գայ, այս կաթողիկոսին հնազանդ լինի, որովհետեւ դրանից (տարագրութիւնից) հաճելի է այս, եւ իր տեղը կը գրաւի»:

Արդ՝ աւելորդ եմ համարում որեւէ բան ասել: Այս ամբողջ թող պահուի Աստծոյ զօրութեան համար: Բայց ինչ վերաբերում է մեր երկիրն անիծելուն եւ պարսաւելուն, ինչպէս որ այլ կորստեան աստուածառաք բարկութեանը հիւրընկալ եղան, նմանապէս նաեւ այդ յանդգնութիւնն արեցին՝ իրենց անձերին անբուժելի վերքեր հասցնելով եւ իրենք իրենց խոցոտելով: Մենք հեռու ենք այդ անէծքից: Իսկ դո՛ւ, տէր, աղօթիր եկեղեցիներում, քանզի պնդել են, որ առաջնորդ նշանակենք: Եթէ մեր Տէր Աստուածն օգնի՝ այս գործն աւարտին հասցնելու, ապա գիտենք, որ ձեր

կամքն այնպես կը կատարուի ինչպես Աստծոյ ողորմութեանը յարմար կը լինի:

Ողջ եղի՛ր, տէր իմ»:

(Ուխտան., Բ-ԻԶ)

*Վրթանէս Քերթողի նամակը Մովսէս Յուրտաւի
եպիսկոպոսին, որն այժմ Գաջենք (է կոչուում)՝ հաւատի եւ
վերստին հաստատ մնալու մասին:*

(Ուխտան., Բ-ԻԸ)

*Ինչ որ եղաւ Վրթանէսի նամակներից յետոյ, որ խնդրել էր (գրել)
Մովսէսը հաւատի խորհրդի եւ այլ բաների վերաբերեալ*

Արդ՝ Վրթանէսը նրան այս բաները պատմեց այն խնդրի մասին, որն իր երրորդ նամակում էր (արծարծուած)՝ հաւատի եւ Քաղկեդոնի անօրէն ժողովի կողմից (այն) խախտուածը կրկին հաստատելու վերաբերեալ, որը վերստին հաստատուեց բարեպաշտ թագաւորներ Զենոնի եւ Անաստասի շնորհիւ, նաեւ՝ դրանից յետոյ եղածի եւ այլ բաների, որ Կիւրոնի եւ վրացիների մասին են, որ (մեր կողմից) պատմութեան շարադրանքում նախքան սա եւ հէնց սոյն (գլխում) յարմարեցուեցին:

Եւ ուրիշ բազմաթիւ վարդապետական խօսքերով զօրացնում էր նրան: «Դու, ասում է, մի զարմանար, ո՛վ իմ տէր, որովհետեւ հասել ենք վերջին ժամանակներին, ուստի պէտք է կատարուն Պօղոսի գրածները, որն աստուածագոչ ձայնով աղաղակում է ամենուրեք, բոլոր տեղերում, թէ՛ «Վերջին ժամանակներում ոմանք կը հեռանան հաւատից»: Եւ դարձեալ, թէ՛ «Յայտնուելու է անօրէն մարդը (Նեռը)՝ կորստեան որդին՝ հպարտացած հակա-

ռակոորդը»: Եւ դարձեալ, թէ՛ «Շատ Նեռեր արդէն եկել են»: Եւ մի այլ տեղում (էլ ասում է), թէ՛ «Հերձուածներ են լինելու ձեգանում», եւ այլ բաները եւս:

Եւ սրանց նման այլ խօսքեր էր յիշեցնում նրան եւ շատ այլ խօսքերով մխիթարում նրան ու զօրացնում: Եւ թելադրելով նրան՝ խոստանում էր սատար կանգնել նրան մինչեւ գործի աւարտը, եւ ուրիշ այլ խօսքեր:

(Ուխտան., Բ-ԻԹ)

Վրթանէս Քերթողի մասին

Վրաց բաժանման ժամանակ (Վրթանէսը) մեծ ջանքով ու չարչարանքով եւ հոգեւոր հոգացողութեամբ վշտակից եղաւ իբրեւ Յիսուս Քրիստոսի բարի զինուոր, զուգակից առաքելական քարոզութեան եւ սուրբ վարդապետներին հաւասար: Յուրտաւի Մովսէս եպիսկոպոսին ցաւակից լինելով՝ (նա) մշտապէս նամակի միջոցով մխիթարում էր նրան եւ բազմաթիւ խօսքերով խրատներ էր տալիս, եւ ինչը որ հալածուածներին ու համբերողներին երանի էր՝ այն էր գրում նրան նամակում՝ թղթերի պատասխանում, որն արեց երեք անգամ: Նաեւ Կիւրոնին գրեց ու երկրի իշխաններին՝ նրա (Մովսէսի) վերաբերեալ:

(Ուխտան., Բ-ԼԴ)

Արդ՝ երբ եպիսկոպոսները եւ վանացերեցները եկան հաւաքուեցին (16), (ասեա) իսկ եւ իսկ (երկնային) բարձունքից նայող վսեմական կամքով՝ Աստծոյ հրամանով էին հրաւիրուել ու հասել հոգեւոր հարսանիքի, որտեղ պէտք է իրենց համար հայրապետ ընտրեին նրան, որին ընտրել էր Սուրբ Հոգին: Իսկ երբ եկան՝ հաւաքուեցին առհասարակ բոլորը՝ եպիսկոպոսները եւ վանացերեցները եւ գիւղական քահանաները, իշխանները եւ շի-

նականները, եւ (այդ) հարսանիքը լցուեց արժանաւորների բազմութեամբ: Բայց Կիւրոնը չկանչուեց այդ հարսանիքին, քանզի խոտան համարուեց երկակի կորստեան համար, որ հասել էին նրան այն ցաւերից, որ նախկինում յղացել էր, որով եւ անօրէնութիւնը ծնեց...

Եւ դարձեալ ապա (ժողովականներն) իրենց դրած ուղղափառ խոստովանութեան կանոնները վերստին հաստատեցին՝ ի փառս Աստծոյ: Եւ սրա (Աբրահամի) ժամանակ եղաւ Վրաց բաժանումը Հայոց միաբանութիւնից: Եւ նգովեցին Քաղկեդոնի աղանդը, որ նգովում են բոլոր ուղղափառ եկեղեցիները:

(Ուխտան., Բ-ԼԵ)

Հայոց թագաւորութեան վերանալու ժամանակ մեր երկիրը բւսածանուեց հոռոմների ու պարսիկների միջեւ: Հոռոմների բաժնում նստեցրին Մովսէսին հակաթոռ ուն երկաբնակ Յօհանի, որը Հայոց հայրապետների շարքում չհամարակալուեց: Սա յետոյ նաեւ Աբրահամին հակաթոռ եղաւ: Եւ այն եպիսկոպոսները, որոնց մասին նախորդ մի ճառում (գլխում) խօսեցինք, թէ յոյների բաժնից էին եկել, նրանց մասին մի փոքրիկ կասկած կար, թէ մի գուցէ Կիւրոնի անունն ու յիշելու անարժան յիշատակը ժառանգած լինեն, (եւ) մտածեցին ձեռնարկ տալ Հայոց կաթողիկոս Աբրահամին:

(Ուխտան., Բ-ԼԶ)

Այսուհետեւ նորից կը վերադառնանք մեր խօսքի շարադրանքին, որ վերաբերում է Մովսէսին ու Կիւրոնին: Որովհետեւ Մովսէսը՝ Գաջենքի այս եպիսկոպոսը, չի յիշատակում «Գիրք թղթոցում», թէ նա եկել է այն ժողովին, որը Աբրահամի ձեռնադրութեան համար եղաւ: Թէպէտեւ (իր) տեղում բազմաթիւ անգամ տեղեկացանք, թէ ասում են, որ նրան հիւանդութիւն էր պատահել:

Բայց յետոյ (նա) Աբրահամին (նամակ) է գրում՝ իմաց տալով նրան իր նեղութիւնների ու հալածանքների մասին, որ պատճառում էր Կիրոնը, միաժամանակ նաեւ Յուրտաւի աշխարհի մասին, նաեւ աղաչանք՝ Կիրոնի վերաբերեալ, իսկ մնացեալ տեղեկութիւնն, ասում է, կարելի է Վրթանէսից լսել:

(Ուխտան., Բ-Խ)

*Յուրտաւի Մովսէս եպիսկոպոսի նամակը
Հայոց կաթողիկոս Աբրահամին*

... Մենք էլ աղաչում ենք, որ դուք օգնէք Քրիստոսի եկեղեցուն: Կիրոնը, որ ձեր հաւատակիցն էր ու աշակերտը եւ այժմ հիւանդացել է նեղութիւնից, նախ աղօթքներով խնդրենք Աստծուց եւ ապա ձեր անխոնջ վարդապետութեամբ եւ փառաւորութեամբ իշխանների օգնութեամբ ջանանք ժողովրդին ժխտողին ու ապստամբին վերադարձնել (ճիշտ) ուղղութեան եւ բերել մի հովուի նոյն գաւիթը: Եւ շտապենք այսուհետեւ (դէպի այն), ինչն ընդհանուրի շահն է, դէպի շատերի չափազանց բարձրացման՝ ըստ երանելի Մովսէսի եւ սուրբ Պօղոսի օրինակների: Նրանցից մէկն աղաչում էր իւրայինների՝ թողութեան չհասնելու դէպքում իրեն ետ կենաց դպրութիւնից տարագրել, իսկ միւսն ասում էր, թէ՝ «Ես ինքս էլ ուխտով խնդրում էի Քրիստոսից՝ ինձ նզովել իմ մարմնական եղբայրների ու ազգակիցների համար»: Եւ ահա նրանց առաքինութիւնն աշխարհի բոլոր ազգերի մէջ քարոզի խօսքով տարածուում է պայծառացած: Որովհետեւ նրանց գործը օրինակ ընդունելով եւ նրանց հետեւող (լինելով)՝ կը լինի (այնպէս, որ) դուք եւս կը պարծենաք Քրիստոսով եւ կասէք, թէ Տիրոջից ինձ տրուեցին այս շնորհները՝ Վիրքից մինչեւ Աղուանից աշխարհ քարոզելու Քրիստոսի փառքի անքննելի մեծութիւնը եւ այսքան ազգերի շահելու եւ Քրիստոսին պատարագելու: Որից

յետոյ էլ կը լսուի այն հրաւիրող խօսքը, թէ՛ «Բարի եւ հաւատարիմ մշակ, քեզ հետ միասին սատարող այս բարեկամներով եւ փրկուած գնդով ե՛կ մտի՛ր քո Տիրոջ խնջոյքին քո նախնիների եւ իմ անունը սիրողների հետ»:

(Ուխտան., Բ-ԽԱ)

*Յուրտաւի եպիսկոպոս Մովսէսի նամակի պատասխանը
Հայոց կաթողիկոս Աբրահամի կողմից*

... Արդ՝ աղաչում եմ ձեր սրբութեանը, որ չդադարէք աղաչանքներ մատուցել ամենագոր Աստծուն, որ ինձ ուժ ու կարողութիւն տայ՝ ըստ իր հաճութեան աւելի կատարեալ դարձնելու նրա տնօրինութիւնը մեր երկրում, որպէսզի նմանապէս եւ Վրաց ու Աղուանից երկրներում պայծառանայ Յիսուս Քրիստոսի ճշմարիտ հաւատը մեր՝ նուաստիս միջոցով: Եւ կամենում եմ օրհնուել ձեր սրբութեան կողմից, ուստի մի՛ յապաղիր սուրբ Զատկին այստեղ գալու, որպէսզի շատերին ուրախութիւն լինի: Նաեւ Կիւրոնի ու վրացիների հոգեւոր գործն է առջեւում. քանի դեռ տէր Սմբատն այստեղ է, շտապում ենք որեւէ ձեւով նախ դա (էլ) աւարտին հասցնել մեր հրամանով ու գրով, մեր Քրիստոս Աստծոյ շնորհիւ: Ողջ եղիր»:

(Ուխտան., Բ-ԽԲ)

*Թէ ինչու Յուրտաւի եպիսկոպոսը չեկաւ եպիսկոպոսների
ժողովին, որ Աբրահամի ձեռնադրութեան համար (էր)*

Այս առաջին նամակը, որ Աբրահամին գրուեց Յուրտաւի Մովսէս եպիսկոպոսի կողմից, ութ ամիս անցնելուց յետոյ գրուեց, որովհետեւ ասում են, (որ) նա այն ժամանակ մերձիմահ հիւանդացել էր, եւ այդ պատճառով ժողովի չկարողացաւ գալ, նաեւ ոչ իսկ գրաւոր իմաց տալ կարողացաւ իր ցաւի ու հալածանքների մասին Կիւրոնի կողմից. (Նա) առաջ ամբողջութեամբ վստահում էր Վրթանէսին եւ յոյս ունէր, որ նա սատար կը լինի, քանի որ իր պատասխանի միջոցով յայտնել էր նրան, թէ մօտ օրերս կամենում են կաթողիկոս ձեռնադրել, (եւ թէ) քո հոգսը նա կը հոգայ, իսկ մենք կօգնենք մինչեւ գործի աւարտը:

Իսկ երբ Աբրահամը Մովսէսի նամակը կարդաց եւ Կիւրոնի ու վրացիների մասին գրածին փոքր ինչ տեղեկացաւ, այդ ժամանակ Վրթանէսը սկսեց ամեն ինչ գրաւոր ու բանաւոր պատմել Կիւրոնի կողմից արուածների մասին՝ կաթողիկոսին վերահասու դարձնելով նախ Կիւրոնին Մովսէսի ուղարկած այն նամակի մասին, որ վերաբերում էր խուժիկին, եւ ապա Կիւրոնի կողմից Մովսէս եպիսկոպոսին (պատճառած) նեղութիւնների ու հալածանքների մասին, եւ դրանից յետոյ՝ այն նամակների, որ (ինքը) գրեց Կիւրոնին, (Վրաց) երկրի իշխաններին ու Պետրոս եպիսկոպոսին, եւ պատասխան չստանալու (մասին), նաեւ՝ Կիւրոնի հակառակ պատասխանների, որ ոչ գրաւոր, բայց շատ խօսքերով ու սպառնալիքներով տուել էր նա, նաեւ՝ ազատների կարճ պատասխանների (մասին), որ կիսատ նամակով գրաւոր գրել էին Վրթանէսին, ու նաեւ՝ արքայի (կայսեր) հասցէին Կիւրոնի (հնչեցրած) մեծարանքների եւ պարծենալու (մասին), եւ Երուսաղէմի հայրապետով սպառնալիքների եւ մնացեալ ամեն բանի մասին՝ մի առ մի:

Այս ամենը Վրթանէս Քերթողից լսելով՝ Աբրահամ կաթողիկոսը խիստ զարմացաւ եւ իր սրտի խորքում մտածում ու խորհում էր, թէ ինչ ձեւով շահի Կիւրոնին եւ այն երկիրը, կամ ինչ եղանակով յաղթի գոռոզ վայրագին: Ապա Մովսէս եպիսկոպոսին ուղղած իր պատասխանում գրեց, որ արագ ու անյապաղ սուրբ Զատկին գայ այստեղ, որպէսզի՝ շատերն, ասում էր, ուրախ լինեն, նաեւ հոգեւոր գործ կայ անելու: Եւ դարձեալ, թէ՝ «Տէր Սմբատն այստեղ է, եւ շտապում ենք որեւէ ձեւով գործերը զուխ բերել»:

Եւ (այն), որ գրեց սուրբ Զատկին գալու (մասին), դա Աբրահամի երկրորդ Զատիկն էր՝ կաթողիկոսութեան աթոռին նրա հասնելուց (յետոյ): Իսկ այն, ինչ Սմբատի մասին էր գրում, թէ այստեղ է, թում է, թէ (Սմբատը) պատրաստուում էր գնալու Վրկանայ երկիրը, որտեղ մարգպանական իշխանութիւն ունէր:

Արդ՝ սա առաջին նամակն (էր, որ) Մովսէսը Հայոց կաթողիկոս Աբրահամին գրեց մեծ թախանձանքով, որպէսզի սա օգնի իրեն ամեն բանում, ինչպէս ասուեց: (Գրեց) նաեւ Կիւրոնի վերաբերեալ բազմաթիւ մեղադրանքներ, եւ իր ակնկալութիւնը ապագայի յոյսի, որ ունէր: Եւ հոգում էր առաջիկայ անելիքի մասին, որպէսզի գուցե կարողանայ դեպքերի դէմ հնար գտնել: Որովհետեւ սրտի բազում տառապանքից ու նեղութիւններից տառակուսանքի մէջ մտահոգուած էր՝ մեկ՝ իր հալածանքների պատճառով, չնայած եւ Աստծու համար /էր դա/, իսկ միւսը՝ իր վիճակի (թեմի) անտերունչ լինելու համար, որ չլինի թէ նրանց այլագունակ բան պատահի (ինչպէս որ Կիւրոնին եղաւ), որն Աստծոյ կամքից դուրս լինի: Իսկ երրորդը՝ Կիւրոնի կորստի ու անդարձութեան պատճառով:

(Ուստի) եւ հայցում է մեծ աղաչանքով, որ (Աբրահամն) իրեն սատարի գրով /նամակով/ եւ օգնական լինի աղօթքներով, իսկ Կիւրոնին գրածները /մի/ արի մարդու միջոցով ուղարկի, որպէսզի քանի դեռ իսպառ չի գլորուել (Կիւրոնը), կարողանայ կանգ-

նեցնել (նրան): Այլեւ (հայցում է) իր եւ իր երկրի համար հոգալ՝ երկուսի նեղութիւնն (էլ) ներկայացնելով:

Ապա այնուհետեւ Աբրահամը սկսում է գրել Կիւրոնին եւ ամեն ինչ գրով յիշեցնում նրան իրաւացի պատգամի միջոցով՝ այսպիսի օրինակով.

(Ուխտան., Բ-ԽԳ)

*Հայոց կաթողիկոսի առաջին նամակը Վրաց կաթողիկոս
Կիւրոնին՝ Պետրոս եպիսկոպոսի եւ այլ ազատների միջոցով,
եպիսկոպոսի խնդրանքով*

«Վրաց կաթողիկոս սրբասէր տէր Կիւրոնին եւ քո այլ աթոռակից եպիսկոպոսներին՝ Հայոց կաթողիկոս Աբրահամից եւ այլ եպիսկոպոսներից Տիրոջով ողջո՛յն:

Նախկինում մեր երանելի հայրապետ Մովսէսը ձեզ մեղադրութիւն գրեց՝ այնպիսիների հետ ձեր հաղորդակցուելու պատճառով, որ պէտք չէր (հաղորդուել): Իսկ դուք գրաւոր եւ պատգամով յանձն էիք առել մեր երկրի միաբանական հաւատի հաղորդակցութիւնից չհեռանալ: Արդ՝ այժմ աւելի չարը եւ ծանրը մեզ բաժին ընկաւ լսել: Քանզի երկու երկրների հաւատի միասնութիւնը եւ փոխհիրընկալութիւնը Յուրտաւի եկեղեցին էր անխախտ միջնորդութեամբ պահում, ուստի եւ մեր աշխարհիկ խնդրութիւնը եւ հոգեւոր հաղորդութիւնը ցնծալից ուրախութեամբ էին կատարում՝ այստեղից ձեր Մծիխթայի Խաչը գալով, իսկ այդտեղից՝ (մեր) Սուրբ կաթողիկէն: Այժմ Յուրտաւի եկեղեցու եպիսկոպոսը հալածուած է՝ (մեղադրուելով), թէ՝ «Ինչո՞ւ ես հրամայում խոստովանել ուղղափառութեան հաւատը եւ սուրբ Շուշանիկի հաստատած հայրենի ծիսակարգը», (որն), ինչպէս լսում եմ, խափանել էք:

Մեզ մահու չափ եւ էլ աւելի ծանր երեւաց (ձեր) այդ գործը: Որովհետեւ թէպէտեւ արքայից արքայ Կաւատի տարիներին քննութեան հարց եղաւ մեր եւ հռոմէացիների երկրի միջեւ, որոնք ընդունել էին Քաղկեդոնի ժողովն ու Լեւոնի տոմարը, (սակայն) մեր եւ ձեր երկրների վարդապետներն ու իշխանները հեռացան նրանց հետ հաղորդակցուելուց, եւ երկուսիս միաբանութեամբ ու (նաեւ) գրով պահուում է /դա/ մեր միջեւ մինչեւ այժմ: Արդ՝ այժմ դուք չպետք է երկու երկրներիս միջեւ օտարութիւն գցէք եւ հեռացնէք մարմնաւոր սերն ու խնամիութիւնը եւ հոգեւոր հաղորդութիւնը, որպէսզի ոչ ոք չգայ աղօթելու այստեղից ձեր Սուրբ Խաչը եւ այդտեղից՝ (մեր) Սուրբ կաթողիկէն: Քանզի եթէ զինուորականներից մէկը դառնար այդպիսի պառակտման ու չար խռովութեան պատճառ, (ապա) դուք (անձամբ) պետք է խնամք տանէիք եւ պատճառ դառնայիք խաղաղութեան, իսկ եթէ դու ես պատճառ դառնում միմեանցից մեր օտարանալուն, /էլ/ ո՞վ կը կարողանայ տանել այդպիսի աղետը:

Կամենում էինք եպիսկոպոսներ ու վարդապետներ ուղարկել ձեզ մօտ եւ ճանաչեցնել ձեզ Քաղկեդոնի աղանդի ու Լեւոնի տոմարի վնասակարութիւնը եւ նրանց պիղծ կրոնն ու անսուրբ վարքը, որ (ձեր) աշխարհ մուտք գործեցին եւ դրա պատճառով հալածուեց սրբասէր Մովսէս եպիսկոպոսը: Բայց առայժմ պատշաճ ու հաճոյ համարեցինք՝ նախ Պետրոս եպիսկոպոսի ու պատուական ազատներիդ միջոցով քեզնից նամակներով պատասխան ստանալ, թէ կա՞յ (արդեօք) ինչ-որ բան, որ մեզ հաւաստի չի ցոյց տրուել: Որովհետեւ ի՞նչ /բան/ է օտար արքայից արքայի թագաւորութեան ներքոյ (գտնուող) ծառաների հետ սեր ու միաբանութիւն անել, իսկ հարազատներին հեռացնել, դա շատ ծանր է:

Ողջ եղիր Տիրոջով: Եւ նամակի պատասխանը եւ ձեր ողջութիւնը թող մենք լսենք՝ ըստ Աստծոյ հաճոյութեան, որ առիթն է միաբանութեան»:

(Ուխտան., Բ-ԽԴ)

*Վրաց կաթողիկոս Կիրոնի պատասխանը Հայոց կաթողիկոս տէր
Աբրահամի առաջին նամակին*

«Իմ սրբասէր տէր Աբրահամին՝ Հայոց կաթողիկոսին, եւ քո բոլոր աթոռակից եպիսկոպոսներին Վրաց կաթողիկոս Կիրոնից խոնարհ երկրպագութիւն եւ սիրով ողջո՛յն. նաեւ իմ աթոռակից բոլոր եպիսկոպոսներից՝ կրկնակի խոնարհութեամբ ողջոյն ու օրհնութիւն ձեզ մեր Սուրբ Խաչից: Ձեր գրած նամակին վերահասու եղայ եւ երանելի սուրբ Գրիգորի աթոռը ժառանգելուն (ձեր)՝ իմ տիրոջ արժանի լինելու առիթով եւ ձեր ողջութեան համար մեծապէս ուրախացայ եւ Աստծուց գոհ եղայ:

Իսկ որ գրուած էր, թէ՝ «Նախկինում մեր Սովսէս կաթողիկոսը ձեզ մեղադրութիւն գրեց՝ այնպիսիների հետ ձեր հաղորդակցուելու պատճառով, որոնց հետ թոյլատրելի չէր (հաղորդուել), (ապա իրօք նա) գրեց մեզ խուժիկի մասին, բայց ոչ թէ հաւատի ինչ-որ խնդիրների մասին: Ես իմ եպիսկոպոսների եւ երկրիս երեւելիների հետ խորհրդակցեցի (եւ) օրինական համարեցի դէն չնետել նրանց, ովքեր վերադառնում են գղջման եւ ապաշխարութեան եւ հերձուածից դէպի հաւատը: Բայց երբ իմացանք նրանց դարձը դէպի իրենց չար տիղմը, նզովեցինք եւ հեռացրինք եկեղեցուց, եւ այժմ նրանց ոչ ոք չի յանդգնում ողջոյն տալ:

Իսկ որ գրել էիք, թէ Յուրտաւի եկեղեցին հաստատուած է երկու երկրներիս միջեւ հոգեւոր խաղաղութեան եւ մարմնաւոր սիրոյ համար, եւ /թէ/ այժմ ուղղափառութեան պատճառով եպիսկոպոսը հալածուած է, իսկ մենք փոխել ենք հայրենի ծիսակարգը, (ապա իրականում) ծիսակարգը չի փոխուած, բայց ով որ եպիսկոպոս եղաւ, (նա) վրացի ուսումը եւ գիտէ եւ երկու լեզուով է արարողութիւնը կատարում: Իսկ ինչ վերաբերում է Յուրտաւի եպիսկոպոսի հալածմանը, (ապա) իր գործերն են ցոյց տալիս ուղղափառ հաւատի համա՞ր է գնացել, թէ՞ այլ բանի պատճառով:

Ես նրան չեմ հալածել, այլ կանչել եմ ինձ մօտ՝ խրատ տալու, իսկ նա եկեղեցին թողեց եւ գիշերով գաղտնի գնաց:

Իսկ այն, որ գրուած էր հաւատի, ժողովի եւ տոմարի վերաբերեալ, եւ դարձեալ, թէ՝ «Օտար արքայից արքայի ծառաների հետ միաբանուել, իսկ հարազատներին հեռացնել», (ապա) մեր եւ ձեր հայրերը արքայից արքայի իշխանութեան տակ էին եւ Երուսաղէմի հաւատն ունէին, եւ դուք եւ մենք՝ նոյնպէս: Եւ արքայից արքայ է տիրում (ե՛ւ) հոռոմներին, եւ Արեաց աշխարհին: Եւ այնպէս չէ, ինչպէս դուք էիք գրել, թէ (շատ) տարբեր թագաւորութիւններ են, (եւ) թէ՝ «Թող Աստուած փառաւորի արքային, քանի որ նա ինձ փառաւորեց»:

Իսկ որ գրել էիք, թէ կարող էինք եպիսկոպոսներ ու վարդապետներ ուղարկել, որ գային սովորեցնեին, (ապա) եթէ կամենում էք, ուղարկեցէք թող գան: Ես էի պարտաւոր գալ, աղօթել ձեր սուրբ եկեղեցիներում եւ ձեր կողմից օրհնուել, կամ իմ աշակերտներին ուղարկել, որ ձեր սրբութեան ողջոյնը մեզ բերէին: Բայց չար ժամանակի եւ երկրիս կարիքների պատճառով խափանեցինք /դա/:

Ողջ եղէք, իմ տէր Քրիստոս Աստծով»:

(Ուխտան., Բ-ԽԵ)

*Այն մասին՝ ինչ որ եղաւ Աբրահամի ու Կիւրոնի
նամակներից յետոյ*

Հայոց կաթողիկոս տէր Աբրահամը տեսաւ Կիւրոնից (եկած) պատասխան նամակը եւ սրա մէջ իմացաւ Կիւրոնի նենգութիւնը, որ դեռեւս իր չար խմորը ծածկել էր իր մէջ, այսինքն՝ հրեական նենգութիւնը (որ ունէր Քաղկեդոնի անօրէն ժողովից), որը քիչ-քիչ յապաղումով չարից գողացուեց, որպէս նրա բարքն է, կամ թէ փոքր-փոքր եղաւ նրա կուրուրիւնը, ինչպէս այն ժամա-

նակ իսրայելցիներին: Որովհետեւ երկարատեւ հիւանդի նման հէնց սկզբում իր մէջ իր ցաւն է ցոյց տալիս, որը մահիճն էր գցել, տեսնողներին կարծել է տալիս, թէ մերձիմահ է: Նմանապէս եւ սա, որովհետեւ տալիս էր այն պատասխանը, ինչ որ Մովսէսի օրօք տալիս էր Հայոց կաթողիկոսին. «Ես, ասում է, իմ խորհրդակիցների հետ միասին օրինական համարեցի չարգելել նրանց, ովքեր ապաշխարութեան են գալիս»: Եւ դարձեալ, թէ «Յուրտաւի եպիսկոպոսի հալածման պատճառի մասին իր գործերն են (իրեն) հալածել»: Եւ դարձեալ, թէ՝ «Մեր եւ ձեր հայրերը արքայից արքայի իշխանութեան (ներքոյ) էին եւ Երուսաղէմի հաւատն ունէին, եւ արքայից արքայ է տիրում հոռոմներին ու Արեաց երկրին», եւ սա այնպէս (է ասում), կարծես թէ նրանով պարծենում է: Ապա այդ ժամանակ մի փոքր իմացնում է նրան ծածկած չարութեան մասին, որ այս խօսքերի մէջ է:

Իր երկրորդ նամակում դարձեալ գրում է նրան՝ մի փոքր յանդիմանական խօսքեր ի յայտ բերելով: «Այն, ասում է, ինչ ընդդէմ ու հակառակ էիք կրել, իմացանք, բայց մենք հակառակ պատասխանը կը թողնենք, որովհետեւ Աստուած մեզ կոչեց խաղաղութեան, իսկ մենք մեր անձի օգուտը չենք որոնում, այլ ընդհանուրի, որպէսզի ապրեն: Իսկ դուք մի՛ պարծենաք Երուսաղէմի պանծալի անունով, որից աստուածային փառքը կողոպտեցին եւ բազմաթիւ հերձուածներ սերմանեցին ու եկեղեցի մտցրեցին, որն այժմ (եւ) դուք ունէք եւ (դրանով) պարծենում էք: Արդ՝ մի՛ պարծենաք այն հաւատով, որ դրուեց Երուսաղէմում, եւ մեզ /հետ/ միաբան այն պահպանած լինելով, որովհետեւ գիտենք, որ միաբան էինք, բայց այժմ միայն մենք ունենք Երուսաղէմի (հաւատ)/, իսկ դուք, ուրիշները եւ Երուսաղէմի բնակիչները փոխուեցիք, իսկ մենք՝ ոչ»:

Բայց նա թէպէտեւ այսպիսով եւ այսպիսի խօսքերով յանդիմանուեց, սակայն չխրատուեց, որովհետեւ անիրաւ էր եւ պատասխանելու մէջ պատրաստ, ծոյլ (էր) բարի գործերի (համար)

եւ պատրաստակամ՝ գործելու չարիքը, որն ուներ: Եւ ոչ մէկի համար օգտակար բան չէր մտածում, ո՛չ իրեն, եւ ո՛չ էլ ընկերոջ, քանզի անգէտ էր Աստծոյ արդարութեանը, (միայն) իրենն էր փորձում հաստատել: Քանզի ո՛չ (Սուրբ) Գիրքը գիտէր, ո՛չ էլ Աստծոյ զօրութիւնը, որովհետեւ Աստուածաշունչ գրքերը մեզ մշտապէս պատմում են մեր եւ մեր ընկերոջ պէտքական օգուտի մասին խորհել, խաղաղութեան հետեւից գնալ եւ ծոյլ լինել չարիքի նկատմամբ, քանի որ միեւնոյն բանն է վատթարների նկատմամբ չար պատրաստակամութիւնը եւ լաւագոյնների նկատմամբ ծուլանալը: Արդ՝ այսպիսի խրատներն ու յանդիմանութիւնները, եւ աւելի քան սա, գրուեցին նրան Հայոց կաթողիկոս Մովսէսի եւ Վրթանէս Քերթողի կողմից, բայց նրանցից ոչ ոք չկարողացաւ նրան փրկել, որովհետեւ քարոզութիւնը չօգնեց հնազանդութեամբ չամբոլուողներին, իսկ նա ամեն ժամանակ հակառակ կողմն էր շտապում:

Արդ՝ Աբրահամը դարձեալ երկրորդ թուղթն է գրում Կհլրոնին՝ զթածութեամբ եւ ոչ թէ այլատեսակ, որպէսզի իր օրերում աղմուկ ու խռովութիւն չլինի: Եւ գրում է. «Մի՛ արա դա, ասում է, այլ նայի՛ր քեզ եւ մի՛ եղիր աղմուկի ու խռովութեան պատճառ երկու կողմերի (միջեւ)»:

(Ուխտան., Բ-ԽԶ)

*Հայոց կաթողիկոս տէր Աբրահամի երկրորդ նամակը Վրաց
կաթողիկոս Կհլրոնին*

Ձեր ողջունաբար նամակը ստացանք, եւ որ գրել էիք, թէ սուրբ Գրիգորի աթոռի նորոգութեան համար չափազանց ուրախացաք, դրա հետ միասին եւ մեր անարժանութեանն էիք օրհնել՝ գոհութիւն յայտնեցինք Աստծուն: Արդ՝ դրա համար թող Տէրը

ձեզ շնորհատոյց լինի: Իսկ ինչ որ հակառակ ու ընդդէմ գրեցիք, այդ էլ իմացանք:

Արդ՝ մենք ընդդիմութեան ու վիճաբանութեան պատասխանը պէտք է թողնենք ու դէն նետենք եւ շտապենք դէպի հայրենի միաւորութիւնը սիրով ու հաւատով: Եւ չպէտք է որոնենք միայն անձնական օգուտը, այլ բազմութեան, որպէսզի ապրեն: Եւ չպէտք է պարծենանք բարգաւաճ սուրբ Երուսաղէմ քաղաքի միայն պանծալի անունով, որից աստուածային փառքը կողոպտելով մերկացրին եւ առաքելական հաւատը վերացրին նրանից եւ բազմաթիւ ու տեսակ-տեսակ հերձուածներ ու աղանդներ սերմանեցին: Իսկ դուք այժմ դրանով պարծենալով՝ գրում էք մեզ, թէ մեր եւ ձեր հայրերին սուրբ Գրիգորը Երուսաղէմի հաւատը տուեց, եւ մենք նոյնը պահպանում ենք: Սակայն լաւ քննեցէք, տեսէք, որ դուք եւ ուրիշները սուրբ քաղաքի բնակիչների հետ հեռացաք նրանից եւ նոյնը չէք պահպանում:

Իսկ մենք այժմ էլ պահպանում ենք Երուսաղէմի հաւատը, այն, որ ասացին, թէ Սիոնից են ելնում օրենքները, իսկ Տիրոջ խօսքը՝ Երուսաղէմից, որտեղից եւ ծագեց մեր Փրկիչը՝ Բանն Աստուած Քրիստոսը: Այլ ոչ թէ Քաղկեդոնի անիծեալ ժողովի հայիոյութիւնը եւ Լեւոնի պիղծ տոմարն ենք պահպանում, որն ինչ-որ ժամանակ բերեց, սերմանեց ոմն Յոբնադ չեպիսկոպոս կոչուածը Երուսաղէմ աստուածակերտ քաղաքում: Եւ ամբողջ առաքելական կարգը փչացրեց եւ գլխիվեր տապալեց: Այդ մոլորութիւնը, ինչպէս նախապէս գրեցինք, եկաւ նաեւ մեր երկիրը Հայոց կաթողիկոս Բաբգենի եւ Վրաց կաթողիկոս Գաբրիէլի ժամանակ: Եւ (նրանք) եպիսկոպոսների ու ազնուականների միաբանութեամբ նզովեցին եւ հեռացան հրեական ժողովն ու տոմարը մեծարողների միաբանութիւնից, եւ այժմ (էլ) գրաւոր (փաստաթուղթը) պահում է մեզ մօտ: Արդ՝ աղաչում եմ քեզ, որ չհիւանդանաս ուրացողների հիւանդութեամբ, որպէսզի նրանց հետ չպատժուես եւ հայրերի նզովքի տակ չընկնես ու գեհէնը

չժառանգես: Արդ՝ միաւորման խօսք գրի՛ր ինձ եւ դրանում (նաեւ) քո կամ մեր սահմաններում (որեւէ) տեղ մատնացոյց արա՛, որպէսզի սուրբ Զատկից յետոյ միմեանց տեսնենք: Իսկ մնացեալը կարող ես լսել Պետրոս եպիսկոպոսից»:

(Ուխտան., Բ-ԽԵ)

*Վրաց կաթողիկոս Կիրոնի պատասխանը Հայոց կաթողիկոս
Աբրահամի երկրորդ նամակին*

«Ինչ որ գրել էիք, իմացայ: Բայց, թէեւ դու՝ իմ տէրը, լաւ գիտես, սակայն եւ մենք պարտաւոր ենք յիշեցնել, որ քեզնից առաջ այդ սուրբ եկեղեցում եղած վարդապետները միմեանց հանդէպ սէր եւ հաշտութիւն ունէին, նաեւ՝ մի հաւատ եւ մի կարգաւորութիւն: Եւ մինչ Մովսէս (կաթողիկոսը) կենդանի էր, ինձ գրեց, թէ՝ «Դուք չպետք է հաղորդակցուէք խուժիկի հետ», ինչպէս դուք յիշել էիք ձեր առաջին նամակում: Եւ ես հասկացայ, որ դա արդարացի է, /եւ/ ըստ նրա հրամանի՝ նրանց մեզնից հեռացրեցի: Իսկ այդ Մովսէսին մինչ Յուրտաւի եպիսկոպոս էինք կամենում դարձնել, ինքը պարտաւոր էր ասել, թէ՝ «Ես ձեզնից չեմ օրհնուի, որովհետեւ դուք ուղղահաւատ չէք»: Մինչդեռ այն ժամանակ մեզնից օրհնուեց, այժմ ինչու պետք է մեզ քննի, մեր հաւատը մի՞թէ դրանից յետոյ փոխեցինք: Եւ իրենից առաջ եպիսկոպոսները, որ Յուրտաւում եղել են՝ սկսած սուրբ Շուշանիկից եւ մինչեւ հիմա՝ Ափոցը, Գառնիկը, Սահակը, Եղիան, Յակոբը, Ստեփաննոսը, Եսային, Սամուէլը, միւս Ստեփաննոսը, Յովհաննէսը եւ ուրիշ եպիսկոպոսներ էլ, (նրանց օրօք) երկու կողմերիս միջեւ ոչ մի հակառակութիւն չէր եղել, այժմ ինչու եղաւ, որ մենք չգիտենք»:

(Ուխտան., Բ-ԽԸ)

*Այն մասին, ինչ-որ եղաւ Աբրահամի երկրորդ նամակից եւ
Կիւրոնի պատասխանից յետոյ*

Իսկ արդ՝ այս նամակներում, որ Աբրահամը գրեց Կիւրոնին՝ յիշեցնելով նրան նախկին ժամանակների ուղղափառութեան մասին եւ դարձեալ՝ չարահաւատների հակառակութեան մասին, եւ ընդդիմաբանութեան մասին, եւ մանաւանդ այն, որ վաղուց Երուսաղէմում եղաւ չարիմաց եպիսկոպոս Յոբնադի ժամանակ, որի մասին ասում են, թէ երբեմն ուղղափառ է եղել եւ յետոյ չարափառ՝ նման Կիւրոնին իր չար մտածողութեամբ: Որովհետեւ հրէական հերձուածի հայեցողութեան չար սերմը, որ հասաւ Քաղկեդոնի անիծեալ ժողովին, նմանապէս նաեւ Լեւոնի պիղծ տոմարին, նա (Յոբնադը) սերմանեց: (Յիշեցնում է նաեւ) այն, որ եղաւ Հայոց կաթողիկոս Բաբգենի եւ Վրաց առաջնորդ Գաբրիէլի ժամանակ, եւ դարձեալ՝ (այդ) ժողովի միաբանական խորհուրդը, որ վերաբերում էր այնպիսի եպիսկոպոսներին ու ազատներին, ինչպէս վերելում ասուեց: Նաեւ պատահած այլ իրողութիւնների մասին, որ այն ժամանակներում եղան, յիշեցնում է նրան:

Ապա խրատական խօսքերով դարձեալ աղաչում է (Կիւրոնին), որպէսզի արժանաւորապէս ընթանայ առաջին հայրերի ընթացքով, եւ դարձեալ ժամադրութիւն եւ տեղ է խնդրում՝ միմեանց հանդիպելու, որպէսզի թերեւս կարողանայ երես առ երես բուժել նրան խօսքերով եւ դեղ դնել բուժելի վերքերի վրայ, որով ինքն իրեն վիրաւորեց:

Իսկ ապա նա (Կիւրոնը) հրեշտակի կողմից խոշտանգուելով՝ խոստովանում է երկու կողմերի նախկին միաւորութիւնն ու դաշնադրութիւնը, որ Հայաստանում ու Վրաստանում եղած նախկին հայրերը գրաւոր կերպով հաստատեցին: Բայց ապա Յուրտաւի երանելի եպիսկոպոսի մասին (բողոքում է), թէ ինչո՞ւ քննիչ եղաւ, (յետոյ) թուարկում է այն եպիսկոպոսներին, որ եղել են սուրբ

Շուշանիկից մինչև ինքը: Եւ սրանցից յետոյ էլ /ասում է/ բաներ, որ յաջորդն է բացայայտում:

Եւ ինչպէս որ Հայոց Մովսէս կաթողիկոսի ժամանակներում սկսեց թաքցնել եւ կեղծատրութեամբ պատասխան տալ՝ նոյնը եւ այստեղ: Քանի որ չնայած տեղ-տեղ (այնպէս) է կարծել տալիս, թէ մօտ է գալիս, սակայն դարձեալ անչափ հեռու է փախչում: Բայց Վրթանէսին տուած պատասխանը (եւս) չպէտք է զանց առնենք, որը լի է չարութեամբ, ինչպէս որ պատմում է իր այն նամակում, որ գրուած էր Յուրտաւի Մովսէս եպիսկոպոսին: Եւ թէպէտեւ մեզ մօտ չգտնուեց այն նամակի պատասխանը, որ (գրուած էր) Կիւրոնին եւ երկրի իշխաններին ու Պետրոսին, սակայն (մենք) տեղեկանում ենք Մովսէսի եւ Վրթանէսի խօսքերից, որ գրել էին միմեանց, Մովսէսի սպասաւորի լսածից եւ մի փոքր գրութիւնից՝ ազնուականների կողմից գրուած: Եւ այդպիսի պատասխանն արժանի չէր մեր նամակին, որովհետեւ ինքը (Կիւրոնն) արժանի պատասխան, ասում է, չտուեց եւ ոչ էլ ուրիշին թողեց (դա) անել: Քանզի բարկութեամբ լիքն էր, որպէս հիւանդ մէկը, որ ցաւի մէջ գունատուած է եւ որեւէ տեղից ականկալիք չունի բուժուելու. այդպէս էլ նա:

Արդ՝ դարձեալ (Աբրահամը) մի այլ նամակ էլ է գրում Կիւրոնին եւ գրածութեամբ ու աղաչական խօսքերով (թէպէտեւ նա չէր լսելու (այդ) խօսքերի ձայնը) ասում այսպէս...

(Ուխտան., Բ-ԽԹ)

*Հայոց կաթողիկոս տէր Աբրահամի երրորդ նամակը Վրաց
կաթողիկոս Կիրոնին*

«Ինչ պէտք է անենք, ո՛վ պատուական եղբայր, աստուածա-
յին պատուիրանների ձայնը, որ միշտ զգուշացնում է մեզ, թէ՛
«Զգո՛յ՛շ կացէք այդ հօտի Տիրոջ ժողովրդի համար, որի վրայ
Սուրբ Հոգին ձեզ նշանակեց հովուելու», որին իր պատուական
արիւնով փրկեց եւ ասաց, թէ՛ «Նրանց համար հաշիվ էք տալու»,
իսկ մենք ծուլութիւնից զարկուած ենք եւ մեղկ ու ծոյլ:

Արդ՝ այս արդէն երրորդ անգամ գրուեց քեզ, որպէսզի երկու
եւ երեք վկաների բերանով հաստատուի ամեն բան: Արդ գրուած
է. «Փորձեցէք ամեն ինչ եւ բարին ընդունէք ու ամեն չար բանից
հեռու մնացէք», եւ դարձեալ, թէ «Միմեանց հաստատէք եւ իրար
զննէք, եւ մէկի առաւելութիւնը միւսի պակասութիւնը կը լրացնի:
Եւ արդ՝ չծուլանանք նորոգելու երկու ազգերի միջեւ եղած հո-
գեւոր սէրը եւ այն վարդապետութիւնը, որ միեւնոյն աղբիւրից է
առած: Որ նախ իրենք առան կենդանութեան լոյսը, ինչպէս մեզ
սովորեցրին մարգարեններն ու առաքեալները, եւ ապա ձեր ու մեր
մէջ առհասարակ սերմանեցին ուղղափառ աստուածապաշտու-
թիւնը, նախ՝ երանելի սուրբ Գրիգորը, եւ ապա Մաշտոցը: Եւ
մենք պարտաւոր ենք ապրել նոյնով մինչեւ մեր Աստծոյ Յիսուս
Քրիստոս Տիրոջ գալուստը: Եւ արժան է (նաեւ), որ այդպիսի
վրիպած մտքերից հեռու փախչենք:

Քանզի առաքեալները եւ նրանք, ովքեր նրանցից ճշմարիտ
կերպով սովորեցին՝ նաեւ մեզ ուսուցեցին մկրտուել Սուրբ Եր-
րորդութեամբ՝ ըստ Փրկչի խօսքի, եւ քարոզեցին, թէ Որդին Եր-
րորդութիւնից է մարմնացած եւ միացած, մի եղած (ու) նաեւ
նոյնը՝ (Աստուած) մնացած՝ Հօր եւ Սուրբ Հոգու կողքին: Եւ այս-
պէս են ասում. «Մի է մեր Տէր Յիսուս Քրիստոսը», եւ դարձեալ՝
«Որոնց հետ միասին նաեւ Քրիստոս Աստուածն է օրհնեալ յաւի-
տեանս. ամէ՛ն»: Եւ դարձեալ Կաթողիկէում էլ ասում է.

«Աստուած ճշմարիտ է, եւ կեանքը՝ յաւիտենական»: Եւ բազմաթիւ մարգարէներ նոյնպէս՝ սկսած Մովսէսից մինչեւ Յովհաննէս Մկրտիչ, նախապէս իմացնելով՝ վկայեցին: Իսկ թէ ճշմարիտ մարդ է եղել (Քրիստոսը)՝ առաքեալն է յիշատակում՝ ասելով, թէ՝ «Մարդով եղաւ մեռելների յարութիւնը»: Եւ դարձեալ, թէ՛ «Երկրորդ մարդը Տէրն (է)՝ երկնքից (իջած)»: Առաքեալներն (առանձին) բնութեան մասին չեն խօսում, այլ այն մասին, թէ իր (այն) մարմնով, որ սուրբ Կոյս Աստուածածնից ծնունեց, մարդ է, իսկ իր մարմնով Աստուած, այլ ոչ թէ՛ երբեմն մարդ է, եւ երբեմն՝ Աստուած: Չի՛ լինի, այդպէս չեն քարոզի:

Նոյնպէս եւ երանելի հայրերը, որ հաւաքուեցին Նիկիայում, այսպէս սովորեցրին՝ ըստ առաքեալների վարդապետութեան: Ասում են. «Պէտք է հաւատալ մի Աստծոյ՝ ամենակալ Հօրը՝ երկնքի ու երկրի Արարչին, եւ մի Տէր Յիսուս Քրիստոսին (բայց ոչ թէ երկու բնութեան կամ երկու որդու մասին ասացին, այլ՝ մէկ Տէր Յիսուս Քրիստոսի), որ Հօրից ծնունեց անճառաբար, նոյն ինքը մարմին ստացաւ սուրբ Կոյսից եւ մարդացաւ, խաչունեց եւ թաղունեց, եւ յարութիւն առաւ եւ համբարձունեց (եւ գալու է դատելու, որի թագաւորութեանը չկայ վախճան), Եւ Սուրբ Հոգուն, որով խօսեցին առաքեալներն ու մարգարէները: Այս հաւատով սկսունեց Աստծոյ եկեղեցին սուրբ առաքեալներից, եւ սրանով է պարծենում, թէ վերին Երուսաղէմում ժողով կը լինի:

Իսկ Քաղկեդոնի պիղծ ժողովում սուրբ առաքեալներին եւ Նիկիայի սուրբ ժողովին հակառակ խոստովանեցին մի Քրիստոսի երկու բնութիւն (էութիւն) ասելը՝ խաբելով պարզամիտներին, եւ Սուրբ Երրորդութեան փոխարէն չորրորդութիւն քարոզեցին: Նոյնպէս եւ Լեւոնի անիծեալ տոմարն էր այսպէս ասում: «Պէտք է, ասում է, Քրիստոս Աստծու համար ընդունել երկու բնութեան կերպարանք՝ մէկը միւսի յարակցութեամբ. մէկով անում է այն գործերը, ինչ որ Աստծուն է վայել, իսկ միւսով՝ մարդկայինները,

ինչ որ մարդուն է արժանի»: Եւ այսպիսի շատ բարբաջանքներ (է ասում), որը լոկ Աստծուց խոտորում է:

Արդ՝ եթէ չէք փոխուել մեր հաւատքից, ինչպէս որ շատ անգամ մեզ գրեցիր, (թէ) չես ընդունել Քաղկեդոնի անիծեալ ժողովն ու Լեւոնի պիղծ տոմարը, ապա դրանք նգովի՛ր դու եւս, ինչպէս որ քո նախնի՝ Վրաց երանելի Գաբրիէլ կաթողիկոսը նգովեց մեր երանելի հայրերի հետ միասին, իր աթոռակիցներով հանդերձ, որոնց անուններն այս են, որ յիշատակում են. Ինքը՝ Գաբրիէլը, որ կոչւում է Մծխիթայի եպիսկոպոս, թագաւորական տան Պաղդէն եպիսկոպոսը, Աստուրիաղի Եղիփաս եպիսկոպոսը, Տիմուէլի Սամուէլ եպիսկոպոսը, Բողնիի Դաւիթ եպիսկոպոսը, Սրդաւի Յակոբ եպիսկոպոսը, Ռուսթաւի Ստեփաննոս եպիսկոպոսը, Տփլիսի Սահակ եպիսկոպոսը, Մանգլեաց Եղատէս եպիսկոպոսը, Մարուէլի Ենէս եպիսկոպոսը, Սամթաւայի Եւգինիս եպիսկոպոսը, Ադսունէլի Յովսէփ եպիսկոպոսը, Սառութի Յոհան եպիսկոպոսը, Կումրտայի միւս Յովսէփ եպիսկոպոսը, Քողկոնլայի Ղազար եպիսկոպոսը, Փորթի Թէոդորոս եպիսկոպոսը, Կաստացի Զաքարիա եպիսկոպոսը, Աստերմիւղի Փոկաս եպիսկոպոսը, Հնարակերտի Իսահակ եպիսկոպոսը, Տարսի Մովսէս եպիսկոպոսը, Քորզանի Ըստնգենէ եպիսկոպոսը:

Արդ՝ այս երանելի եպիսկոպոսները, որոնք ձեր երկրից էին, Աղուանքից եւ Սիւնիքից /եկածների/ հետ հանդիպեցին Հայաստանում Հայոց Բարգէն կաթողիկոսի օրօք այն ժողովում, որտեղ նրանց կողմից միաբան անիծուեց Քաղկեդոնի ժողովը, Լեւոնի տոմարը եւ պայմանը:

Դարձեալ իսկ գրեցիք մէկ եւ երկու անգամ, թէ առաջ դուք էլ Երուսաղէմի հաւատն ունէիք: Բայց մենք այժմ էլ ունենք այն, որն առաքեալներին քարոզուեց, ինչպէս որ գրուած է, թէ՝ «Օրէնքները Սիոնից են դուրս գալու», որը վերնատանը հաւաքուած առաքեալներն են, եւ (թէ)՝ «Երուսաղէմից (է) Տիրոջ խօսքը», որը Բանն Աստուած Քրիստոսն է: Եւ ինչ որ նրանցից

սովորեցինք, պահում ենք եւ կը պահենք միշտ եւ յաւիտեան: Եւ այլոց էլ պատուիրում ենք՝ չխոտորուել եւ օտար ուսմունք չուսանել: Քանզի այս էր հասկանում Պօղոս առաքեալը, որ գրում էր, թէ՝ «Զարմանում եմ, որ այդպէս շուտ-շուտ շուտ էք գալիս դէպի այլ աւետարան, որպիսի ուրիշը չկայ», եւ՝ «Ոչ միայն (լոկ) այս (Աւետարանը) պիտի գիտենաք, այլեւ եթէ մենք էլ, ասում է, կամ հրեշտակներն աւետարանեն ձեզ (աւելին), քան (այն), որ մենք աւետարանեցինք, թող նզովուած լինեն»: Իսկ ես (այն) նոյնն եմ ասում, ինչ որ առաքեալներն են ասում:

Իսկ որ Յուրտաւի եպիսկոպոսի մասին է գրուած, թէ՝ «Եթէ մեզ ուղղափառ չէր համարում, (ուրեմն) արժան չէր, որ մեզնից օրհնուէր», (ապա) նա երդումով հանդերձ հաստատեց այդ բանը, թէ՝ «Չէինք իմացել, բայց թէ ձեռնադրութիւնից յետոյ հասկացանք»: Որը եւ մեզ խիստ արժանահաւատ թուաց, քանզի ուղղափառներից ոչ ոք ստոյգ չգիտէր այդ բանն այդպէս: Որովհետեւ երանելի Մովսէսը, որ ինձնից առաջ էր առաքելական աթոռին յաջորդել, չէր գրել այնպէս, թէ դուք ուղղափառ չէք, այլ թէ՝ «Չուղղափառների հետ ինչո՞ւ էք հաղորդուել»:

Արդ՝ այս անգամ Քաղկեդոնի անիծեալ ժողովի եւ Լեւոնի պիղծ տոմարի մասին ինձ ճիշտ ու հաւաստի պատասխան տուէք, թէ ինչպէ՞ս էք ընդունում: Եւ եթէ Աստուած կամենայ եւ (դու) միաւորման խօսք գրես, (ապա նաեւ) ժամադրիր ինձ եւ քեզ՝ մի տեղ գալու, (եւ թող) լինի խաղաղութիւն, եթէ Աստուած կամենայ: Իսկ մնացեալը կը տեղեկանաք Պետրոս եպիսկոպոսից:

(Ուխտան., Բ-Ծ)

*Կիրոնի կողմից Հայոց կաթողիկոս տէր Աբրահամի երրորդ
նամակի պատասխանը*

«Սրբասէր եւ ճշմարտասէր Հայոց կաթողիկոս տէր Աբրահամին՝ Վրաց կաթողիկոս Կիրոնից խոնարհութեամբ եւ սիրով ողջո՛յն:

Ահաւասիկ մեր կողմից այս երրորդ նամակը գրուեց ձեր սրբութեանը: Եթէ կամենում էք մեր հաւատքը քննել եւ իմանալ, (ապա) թարգմանել ու բերել տուեցի չորս ժողովների գրութիւնները, որոնցով հոռոմներն են կառավարում, եւ սուրբ Անաստասից ի վեր Սուրբ Սիոնում էլ նոյնն է քարոզում: Կամենաք, թէ չկամենաք՝ մեր հաւատն այդ է: Եւ այն, ինչ մեզ գրում էք ողջոյնի կամ թէ այլ ինչ պատճառով, կամ (ինչ-որ) պէտքերի համար, այն մասը, որ (վերաբերում է) սիրուն (բարեկամութեանը), գրեցէք, ընդունում ենք, բայց այս վճռի մասին ոչինչ աւելին ինձ մի գրէք: Եւ մի չարչարուիր, ապա թէ ոչ՝ պատասխան չես ստանայ:

Արդ՝ եթէ կամենում ես միաբանութիւնն ու սէրը պահպանել եւ (որ) ձեզ հետ խաղաղութեամբ ապրենք, ինչպէս եւ մեր եւ ձեր հայրերն ապրեցին, (ապա) մենք պատրաստ ենք խաղաղութեան համար: Իսկ եթէ ինչ-որ ճարտարութիւն (ցոյց տալու) համար էք կամենում մտածել, (ապա) առաւել եւս մի՛ չարչարուէք եւ այդ մասին այլեւս մի՛ գրէք մեզ: Որպէսզի ինձ յետոյ չվիճակուի երբեւիցէ Հայաստանով (չանցնել)՝ բացի ճանապարհ անցնելուց, (իսկ) եթէ ոչ՝ այլ գործ չկայ»:

(Ուխտան., Բ-ԾԱ)

*Ինչ որ պատմում է Կիրոնի մասին (նրա) երրորդ
պատասխանից յետոյ*

Արդ՝ այսպիսի լրբախօսութեամբ այս պատասխանը տուեց Կիրոնն Աբրահամին: Քանզի որքան ուղղուելու եւ զգուշանալու յոյս կար այն ժամանակ, իսկ այժմ ինքնասատարումը (վերածուեց) հակառակաբանութիւնների՝ ընդդէմ իր փրկութեան: Նաեւ իր երկրորդ նամակում էր այսպէս ընդդիմաբանելով դէպի հակառակ կողմը շտապում: Այլ թէպէտեւ իր տեղում մենք չյիշատակեցինք՝ բաւական համարելով նրա անարժան պատասխանները, բայց վերադառնալով՝ նրան յանդիմանելու համար ասենք, որովհետեւ (հէնց) ինքն իրեն յանդիմանեց. քանզի հրեշտակի կողմից խոշտանգուելով՝ խոստովանեց ստոյգը:

Ասում է՝ «Բազմաթիւ եպիսկոպոսներ՝ ոմանք հայերից, ոմանք վրացիներից, Հայաստանում (են) սովորել եւ գիտուններ /են/ ու վարդապետներ, եւ միմեանց հետ խաղաղութեամբ մնացին, միմեանցից սովորում էին եւ սուրբ Շուշանիկին պաշտելու էին գալիս կամ Մծխիթայում աղօթելու, եւ հաղորդութիւն էին ընդունում: Նոյնպէս եւ նրանք, որ այնտեղից այստեղ էին գալիս, այդպէս էին անում՝ Սուրբ կաթողիկէում եւ այլ եկեղեցիներում աղօթում էին, առանց խղճի խայթի Փրկչի մարմնով ու արիւնով հաղորդութիւն էին ստանում միմեանցից՝ հաւատի ու սիրոյ սովորութեամբ: Եւ հայերի ու վրացիների միաբանութիւն կար միմեանց հետ, եւ ամենքն էլ սուրբ Գրիգորի թեմն (էին) եւ միաբան Երուսաղէմի հաւատին, (որով հոռոմներն են կենցաղավարում: Եւ ինչ-որ այլ բաներ ու խօսքեր) չեն եղել ներսում, իսկ այժմ որտեղից եղան: Այդ (հայրապետն է), որ Տիրոջ եղբայր երուսաղէմացի սուրբ Յակոբի տեղն է ստանձնել, (որը) եւ մեզ ու մեր հայրերին հաւատ է տուել, եւ (այն) մեզ մինչեւ այս պահպանել է, արդ՝ ինչպէ՞ս այն թողնենք եւ ձեզ հաւատանք: Եւ կամ այլ եպիսկոպոսները, թագաւորները, իշխանները եւ մեր երկրի բոլոր

բնակիչները, նրանց ամենքին ինչպե՞ս կարելի է թողնել եւ ձեզ հետ միաբանուել»:

Եւ թշուառականը չգիտէր, թէ (հէնց) ինքը եղաւ իր եւ նրանց կորստեան պատճառը: Եւ դարձեալ ասում է. «Այս երեսունհինգ եպիսկոպոսները, որոնք Վիրքում կան, ուղղափառ ու գիտուն չեն, միայն այդ Մովսէ՛սը եղաւ ուղղափառ»: Եւ այսպէս իր բոլոր նամակներում մաքառում ու կռում է երանելի Մովսէսի դէմ, որովհետեւ նա եղաւ Կիրոնի չարութեան յայտնի դառնալու պատճառը, որը գաղտնի էր պահում կեղծաւորութեան վարագոյրով: Եւ ոչ միայն այնժամ, այլեւ ամեն ժամանակ, նոյնիսկ այժմ էլ տակաւին առագաստ է ձգուած նրանց սրտերի վրայ եւ չի վերանայ, քանզի Քրիստոսով է խափանուելու: Բայց սա քիչ-քիչ յայտնում է իր չարութիւնը այստեղ եւ այլ տեղերում: Նախ՝ պատասխանի մէջ (այն) նամակում, որ (գրեց) Վրթանէսին, թեպէտեւ բոլորը չէ, (որ)/ կայ գրաւոր (պահպանուած) իրեն (Վրթանէսին) առաքուածի մէջ (եւ ուրիշներին առաքուածում էլ քիչն (ե) գրաւոր), իսկ բազմաթիւ խօսքերով ու սպառնալիքներով՝ Մովսէսի սպասաւորի միջոցով (է ի յայտ բերում), եւ այն էլ՝ խառնաշփոթ կերպով, իբրեւ մի հիւանդ, որն ընկել է չար ցաւի մէջ եւ իր նեղութիւնից չի իմանում, թէ ինչ է խօսում:

Բայց յետոյ կեղծաւորութեամբ համաձայնութեան գալով՝ ասում է, թէ՝ «Մենք եւ այս հաւատն ենք պահում, եւ այդ, եւ հաղորդութիւնը թէ՛ այստեղ ենք ստանում, թէ՛ այդտեղ»: Եւ դարձեալ՝ «Մեր հայրերն, ասում է, վարդապետները եւ երկրի բոլոր բնակիչները, երբ գալիս էին այդտեղ, աղօթում էին ձեր սուրբ եկեղեցիներում, նոյնպէս եւ ձերոնք էին այստեղ՝ Մցիսիթայի Սուրբ Խաչը գալիս եւ աղօթում»: Եւ այսպիսի խօսքերով խոստովանում է ու մօտենում, իսկ գործերով՝ ուրանում ու հեռանում: Եւ մեծարում է միայն անունով, այլ ոչ թէ գործով՝ ըստ Տէրունական այն խօսքի, թէ՝ «Այս ժողովուրդն իր շրթունքներով

մեծարում է ինձ, իսկ իրենց սրտերով հեռացած մեկուսի են ինձնից եւ զուր են ինձ պաշտում»:

Արդ՝ այս բաները մէկ անգամ եւ երկիցս գրել էինք (մի) այլ տեղում, որոշ բաներ՝ նամակներից իւրաքանչիւրի հետ, եւ որոշ բաներ՝ մեր կողմից էինք կրկնաբանել: Որի պատճառով, կարծում եմ, չենք ազատուի ձեր կողմից կշտամբուելուց: Բայց գիտէք, որ երբ հիւանդին ծանր ցաւեր են պատահում, հեծեծանքը շատ է ելնում: Սակայն ստոյգ լինելու համար յաւելեալ գրեցինք նրա որոմների մասին, որ իր մահաշունչ բերանով ցանեց ցորենի վրայ, (եւ) որ իր խիստ յապաղումով հազիւ յայտնի դարձրեց անասելի (եւ) գովելու անարժան բաները:

(Ուխտան., Բ-ԾԲ)

Պետրոս եպիսկոպոսի մասին

Այս Պետրոսը Աբրահամ Հայոց կաթողիկոսի ժամանակ պալատական տան եպիսկոպոսն էր, (մի) կորովամիտ, ճոխաբան ու ճարտարախօս մարդ եւ հմուտ ատենադպիր: Աբրահամը սրան ազնուական մարդկանց հետ միասին իր նամակների հետեւից ուղարկեց Կիւրոնի մօտ: Եւ երկրորդ անգամ գնացին Վրաց իշխաններն այնտեղ, սպառնացին նրան, թէ մի՛ երթեւեկիր մեզ մօտ հաւատի որեւէ խնդրի համար, այլապէս մեր ձեռքով կը սպանուես: Եւ կամ (ասում էին). «Ինչո՞ւ ես այդպէս գայլաբար յարձակում մեզ վրայ՝ քո գրով ու պատգամով՝ մեզ մօտ գալով: Եւ այս խօսքերով Վրաստանի բնակիչները դեռեւս պարծենում են՝ աւանդաբար միմեանց փոխանցելով, որդին հօրից սովորելով, թէ՛ «Ձեր գայլ Պետրոսին մեր իշխանները Կանգարք կոչուող լեռան վրայ սպանեցին: Բայց մենք չգիտենք, թէ (արդեօ՞ք) այդպէս է եղել, ինչպէս նրանք են ասում: Նաեւ հոռոմներն են գայլ կոչում Պետրոս Անտիոքացուն, որը փախաւ Քաղկեդոնի չար

ժողովից: Եւ ոմանք ասում են, թէ նոյնն են եղել սա եւ նա, ոչ սրանք են նրան ճանաչում, եւ ոչ նրանք՝ սրան, քանի որ այդ Պետրոսն անօրէն Մարկիանոսի ժամանակներում էր, իսկ սա՝ Մուրիկ կայսեր, բայց նրանք յիմարամտութեամբ են կարծում եւ մէկ (անձ) համարում, քանի որ Մարկիանոսից մինչեւ Մուրիկը հարիւր յիսուն տարի է:

(Ուխտան., Բ-ԾԳ)

*Թէ ինչպէս է պատմւում Վրկանի մարգպան Սմբատի
նամակների մասին, եւ դարձեալ նոյն խնդրով*

Բայց «Գիրք թղթոցում», որը մեզ հանդիպեց, Վրկանի (17) մարգպան Սմբատի նամակը չգտանք (ճիշտ) հերթականութեամբ արտագրուած: Նոյնպէս էլ այստեղ անցանք ամբողջը, եւ մոռացուեց: Քանզի խօսքի միտքը մեզ կարծել էր տալիս, թէ Աբրահամի առաջին նամակից յետոյ էր այս նամակը, որ ուղղուած էր Կիւրոնին: Որովհետեւ որոնելով՝ մի այլ օրինակում գտանք այնպէս, ինչպէս կարծում էինք, քանզի ինքն իսկ նամակը եւս ծանօթ խօսքերով, որ Կիւրոնին գրուած Աբրահամի առաջին նամակում կային, ի յայտ է բերում, թէ սրանք համագոյգ են, միաբան եւ միմեանց նման: Քանզի այնտեղ ասում է, թէ՝ «Կամենում էինք եպիսկոպոսներ ուղարկել ձեզ մօտ՝ վարդապետների հետ միասին, որ գային ձեզ տեղեկացնէին Քաղկեդոնի ու այլ աղանդների բնոյթի մասին, որպէսզի դուք ստոյգ գիտակցէիք», եւ այստեղ նոյն բանն է յիշատակում դարձեալ ու նաեւ այլ մեղադրանքները Կիւրոնի հանդէպ: «Եթէ մէկն, ասում է, աշխարհականներից ու սոգէտներից պատճառ լինէր (չարի), դու էիր պարտաւոր խրատել, թէկուզ եւ դու անէիր դա»: Եւ դարձեալ ամենայն հոգեւոր ու մարմնաւոր սէր է առաջարկում եւ անմիջապէս նրան յիշեցնում երկու կողմերիս հաւատի հաստատութիւնը, եւ թէ «Մենք ու դուք

սուրբ Գրիգորի աշակերտներն ենք», եւ թէ «Երկուսս էլ ունենք ուղղափառ հաւատը, որ սուրբ հայրերն են մեզ ւաւանդել»: Եւ դարձեալ, թէ՝ «Մենք աշխարհական ոմանցից լսել ենք հաւատի նկատմամբ ձեր թերութեան մասին եւ որոշ չափով հաւատացել, իսկ ապա Յուրտաւի եպիսկոպոսից տեղեկանալով՝ ստուգիւ հաւատացինք: Եւ դարձեալ՝ սուրբ Շուշանիկի սուրբ վկայարանի մասին, որ խաղաղութեան միջնորդ ու աղօթատեղի էր երկու կողմերիս համար: Այս խօսքերը համապատասխան են Աբրահամի նամակին:

Եւ դարձեալ իր պատասխանի մեջ, որ ուղղուած էր Յուրտաւի եպիսկոպոսին, խօսքը նոյնն է ցոյց տալիս, թէ համապատասխան են միմեանց, եւ այս նամակները միասին են գնացել Կիւրոնին: Եւ մի այլ տեղում ասում է թէ՝ «Մենք եւ տէր Սմբատը միասին նամակ գրեցինք ձեզ»: Քանզի այսպէս է ասում Մովսէսին. «Քո հոգսն, ասում է, նախ պէտք է լինի Աստծոյ ողորմածութեանը յանձնել, եւ յետոյ՝ տէր կաթողիկոսին»: «Թող որ նա գրի, ասում է, երկու եւ երեք անգամ: Արդ՝ քանզի մեզ որեւէ չափով օտար եւ հեռու չթուաց առաջինի բովանդակութիւնից այս նամակը, որ Կիւրոնին գրուեց Սմբատի անունից (թէպէտեւ Աբրահամի առաջին թղթից մի փոքր ընդմիջուեց), այդ պատճառով մենք ներկայացրեցինք /ստորեւ/:

(Ուխտան., Բ-ԾԴ)

*Վրկանի մարգպան տէր Սմբատի նամակը
Վրաց կաթողիկոս Կիւրոնին*

«Վրաց սրբասէր կաթողիկոս Կիւրոնին, եւ ձեր այլ աթոռակից եպիսկոպոսներին, եւ երկրիդ իշխաններին՝ Ատրներսեհին եւ բոլոր երեւելիներին՝ Վրկանի մարգպան Սմբատից՝ Տերանց զինուորից, Դաշտկարինից, Հայոց Շարսաղար վարդապետից եւ այլ ազնուականներից՝ խոնարհութեամբ ու սիրով ողջո՛յն:

Քանզի ինչպես նախկինում մեր եւ ձեր հայրերն ու վարդապետները երկրի միաբանութեամբ տեսան ոմանց յետին ընթացքը եւ ատելի վարքը, որ թերի ու անվայել էր մեր հաւատին ու կանոններին, եւ անէծքով մերժեցին նրանց, եւ այնուհետեւ ամեն հակառակութիւն վերացաւ, եւ Քրիստոս Աստուած փառաւորուեց, մեր երանելի հայրերի ու սուրբ վարդապետների հաւատը հաստատուեց, եւ ամենքս, ովքեր արքայից արքայի իշխանութեան ներքոյ ենք, մի հաւատի եղանք, արդ՝ այս բաներն անհրաժեշտ համարեցինք ձեզ գրել, որպէսզի դուք մեզ հետ միաբանուէք, ինչպէս որ մեր հայրերն էին: Քանզի միեւնոյն վարդապետի աշակերտը եւ թեմն ենք եղել, եւ նոյն հաւատով, ինչպէս մեր հայրերը, պահպանել յոյսը եւ հաւատն առ Աստուած եւ սերը միմեանց հանդէպ:

Բայց ահա կայ մի լուր, որ աշխարհականներից լսեցի, եւ սակայն չէի հաւատայ, բայց հաւատացի, /երբ/ Յուրտաւի եպիսկոպոսից էլ լսեցինք, որն այստեղ է, եւ խիստ վշտացանք: Քանզի մեր ու այդ երկրիդ ազատանիի միջեւ թէպէտ արին(ակցութիւն) եւ հարազատութիւն կար, բայց մեզ համար հաստատութիւնը եւ ասես ինչ-որ երդումի (չափ) վստահութիւնը այդ սուրբ վկայարանով էր, որ Յուրտաւի պատուական հայրենի եկեղեցին է, որ ձեր մէջ է, եւ (դա) փոխելը ինչ-ինչ թշնամութիւն է մէջ գցում: Մանաւանդ թերութիւն է նաեւ մեզ արգելելը՝ ովքեր կամենում են՝ այստեղից գալ ու երկրպագել ձեր Սուրբ Խաչին, եւ չգան չմտնեն նրանք, ովքեր այդտեղից գալիս են (մեր) Սուրբ կաթողիկէն եւ այլ վկայարաններն աղօթելու: Եւ այս մեծ պարգելը, որ Աստուած տուել է մեզ եւ ձեզ, կը խափանուի: Եթէ մէկը (հոգեւոր) խրատ չստացածներից կամ տգէտներից լինէր՝ դու պիտի պարտաւոր լինէիր վարդապետութեամբ խրատել ու պատուհասել այդպիսիին, որպէսզի հակառակութիւնը մէջտեղից վերանար, թէկուզ եւ դու (անձամբ)/ անէիր այդ, որ չափազանց դժուարին չար (բան) է:

Կամենում էինք եպիսկոպոսներ ուղարկել քերթողների հետ միասին, որ գիտեն հերձուածի չարութիւնը, որպէսզի ձեզ վերահասու անէին ու ճշմարտութիւնն իմացնէին: Բայց առայժմ բաւական համարեցինք ազատ մարդկանց միջոցով նախ նամակով ձեր կամքը գիտենալ: Ողջ եղի՛ր»:

(Ուխտան., Բ-ԾԵ)

*Վրկանի մարգպան տէր Սմբատի նամակի պատասխանը
Վրաց կաթողիկոս Կիւրոնի կողմից*

«Վրկանի մարգպան փառաւորեալ տէր Սմբատին՝ Տերանց զինուորին, Դաշտկարինին, Հայոց Շարսադար վարդապետին եւ Հայաստանի այլ ազատներին՝ Սուրբ Նշանիցս աղօթք, եւ Կիւրոնից՝ Վրաց կաթողիկոսից եւ իմ բոլոր աթոռակից եպիսկոպոսներից եւ իշխաններից՝ Ատրնէրսեհից եւ Աշուշանից եւ Վրաց երկրի բոլոր երեւելիներից՝ խոնարհութեամբ ու սիրով ողջո՛յն:

Այն նամակը, որ դուք գրել էիք, տեսայ եւ ձեր ողջոյնը լսելով ուրախացայ: Բայց որ գրել էիք, թէ ոմանք մեր հայրերի եւ մեր շեղուած ու ատելի կարգերն ու հաւատը տեսնելով՝ մերժեցին ու դէն շպրտեցին՝ այդ առիթով (արքայի) բարի հրամանը (կատարելու) համար քեզ՝ մեր տիրոջը, այդ գործով զբաղեցնելով՝ (կասեմ). Աստուած արքայից արքային թող անմահ անի, իսկ քեզ՝ տերանց տիրոջը, քո զաւակներով հանդերձ՝ էլ առաւել պատուականագոյն դարձնի՝ քան, որչափ որ կաս: Այն, որ հաւատի մասին գրել էիք, թէ մեր ու ձեր հայրերը միաբան էին, դա /այդպէս էր/, որովհետեւ սուրբ Գրիգորն (այն) ուղղափառ հաւատքն ուսուցանեց մեզ, որը Երուսաղէմից սովորեց, նոյնը հաստատեց, եւ մեր ու ձեր անսխալ հաւատն այդ է: Իսկ եթէ այդ Մովսէսն այլ կերպ է ընդունում, որը մենք ու դուք չէինք ընդունել, իսկ դուք կամենում էք դրան համաձայնել ու նորաձեւ դարձնել, (ապա)

մենք դրան չենք հնազանդուի: Որովհետեւ ինչ որ սովորեցինք, չենք թողնի, քանզի մեր եկեղեցիներն այսպէս են հաստատուել:

Նոյնպէս եւ Յուրտաւի եկեղեցին, ինչպէս որ է, (այդ էլ) եղել է ու կայ, եւ եկեղեցու ծիսակարգը ոչնչով չի փոխուել: Բացի այն (լոկ), որ եպիսկոպոսը, որին նշանակեցինք, վրաց ու հայ դպրութիւնները գիտէ եւ ծիսակարգը երկու (լեզուով) է կատարում: Բայց իմ սրտին մեծ ցաւ է, որ դուք մի մարդու խօսքին էք հաւատում, ով իր գլխաւորին հաւատարիմ չէր, թող թէ՛ հէնց մեզ, ով իր չար գործերի պատճառով գիշերով գաղտնի փախստական հեռացաւ ու գնաց ապստամբած Վահրամի մօտ: Եւ այդպէս գնաց չարութիւն գործելու, քանզի որոշ չափով յաջողութիւն ունեցաւ եւ քիչ մնաց քաղաքներ առնել տար ու Արեաց աշխարհին մեծ վնաս բերէր: Եւ արդ դուք նրան հաւատացիք ու իր խօսքով դադարեցիք մեզ մօտ գալ: Ողջ եղէք Տիրոջով: Եւ Աստուած թող ապրեցնի (նաեւ) կայսրին, որովհետեւ նա մեր երկիրն ապրեցրեց»:

(Ուխտան., Բ-ԾԶ)

*Թե ինչպէս էր Կիրոնը կեղծաւորութեամբ երկու
կողմի վրայ հակուած*

Այս առաջիկայ դրուագում (գլխում) մենք պետք է պատմենք, թէ ինչպէս Կիրոնը կեղծաւորաբար երկու՝ Պարսից ու հռոմէացիների կողմն էր հակուած, եւ այն էլ՝ լի նենգութեամբ ու կեղծաւորութեամբ: Որովհետեւ երբ կամեցաւ իր խորամանկութեամբ իր չար շինութեան խարխուլ հիմքը դնել եւ սկսեց ձեռնադրել այն խուժիկ նեստորականին, որը նրա ձեռակերտ կորստեան սկիզբը դարձաւ, դնելով նրա վրայ իր աջը՝ մեղքերի աջը, նրան դարձրեց իր մահուան մահիճը, նրանով հիւանդացաւ հոգու հիւանդութեամբ, որով եւ մեռաւ նրա մեջ ու մեռցրեց Վրաց ողջ երկիրը նոյն հիւանդութեամբ:

Իսկ մենք ի տես գնալով նրանց հիւանդութեանը եւ մօտենալով նրանց իբրեւ բժշկապետներ՝ կապելու համար նրանց վերքերը, եւ խոնարհուելով սրանց հիւանդութեան վրայ ու դիմանալով (հիւանդութեան) մահահոտութեանը՝ չկարողացանք նրանց բժշկել: Որովհետեւ (այն) բուժական դեղը, որը մենք կազմել էինք օրէնքներով ու մարգարէներով, աստուածային աւետաբանութեամբ ու առաքելական քարոզութեամբ, նոյն սուրբ հայրերի ու երանելի վարդապետների բուն ուսմունքով, դրեցինք նրանց վրայ, (սակայն) չընդունեցին, որպէսզի առողջանան այն վերքերից, որ ընդունել էին Նեստորի նետերից, որ թաքցուած էին քաղկեդոնականների կապարճներում ու նետուած աղեղնաւոր Լեւոնի կողմից: Այլ աւելի հեռացրին իրենցից, եղան անշնորհակալ չարի ստացուածք եւ իրենք պատրաստեցին իրենց համար մահացու եւ մահաբեր դեղ, որն իրենց վրայ դրեցին նեստորական խուժիկի դաւանութեամբ:

Իսկ մենք այդ տեսնելով՝ մտքով հիւանդացանք՝ երկար ժամանակ հեծեծալով նրանց կործանման ու մահուան պատճառով: Բայց նրանց կողմից մի անգամ ասուած հակառակաբանութիւնը եւ ընդդիմաբանութիւնը կրկնաբանուում էր միւս անգամ եւ կրկնակի անգամ եւ էլ առաւել յաճախ, որովհետեւ ինչպէս նախորդ /տեղում/ ասացինք, թէ երբ հիւանդի ցաւերը երկար են տեւում, հեծեծանքն էլ շատ է ելնում ու յաճախ, այդպէս էլ մեզ պատահեց նրանց պատճառով, որովհետեւ մտքով հիւանդացած (լինելով) նրանց համար՝ մշտապէս հեծեծում ենք եւ ամենայն ժամ հոգոց հանում: Եւ ջանում ենք նրանց մի խօսքին հազար խօսքի պատասխան տալ՝ կրկնաբանելով մէկը երկու եւ երկուսը երեք (անգամ), եթէ հաճելի է (քեզ դա իմանալ):

Բայց մենք վերադառնանք նախորդ շարադրանքին՝ այս ճառի (գլխի) սկզբի բովանդակութեանը: Արդ՝ Կիւրոսն իր միտքը երկուսի բաժանելով՝ անցնում է հոռոմների կողմը՝ փառաւորելով ու հաճոյանալով Մուրիկ կայսեր, եւ նրանով պարծենում

է՝ ասելով. «Մենք, ասում է, կայսեր հաւատն ընդունեցինք եւ պահում ենք»: Եւ չէր իմանում այն մարդադաւանը, թէ պէտք է «Աստծով պարծենալ հանապազօր», եւ՝ «Ով պարծենում է, թող Տիրոջով պարծենայ»: Եւ դարձեալ ասում էր. «Կոստանդնուպոլիսը սուրբ Յովհաննէսի աթոռն է եւ կայսեր տունը, եւ այն հաւատը, որ այնտեղ քարոզուում է, մենք այն ենք պաշտում»: Եւ դարձեալ, թէ՝ «Թարգմանել ու բերել տուեցի չորս ժողովների գրութիւնները, որով հռոմմներն են առաջնորդուում, եւ մենք այն հաւատն ենք պահում, եւ Աստուած թող կայսերն ապրեցնի»:

Իսկ ապա թեքում էր դէպի այս՝ Պարսից կողմը, որովհետեւ նրանց երկիրն էլ երկատուած էր՝ Պարսից կողմը եւ հռոմմների: Իսկ նա արքայից արքայի համար կասկածի մէջ էր ընկել, թէ մի գուցէ Վրկանի մարգպան Սմբատի սաղրանքով քննութեան առնի իր արարքները: Որովհետեւ Մովսէսին գրած նրա /Սմբատի/ խօսքը բացայայտում է այս մտադրութիւնը, քանզի «/Աւելի/ վաղ ասացի (քեզ), ասում է, թէ կը գրեմ արքայից արքային, որ իր բարերարութեամբ հրաման տայ քեզ, որպէսզի գնաս նստես քո եկեղեցում, (իսկ) դու յանձն չառար»: Արդ՝ այսպիսի պատճառով կասկածի մէջ էր Կիրոնը, այն կողմով պարծենում էր, որովհետեւ նրանց հաւատն էր ընդունել, եւ այս կողմից էլ վախենում էր, թէ արքան հաւատի քննութիւն կը կատարի հայ ազնուականների դրդումով: Եւ ասում էր՝ «Աստուած թող փառաւորի արքային»:

Եւ այսպէս երկու ոտքով կաղալով՝ միտում էր (մէկ) այս կողմ, (մէկ) այն կողմ, եւ (այսպէս) կոծելով դեգերում էր ծովով ու ցամաքով՝ իր շուրջ հաւաքելով Քաղկեդոնի պիղծ ժողովի ու Լեւոնի տոմարի դաւանողներին, էլ առաւել հրեական հին հայիծութիւնն էր իր մէջ թարմացնում, եւ ըստ դրա ապաւինելով մարդկանց՝ պարծենում էր, քառ խօսքերով ու աղերսանքով կեանք էր խնդրում կայսեր համար եւ /միաժամանակ/ սնոտի մտքով փառք հայցում արքային:

(Ուխտան., Բ-ԾԷ)

*Յուրտաւի եպիսկոպոս Մովսէսի նամակը
Վրկանի մարգպան տէր Սմբատին*

«Աստուածաշնորհի պատուով պայծառացած Վրկանի մարգպան տէր Սմբատին՝ Տերանց զինուորին՝ Մովսէսից Տիրոջով ողջո՛յն:

Տեսայ այն նամակների պատասխանները, որ անօրէնութեամբ եւ չարութեամբ տուել էր Վրաց աւերիչ կաթողիկոս կոչուածը մեր աստուածապատիւ տէր կաթողիկոսին եւ քեզ, տէր իմ: Տէր կաթողիկոսի հետ կապուած՝ իմ (խնդրի՞մ առիթով սրտի ցաւ չկայ, որովհետեւ նա տեղեկացել է եւ ամբողջովին վերահասու եղել, թէ ինչի համար կամ ինչպե՞ս հալածուեցի: Բայց ինչ որ քեզ՝ իմ տիրոջն է վերաբերում, ծանր սրտի ցաւ ունեմ, մի՛ գուցէ անօրէն նամակներով, որ գրեց ձերդ փառաւորութեանը, արդեօք երկբայութեան մէջ չի գցել ձեզ իմ նկատմամբ:

Բայց դու՝ տե՛ր իմ, Աստծոյ ողորմութեամբ, ձեռնհաս ես՝ եւ եթէ աւելի հեռաւոր տեղերում ինչ-ինչ քննութեամբ պէտք լինէր տեղեկանալ, եւ թող եթէ չափազանց մօտ է (տեղը): (Բսկ) Հայաստանն ու Վրաստանը նաեւ սահմանակից են միմեանց, եւ շատերն ազնուականներից, յաճախ եւ իշխաններից այստեղից այնտեղ են հասնում եւ այնտեղից այստեղ գալիս: Նրանցից կարելի է տեղեկանալ, թէ արդարե՞ւ այդպիսին եմ, ինչպէս ձեր սրբութեանը գրուել է նրանց կողմից, եւ (արդե՞օք) այլաձեւ եմ ես տեղեկացրել ձեզ ու այսպիսի վարդապետների եւ իշխանների եւ /ողջ/ երկրին խաբել: (Եթէ այդպէս է)՝ արժանի է, որ ես պատժուեմ, որպէսզի ով ինձ նայի, այլեւս չկարողանայ խաբել: Բայց թէ քննել հրամայեցէք, (եւ) յոյս ունեմ Աստծոյ ողորմութեան վրայ, որ նամակներում իմ մասին գրուած բոլոր խօսքերը սուտ կը գտնէք: Մանաւանդ որ հալածանքների ժամանակ ինն օր Տփլիսում նրա դռներում մնացի, եւ ինձ չընդունեց: Եւ ամբողջ երկիրը գիտէր, որ նա չարեց դա ոչ թէ այլ բաների պատճառով, այլ հաւատի

պատճառով: Բայց ես միջնորդի միջոցով շատ խօսքերով խօսեցի նրա հետ եւ նրան ցոյց տուեցի՝ ինչ որ տեսել էի ու իմացել իրենց մասին՝ ոչինչ չթաքցնելով նրանից, իսկ նա ինձ պատասխան չտուեց եւ չընդունեց ինձ: Եւ ինն օրից յետոյ ինքը Մցխիթայ գնաց:

Իսկ ես այստեղ ցերեկով եմ եկել, այլ ոչ թէ գիշերով, ինչպէս որ նա է գրել: Եւ երբ նրանք գնացին, դրանից յետոյ եօթերորդ օրն էր, որ ես եկայ Սուրբ Յովհաննու վանքը, (իսկ) ժողովրդին յանձնեցինք հոգու շնորհներին: Ես չեմ գնացել Վահրամի մօտ, եւ ոչ էլ նրանք կարող են ապացուցել դա: Բայց ես քեզ, տէր իմ, Վահրամի մասին կը վստահեցնեմ: Ինձ գրել էր (նա), թէ՝ «իր սրտին մեծ ցաւ է սուրբ եկեղեցուց ձեր հեռանալը, բայց քանի որ գնացիք, ճանապարհը կարելի էր մեր մօտով անցնել, որովհետեւ եկեղեցին մեծ բաժին ունի այստեղ, որը դուք պէտք է ընդունէիք»: Այս նամակը տէր կաթողիկոսը տեսել է, քեզ՝ իմ տիրոջն էլ ցոյց կը տամ: Եւ ես դրան պատասխան տուեցի ու ասացի՝ «Հապա այնտեղից ինչո՞ւ գնացի, եթէ ձեզ մօտ պիտի գայի, որովհետեւ ձեր ու նրանց հաւատը մէկ է»:

Եւ որ չար գործերի մասին էր գրել, թէ ծածուկ փախաւ, ապա ինձնից բացի այլ մարդ չի կարող մեղաւոր լինել: Իմ մեղքը, որ Աստուած է միայն իմանում ու ես, չի կարող բացայայտ երեւալ: Իսկ որ ծիսակարգը փոխեցին յայտնի է: Եւ նեստորական եպիսկոպոսը, որին նշանակեցին, թէ (իբրեւ) վրացերէն դպրութիւնն էլ գիտէ՝ ինչպէս արժան է, չհաշուած հայերէնը, բայց (դա) անյայտ է:

Իսկ ձերդ փառաւորութիւնը թող տեղեակ լինի, որ (Կիրոնն) այդպիսի չար մեքենայութիւններ շատ է իմանում եւ ձեզ հաւատացնել ու գործը խափանել է կամենում: Բայց Աստծու եւ ձեր հոգու համար ջանացեք, որքան հնարաւոր է. ո՞վ գիտէ, գուցէ Տէր Աստուած (մեր) տառապեալ աշխարհին փրկութիւն տայ ձեր փառաւորութեան միջոցով: Իսկ դուք Աստծուց վարձք կստանաք, իսկ մարդկանցից բարգաւաճութիւնը կը լինի: Եւ ես՝ անարժանս,

քանի կենդանի եմ, քո եւ որդեակիդ հոգու եւ մարմնի փրկութիւնը կը խնդրեմ Տէր Աստծուց, որպէս իմ անձի համար:

Ողջ եղի՝ ր Տիրոջով»:

(Ուխտան., Բ-ԾԸ)

*Վրկանի մարգպան Սմբատի պատասխանը
Յուրտաւի Մովսէս եպիսկոպոսի նամակին*

«Ձեր սրբութեան ողջոյնի գիրն ստացանք եւ Քրիստոսով ուրախ եղանք:

(Իսկ) որ զարմացաք նամակների այն պատասխանների համար, որ մեզ գրեց Վրաց կաթողիկոսը, (ապա) մենք աւելի ենք զարմացել երկու կողմերից՝ նրա համար /զարմացել ենք/, թէ ինչպե՞ս է այսպիսի մահաբեր սուտ խօսքեր գրում մեզ, ու եթէ (Ճիշտ չլինէր)՝ յանդիմանուելու էր ձեր եւ մեր կողմից: Եւ ձեզ վրայ վստահ (զարմացել ենք), որ այստեղ մօտ (էք), (ու) ինչպե՞ս էք կանգնում եւ մեզ յորդորում ու նամակ գրել տալիս (Վրաց) երկրին, եւ ինքներդ ձեզ յանդիմանում: Բայց նաեւ կար այն բանը, որ նախապէս աշխարհականներից լսել էինք ձեր սրբութեան մասին, իսկ այժմ Վրթանէս Քերթողից աւելի (լաւ) տեղեկացանք, թէ ինչպէս հալածուեցիք ու եկաք այստեղ, եւ մանաւանդ՝ հոգեւոր գործերի մասին, որին տէր կաթողիկոսը վերահասու է եղել, տեղեկացել եւ ձեզ ընդունել է, (ուստի) մենք քննութիւն անելու ի՞նչ պետք ունենք:

Արդ՝ այժմ ինձ արքայից արքան շտապ պալատ է կանչել, քեզ (աւելի) վաղ ասացի, թէ կը գրեմ արքայից արքային, որ բարերարութեամբ հրաման տայ, եւ կը գնաս քո եկեղեցում կը նստես ու քո հաւատով քո ժողովրդին կը կառավարես: Դու ասում ես, թէ Ատրնէրսեհը, Վահանը եւ եղբայրները չեն արել. վեր կաց, ընդդէմ կանգնիր, ես չեմ կարող սուր վերցնել եւ ամբողջ Վիրքի դէմ

կռուել: Այժմ քո հոգսը եւ գործը նախ Աստծոյ ողորմութեանը եւ ապա տէր կաթողիկոսին թող յանձնուեն: Որովհետեւ մեզ գրուած էր (կաթողիկոսի կողմից), թէ՝ «Կիրոնին երկու անգամ գրել ենք»: Բայց այս թող որ գրի երկու եւ երեք անգամ, ո՛վ գիտէ, գուցէ թէ ուղղութեան գան: Իսկ եթէ նոյն յամառութեան մէջ մնան՝ կտեսնենք: Որովհետեւ նրա իսկ նամակում հէնց գրուած էր, թէ մեր եւ ձեր հայրերը Երուսաղէմի հաւատն ունէին, եւ սուրբ Գրիգորն է այն տուել նրանց, մենք էլ նոյնն ենք պահում: Այժմ դրան թող տէր կաթողիկոսը պատասխանի: Եթէ մնում են նոյն խելագարութեան մէջ ու մեր միաբանութիւնից հեռանում են, թող Տէր Աստուած նրանց արիւնն իրենց գլխից պահանջի, իսկ մենք անպարտ կը լինենք:

Բայց թէ ինչպէ՞ս են այդ գործերն աւարտում՝ գրեցէք ինձ: Եթէ (նրանց) անհնազանդութեան մասին լսեմ, եւ Տէր Աստուած յաջողակ պահ տայ, ապա ո՛վ գիտէ, թերեւս արդէն այս (կեանքում) Աստծուց (արդար) հատուցում կը ստանան մեր մարմնաւոր տէրերի ձեռքով:

Ողջ եղի՛ր Տիրոջով»:

(Ուխտան., Բ-ԾԹ)

*Վրաց բաժանման վերաբերեալ գրուած նամակների երրորդ
խմբի մասին եւ ժամանակների ցուցադրում*

Գրուեցին եւ աւարտուեցին բոլորի նամակները, որ ուղղուած էին միմեանց Վրաց բաժանման մասին՝ սկսած Մովսէս կաթողիկոսից մինչեւ այս պահը: Եւ դարձեալ գրուեցին երեք ժամանակներից իւրաքանչիւրի մեկնաբանութեան պատճենները, որ վերաբերում են Վրաց բաժանմանը:

Նախ՝ այն ամենը, ինչ որ Հայոց կաթողիկոս տէր Մովսէսի ժամանակներում (եղաւ) իր նամակի ու պատգամի (հրովարտա-

կի) միջոցով, եւ ապա երկրորդն (այն) էր, ինչ որ Վրթանէս Քերթողի օրերում եղաւ, որը սուրբ Գրիգորի աթոռի տեղապահն էր, նմանապէս՝ նամակի եւ պատգամի միջոցով, իսկ երրորդը՝ տէր Աբրահամի ժամանակ, որը Հայոց հայրապետութեան աթոռը ստանձնեց Մովսէսից յետոյ:

Արդ Վրաց բաժանման սկիզբը եղաւ Մովսէսի ժամանակներում, ինչպէս քեզ տեղեկացնում են սկզբում գրուածները Կիրոնին ուղղուած նրա նամակում: Իսկ երկրորդը եւ երրորդը, որ եղան Վրթանէսի ու Աբրահամի օրերում, դրանց մասին եւս տեղեկացնում է «Գիրք թղթոցը», որը գրուեց (նաեւ) այստեղ (այս) պատմութեան մէջ: Բայց այսքանով թող բաւական լինեն մեր կողմից ասուածները:

(Ուխտան., Բ-Կ)

*Կիրոնի կշտամբութեան մասին եւ ինչ որ նրա կողմից
գրուեց ու ասուեց Աբրահամի երրորդ նամակի դէմ եւ
ինչ որ բանաւոր պատասխանուեց*

...Արդ քիչ խօսքերի յիշատակութեամբ շարադրեցինք (նաեւ) Կիրոնին կշտամբելու մասին, նաեւ այն, ինչ նրա կողմից (ասուեց) տէր Աբրահամի երրորդ նամակից յետոյ: Նաեւ Կիրոնի պատասխանի (մասին), որը հակաճառեց ընդդէմ Աբրահամի ցնորուած չարափառութեամբ եւ չարի նախանձով իր կամքի կորստեան կայծակները ջրմխեց եւ ջանք ու հնարամտութիւն թափեց խափանելու սուրբ հայրերի եւ երանելի վարդապետների բովանդակ աշխատանքը, խարխլելով ու խախտելով սուրբ եկեղեցու կարգերը, եւ (մի) ողջ երկրի բարեպաշտութիւնը վերացրեց:

Նաեւ Աստծոյ մարմնացեալ Բանի (Քրիստոսի) եւ նրա նախախնամութեան միաւորութիւնը երկու բնութեան բաժանեց ըստ՝ Քաղկեդոնի չարափառ ժողովի: Նաեւ բազմաթիւ հայհոյու-

թիւններ ու անօրէն հերձուածներ մուծեց եկեղեցի այս Կիւրոնը՝ իր հետ միաբանուածներով հանդերձ, որի համար թող Աստուած սրան եւ նրանց խորտակի: Եւ չարիմաց այս մարդու չարագործ, չարահնար ու չար մտադրութիւնները քեզ ցոյց են տալիս իր նամակներն ու խօսքերը: Իսկ եթէ համառօտ ցանկանաս, քեզ ցոյց կը տայ նաեւ /նրա/ խօսքերի այս բացատրագիրը, որը մեր կողմից կ'ասուի չար նամակագիր Կիւրոնի դէմ, եւ ասում է:

Արդ՝ երբ ընթերցուեց Աբրահամի նամակին ի պատասխան Կիւրոնի (գրած) երրորդ նամակը, (որը) նման չէր առաջին կամ երկրորդ նամակին, այլ ուրիշ (մի) բան էր՝ լի խժբժանքներով ու խարդախութեամբ, (ապա Կիւրոնը) մեր կողմից (վերջնականօրէն) մերժուեց, որովհետեւ այն առաջին երկուսում նրա կեղծաւոր չարութիւնը թաքցուած էր, թէպէտեւ տեղ- տեղ կ'ծում էր, իսկ երրորդում ընթերցողների ականջներին լսելի եղան այն (մարդու) մտքի չարահաղորդ բառերը, որը եղաւ չարի ակնյայտ գտնողը, չար ուսմունքի ուսուցիչը եւ այն չար սերմի երկրագործը [հողին տուողը], որը ցանուեց ցորենի վրայ սաղրանքով Քաղկեդոնի տիեզերակործան ժողովի ու Լեւոնի յիշելու անարժան տոմարի, որոնք ինքն իր մէջ յայտնաբերելով՝ ցանեց Վրաց երկրում՝ նրանց ինքնակամ ցանկութեամբ եւ յօժարական մտքով: Եւ կամ թէ կամեցել էր իր սխալ ու խոտորիչ, սնոտի ու դատարկ խօսքերով, չիմանալով, թէ ինչ էր գրում իր չար նամակում՝ իր չար կամքի պայմանը դնել, ինչ որ մտածում էր: «Իսկ եթէ հաւատի մասին ինձ գրէք, ասում է, ինձնից պատասխան չէք ստանայ»: Եւ դարձեալ, թէ՛ «Ես Հայաստանով ինչ-որ տեղ ճանապարհ անցնելուց բացի ուրիշ մի բան չունեմ (անելու)»:

Եւ այսպէս իր կորստեան այս մահուան վճիռը կայացրեց, եւ այն էլ՝ ոչ թէ գրաւոր կամ գիտութեամբ ասելով անջատուեց մեզնից, այլ մարդկային ինչ-որ ուսմունքով եւ խաւարի իշխանութեամբ վարուեց՝ իրեն գործակից գտնելով հաւատի հակառակ այն նեստորական խուժիկին ու իր համախոհներին, որ նրա հետ

էին, եւ նրանցով էր մարտնչում ընդդէմ սուրբ հայրերի եւ երանելի վարդապետների կենսամիտ վարդապետութեան, որոնք ուղիղ դաւանութեամբ մեզ տարան Աստծոյ Աւետարանի փառքին: Իսկ որ մինչ այն ժամանակը իր անօրէն ունայն մտադրութիւնը թաքուն էր պահում (դա) մեր կողմերից երկիւղ ունենալու պատճառով (էր): Նախ մինչեւ /այդ/ կենդանի էր մեր հայրապետ Մովսէսը, որի ձեռքից նա ձեռնադրութիւն էր ստացել: Որովհետեւ Մովսէսի ժամանակ վրայ հասաւ Կիւրոնի մահուան երկունքը եւ հոգու հիւանդութեան հեծեծանքը, որով յղացել էր երկունքի ցաւերը, իսկ Վրթանէսի ու Աբրահամի օրերում ծնուեց անօրէնութիւնը, եւ իր նոյն ցաւերի մէջ մեռաւ եւ իր հետ մեռցրեց մի ողջ ազգ:

Բայց որովհետեւ Հայոց աշխարհն անիշխանութեան մէջ ընկաւ եւ հոռոմներն ու պարսիկները իրենց միջեւ բաժանեցին (Հայաստանը) Մուրիկ կայսեր եւ արքայից արքայ Խոսրովի ժամանակներում (18), (Կիւրոնն) իրենից դէն նետեց մեր կողմի երկիւղն /ու/ կասկածանքը, եւ դրա համար համարձակ վստահանալով երկու իշխանութիւնների միջեւ՝ հակառակուեց, ընդդէմ դարձաւ սուրբ հայրերի Աւետարանի ճշմարիտ քարոզութեանը, ինչպէս առաքելների ժամանակ Եղիաս մոզը եւ կամ Կերինթոս կախարդը եւ կամ նոյն ինքը կախարդների մայր Սիմոնը: Հակառակուեց Տիրոջ նախախնամութեան վերաբերեալ երկու՝ մարգարեական եւ առաքելական պատուիրաններին եւ մեզ մօտ միացեալ (քարոզուող) բնութիւնը երկու բնութեան բաժանեց: Նաեւ իրենց խաւարային խորհուրդների ալեկոծ խորութեան մէջ այն (բնութեան խնդիրը) ներհակ ու հակառակ դրեց իր հակաճառ բարբաջանքներով:

Եւ ես այնպէս եմ կարծում, թէ հէնց սկզբից մարդասպան է եղել այն նենգագործը՝ իրեն տեղից տեղ փոխելով եւ ամեն բանում սուտ գտնուելով: Բայց ես սրա վրայ խիստ զարմացած չեմ, քանզի սուտ ու ի սկզբանէ Տիրոջ կողմից վկայուած մարդասպան

է նաեւ նրա հայրը՝ սատանան: Քանզի նա էլ Աստուածորդու նկատմամբ ունէր հրէաների հայեցողութիւնը: Իսկ սա (Կիւրոնը) ոչ (միայն) մարդասպան էր, այլեւ հոգեւսպան, որովհետեւ անմեղ էակների հոգիները, որոնք դեռ երեխայամիտ մարդիկ էին, ջանաց սպանել: Կամ թէ սպանեց իսկ գրով ու խօսքով, եւ կեցուցիչ Հոգին հեռու վտարեց նրանցից, իսկ օտարամուտ չարը էութեամբ ամբողջովին իր մէջ բնատրեց, ինչպէս որ սովորութիւն ունի չարը բարու դէմ մարտնչել եւ մտնել բռնաբարել ազատութիւնն ու հակառակի միջոցով հակառակների հետ շտապել, եւ այդ անում է իր համակիրների միջոցով: Եւ այստեղ հէնց դա էր մեզ վիճակուել տեսնելու, որովհետեւ իր անհեթեթ եւ անճոռնի, անվայել ու խռովարար խօսքերն այստեղ-այնտեղ սփռելով՝ ջանք էր թափում դառնալու Սամարտիկոս (խռովարար) եւ իր վարդապետութեան նոյն չար սերմն է տալիս եւ արդարութեան խօսքը կիսատ-պռատ կատարողներին խմեցնում չարառիւ ցաւախառն մրուրը, որն ինքը հնուց ունէր, եւ որը նենգօրէն, դառնապէս ու դժնդակ կերպով անբժշկելիօրէն խմեցնում են հրէական զանգուածին իր քացախոտ չարութեան մէջ, որոնց մրուրը չի սպառուում: Եւ այսպէս հակառակորդ լինելով աջակողմին եւ իրեն թեքելով ձախակողմը՝ հոխորտում է, տհաս մտքերով ընթանում առասպելների սնոտի խօսքերի հետեւից, մարդկանց պահում սատանայական ու դատարկ, խաբեբայական պատուիրանով եւ այդպէս բաց թողնում Աստծոյ պատուիրանը, որպէսզի մի՝ գուցէ կարողանայ աւարել ու գերել իր հետ համաձայնող պարզամիտներին:

Նաեւ, ինչպէս որ պատմուեց, նախապէս զատեց իր հօտից ու հալածեց Տիրոջ տանից Յուրտաւի եկեղեցու այս առաջնորդին, որը համարձակութեամբ Աստծոյ խօսքն էր ասում նրան, որովհետեւ նախքան նրա չարութեան յայտնի դառնալը կասկածելով (այդ մասի՝ եպիսկոպոսը) յանդիմանում էր նրան, ինչպէս որ ինքն է յիշում իր նամակում, եւ այն էլ ոչ թէ կասկածով, այլ ստոյգ

կերպով: Իսկ նա (Կիրոնը) նրա հետ չհամաձայնուեց եւ չընդունեց նրա վարդապետական խրատը, մինչեւ որ ընկաւ կորստեան խորխորատը:

Ապա այնուհետեւ դաւադիր լինելով իր վերքերի ու խաւար մտադրութիւնների մէջ՝ (Կիրոնը) կամենում էր գաղտնի սպանել անմեղին, բայց խփուելով այն ժայռին՝ փշրուեց (ինչպէս որ հրեաները (փշրուեցին) Փրկչի կողմից), եւ ժայռին ոչ մի վնաս չտալով՝ ինքը ժայռին բախուելով՝ խորտակուեց: Քանզի կամեցաւ նրան հեռացնել իր ժառանգութիւնից, (բայց) ինքն արտաքսուեց անվախճան կեանքից, քանզի իրեն համակամ գտաւ այն նետտորական խուժիկին եւ նրա նման շատերին: Որովհետեւ Կիրոնն ինքը շատերի անունից է խօսում, եւ ոչ թէ մէկի, քանզի Աբրահամին գրած իր նամակի մէջ ինքն է ասում (դա): «Երբ իմացանք, ասում է, նրանց չար աղանդի մասին, հեռացրինք մեզնից, եւ դրանից յետոյ ոչ ոք չի համարձակուում ողջոյն տալ նրանց»:

Բայց (իրականում) նրան ծածկելով՝ թաքցնում էր իր մօտ եւ այս կամ այն բանն էր պատճառաբանում եւ նրանցով հանդէս էր գալիս ուղղափառ ճշմարիտ հաւատի դէմ, ինչպէս որ մի ժամանակ ի սկզբանէ սատանան դրախտում օձով էր հանդէս գալիս մեր նախահօր դէմ: Քանզի ինչպէս նրանով եւ նրա միջոցով մահը աշխարհի մտաւ, նոյնպէս էլ սրա միջոցով բազմաթիւ հերձուածներ ու հայհոյութիւններ մտան եկեղեցիները: Ընդ որում իրեն էլ ներկայացնում էր լուսոյ հրեշտակի կերպարանքով, ինչպէս որ սատանայի սովորութիւնն է (այդպէս) կերպարանուել: Եւ զարմանալի չէ, որ սա էլ նոյն կերպ էր անում, որովհետեւ նրա (սատանայի) խաբկանքը կատարեց Վրաց աշխարհի համար: Քանզի վարագուրելով իրեն՝ չարին բարի էր ներկայացնում, (եւ)/ այն, ինչ որ իրօք խաւար էր, լոյս էր կերպաւորում, եւ (իբրեւ) կամենալով լինել օրէնքի վարդապետ, խոտորվելով իր խօսքերի դատարկութիւնից չէր իմանում, թէ ինչ խօսէր եւ թէ ինչի մասին էր պնդել: Եւ Հիմենիոսի ու Ադեքսանդրի նման մատնուեց

սատանային, որ խրատուի՝ չհայհոյելու: Որովհետեւ ասում են, (թէ) այն Կիւրոն Սկուտրացին ծանր ու չարորակ հիւանդութիւնից սատակելով աւարտեց իր կեանքը, քանզի իրենից հեռացրեց սուրբ մտքի հաւատը եւ նաւաբեկուեց ճշմարիտ հաւատքին բախուելով, (եւ) ոչ մի բան նրան չօգնեց հնազանդութեան գալով բուժուելու:

Իսկ այն ուղղափառների եկեղեցիները, որ աստուածային պատուիրանը գիտէին եւ սովորել էին Տիրոջ տանը եւ իրենց մէջ բերել արմատաւորել էին Աւետարանի խօսքն ու գործել առաքելական քարոզութեան ճշմարիտ խոստովանութեան հաւատով, չսասանուեցին՝ այն խաբեբայի սխալական չար վարդապետութեան շփոթմունքից դրդուելով: Քանզի զինուորագրուած էին գեղեցիկ զինուորութեամբ եւ սնուել էին հաւատի խոսքերով ու բարի վարդապետութեամբ, նաեւ հետեւել էին ճշմարտութեանը եւ մինչեւ այժմ կան ու մնում են յենուած եւ յոյս դրած Տիրոջ օրենքների վրայ: Եւ Աստծոյ սյատուիրանների բարեպաշտութեան սահմանն իրենց մէջ ունենալով արմատաւորուած, ինչպէս ասացինք, օրենքով պայքարում էին չար ոսոխի դէմ, որ դեռեւս կան ու մնում են նոյնը եւ միշտ նայում են այս մոլորութեանն ու վարդապետութեանը դեւերի կեղծաւորութեամբ՝ տանջուելով իրենց խղճմտանքից: Իսկ մերոնք եւ մերոնց համար նրա կողմից հալածուածները հետեւեցին այն սուրբ ու աստուածահաճոյ հայրերի ուղղափառ խոստովանութեան բարեպաշտութեանը, որ հաւաքուեցին Նիկիայում, Եփեսոսում եւ Կոստանդնուպոլսում: Եւ նրանք ստացել էին (այդ) ուղղափառ խոստովանութիւնը սուրբ առաքեալներից, իսկ առաքեալներն ընդունել էին Սուրբ Հոգուց, եւ ուղղափառ խոստովանութեան գեղեցիկ հաւատը գործում է մեզանում ի սկզբանէ եւ մինչեւ այժմ, եւ նրանց հետ մենք դաւանեցինք ու կը դաւանենք մինչեւ վերջ: Եւ նա (Յուրտաւի եպիսկոպոսը) այդ նոյն բարեպաշտութեան մէջ աչքի ընկնելով՝ նոյնն էլ աւանդեց իր եկեղեցուն հաւատի խօսքերով եւ

բարի վարդապետութեամբ, քանի դեռ Կիւրոնի կողմից չէր հալածուել, իսկ հեռացուելուց յետոյ էլ նոյնը հեռուից գրաւոր էր հաստատում:

Իսկ քանի դեռ Կիւրոնը չէր ունայնացել, որեւէ մէկի դէմ պատասխան չէր տալիս՝ գրաւոր կամ բանաւոր, մինչեւ նրան Վրթանէսի գրելը, այլ միայն Արքանոսի խոնարհութիւնն էր ցոյց տալիս, որը երանելի Կիւրեղի ժամանակ էր, եւ կամ նոյն իրեն Սիմոն կախարդի (խոնարհութիւնը), որը Պետրոսի ժամանակ էր, թէկուզ եւ գրէր որեւէ մէկին կամ խօսէր՝ մինչեւ Աբրահամի երկրորդ նամակի պատասխանը: Բայց երբ Յուրտաւի եպիսկոպոսի կողմից գրաւոր կերպով, իսկ Վրթանէս Քերթողի կողմից խօսքով տեղեկացուեց Կիւրոնի կեղծաւոր կորուստը, նոյնպէս նաեւ Սմբատ մարգպանի, իշխանների, շինականների կողմից, որոնք իմացան նրա մոլորութեան մասին, իսկ յետոյ ստոյգ ու հաւաստի (Աբրահամին) իր երրորդ պատասխան նամակից իմացուեց Կիւրոնի բացայայտ չարութիւնը՝ ամբողջական դարձած եւ մոլորութեան աւարտին հասած, ապա եւ նա (Աբրահամը) շրջաբերական նամակ գրեց նրա դէմ ուղղափառների բոլոր եկեղեցիներին եւ նրան կտրեց ու հեռացրեց Սուրբ Հոգու սրով:

Եւ գրեց, որ զգուշանան նրանից (Կիւրոնից), նրա նորահունչ չար վարդապետութիւնից եւ (Վրաց) աշխարհի հետ սիրուց ու խնամութիւնից, նաեւ՝ մկրտութեամբ նրանց հետ միաւորուելուց եւ կամ միմեանցից (ամուսին) առնելուց եւ այլ տեսակի հաղորդութեամբ միաւորուելուց, այլ միայն (իրաւունք ունենալով)՝ իբրեւ այլադաւանների հետ՝ ինչ-որ բան վաճառել կամ գնել միմեանցից: Նաեւ (Սուրբ) Խաչին, որ Մցիսիթայինն է եւ կամ Մանգղիսինը, ոչ ոքի թոյլ չտալով գնալ նրանց մօտ երկրպագութեան, եւ կամ խափանիչ ուխտի (գնալ) մի այլ տեղի որեւէ եկեղեցի, եւ կամ որտեղ (որ) ուխտի սյատրուակով անուանում են Խաչ ու դրանով խաբում անմեղների սրտերը: Այս ամենի վրայ կապ ու կնիք դրեց՝ չարաչար նզովքով ու տոյժի սպառնալիքով՝

հոգեւորականների համար, եւ տուգանքներով՝ աշխարհականների:

Եւ այսպէս Տիրոջ բարկութեան բաժակը հասաւ վրացիների վրայ՝ նրանց անէծքով ու ցաւագին հեծեծանքով պատելով: Որովհետեւ նրանք չմնացին Տիրոջ ուխտին հաւատարիմ եւ չկամեցան գնալ ըստ նրա իրաւունքի (օրէնքի), այդ պատճառով բարձիթողի արուեցին՝ գնալու իրենց կամքով: Եւ այս եղաւ նրանց Կիրոնի պատճառով, որովհետեւ նա իժից խայթուեց անասելի, անբուժելի վերքերով: Նաեւ առաջին չար ու խաբեբայ օձից զարկուեց, քանզի քանդեց հայրենի պարիսպը եւ եղաւ չարիքներ գտնող ու հակառակորդ՝ իր նորահունչ խօսքերի ինչ-որ ստանուն գիտութեամբ եւ հակառակութիւն ու կոխ զցելով երկու կողմերի միջեւ:

Իսկ հապա ինչ ասեմ նրա մասին եւ կամ ի՞նչ գովասանք ասեմ նրա նամակներում մեր մասին գրուած պարսաւանքներին հեգնելով նրա անմիտ իմաստութիւնը, աներկիւղ վախուորածութիւնը, որ իր խաբեբայական չարութեամբ խաբեց ու հաւատքից խախտեց Արեաց (ենթակայ) այն ամբողջ Վրաց երկիրը, այդ անզգամն ու անմիտը՝ իրեն իմաստուն կարծելով: Եւ սրանով իմաստուն Սողոմոնի խօսքն է յարմար գալիս նրանց, որոնց թում է, թէ իրենք իմաստուն են (իրենցով): Քանզի Սողոմոնն ասում է. «Վայ նրանց, որոնց թում է, թէ իրենք իմաստուն են իրենց անձերով»: Իսկ աստուածային առաքեալն ասում է. «Մթութեամբ խաւարեցին նրանց սրտերը, եւ իրենց իմաստուն էին համարում (ու) յիմարացան»: Իսկ սա իր անմտութեամբ այդպիսին եղաւ. իրեն իմաստուն կարծեց այդ անմիտը եւ Աստծոյ ճշմարտութիւնը փոխեց ստութեան հետ, քանզի ատելութիւն բերուեց նրա բերանով, եւ սուր շողաց նրա շրթունքներին, եւ նենգութիւն գտնուեց նրա լեզուի վրայ, եւ ամեն բանով ամեն ինչի մէջ էլ խոտան դուրս եկաւ: Որովհետեւ խոտորուեց ուղիղ ճանապարհից, որին ուղղափառությամբ հետեւեցին մեր հայրերը եւ

մեզ սովորեցրին նոյն (ճանապարհով) ընթանալ: Իսկ այն խեղճն ու թշուառականը թողեց սուրբ հայրերի օրենքները եւ հետեւեց խուժիկին ու մոռացաւ երանելի վարդապետների պատուէրը: Ընթացաւ նեստորականների յետեւից, իրեն խոհեմ ու իմաստուն կարծելով՝ անօրինաբար զայրացրեց Սուրբ Հոգուն: Անօգտակար ջանք թափեց եւ իր սնոտի ցանկութեամբ խոտորեց շատերի միտքը եւ այն, որ մեր սուրբ հայրերը եւ ուղղափառ վարդապետները միմեանց համաձայնութեամբ եւ Սուրբ Հոգու հաճութեամբ աւանդեցին մեզ, այսինքն՝ առաքելական վարդապետութիւնը եւ իրենց դաւանութիւնը, որպէսզի մենք ճշմարիտ խոստովանութեամբ պատուենք, պաշտենք եւ մեր Տիրոջ մարդէղութեան տօնը տօնենք, որ մինչեւ այժմ արմատաւորուած բերում են ուղղափառների եկեղեցիները:

Սրան ոչ ոք հակառակ չկանգնեց, բացի միայն նրանից, որ հակառակ կանգնեց իրեն եւ հերետիկոսների հետ դատաստան է ընդունում, որոնք մերժուելով սուրբ հայրերի ու վարդապետների կողմից՝ կործանուեցին: Եւ արդ՝ որովհետեւ սրանք այսպէս սուրբ ու բարեպաշտ հայրերի կողմից մեզ աւանդուեցին, ինչպէս ասացինք, սրանից յետոյ նաեւ յաջորդը յանձն կառնենք պահել ու կատարել, որպէսզի թերեւս կարողանանք զգուշանալ չար ոսոխի սուտ ուսմունքից եւ չար սերմը ցորենի վրայ սերմանողից՝ գիշերը ցանող չար մշակից եւ ճշմարտութեան թշնամուց: «Այսուհետեւ, ասում է, գիշերային աղջամուղջի սեւութիւն սերմանողին ձեզնից զգուշօրէն հեռացրէք»:

...Քանզի Քրիստոսի՝ մարմնով մարդանալը եւ մարմինը Հոգուն միաւորելը շփոթուած ու խառնակուած համարեց այն աւերիչը՝ Վրաց կաթողիկոս անուանուած Կիւրոն կոչեցեալը, որը եղաւ Կերինթոսին հաւասար, որից երանելի առաքեալ եւ աւետարանիչ Յովհաննէսը վախենալով՝ բաղնիքից փախաւ Կերինթոսին ներսում տեսնելով: Եւ կամ թէ ծնունդ (եղաւ Կիւրոնը) Քաղկեդոնի անօրէն ժողովի եւ պտուղ՝ Լեւոնի աղանդի: Քանզի

իրեն պատրաստեց նրանց յետեւից այլ Քրիստոսի քարոզելու, որը Պօղոսի կողմից քարոզուածը չէր, եւ Հոգին օտարացնելու, որն առաքեալներից ու նրանց կողմից քարոզուածներից ոչ ոք չարեց, եւ կամ օտար աւետարան ընդունելու, որը սուրբ հայրերից ոչ ոք չէր ընդունել եւ կամ (ոչ էլ)՝ երկրորդ սուրբ առաքեալը՝ մեր երանելի սուրբ Գրիգոր Լուսաւորիչը, որը մեզ սովորեցրեց ճշմարտութիւնը:

Եւ այսպէս ապա չարիքներ խորհողը կամ գտնողը չբաւականացաւ՝ մնալու իր հնացած չարութեան կամ թէ անօրէն հայիտութեան մէջ, այլ դարանակալօրէն իր մօտ նստեցրեց այն խումբիկին եւ նրա նման նեստորականներին: Եւ հէնց ինքը՝ Նեստոր եղաւ՝ եւ երկրորդը, եւ առաջինը, որը դէպի մեզ փչեց Արիոսի չար ու աղտեղի մտածմունքները՝ տարագրելու եւ գերելու համար նրանց, ովքեր դեռեւս չէին խոտորուած նրա չար խմորի շնորհիւ (այդ (խմորը) կենդանաբար հաց չի դառնայ), եւ կամ փաղաղից, որ այն խումբիկը /իբրեւ/ փարիսեցիների անաստուած վարդապետութեան նշխար բերեց հրէական աղանդի հին ու քացախոտ չարութիւնից եւ նրանով առհասարակ խմորեց Վրաց ամբողջ երկիրը: Եւ այսպէս Կիւրոնը նրանով մաքառեց ու կռուեց ճշմարտութեան դէմ իր անարժան գրութեան եւ չար նամակի միջոցով, որ ուղղուած էր Աբրահամին, եւ այդպէս դարձաւ ժառանգորդ այնպիսի անէծքի, ինչպէս Կայէնի անէծքի ծնունդ այն մեստրացի քուշանը, որը փորձեց ուսուցիչ դառնալ Սէմի՝ Արեաց երանելի ազգին:

Եւ արդ՝ որովհետեւ մեզ այսպէս վիճակուեց պատմել Կիւրոնի մասին, ապա թող այստեղ նշանակուի եւ հեռու տարուելով տարագրուի մեզնից նրա անհանճար ու անընտրելի միտքը, եւ նրա հերետիկոս լեզուն (թող) կապ ընկնի նենգութիւն խօսելուց, եւ նրա ծաղրական ու ցնորական մտքի խօսքերը իբրեւ ինչ-որ փշրանք հեռու թքելով՝ թողնենք եւ ջանանք խոպան դարձնել նրա դժոխընթաց ճանապարհը, որ նրան թուում էր, թէ ուղիղ է:

Քանզի աստուածային Սողոմոնն ասում է՝ թե՛ «Կան ոմանք, ում թուում է թե իրենց ճանապարհներն ուղիղ են, բայց նրանց (ճանապարհների) ծայրը նայում է դժոխքի յատակին»:

(Ուխտան., Բ-ԿԱ)

*Առաջին պատճառի բացատրության մասին, որ վերաբերում է
Կիրոնի /ձեռքով/ Վրաց բաժանմանը*

Այժմ քեզ գրում եմ ինչին որ մենք ենք վերահասու եղել Վրաց բաժանման առաջին պատճառի մասին, որովհետեւ «Գիրք թղթոցում» չգտանք այլ պատճառի (մասին) գրուած. բացի միայն այն նեստորական խումիկից. որի մասին Կիրոնին գրեց երանելի հայրապետ Մովսէսը, որ մինչեւ այժմ յիշուում է:

Արդ՝ կանցնեմ համառօտակի յիշատակելու առաջին պատճառի մասին, որի առթիւ վերելում խոստացանք ասել՝ յետ թողնելով այն խումիկին: Քանզի մենք ստոյգ վերահասու եղանք (մի) շարք գրոյցների (լսած) ոչ միայն մէկից կամ երկուսից. կամ երեքից, այլ շատերից (եւ) շատ անգամ. եւ այժմ քո հարցասիրութեանը կասեմ, ըստ իմ առաջին յանձնառութեան, ո՞վ հոգեւոր հեղինակ, որովհետեւ նախապէս պատուէր ստացայ քեզնից. որ մենք ամեն բանի (համար) հոգ տանենք եւ հաւաստին ի լրոյ եւ ի գրոյ շարադրենք այս պատմութեան մէջ: Իսկ մենք յանձն առանք, որ քանզի մեզ քո կողմից վստահուեց այս գործի պատասխանատւութիւնը՝ երբեք զանց չառնել քո հրամանը, այլ ամենայն ջանք գործադրել եւ խնամքով հոգալ. որքան մեր միտքն ու կարողութիւնը կը բաւականացնեն: Որովհետեւ քո ցանկութեան պարտադրանքն էլ այդ խնդրի վերաբերեալ հաճոյ թուաց մեզ. (ուստի որոշեցինք) մեր տկարութիւնը մի կողմ դնել եւ քո հրամանի կատարման դժուարութիւնը հեշտութիւն (հաճոյք) համարել:

Արդ՝ առաջին պատճենի մասին այս համառոտակի յիշատակումից յետոյ կը շարադրենք այն. ինչ որ պատմուեց ըստ իրենց ժամանակների հերթականութեան իւրաքանչիւրն (իր) տեղում: Իսկ դրանից յետոյ կը յիշատակենք եւ այն. ինչ որ պատշաճ կը համարենք ըստ մտքի հերթականութեան բերման:

...Որովհետեւ դա այսպէս են պատմում ծերերի ականդութիւնից, թէ Հայոց կաթողիկոս Աբրահամի ժամանակներում, երբ սա նստեց իր հայրապետական աթոռին, նրա մօտ եկան Վրաց եւ Աղուանից կաթողիկոսները, քանզի այն ժամանակ նրանք սուրբ Գրիգորի աթոռի արքեպիսկոպոսութեան աստիճան ունէին, եւ ըստ նախկին հայրերի սահմանման ու սովորութեան՝ եկան Աբրահամի մօտ նրա հայրապետութեան առաջին տարում ի սէր եւ ի հնազանդութիւն: Իսկ սա նրանց ընդունեց մեծ պատուով եւ հոգեւոր սիրով, ինչպէս հարկն է, եւ նրանց նստեցրեց իւրաքանչիւրին իր գահաւորակին, ինչպէս որ նրանց նստելու սովորութիւնն էր: Եւ ճաշի ժամին տէր Աբրահամի ձեռքից առան հացը, օրհնեցին ու կերան մինչեւ գինի (ըմպելու) ժամանակը: Ապա տէր կաթողիկոսն առաւ (գինին), օրհնեց եւ նախ տուեց Աղուանից կաթողիկոսին, իսկ երբ կամեցաւ յաջորդը տալ Կիւրոնին, նա չկամեցաւ վերցնել՝ խոժոռուելով իր մտքում. Իսկ երբ Աբրահամ կաթողիկոսն այս տեսաւ, այդ պահին ոչինչ չասաց: Ապա երբ ստիպեց Կիւրոնին պատճառն ասել, հարցրեց (նրա) արարքի որպիսութեան մասին: Իսկ նա պատասխան տալով՝ ասաց. «Ինչո՞ւ եղաւ իմ այս ստորացուելը քո կողմից, քանզի ես աւելի աւագ եմ, քան նա եւ (աւելի) մեծ իմ տնով (երկրով): Իսկ այս տանը գահերեցութիւնը նախ իմն էր եւ ապա դրանը, որովհետեւ ես իմ վիճակով աւելի վեր եմ քան դա, եպիսկոպոսների (քանակով) եւս առաւել, հաւատով էլ դրանից աւելի վաղ եմ՝ (սկսած) սուրբ Գրիգորից եւ այս կողմ»:

Իսկ Աբրահամը, քանզի կամեցաւ խաղաղեցնել, սկսեց արդարացնել նրան (Աղուանից կաթողիկոսին) եւ ասաց. «Ես այդ

ամենը չգիտէի, ո՞վ տէր եղբայր, միաժամանակ այդ պատիւն արեցի նրա ծերութեան համար, սովորելով Սուրբ Գրքից: Քանզի իմաստուններից մէկն ասաց, թէ՝ «Սպիտակ մագերը պատուեցի եւ ծերերի առջեւ ոտքի կանգնեցի»: Եւ դարձեալ աստուածային Պօղոսն (ասում է), թէ՝ «Ծերունուն պէտք է ընդունես իբրեւ այր», իսկ մէկ ուրիշն /ասում է/, թէ «Ծերութիւնն անելի պատուական է»: Եւ Մովսէսի ժամանակ էլ իբրեւ խրատ Իսրայէլի ժողովրդին /Սուրբ/ Գիրքն ասում է. «Սպիտակ մագերի առջեւ պէտք է վեր կենաս ու պատուես ծերունու երեսը, եւ (պէտք է) երկիւղես քո Աստծուց»: Եւ սրանց նման այլ խօսքեր ասում են (նաեւ) այլ տեղերում: Արդ՝ քանզի նա ծեր էր, իսկ դու երիտասարդ, նրան այդ պատիւը ոչ թէ մեծութեան համար արեցինք եւ ոչ էլ այլ բաներով նրան նախամեծար համարեցինք, այլ միայն ծերութեան համար».

Եւ այսչափ եւ այսպիսի խօսքերով խօսեց նրա հետ, (բայց) չկարողացաւ հաշտութեան բերել: Եւ վեհարանի այլ պաշտօնեաներ, որ կային (այնտեղ), նոյն խօսքերն էին ասում, որ թերեւս խաղաղուի գրգռութիւնից եւ լռի: Բայց նա անելի ու անելի էր գրգռում ցատումով, իրեն մղում խռովութեան, որ կարծում եմ, (թէ) միայն խռովութեան պատճառ էր որոնում: Եւ այնուհետեւ նրանցից ոչ ոք չկարողացաւ նրան լռեցնել, քանզի թէպէտեւ կամեցան վերացնել այն պատճառը, որ կամենում էր պատճառներ (համարել) չկարողացան: Եւ այնուհետեւ խաղաղութիւն չեղաւ երկուսի միջեւ: Քանզի (Սուրբ) Գիրքն ասում է. «Խաղաղութիւն, խաղաղութիւն, բայց այնտեղ խաղաղութիւն չկար»:

Ապա այնուհետեւ Կիրոնը վեր կացաւ ու հեռացաւ սեղանից: Եւ ոչ ոք այնտեղ եղած մարդկանցից չկարողացաւ նրան յետ դարձնել: Նա մի բաժակի փոխարէն անդրանիկութիւնը վաճառեց՝ ինչպէս այն Եսաւը հնում, որ մի կերակրի համար անդրանիկութիւնը վաճառեց իր եղբօրը՝ Յակոբին. եւ չնայած նա յետոյ արտասուքներով զղջաց, (բայց) ներում չգտաւ: Իսկ սա ոչ առաջ զղջաց, եւ ոչ՝ յետոյ: Նա կերակուր առաւ եւ օրհնութիւն տուեց,

իսկ սա բաժակ տուեց եւ անէծք առաւ իր անձի համար՝ (եւ) առանց թողութեան:

Արդ՝ սա մեզ աւանդութիւնից է հասել, այլ ոչ թէ գրով, քանզի Սուրբ Գիրքը սովորութիւն ունի նաեւ հեթանոսների գրոյցներից խօսք ասել եւ վկայութիւն բերել: Նաեւ առաքեալն է յիշում այս խօսքն իր այն թղթում, որ ուղղուած է Տիմոթէոսին. «Պէտք է, ասում է, նաեւ հեթանոսներից օգտակար վկայութիւններ վերցնել»: Եւ դարձեալ գոեհիկ առասպելներից (յիշենք) այն խօսքը, թէ «Ուտենք, իմենք, քանզի վաղը մեռնելու ենք»: Եւ այս աւանդագրոյցներում Կիւրոնը կործանուեց ըմպելիքի համար: Իսկ աւելի կատարեալ անձանցից մէկը, որի անունը եւ խօսքը յիշում է պատմագիրներից մէկը, այսպէս է ասում. «Ողոմպիոսոս անունով մէկն ասաց «Կը պատմեմ ձեզ, ասում է, աւանդութիւնից մեզ հասած անգիր գրոյցներ, որոնք գեղջուկներից շատ-շատերը պատմում են մինչեւ այժմ»: Եւ դարձեալ, թէ՝ «Ոմանք այլատեսակ, եւ ոմանք այլաբանօրէն մատեանների /գրքերի/ գրոյցներ էին տալիս»: Արդ՝ մենք ոչ (թէ) գեղջուկներից, ոչ էլ գոեհիկ առասպելներից (իմանալով) ասացինք, այլ գրասէր չափազանց զիտակ մարդկանցից սովորելով՝ պատմեցինք քեզ: Որովհետեւ պէտք էր, որ մենք ծերերի վստահելի մարդկանց աւանդութիւնից մեզ ասուած անգիր հին գրոյցներից (եւս) պատմեինք քեզ այս պատմութեան մատեանում, նաեւ՝ մեր ժամանակ (եղածներից), թէկուզ էլ (դրանք) դեռեւս գրաւոր հաստատուած չեն:

Այս դրուագում (գլխում) ասացինք առաջին պատճենի պատճառները, որ մեզ վրայ պատուհաս հասաւ՝ մարդադաւ Կիւրոնի փառասիրութեան պատճառով, որը մէկն էր, բայց մի բաժակի համար պատճառ եղաւ մեզնից այնքան բազմամարդ ազգի բաժանման: Քանզի կայ մահ, որ (ընդամենը) մի ցաւից է հասնում մարդկանց: Քանզի Աստուածաշունչն Ադամի՝ փառքից ընկնելու մասին ասում է, թէ՝ «Մի պտղից ճաշակեց, ասում է, եւ մահն էլ ընդունեց այդ մէկից», այլ ոչ թէ երկու կամ երեք պտղից: Եւ դա

փառքի պատճառով, որից էլ (ծագում է) մեղքը, իսկ մեղքից էլ՝ մահը, (քանի) որ աստուածային հրամաններից լսեց, թե՛ «Հոդ էիր հող կղառնաս»: Որովհետեւ ձգտելով այլ փառքի, որ չունէր, նաեւ կորցրեց այն, որ ունէր: Եւ դրա պատճառով բոլոր մարդկանց մահ վիճակուեց, եւ մի մարդու մահով մեռան ամենքը, (ինչպէս որ) գրուած է: Եւ մահից յետոյ եղաւ մեղքը, որը տիրեց մարդկանց էութեանը: Եւ այն (մահը) մեր ներսը դրանից յետոյ մտաւ, այլ ոչ թե՛ (ի սկզբանէ) Արարչի կողմից: Յետոյ (եղան) նաեւ տեսակ-տեսակ կռապաշտութիւնները, որ թողնելով Արարչին՝ արարածներին պաշտեցին, այսինքն՝ արեգակին, լուսնին եւ աստղերին, նաեւ ոսկին ու արծաթը (պաշտեցին), նաեւ՝ քարը, փայտը, այլ անթիւ բաներ, որ նիւթերի մէջ են. թող թոյլ տրուի ասել՝ նաեւ (պաշտեցին) սողուններին, ջրային գեղուններին, որոնց բոլորին եւ վերացրեց Քրիստոսը եւ Քրիստոսի քարոզը: Եւ ապա նրանց պաշտամունքը Քրիստոսին մատուցեցին, եւ մատուցանում ենք Նրան, որ յաւիտեանս օրհնեալ է, ամէ՛ն:

(Ուխտան., Բ-ԿԲ)

*Վրաց բաժանման երկրորդ պատճառի մասին, որ եղաւ
Կիրոնի հակառակութեան (հետեւանքով)*

Այս /ստորեւ ներկայացուածն/ ասուած է մեզ այլ պատմագիրների շարադրանքից՝ որը նպաստեց մեզ մեր գործում, քանի որ մենք պատմագրքերից տեղեկացանք Վրաց բաժանման մէկ այլ պատճառի մասին եւս:

Այն ժամանակներում, երբ պարսիկներն ու յոյները Հայոց երկիրը բաժանել էին իրենց միջեւ, հայերի ու յոյների մէջ քննութիւն եղաւ եկեղեցու դասակարգութեան մասին՝ վերին (երկնային) ինը դասերի նման: Որովհետեւ յոյները վիճում ու մեծաբանում էին հայերի վրայ, թե՛ «Ինչու, ասում էին, մեր եկեղեցին ունի

ինը դասակարգութիւնը, իսկ ձերը՝ ոչ: Մերը դասակարգուած է ըստ վերինների ինը դասի, որ սրանք են՝ պատրիարքներ, արքեպիսկոպոսներ, մետրոպոլիտներ, եպիսկոպոսներ, քահանաներ, սարկաւագներ, կիսասարկաւագներ, կղերիկոսներ, գրակարդացներ»։ Ապա այդ ժամանակ մերոնց բերանով եւս ասուեց (նրանց այդ կարգը դնելուց յետոյ), եւ ասացին. «Մենք էլ ունենք եկեղեցու նոյն դասերը հաստատուած, որ մեզ աւանդուել է սուրբ Գրիգորից, եւ /մենք/ էլ Աստծոյ կամքով ենք դասակարգում, որովհետեւ մեր /աթոռը/ եւս սուրբ Թադէոսի առաքելական աթոռն է, եւ նրանից յետոյ՝ սուրբ Գրիգորի, որը մեզ համար երկրորդ առաքեալ եղաւ, միաժամանակ նաեւ՝ Լուսաւորիչ:

Այն ժամանակ պարսիկներն ու յոյները, ինչպէս շատ անգամ ասուեց, Հայաստանը բաժանել էին իրենց միջեւ, եւ տէր Մովսէսը սուրբ Գրիգորի աթոռն էր զբաղեցնում Դուինում: Իսկ Յունաց բաժնում նրան հակաթոռ (կաթողիկոս) նստեցրին ոմն Յոհանի՝ նրան /Դուինին/ մօտիկ: Իսկ Սիւնիքի տէրերը հայրապետական երկատուած աթոռը մերժեցին եւ չհամաձայնուեցին հնազանդուել հակառակութեան մէջ (գտնուողներից) որեւէ մէկին՝ իրենց առաքինի Պետրոս եպիսկոպոսի հրամանով, որն (իր) վախճանին մօտենալով՝ իր թեմին պատուէր տուեց, որպէսզի ձեռնադրութիւնը եւ օրհնութեան մեռոնը ստանան Աղուանքից, մինչեւ սուրբ Գրիգորի հայրապետական աթոռը միաւորուի: Եւ դրանից յետոյ եւ հետագայում սիւնեցիները ձեռնադրութիւնը եւ մեռոնը Աղուանքից էին վերցնում, մինչեւ որ վերացաւ հակառակութիւնը, ասում է Պատմագիրը (19): Այդ պատճառով Աղուանքի կաթողիկոսը (եւս) չեկաւ Աբրահամի ձեռնադրութեան ժողովին, մինչեւ որ Աբրահամը միապետեց իր հայրապետական աթոռին:

Եւ եկեղեցական աստիճանների ինը դասակարգութեան համար աւարտեցին եւ Աբրահամին նշանակեցին պատրիարք, Աղուանքի (եպիսկոպոսապետին)՝ արքեպիսկոպոս, իսկ Վրաց (եպիսկոպոսապետին)՝ մետրոպոլիտ: Եւ Վրաց (կաթողիկոս)

Կիրոնը չհամաձայնելով մնալ այն աստիճանին, որին (նրան) հաստատեցին, ըմբոստացաւ եւ հակառակն էր վիճարկում: Իսկ Աբրահամ հայրապետն ասում էր, որ (Աղուանքը) Վրաստանից աւելի վաղ է ընդունել հաւատը, ուստի նրանց է պատշաճ՝ արքեպիսկոպոսութիւնը: Այս մաքառման մէջ եւ ուղղափառ հաւատի խնդրով վրացիները շուտ եկան եւ դարձան քաղկեդոնիկ սատանայի ու Կիրոնի սաղրանքով, էլ առաւել՝ Մուրիկ կայսեր կամքով: Այն լիբր Կիրոնը նաեւ յունական զօրավարներից էր գրգռուել՝ իր համար գահերեցութիւն պահանջելով Աղուանքի նկատմամբ:

Դրան չհամաձայնելով՝ Աղուանքում մէկ ուրիշին ցոյց տուեցին, որն աւելի վաղ էր իբրեւ առաքեալ եկել Աղուանից երկիր՝ Եղիշէ անունով, որի ով լինելը կկամենայի նախ պատմել: Սա եղել է Փրկչի աշակերտներից մէկը՝ ձեռնադրուած Տիրոջ եղբայր Յակոբի կողմից: Եւ համաձայնելով դրան՝ Աղուանից տանը արքեպիսկոպոսութիւն տուեց (Աբրահամը)՝ իրաւունք վերապահելով (ունենալ ստորադաս եպիսկոպոսներ), իսկ մետրոպոլիտութիւնը (տուեց) Սիւնեաց տանը: Իսկ Կիրոնը հեռացաւ նաեւ այդ անգամ, եւ Աբրահամ մեծ հայրապետը միապետեց իր (իշխանութեան) ներքոյ Աղուանքն ու Սիւնիքը, եւ այնուհետեւ դարձան մի հօտ եւ մի հովիւ եւ հնազանդ սուրբ երկնային տանը՝ սուրբ Գրիգորի արթոնին:

(Ուխտան., Բ-ԿԳ)

Դարձեալ նոյն խնդրի մասին այլ պատմութիւնից

...Այս նախասկզբնական կարգը եւ Աղուանքի հաւատի միաբանութիւնը Հայոց հետ տեսնելով նրանց պատիւ շնորհեցին լինելու Հայոց արքեպիսկոպոս: (Եւ) նոյն կերպ Սիւնիքի տէրերին տեսնելով (իրբեւ) աստուածաերկիւղ եւ հաւատի մէջ հաւատա-

րիմ, նաեւ ամեն բանով լաւ ուսեալ եւ ուղղափառ՝ նրանց եւս պատիւ շնորհեցին լինելու Հայոց մետրոպոլիտ, նաեւ խաչանշան (կրելու) մեծարանքով պատուեցին նրանց: Եւ այսպէս կարգ առ կարգ հաստատեցին ինը դասերը եւ եղան մի հօտ, մի հովիւ այն ժամանակ եւ այժմ եւ մինչեւ իրենց ժամանակների վախճանը:

Իսկ Կիւրոնին հեռացրին իրենցից եւ նրա բաժինը կեղծատրնների շարքում դրեցին: Բաց թողեցին նրան գնալու իր կամքի հետեւից. որովհետեւ ամեն ծառ. որ բարորակ պտուղ չի տալիս, պիտի կտրուի եւ կրակը նետուի, եւ «Ամեն տնկի, որ երկնային Հայրը չի տնկել, արմատախիլ պիտի արուի»: Այսպէս էլ նա (Կիւրոնը), որովհետեւ նրա կեանքը հակառակութիւն ու կոխ եղաւ, որից յետոյ նա տնկուեց իբրեւ անպտուղ ծառ ու անճիւղ որթ: Եւ ապա նրա աղմուկի յիշատակը կորաւ:

Ահա քեզ ցոյց տուեցինք Կիւրոնի նամակների պատճենը եւ դարձեալ (նաեւ) բաժանման պատճառը, որ լուրերից ու գրութիւններից մեզ հասաւ:

(Ուխտան., Բ-ԿԴ)

Արդ՝ այս պատճառով (20) մեր հայրապետ Աբրահամը պատշաճ համարեց Աղուանից տանը արքեպիսկոպոսութիւն տալ, իսկ Վրաց տանը՝ մետրոպոլիտութիւն, որին չհամաձայնուելով՝ Կիւրոնը բաժանուեց հայերից եւ մերժուեց տարագրուեց:

(Ուխտան., Բ-ԿԵ)

*Դարձեալ Կիւրոնի նոյն խնդրի վերաբերեալ՝ ինչ որ
նամակներից յետոյ է պատմուում*

Այս գրքում (գլխում) յարմարեցնելու (եւ) շարադրելու եմ քեզ համար այն ամենը, ինչ որ Կիւրոնի մասին (յայտնի է) նամակներից յետոյ, որ գրեցին նրան, բայց ոչ մի հնար չկարողացան

գտնել նրա դարձի ու փրկութեան համար, քանզի շատ վաղուց էր կայացրել իր անդարձութեան վճիռը:

Որովհետեւ սաւուղաբար երկու տարի (միայն) եղաւ ճշմարտութեան հետեւող, ինչպէս մի անգամ ասուեց: «Սաւուղը չափահաս տղայ (էր) թագաւորելիս եւ երկու տարի թագաւորեց»՝ գրուած է: Որովհետեւ այդչափ էլ հաճոյ եղաւ Աստծուն, ապա այնուհետեւ սկսեց անօրէնութիւն անել եւ ստել Տիրոջ ուխտին: Որ թէպէտեւ Տէր Աստծուն զոհեր մատուցեց, երբ ազգերը նրա վրայ կուտակուեցին, սակայն Տէրը չհաճեց նրա նկատմամբ, իսկ Սամուէլ մարգարէն յանձին Աստծոյ սպառնալով նրան՝ ասաց. «Քո թագաւորութիւնը չի մնայ, ուստի ինչ որ անում ես քեզ համար, զուր է, որովհետեւ իմ պատուիրանը չպահեցիր, ինչ որ Տէրը պատուիրեց: Արդ՝ այսուհետեւ Տէրը կորոնի իր սրտով ուրիշ այրի եւ նրան իշխան կը նշանակի իր ժողովրդի վրայ, քանի որ ինչ որ քեզ իմ բերանով պատուիրեց՝ չպահեցիր»: Արդ՝ այդ պատճառով Տիրոջից դատաւճիռ ստացաւ (Սաւուղը), որովհետեւ Տիրոջ ուխտի վրայ չմնաց, ըստ նրա օրէնքների չկամեցաւ գնալ եւ Տիրոջ պատուիրանին չանսաց: Գրուած է. «Ունկնդիր եղէք Տիրոջ պատուիրաններին, որովհետեւ Տիրոջ պատուիրանները լոյս են», եւ այն, ինչ շարունակութեան մէջ է: Մատաղներն ու զոհաբերութիւններն այնքան ընդունելի չեն, որքան Տիրոջ ձայնին անսալը, որովհետեւ Տիրոջ ձայնը նրա պատուիրաններն են: Եւ ահա՝ «Աւելի լաւ է ունկնդրութիւնը, քան ընտիր զոհը, եւ հնազանդութիւնը, քան խոյերի ճարպը», ասաց իմաստուններից մէկը:

Այժմ այս բաները Կիրոնի վրայ իրականացան, թէպէտեւ հնում ասուեցին Սաւուղի վերաբերեալ, որովհետեւ սա եւս չանսաց Տիրոջ ձայնին: Արդ՝ սրա կողմից արուածները սկզբնապէս ցոյց տրուեցին Յուրտաւի եպիսկոպոսի կողմից: Իսկ նրա յայտնաբերածները շատ արագ կատարուեցին բացայայտելով կաթողիկոսին այն, որ վաղուց ի վեր ծածուկ էր պահում (Կիրո-

նը): Իսկ երբ նրա գործերը հրապարակաւ գուժուեցին եւ ամենքի համար քաջայայտ դարձան, եւ աւելի ու աւելի տարածուեց նրա ըմբոստանալու մասին լուրը, ապա այնուհետեւ սկսեց բիր շատախօսութեամբ դէմ առ դէմ վիճաբանել նրանց հետ. ովքեր խօսքով յանդիմանում էին նրան: Որովհետեւ իր մտքում իրեն բարձր համարեց, բայց ոչնչով առաւել չդարձաւ, քան ինչ որ էր՝ նման նրանց, ովքեր իրենց իմաստուն էին փորձում պահել, (բայց) յիմարացան: Իսկ սա (Կիրոնը) անզգամութեան իրողութիւնը ձեռքում պատրաստ պահելով՝ յետոյ հաղորդակից եղաւ անմիտներին, իր չար ու սնոտի վաստակներով հետագայում աւելացնելով իր չար վարդապետութեան չար ուսմունքը, իր չար երկրագործութեամբ ցորենի վրայ ցանելով այն որումը, որը հունձի ժամանակ Փրկիչը խոստացաւ հնձողների ձեռքով քաղել ու խրձեր կապել այրելու համար, իսկ ցորենը հաւաքել արքունի շտեմարանում:

Իսկ երբ նայեցին նրա անվերադարձութեանը (եւ հասկացան), որ ինքն է իր վրայ մեծաչարչար խնդիրներ բարդում եւ կամ թէ իր խօսքերն այստեղ-այնտեղ թափում՝ որպէս ինչ-որ քամի կը հեծեծայ, եւ կամ թէ տարուբերում է պէս-պէս եւ օտարահունչ ուսմունքների մէջ, այնուհետեւ անուշադրութեան մատնեցին նրան, բարձիթողի արեցին նրան, որ ընթանայ իր կամքով: Ասում էին՝ «Թող այս աշխարհում լինի նրա ժամանակը, որովհետեւ այս է նրա ժամանակը եւ խաւարի իշխանութիւնը», քանզի գրուած է՝ «Մարդու համար մեծ թշուառութիւն է չարիք գործելը»: Եւ դարձեալ «Բարի է ու աւելի հաստատ լեզուն խնայելը, քան թէ խօսքերին սրտով ուշք դարձնելը»: Որովհետեւ պարտ ու արժան է ամենեւին փախչել տգեղ խօսքերի հոսանքից, քանզի՝ «Ինչպէս շատ անուրջներն են փուչ, այդպէս էլ շատ խօսքերը», ասաց (Սոդոմոնի) Իմաստութիւնը:

Իսկ սա (Կիրոնը) սրանից ոչինչ չէր զգում եւ չէր նայում իր դատարկաբանութեանը, այլ անիմաստ մտքով, աներկիւղ հա-

մարձակութեամբ երկարացնում էր իր խօսքերն՝ ինչպէս պարան, եւ չէր իմանում, որ Աստծոյ երկիւղն է մարդկանց փրկութիւնն՝ ըստ գրուածի: Քանզի թէպէտեւ չափազանց հեռու ենք երկնքից, սակայն իմանալ, որ Աստծոյ լսող ականջին ենք խօսում (ամենայն բան)՝ դա (Սուրբ) Գրքից սովորեցինք: Իսկ նա յուսալով իր խօսքերի մեծաքանակութեան վրայ, շատախօսութեամբ էլ թշուառական էր դարձնում իր կեանքը: Դատապարտելով իրեն լաւագոյնից վատթարագոյնին՝ իրեն վայել էր կարծում իր վաստակներին, որ Աստծով չէր ձեռք բերել: Իր համակիրների (մօտ) բարերար էր քարոզում իրեն, որ բոլորովին չար էր: Ինքն իրեն ինքնակամ հալածում էր բարուց եւ չարաչար տագնապով մղում իր մտքի ցնորքների մէջ: Եւ (հէնց) այդպիսի մահուան հանդիպելով բարութեամբ չլցրեց իրեն, եւ նրա նկատմամբ կատարուեց (Սուրբ) Գրքի խօսքը, որ ասաց աստուածայիններից մէկը՝ հեզնելով ու ծաղրելով այսպէս. «Ես, ասում է, այնպիսի մարդու կեանքի երկարութեան վրայ կը նախանձեի, բայց աւելի լաւ եմ համարում մօր արգանդից անժամանակ վիժած սաղմը, քան նրան, որովհետեւ այդպիսին ինչպէս ունայնօրէն եկաւ, նոյնպէս էլ հեռացաւ»:

(Ուխտան., Բ-ԿԶ)

Սուրբ Շուշանիկի մասին

Արդ՝ այսուհետեւ քո ցանկալի պատմութեանն ենք հասնում, որ վերաբերում է յաղթող ու սուրբ նահատակ Շուշանիկին: Կը պատմեն նրա բարի մարտիրոսութեան մասին, որ եղաւ Քրիստոսի աստուածապաշտութեան եւ ուղիղ հաւատի համար, այսինքն՝ նրան վիճակուեց մարտիրոսուել իր ուրացող եւ անօրէն ամուսնու ձեռքով: Եւ նրան գովաբանելու համար իմ լեզուն կշարժեմ՝ ասելու այն, ինչին մեզ գրաւոր ու անգիր յաջողուեց տեղեկանալ:

Արդ՝ քանզի «Գիրք թղթոցում» մենք սուրբ հայրերի ու վարդապետների կողմից յիշատակուած գտանք նրա առաքինութիւնը եւ հայրերի օրէնքների պատուիրանների պահպանութիւնը, ուղիղ եւ ճշմարիտ խոստովանութիւնն ու հաւատի հաստատութիւնը, նաեւ ծիսակարգը, որ հաստատել էր այն Յուրտաւի եկեղեցում, եւ ամենուրեք ամեն տեղ պատմում է այս բանը, մանաւանդ այն նամակներում, որ գրուեցին Կիրոնին, նախ՝ Վրթանէս վարդապետի, եւ ապա՝ Աբրահամ Հայոց կաթողիկոսի կողմից, քանզի յանդիմանելով նրան՝ այսպէս են ասում. «Դու խափանել ես սուրբ Շուշանիկի պաշտամունքը, որ կարգուած ու հաստատուած էր Յուրտաւի եկեղեցում», արդ՝ ինչպէս ասացինք, մենք սրա յիշատակումը չկարողացանք ընդմիջել այս նամակների մտքերի շարակարգում եւ այլ տեղում ասել՝ դասաւորուած նամակներից առաջ եւ յետոյ, որպէսզի յանկարծ օտարոտի հնչելով՝ բովանդակութիւնը չհեռանայ (իրարից): Նաեւ վերելում էլ ասուեց սոյն միտքը, թէ շարադրում ենք պատշաճ համարելի (այնպիսի) հերթականութեամբ, որը բովանդակութիւնն է պահանջում, որ մենք իմանանք:

Իսկ այժմ, եթէ ես հնար ունենայի, կը փոխէի իմ տկար զօրութիւնը, էլ աւելի առաւել ուժ ու կարողութիւն կառնէի, որպէսզի իմ տկարութեանն օժանդակելով՝ զօրացնէր ինձ այստեղ՝ սուրբ նահատակ Շուշանիկի պատմութիւնը (շարադրելիս), նաեւ իմ լեզուն փոխէր ի բարեբանութիւն նրա սխրագործութիւնների, որ վիճակուեցին նրան Յուրտաւում նրա չարչարանքներից յետոյ եւ նախքան մահը:

Մեծամեծ տանջանքներով դատաքննութեան ենթարկուելով ու /իր/ մարմնով անմարմին (հրեշտակների) օրինակը ցուցաբերելով՝ (Շուշանիկը) քաղցով ու ծարաւով իրեն մաշում էր տքնութեամբ եւ օր ու գիշեր չէր դադարում մշտական սաղմոսերգութեամբ Աստծուն օրհնելուց: Կարծես թէ նրան ոչ ոք բանտի ու կապանքի մէջ չէր դրել, այլ ասես թէ ինքնայօժար կամքով էր կա-

պանքի մէջ մտել: Որովհետեւ վեց տարի նա կապանքների ու բանտի մէջ ապրեց այն բերդում, որ Ուփրեթ էր կոչւում: Որովհետեւ աւելի քան այն չարչարանքները, որոնց նրան ենթարկեց ամբարիշտ ու անօրէն բդեշխը դաժան ու դառը տանջանքներով, նրան մինչ այդ քարշ տուեցին փողոցներով ու գոեհներով (հրապարակներով), ջարդեցին նրան բրերով եւ ծեծեցին դէմքն ու կզակն այնքան, որ շատ օրեր ոչինչ չկարողացաւ տեսնել աչքերի մթանալու պատճառով: Ապա կապանքներում, անուրներում ու բանտերում աղտեղութիւնների ժանաւորութիւնն ու բանտի խոնաւութիւնն այնքան շատ էր, որ, թող ներուի ասել՝ լուերից ու որդերից էլ նրան տառապանք էին հասնում, որն ասում է իր պատմութեան մէջ: Իսկ երանելի նահատակին այդ չարչարանքները ոչինչ էին թւում գալիքի յոյսի, սիրոյ եւ այն հաւատքի պատճառով, որ (նա) ուներ առ Աստուած: Որովհետեւ իր նախնիներից էլ ժառանգել էր բարեպաշտութիւն, բարի արմատից բարի ճիւղ (էր), որովհետեւ՝ «Բարի ծառը բարի պտուղ է տալիս», եւ այդ պտղից է ծառը ճանաչւում:

Արդ՝ այսքան եւ այսպիսի նեղութիւններին համբերեց նա եւ դիմացաւ: Ոչինչ չէր զգում, այլ աւելի ու աւելի էր քաջալերւում իր ճգնութեամբ, որը կրում էր տեսակ-տեսակ առաքինութիւններով՝ հացից հրաժարումով եւ ջրի ծարաւով, նաեւ տքնութեամբ, արտասուքներով եւ անդադար սաղմոսերգութեամբ գիշեր ու ցերեկ: Նաեւ իր մօտ ուներ մի գրքոյկ (եւ) իր պաշտամունքն ու սաղմոսերգութիւնը նրանով էր կատարում եւ իր մօտ բոլոր եկածներին (նրանով) քարոզում էր աստուածապաշտութեան ողջ կարգը: Նա Նունէի նման առաքելուի եղաւ. այնքան, որ նրա քարոզներն (էլ) սփռուեցին Վրաց ամբողջ երկրում: Եւ ովքեր գալիս էին նրա մօտ տեսութեան, նրանից սովորում էին բարեպաշտութեան քարոզը. եւ շատ հիւանդներ ու ախտաժեւեր էին բուժւում նրա մօտ գալով:

(Ուխտան., Բ-ԿԷ)

Արդ՝ Կիւրոնի ձեռքով Վրաց բաժանման վերաբերեալ եղած տեսակ-տեսակ վեճերը եւ զանազան նամակներն ըստ մեր կարողութեան հաւաստի քննելով ու ստուգելով (արդեն) շարադրեցինք այս պատմութեան մէջ: Բայց երբ մեր երանելի հայրապետ Աբրահամը չկարողացաւ հնար գտնել եւ փրկել այն անմիտ Կիւրոնին, քանզի Կիւրոնից խելքը կորաւ եւ իմաստութիւնը փախաւ նրանից անասելի հեռաւորութեամբ, ապա այդ ժամանակ (նա) ընդհանրական ձեռնարկ, (այսինքն)՝ շրջագայական նամակ գրեց Հայոց ամբողջ աշխարհին եւ բոլոր ուղղափառ հաւատացեալներին քաղաքներում, գաւառներում եւ գիւղերում, որպէսզի ոչ ոք ամենեւին չհաղորդակցուի նրանց (վրացիների) հետ խնամիութեամբ կամ սիրով կամ հոգեոր կարիքների հաղորդութեամբ կամ մարմնական մերձաւորութեամբ, ինչպէս որ մի անգամ (արդեն) ասուեց: Այլ միայն /թոյլատրեց/ իրարից գնել ինչ-որ բան կամ վաճառել: Եւ դարձեալ (զգուշացրեց), թէ «Ոչ ոք թող չխաբուի նրանց կողմից ինչ-որ վայրի անունով, որ նրանք կոչում են Մցխիթայի խաչ կամ Մանգղեաց, եւ կամ ինչ-որ ուրիշ տեղերի (անունով), որ նրանց համար առիթ է դառնում խաբելու պարզամիտներին: Եւ այնքան ու այսպիսի խօսքերով գրում է, որ զգուշանան, եւ շատ ուրիշ խօսքերով պատմում է բացատրելով նրանց, թէ ինչ են եւ ինչ են եղել...

Կիւրոնի մասին նաեւ այս է պատմում, թէ Հայոց կաթողիկոս Մովսէսի մահից յետոյ եւ նախքան Աբրահամի աթոռակալելը Կիւրոնը եկաւ Վրկանի մարզպան Սմբատի մօտ. որ խաբեբայութեամբ ու խորամանկութեամբ նրանցից թուղթ խնդրի ուղղուած Վրաց երկրին, որպէսզի չհամաձայնուեն այն նեստորական խուժիկի ու նրա համախոհների հետ եւ չբաժանուեն Հայոց միաբանութիւնից: Բայց դա եղել էր նենգութեամբ լի եւ կեղծաւորութեամբ իրեն չքմեղ ձեւացնելով: Եւ հէնց այս բանն է յիշատակում Սմբատն իր այն նամակում, որ (գրուած էր) Տուրտաւի եպիսկոպոս Մովսէսին, (ասելով). «Եթէ Կիւրոնն իր վրայ վստահ չէր,

ինչպէ՞ս էր կանգնում եւ մեզ յորդորում. եւ նամակ էր գրել տալիս (իր) երկրին եւ ինքն իրեն յանդիմանում»:

Բայց այդպէս ամենուրեք ամեն տեղ թող յանդիմանուի խաբեբան ու փորձիչը, այդ վիշապ խարդաւանողը. որն ինչ-որ խարդախութեամբ գրագիտութիւն սովորելով՝ խաբեց ու կործանեց Վրաց երկրի ուղղափառութիւնը:

(Ուխտան., Բ-ԿԸ)

Թէ երբ անիծուեց Քաղկեդոնի չար ժողովը, եւ հայերի ու Աղուանքի միաբան մնալը եւ Վրաց բաժանումը հայերից, եւ դրանից յետոյ՝ Հայոց կաթողիկոս տէր Աբրահամի շրջագայման նամակը

Հոռոմների թուականութեան քառասուններեքերորդ տարին էր, երբ հայերը հաւատքով լուսաւորուեցին. եւ Աղուանից լուսաւորութիւնից երկու հարիւր եօթանասուն տարի առաջ: Հայերի հաւատքի հարիւր ութսուն տարին լրանալուց յետոյ Բարգէն Հայոց կաթողիկոսի ժամանակներում Քաղկեդոնի տիեզերակործան ժողովի վերաբերեալ տեղի ունեցաւ ժողովական հանդէս (ատեան), (որտեղ) յոյները, ամբողջ Իտալիան, հայերը, աղուաններն ու վրացիները միաբանուելով՝ հոռոմների բարեպաշտ թագաւորներ Զենոնի ու Անաստասի հրամանով նգովեցին Քաղկեդոնի չարափառ ժողովը: Եւ ութսունեթ տարի անցնելուց յետոյ Աբրահամ Հայոց կաթողիկոսի ժամանակներում վրացիները անիծեալ Կիւրոնի ձեռքով բաժանուեցին Հայոց միաբանութիւնից, նաեւ յոյներն ու Իտալիան նրանց հետ: Իսկ աղուանները չբաժանուեցին ուղղափառութիւնից եւ Հայոց միաբանութիւնից: Եւ այդ առիթով Կիւրոնի հակառակութեան վերաբերեալ իր շրջաբերական նամակում Աբրահամը ամբաստանութիւններ (գրեց) նրա մասին, (եւ) ամեն ինչի համար (Սուրբ) Հոգու սրով

կտրեց բաժանեց: Նախ զգուշացրեց աղուաններին եւ տեղեկութիւն տուեց ու նամակում գրեց այսպէս...

(Ուխտան., Բ-ԿԹ)

...Արդ՝ ըստ առաքեալների եւ ըստ երանելի վարդապետների հրամանի՝ փախանք անիծուածներից եւ նրանց դժոխք ժառանգեցնող փսխումից առաքելական անբիծ հաւատը մեզանում պահելով. քանզի հերձուածողների խմորը դեռեւս քաղցկեղի նման ճարակում է մինչեւ գրեթէ ի մահ: Մանաւանդ որ (այն) հասաւ միեւնոյն վարդապետութեամբ (մեզ հետ լուսաւորուածներին). այսինքն վրացիներին, որոնք քիչ առաջ ասուած ժանաւոր ուսմունքը մեծարանքով ընդունեցին եւ իրենց մէջ հաստատեցին աստուածապաշտութեան լոկ ձեւը ցոյց տալով պարզամիտներին, իսկ նրանց, ովքեր սովորութիւն ունեն նրանց հետ միաբանուելու, բայց իրենց զօրութեան (վրայ) մնացին, նրանց էլ (վրացիները) հեռացրին:

Այս պատճառով մեզնից առաջ կաթողիկոսական աստիճանի վրայ եղածները անհրաժեշտ համարեցին գրել Աղուանքին. իսկ մենք (գրեցինք) Վրաստան Կիւրոնին. որ կաթողիկոս է անուանում. եւ նրա աթոռակիցներին: Քանզի (նա) Յուրտաւի եկեղեցու եպիսկոպոսին, որը երկու երկրների (միջեւ) միջնորդութիւնն էր պահպանում, ուղղափառ հաւատի պատճառով հալածական արեց, իսկ հայրենի ծիսակարգը, որ սուրբ Շուշանիկի կողմից էր հաստատուած, հակառակ մեզ խրոխտանալով վերացրեց:

Այս պատճառով գրեցինք, որպէսզի յետ դառնայ ճշմարիտ հաւատին եւ հաստատուն մնայ առաքեալների աւանդութեան մէջ, որը (մեզ) տրուեց մեր վարդապետների միջոցով: Իսկ նրանք ընդդիմանալով՝ երկու անգամ հակառակը գրեցին մեզ: Քանզի նոյն այն սուտանունը Ռմգդի որդի Խոսրով արքայի ժամանակ նոյն Վրաց եկեղեցու գլուխը լինելով Նեստորի ուսմունքի հետեւորդ մի ոմն եպիսկոպոսի ընդունեց եւ իրեն յանձնեց նոյն հայրո-

յիչ վարդապետութեանը (դեռ) առջեւում ունենալով Քաղկեդոնի ուխտը: Ապա թեպէտեւ այդ մարդուն հեռացրին. բայց թոյների մրուրը պահպանեցին: Եւ իրենց անօրէնութիւնը աւելի ուժգին ընկալեցինք (նրա) երրորդ նամակում, (որտեղ) նաեւ պարծենալով խրոխտացաւ, թէ չի թողնի աղանդը. ու նաեւ համարձակուեց մեզ իրենց յետեւից դէպի խորխորատ շեղելու դաս տալ ամբարիշտ Կիրոնը:

Այս պատճառով նախկինում հոռոմների վրայ մեր վարդապետների դրած բանադրանքը, որը կը մնայ մինչեւ վերջ, եթէ չդառնան ճշմարիտ (հաւատին). մենք նոյնը վրացիների վրայ հրամայեցինք (դնել եւ ըստ այնմ) ամենեւին չհաղորդակցուել նրանց հետ ո՛չ աղօթքով, ո՛չ կերակուրներով, ո՛չ ըմպելիքներով, ո՛չ բարեկամութեամբ. ո՛չ դայեակութեամբ, չգնալ խաչը՝ աղօթելու. եւ ոչ էլ նրանց մեր եկեղեցիներում ընդունել, նաեւ ամուսնանալուց ամենեւին հեռու մնալ, այլ միայն որեւէ բան գնել կամ գնով՝ /տալ/. ինչպէս հրէաներին: Նոյն հրամանը նաեւ աղուանների վերաբերեալ թող անկապտելի մնայ, որպէսզի պատկառելով յետ դառնան թիր ճանապարհից:

(Ուխտան., Բ-Շ)

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ըստ «Աշխարհացոյց»-ի՝ Պամփղագովնիան Պափլագոնիան է՝ Ընդհանուր Ասիայի վեցերորդ երկիրը, որին հաջորդում են Առաջին և Երկրորդ Գալատիաները:
2. Պատմագիր ասելով Ուխտանեսը նկատի ունի Մովսէս Խորենացուն, իսկ վերջինս, ինչպէս նկատում է նաև Վարազ Առաքելյանը (ծանոթ. 88), վկայում է Վահագնի՝ Վիրքում աստվածացվելու մասին:
3. Խոսքը Հայոց Արտավազդ Բ թագավորի (Ք. ա. 55-34 թթ.) մասին է:
4. Սա Մեծ Հայքի արքա Խոսրով Մեծն է, որի գահակալման տարիները վիճելի են պատմագիտության մեջ:
5. Սա Պարթև վերջին Արշակունի Արտավան Ե-ն է (213-227 թթ.):

6. Խոսքը Սասանյան արքայատոհմի հիմնադիր Արտաշիր Ա-ի (227-243 թթ.) մասին է:
7. Խոսքը Աբրահամ Ա Աղբաթանեցի կաթողիկոսի մասին է, որն ըստ Վ Առաքելյանի աթոռակալել է 607-615 թթ., թեև կա կարծիք, որ նա աթոռակալել է մինչև 610 թվականը:
8. Սա Մովսես Բ Եղվարդեցի կաթողիկոսն է (574-604 թթ.):
9. Նիկոպոլիսը քաղաք էր Փոքր Հայքում, Գայլ գետի հովտում: Այն հիմնադրվել է հռոմեացի զորավար Պոմպեոսի կողմից այն վայրում, որտեղ նա ջախջախել է Միհրդատ Պոնտացու զորքերը:
10. Խոսքը Մովսես Բ Եղվարդեցի Հայոց կաթողիկոսի մասին է:
11. Միայն Ուխտանեսն է նշում Սմբատի՝ Հայոց մարզպան լինելու մասին:
12. Հովհաննու վանքը գտնվում է Այրարատ աշխարհի Արագածոտն գավառում կամ ներկայիս Արագածոտնի մարզի Հովհանավան գյուղում:
13. Վրթանես Քերթովը կաթողիկոսական տեղապահ էր 604-607 թթ.:
14. Խոսքը Մովսես Խորենացու մասին է:
15. Ջավախքն ու Թռեղքը Մեծ Հայքի Գուգարք աշխարհի գավառներից են, որոնք միացվել էին Վիրքին:
16. Այստեղ խոսքը վերաբերում է 607 թ. Դվինում հրավիրված աշխարհա-ժողովին, որը Աբրահամ Աղբաթանեցուն ընտրեց Հայոց կաթողիկոս:
17. Վրկանը Բ. Հարությունյանը տեղադրում է Կասպից ծովից հարավ-արևելք: Այս ժամանակ Վրկանի մարզպանն էր Սմբատ Բագրատունի Խոսրով Շումը:
18. Խոսքը 591 թ. բաժանման մասին է, երբ Մեծ Հայքը երկրորդ անգամ բաժանվեց Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև:
19. Ինչպես նկատում է Վ. Առաքելյանը, Ուխտանեսն այստեղ նկատի ունի Մովսես Կաղանկատվացուն (Դասխուրանցուն) կամ այս դրվագում վերջինիս համար աղբյուր հանդիսացող Մաշտոց Եղիվարդեցուն:
20. Ըստ Ուխտանեսի՝ պատճառն Աղվանքում ավելի վաղ քրիստոնեության տարածված լինելն է:

**ԹՈՎՄԱ ԱՐԾՐՈՒՆԻ ԵՎ ԱՆԱՆՈՒՆ,
ՊԱՏՍՈՒԹՅՈՒՆ ԱՐԾՐՈՒՆՅԱՑ ՏԱՆ՝²⁹**

Մարաստանի Ածղահակ թագավորը, ինչպես մեզ ցույց են տալիս հին պատմագիրները, պատրաստվում էր պատերազմելու մեծն Տիգրան Հայկազնի դեմ: Նա կազմակերպեց այրուծի, որպեսզի ներխուժի Հայոց աշխարհը և կատարի իր նյութած չարագործությունները: Մեծն Տիգրանը տեղեկացավ Ածղահակի պատրաստությունների մասին և զանազան ցեղերի՝ կապադովկիացիների, վրացիների ու աղվանների ընտրովի, զորավոր և քաջամարտիկ այրերից զորք հավաքեց (1):

(Թովմա Արծր., Ա-Ե)³⁰

«Մեծագոր թագավոր (2), ծովերի և ցամաքի տիրակալ, տուր ինձ օգնական զորք և հաստատիր ինձ իմ պապերի թագավորական գահին: Եթե կարողանամ ջարդել իմ թշնամուն և վերականգնել թագավորությունս, կլինեմ քո հլու հնազանդ որդին, քեզ կտամ Ասորվոց կողմերն ու ամբողջ Արվաստանը (3), մինչև Մծբին քաղաքը, իսկ Հայոց աշխարհից՝ տանուտերական իշխանությունը (4) մինչև Այրարատ, Դվին քաղաքը և Բզնունյաց ծովի եզերքը, Առեստ ավանը (5), ինչպես նաև Վրաց երկրի մեծ մասը, ընդհուպ մինչև Տփղիս քաղաքը, և խաղաղության դաշինք կհաստատվի մեր երկուսի միջև և անշուշտ այս երդումը կլինի մեր

²⁹ Թովմա Արծրունու տեղեկությունների աշխարհաբար թարգմանությունը տե՛ս Թովմա Արծրունի և Անանուն, Պատմություն Արծրունյաց տան, Եր., 1985:

³⁰ Թովմա Արծրունու տեղեկությունների գրաբար բնագիրը տե՛ս «Մատենագիրք Հայոց», հ. ԺԱ, Անթիլիաս, 2010, էջ 48-313:

միջև, իսկ մեր թագավորելուց հետո մեր որդիների միջև կլինի նաև դաշինք»:

Մորիկ կայսրը համաձայնեց և նրա մոտ ուղարկեց իր փեսային՝ Փիլիպիկոսին: Մրա հետ ուղարկեց հրավիրագիր, ապա (Խոսրովից) վերցրեց երդմնագիր: (Մորիկը) նրան տվեց կայսերական օգնական զորք՝ հայերից Հովհան պատրիկին, ասորվոց Ներսես զորապետին, Մուշեղին, որը կտրիճ ու զորեղ տղամարդ էր, և հունաց, հայոց, վրաց ու աղվանից ամբողջ զորքը: Անհամար այդ զորաբանակը եկավ Ատրպատականի կողմերը՝ Վարանատ (6) գավառը:

(Թովմա Արծր., Բ-Գ)

Իսկ /արաբների/ զորքը, որ եկել էր Գուրգենի (7) ետևից, եկավ հասավ երկրի սահմաններին, ուր Գուրգենն էր իր զորքով: /Նրանք/ բանակեցին Զավ (8) կոչված գետի եզերքին: Իսկ զորքի զորագլուխներն էին՝ Մուքադմը, Յուսուփը՝ Տփղիս քաղաքից, Ռահիմի որդի Յուսուփը և Ելիի (9) տեր Աբուհեշմը և նրա հետ պարսից ամիրա Համդոյի զորքը:

(Թովմա Արծր., Գ-Դ)

Այնուհետև (Բուղան) (10) գումարեց զորքի անհուն բազմություն, ավելի մեծ, քան նախկինը, և ելավ ու շարժվեց արևելյան աշխարհի դեմ: Հրամայեց վրա հասնել Տփղիս կոչված քաղաքին, որին հնում անվանում էին Փայտակարան (11): Մայրու փայտից էր շինված նրանց քաղաքը, պարիսպները, պատերը, ապարանքները և քաղաքի բնակչության բոլոր տներն ու նրանց շինությունները:

Ավելորդ եմ համարում մեկ առ մեկ գրի առնել և ցույց տալ քաղաքում (կատարված) անօրենությունը, որ գերազանցեց Մոդոմին ու Երիքովին և լի էր չարագործություններով: Բայց Բու-

ղան հասավ ու անցավ մեծ գետը, որին Կուր են կոչում և գարնանային վարարումների ջրհոսքերին տեղի տալով, զորքը հանեց ու բանակել տվեց քաղաքի շուրջը: Ոչ ոք չկորավ, բացի ինչ-որ մեկից, որը ճանաչվում էր Աշխեթ անունով, պերճ ու անվանի տղամարդ էր, զորքի մեջ քաջամարտիկ: Իր հետ ուներ ուժեղ զորագունդ, նման ծովի, կազմված զորավոր (այրերից): Եվ ինքը՝ Աշխեթը սպառազինված էր, նստած զրահավորված ձիուն. Ոմանք կարծում էին, թե ձին ու հեծյալը երկաթեղեն արձան են, այնպես էին զրահված, որ միայն աչքերին ծածկույթ չկար: Եվ երբ մոտեցավ գետի ափին, ինչ-որ մեկը ձգեց լայնալիճ (աղեղը), նստեց դարանում, նետահարեց /դեմքի/ բաց տեղը, եվ երասանները բռնող ձեռքը թուլացավ: Ինչ-որ մի ուրիշը ճկած նիզակով (հարվածը) կրկնեց նույն աչքին ու գետավեժ արեցին Աշխեթին: Մինչևիսկ մի քանի օր հետո նրա դին գտնողներին Բուղան տվեց 10000 արծաթ, քանզի այդ աստիճանի պատվական էր այն մարդը նրա համար:

Եվ նույն ժամանակ քաղաքը շրջափակեցին կրակով. մայրիների, գիհիների չոր փայտից դիզվեց, բորբոքվեց կրակը, իսկ քաղաքապետ Սահակը դուրս եկավ այն դարպասից, որը տանում է Շամշդտա բերդը, վրան գցեց սամույրենին, ձեռին բռնեց գավազանը և մտքով հիմարանալով, ձեռքից բաց թողեց իր փախուստի (հնարավորությունը), որով կարող էր գնալ, ում մոտ որ կամենար: (Կոչնակներ) ուղարկեց Ժիրաք զորապետի մոտ, ասելով. «Փութա ինձ հետ հանդիպելու»: Բայց նա չհավատաց եկած հրավիրակներին, մինչև որ (Սահակը) կրկնեց ու երրորդեց: Եվ Ժիրաքը գնաց ու նրան վերցրեց բերեց Բուղայի առջև, որը զարմացավ ապստամբելու փոխարեն հույժ անմտությամբ իր մոտ նրա գալու համար: Սահակի կենակիցը, երբ լսեց, թե (ամուսինը) բռնվեց, և որովհետև գեղանի կին էր, փութով գնաց Բուղայի մոտ, (հույս ուներ) թերևս կարողանայ վայելուչ գեղեցկությամբ ու մեծաքանակ գանձերով ապրեցնել իր ամուսնուն: Բայց առավել

նրա մահվան, քան թե ապրելու պատճառը եղավ: Բուղան հրամայեց դահիճներին՝ գլխատել նրան: Իսկ կինը ճիշ բարձրացրեց ու ասաց. «Գույժը կհասցնեմ թագավորին»: Հոլանի շրջում էր բանակի մեջ, ինչը սովորություն չէր արաբական ցեղերի կանանց համար: Բայց ոչնչով չկարողացավ օգնել (ամուսնուն): Այլև Բուղան կտրեց (Սահակի) գլուխը և ուղարկեց արքունիք, իսկ կնոջը վերցրեց իրեն կնության: Կինը դարձյալ ճիշ բարձրացնելով ասաց. <<Ինձ համար սպանեցիր իմ տիրոջը, ես արժան եմ ոչ թե քեզ կին (լինելու), այլ մեծն թագավորին>>: Բայց Բուղան կնոջը վերցրեց իր հետ, ապա ուղարկեց թագավորի մոտ՝ նրան կին լինելու: Իսկ կինը գնաց և թագավորին պատմեց, ինչ որ եղել էր, վկաներ բերեց, /հաստատեց/ իր բողոք բարձրացնելը և <<արժան չեմ քեզ, այլ արքային պիտի կին դառնամ>> (ասելը), և ինչ որ կատարվեց: Դրանով նա եղավ Բուղայի կորստյան պատճառը, ինչը ցույց կտամ շարունակության մեջ, համառոտ խոսքերով:

(Թովմա Արծր., Գ-Թ)

Բայց որովհետև ամենուրեք ոչ ոք չկարողացավ ընդդիմակայել (Բուղային), և նրա ցանկացած բոլոր գործերին, սկսեց ձեռք զարկել հերթով արևելյան բոլոր երկրներին, աներկյուղ համարձակությամբ, լի ամբարտավանությամբ ասպատակելով նրանց իշխանությունների բոլոր կողմերը: Եվ ապա դիմեց ու գնաց հասավ հյուսիսային երկրները, այն աշխարհը, որ Ծանարք է կոչվում: Սրանք բնակվում են լեռնային ամրոցներում, անհոգ ու խաղաղ են արտաքին թշնամիներից, արքունի հարկերն ու տուրքերը մնում են իրենց: Միայն ինչ-որ մեկին կարգում են իրենց վրա իշխելու, ըստ իրենց կամքի: Միաբան ու համախոհ են միմյանց հանդեպ, բնակվում են ըստ ազգատոհմերի, միմյանցից հեռու: Սրանց մոտ է Կովկասի լեռը, ուր բնակվում են 72 ցեղեր, որոնցից յուրաքանչյուրն ունի իր լեզուն: Ապրում են առանց

առաջնորդի, ամեն մեկն ունի իր ցանկացած սովորությունը. Ամուսնանում են և՛ մոր, և՛ քրոջ հետ:

Սրանց մոտ էր գնացել Գրիգորիսը՝ Վրթանեսի երիցագույն որդին և նրանց մեջ քարոզել կենաց խոսքը: Շատերն ընկան նրա մոտ և հավատացին Քրիստոսին, ինչպես ծանարներն ու ափ-խազները: Կեսն էլ չանսացին (նրան) և գնացին ընդմիջտ դեպի նույն կործանումը, ինչի մասին ժամանակ չունենք պատմելու: Նրանցից՝ բարբարոսներից էր, որ մարտիրոսական վախճան ընդունեց սուրբ Գրիգորիսը՝ Վատնիանյան դաշտում (12):

Իսկ երբ Բուղան գորքի բազմությամբ հասավ նրանց սահմանները, գրեց հրովարտականեր՝ խաղաղ ձևով, (հորդորեց) դիմել սիրով միաբանության, ի հնազանդություն արքայի, ընդունել պատիվներ և նրա ձեռքով ստանալ իշխանական մեծության պատվանուն: Բայց նրանք, քանզի ապավինել էին ապահով ամրոցներին, գորքի ու պատերազմող այրերի բազմությանը, փոքր չափով իսկ չխոնարհվեցին կամ պատասխանով տեղի չտվեցին նրա խոսքերին, այլ վերադարձրեցին պատգամավորներին անարգանքով, արբեցրին նրանց սաստիկ ծեծով, իսկ իրենք իջան լեռներից, գրավեցին լեռան ստորոտներն ու պատրաստվեցին պատերազմի: Եվ փակեցին անմատույց տեղերի, ձորերի անցքերը, որոնք տանում էին նրանց երկիրը, մոտենում նրանց ամրոցներին:

Այնժամ Բուղա գորապետը հրաման տվեց իր գորքին՝ ելնել նրանց դեմ պատերազմի: Եվ մոտեցան նրանց, դասավորեցին բանակը և պատերազմեցին ծանարների գորքի դեմ: Ներքևից շուրջանակի փակեցին լեռան ստորոտները, ինչպես ծով, որ դեպի վեր է բարձրացնում հողմակուտակ ալիքները: Եվ ահա ձայնեց առհասարակ ամբողջ երկիրը, ինչպես ալիքները դիզած ծով: Սաստկացավ պատերազմը, (շարունակվելով) այգաբացից մինչև արևի մայրամուտը, օրվա 12 ժամի (ընթացքում): Եվ ջարդվեց արքունի գորքը, ետ դարձավ իր բանակատեղը: Լեռնական-

ները նույնպես եկան իրենց գորատեղը: Մեկ օրվա ընդմիջումից հետո, դարձյալ սկսվեց պատերազմը, և ջարդվեց արքունի զորքը: Դարձյալ փոքր-ինչ ժամանակ անցնելուց հետո, մեկ անգամ ևս սկսվեց պատերազմը, և ջարդվեց արքունի զորքը. (արաբները) մեծ տարակույսի մեջ էին. վերադառնալ չէին կամենում, քանզի կատարվածը սաստիկ ամոթալի էին համարում: Չէին կարող մնալ, համբերել, տոկալ նրանց դեմ, որովհետև շատերն էին ընկել իրենց զինվորներից: Ապա մտադրվեցին դարձյալ պատրաստվել պատերազմելու: Կանգնեցրին պատնեշներ, կառուցեցին պարսպավոր շինություն և դարձրեցին բնակության տուն, որտեղ նստեցին ինը օր և պատերազմեցին նրանց դեմ, ավելի քան 19 անգամ: Արքունի զորքը ջարդվեց ու պակասեց ծանարների զորքից և ետ դարձավ կորակնած ամոթով ու խայտառակված, ծանակված ու մեծապես կոտրված:

Արդեն մոտենում էր (Բուղայի) գալստյան երկրորդ տարին, երբ նա ելավ գնաց Աղվանից կողմերը: Այն ժամանակ Աղվանքի մեծ մասին տիրում էր ոմն Ապումուսե... Իսկ երբ լսեց, թե Բուղան վերցրել է զորքը և գալիս է իր վրա, հրաման տվեց իր ողջ երկրին՝ ելնել և բռնել լեռնակողմերը, ջանք թափել, ուժով և արիասրտությամբ դիմադրել, մանավանդ, երբ տեսավ, որ ծանարներից նա պարտության է մատնվել ու հաղթվել: <<Մենք, -ասում է,- ծանարներից վախկոտ չպիտի լինենք, որովհետև ունենք նրանցից ավելի հզոր և ավելի բարձր ամրոցներ և անգրավելիորեն ամրափակ լեռնանցքներ...>>:

(Թովմա Արծր., Գ-Ժ)

Նույն ժամանակ, ովքեր մնացել էին Արծրունյաց ազգատոհմից, երբ լսեցին արքունի զորքի պարտվելը ծանարներից, հավաքվեցին միևնույն վայրում, զորագունդ կազմեցին, հետևազոր մարտակիցներով, խառնիճաղանջ ամբոխով հանդերձ, թվով 4000 մարդ, և իրենց առաջնորդ կարգեցին Ապուջափր Արծրունուն և

նրա հետ Սահակ Ապումկդեմին՝ Ապուջափրի քեռորդուն, քաջ ու պատերազմող մի տղամարդու...

...Չորս տարի անցնելուց հետո այն ժամանակից, երբ տեր Ջաքարիան գրավեց Հայոց կաթողիկոսության գահը, Վասպուրականի Աշոտ իշխանի եղբայր Գրիգորը վերադարձավ Ափխազաց աշխարհից և նրանց օժանդակությամբ ու վրաց զորքով ամրապնդված՝ եկավ մտավ մեր Վասպուրական աշխարհը՝ Գուրգենի դեմ պատերազմելու: Բայց նրա հետ եկած զորքն իմացավ (Գուրգենի) անկոտրում արիության մասին, զանազան պատճառաբանություններով վերադարձան իրենց տեղերը: Իսկ Գրիգորը չկարողանալով ընդդիմակայել նրան, հետը խոսեց սիրով ու խաղաղությամբ, ապա հաշտվեցին ու երկիրը բաժանեցին միմյանց միջև:

(Թովմա Արծր., Գ-ԺԳ)

Եվ երբ (Գուրգենը) հասավ Թեոդոսի քաղաքը (13) Կարին գավառում, նրա մասին լուրը հասավ Բյուզանդիայի թագավոր Միքայել կայսեր, որը փութացրեց, որպեսզի անհապաղ նրան իր մոտ բերեն և արժանացնի հյուպատոսության մեծ պատվաստիճանի, ճոխացնի խաչանշան դրոշներով: Եվ մինչդեռ (կայսրն) այս մասին էր խորհրդածում, (Գուրգենի) վրա հարձակվեցին քաղաքի երկու վերակացուներ, մեկի անունը Բշիր, մյուսինը՝ Զքրի, և բռնեցին նրան տարան Աշոտի՝ սպարապետի որդու մոտ: Սա թեպետև չարացավ եղածի վրա, բայց վախեցավ նրան թողնելու, որ գնա, երկյուղելով Իսմայելի չարահույզ ցեղից, քանզի տակավին տիրում էր բռնությունը և՛ գերյալները, և՛ իր հայրը՝ սպարապետը, դեռևս արքունիքում էին: Տփղիսի քաղաքապետը տեղեկացավ և պահանջեց բերել նրան իր մոտ, ստիպեց, տագնապեցրեց, ահ տվեց՝ թողնել քրիստոնեության դավանությունը և մնալ անդորրի մեջ: (Գուրգենը) ծաղրեց նրան, ընտրեց բանտն ու կապանքները և քաջությամբ մեռնելը Քրիստոսի անվան համար,

քան խղճուկ կյանքը: Նրանք Գուրգենին կապեցին եռապատիկ կապանքներով, պարանոցին նույնպես դրեցին շղթաներ և ուղարկեցին պարսից Ատրպատական ու գցեցին բանտ՝ կապյալների հետ...

...Բայց քանի որ մեր Հայոց աշխարհի վերակացությունը վստահվել էր Աշոտին (14), որն իշխանաց իշխան էր, ձեռնարկեց հպատակեցնելու հայոց, վրաց և աղվանից իշխաններին, որը և կատարվեց:

(Թովմա Արծր., Գ-ԺԴ)

Երբ Բուղան վերադարձավ արքունիք... հույս ուներ իր գործությունը մեծացնել հայերի կործանմամբ, մոռանալով, որ տերը հատուցել է մեր մեղքերի համար, ինչպես Իսրայելին հնում՝ Սեդեկիայի և Նաբուգոդոնոսորի ժամանակ: Իսմայելի որդի Սահակի կնոջ վիճակը և ամուսնու մահը ցույց տվեցինք, նաև հրապարակով նրա գուժելը, որի պատճառով սպանվեց իր ամուսինը: Նրա երևելի տեսքի մասին պատմեցին արաբների գլխավորին՝ Ջափրին: Իսկ սա ըստ իր պիղծ, անհագ ու ցանկասեր սովորության, հոխորտաց ու մրթմրթաց և էլ ավելի լցվեց գազանային թույնով, բորբոքվեց կրակի բոցով՝ մահաբեր թույնը Բուղայի վրա թափելու համար...

(Թովմա Արծր., Գ-ԺԵ)

*Հայոց Սմբատ թագավորի (15) արշավանքը Ահմադ Ամիրզայունի
դեմ՝ Վրաց, Աղվանից և Հայոց բոլոր իշխաններով, Սմբատի
պարտությունն Ահմադից՝ Աղձնիքի սահմաններում, Թուխ (16)
կոչված գետի վրա, որը թափվում է Բզնունյաց ծովը (17)*

Ինչպես վերևում անցողակի հիշեցինք, Ահմադը գրավել էր Տարոն աշխարհը, այն անջատել հայոց պետությունից: Սմբատը բազում անգամ գրեց նրան՝ թողնել գավառը և նորից հանձնել Աշոտի՝ Դավիթ իշխանի որդու ձեռքը: Նրան խոստացավ հայոց հազարապետությունը՝ արքունի հրամանով և հայերի հնազանդությամբ հանդերձ: Բայց Ահմադը չզիջեց, չանսաց նրա ասածներին, արհամարհեց իր մոտ առաքվածներին:

Այնժամ թագավորը դեսպաններ ուղարկեց իր տերության բոլոր կողմերը՝ Հայաստան, Վրաստան և Աղվանք՝ քաղաքացիներին, հազարապետներին, գավառակալներին, ովքեր սիրով հնազանդվում և հարկ էին վճարում նրան: Եկան նրա մոտ հասան Վրաց Ատրնեբսեհ իշխանը (և ուրիշներ): Եվ, ինչպես ասում են, գումարված զորքի թիվը եղավ մոտ 100 հազար: Ապա գնաց Բզնունյաց ծովի եզերքով դեպի Ապահունյաց (18) կողմերը և բանակեց այն գետի ափին, որ լցվում է Աղձնիքի խոխոմները:

(Թովմա Արծր., Գ-ԻԳ)

Այս ժամանակներում (19) Հայոց Սմբատ թագավորը արշավեց Ապահունյաց աշխարհի վրա, քանզի Արդուահմանի որդիները, որ Կայսիկներ են անվանվում, ապստամբել էին թագավորի իշխանության դեմ և հրաժարվել՝ ինչպես օրենք էր, հարկեր ու զինվորներ տալուց: Եվ հայոց, վրաց և աղվանից գրեթե բոլոր իշխանները եկել էին հայոց զորքի հետ Ապահունյաց աշխարհի վրա:

(Թովմա Արծր., Գ-ԻԸ)

Իսկ Ափշինը (20) դիմեց մեր Հայոց երկրի վրա՝ անհուն գորքով ու զենքով, եկավ հասավ Սմբատին (21), որը փախուստի մատնվեց և մազապուրծ ընկավ Վրաց աշխարհը: Եվ (Ափշինը) այնտեղից վերադարձավ ու պաշարեց Կարուց բերդը, բացեց մթերված գանձերի տունը, վերցրեց բազում ավար...

...Երբ գարունը եկավ, Գուրգենը (22) փախավ Ափշինի ձեռքից, եկավ հասավ իր եղբայրների մոտ, քակելով բարեկամության ուխտը: Եվ (Ափշինը) հետապնդեց Սմբատին դեպի Տփղիս քաղաք, հույժ հարստահարեց նրան, վերցնելով բազում հարկեր: Իսկ այնտեղից առաջանալով, եկավ հասավ մինչև Վան ավանը, Վասպուրական աշխարհ՝ անհամար բազմությամբ:

(Անանուն Արծր., Գ)

Այն ժամանակներում դեռևս Աբուսաճի որդի Յուսփը բռնակալությամբ իշխում էր Պարսից և Հայոց (23) վրա: Նա չկարողացավ դիմանալ արքայի (24) քաջությանն ու իմաստնությանը, թողեց իր գազանաբարո չարության գործերը, դիմեց խաղաղության ու բարեկամության, արքայի ձեռքը տվեց Հայոց և Վրաց (25) աշխարհները և խաղաղության ուխտ դնելով, գնաց Պարսից երկիրը:

(Անանուն Արծր., Ե)

Այս ամենը (26) մենք անձամբ ենք հասել և աչքով տեսել, գնալով նաև հեռավոր երկրներ՝ Կղարջք (27) և Շավշեթ, Կովկասյան լեռներ և Արհիզ (28), մինչև Գաղիի (29) մատույցները, Տայաստան (30):

(Անանուն Արծր., Ը)

Իսկ Աբասը՝ Սմբատի որդին, հպարտությամբ եկավ իջավ Վաղարշապատ քաղաքի դաշտը և կամեցավ նախքան Հայոց մեծն թագավոր Գագիկի գալուստը՝ փառք վաստակել իր անձի

համար: Իսկ այլազգի այրը (31), քանզի գիտեր նրա մասին, որ հմուտ չէ պատերազմներում, ելավ նրա դեմ սակավաթիվ զորքով և ջարդեց ու փախուստի մատնեց նրան: (Աբասի) զորքից սրի քաշեց 400 տղամարդու, թալանեց զորքին ու երկրի բնակիչներին, հրի մատնեց այն աշխարհը և վերադարձավ քաղաք՝ մեծ հաղթությամբ ու բազում ավարով: Իսկ Աբասը այնուհետև փախավ և մագապուրծ ընկավ Վրաց աշխարհը:

(Անանուն Արծր., Ժ)

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Թովմա Արծրունու այս տեղեկությունը վերցված է Մովսես Խորենացուց (Խոր., Ա-ԻԹ):
2. Սա Պարսից արքայից արքա Խոսրով Բ Փարվեզի (590-628 թթ.) նամակն է Բյուզանդիայի կայսր Մավրիկիոսին (582-602 թթ.):
3. Արվաստանը գտնվում էր Մեծ Հայքի հարավային մասում, Հայոց Միջագետքում: Նրա կենտրոնն էր Մծբին քաղաքը:
4. Տանուտիրական իշխանությունը Մարզպանական Հայաստանի չորս վարչական միավորներից մեկն էր:
5. Առեստ ավանը գտնվում էր Մեծ Հայքի Վասպուրական աշխարհի Առբերանի գավառում, Վանա լճի հյուսիսարևելյան ափին:
6. Վարառատ գավառը գտնվում էր Ատրպատականում, Ուրմիո լճի հյուսիսարևելյան մասում:
7. Խոսքը Գուրգեն Արծրունու մասին է, որն ուզում էր Բուղայից Վասպուրականի իշխանությունը ստանալ իր եղբոր փոխարեն:
8. Սա Մեծ Զավ գետն է, որը Տիգրիսի վտակներից է և վերին ավազանում հոսում էր նաև Մեծ Հայքի Կորճայք աշխարհով:
9. Ելին կամ Այլին Մեծ Հայքի Պարսկահայք աշխարհի գավառներից էր, գտնվում էր Ուրմիո լճից արևմուտք:
10. Խոսքը ծագումով թուրք զորավար Բուղայի մասին է, որը Հայաստանի ոստիկանն էր 852-855 թթ.
11. Փայտակարանը Մեծ Հայքի թագավորության աշխարհներից մեկն էր համանուն քաղաքով, իսկ Տփղիսը Վիրքի մայրաքաղաքն էր:

12. Վատնիանյան կամ Վատնյան դաշտը գտնվում էր Մեծ Հայքի Փայտակարան աշխարհում, Կասպից ծովի ափին: Գ. Բադալյանը կարծում է, որ Վատնյան դաշտը գտնվել է Դերբենդի մոտ:
13. Թեոդոսի քաղաքը կամ Թեոդոսուպոլիսը Կարին քաղաքն էր, որն այդպես կոչվեց ի պատիվ Թեոդոս Բ կայսեր, որը 5-րդ դարում վերակառուցեց Կարինը: Այն ներկայիս էրզրում քաղաքն է Թուրքիայում:
14. Սա իշխանաց իշխան Աշոտ Բագրատունին է (855-885 թթ.), որը 885 թ. թագադրվեց և ստացավ «թագավոր Հայոց և Վրաց» տիտղոսը:
15. Սա Հայոց Սմբատ Ա թագավորն է (890-914 թթ.):
16. Թուխ գետը գտնվում էր Մեծ Հայքի Աղձնիք աշխարհի Գդողխ գավառում: Սկիզբ է առնում Հայկական Տավրոսի հյուսիսային լանջերից և թափվում Վանա լիճը հյուսիսարևմտյան կողմում:
17. Բզնունյաց ծովը Վանա լիճն է:
18. Ապահունիքը Մեծ Հայքի Տուրուբերան աշխարհի գավառներից էր, սահմանակից էր Այրարատ աշխարհի Բագրևանդ գավառին և տարածվում էր Արածանի գետից հարավ:
19. Թովմա Արծրունու վկայությամբ այս դեպքը տեղի է ունեցել հայոց 351 (902) թվականին:
20. Խոսքը Ատրպատականի ամիրա Ափշինի մասին է, որն Ատրպատականի կառավարիչ դարձավ 889 կամ 890 թվականին: Արաբական խալիֆայությունը, ինչպես և բավականաչափ ընդարձակ և զորեղ Սաջյան ամիրայությունը չէին հաշտվում, որ Հայաստանը վերականգնել էր իր անկախ պետականությունն ու զորեղանում էր:
21. Խոսքը Հայոց Սմբատ Ա (890-914 թթ.) թագավորի մասին է:
22. Սա Վասպուրականի իշխան Դերենիկի երեք որդիներից մեկն էր:
23. Մենք պահպանել ենք «պարսից և հայոց» բառերի՝ գրաբար բնօրինակում պահպանված գրաձևը, որը մեծատառերով է:
24. Խոսքը Գագիկ Ա Արծրունու մասին է, որին Ատրպատականի ամիրա Յուսուֆը 908 թվականին տվեց թագ ու պսակ և «ամենայն Հայոց թագավոր» տիտղոսը:
25. Գրաբար բնագրում «հայոց և վրաց» աշխարհանունները գրված են մեծատառով, քանի որ համապատասխանում են «Հայք և Վիրք» հասկացություններին, ուստի մենք էլ պահպանեցինք նույն գրաձևը, թեև թարգմանության մեջ գրված են փոքրատառով:
26. Նկատի ունի մեր երկրում ամեն մեկի կառուցած ձեռակերտներն ու շինությունները:

27. Կղարջքն ու Շավշեթը Մեծ Հայքի Գուգարք աշխարհի արևմտյան գավառներից են:
28. Արհիգ բնակավայրը նույնացվում է Արհիգ և Մեծ Զելենչուկ գետերի միախառնման տեղում գտնվող Արհիգ գյուղի հետ:
29. Գաղին նույնացվում է Աբխազիայում գտնվող Գալի բնակավայրի հետ:
30. Տայաստան ասելով, հեղինակը նկատի ունի Տայքը:
31. Խոսքը արաբ զորավարի մասին է, որի անունը հեղինակը չի հիշատակում:

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Ա

- Աբաս, Հայոց սպարապետ-130-132
Աբաս, Սմբատ Ա-ի որդին-144-146, 272-273
Աբդ-ալ-Մալիք խալիֆա-116
Աբդլ-Ազիզ-116
Աբդուլահ իբն ալ-Զուբայր-116
Աբդրահիմ-108-109
Աբդրահիման-271
Աբյուզենոս-21, 29
Աբուհեշմ -264
Աբուսաճ-272
Աբրահամ Ա Աղբաթանցի կաթողիկոս-97-99, 128, 151, 155, 165-168, 174, 201-206, 208-209, 211, 213-216, 220-224, 235-237, 241, 244, 246, 250-252, 256, 258-259, 262
Աբրահամյան Ա.-69
Ագաթանգեղոս-102
Ադամ-248
Ադոնց Ն.-103
Աթանաս-100
Աժդահակ-23, 28, 263
Ալեքսանդր Մակեդոնացի-21, 56, 67
Ալի, Ապումսրի որդին-119
Ակիտովել-137-138
Ահարոն, Մահմետի որդին-115, 117
Ահմադ Ամիդացի-271
Ադան Արծրունի-66
Ադեքսանդր-240
Անանիա Շիրակացի-69, 73

Անաստաս կայսր-98, 199, 220, 259
 Անդիպատրոս, Հերովդեսի հայրը-22
 Անդրե իշխան-93
 Անուշվոռ-53
 Անտիոքոս-27, 31, 86
 Անտոնիոս-22
 Աշխեթ-265
 Աշոտ Ա, Հայոց արքա-114, 119, 123, 130, 151, 270, 274
 Աշոտ Բ Երկաթ (տե՛ս Աշոտ Բ, Հայոց արքա)
 Աշոտ Բ Շահանշահ (տե՛ս Աշոտ Բ, Հայոց արքա)
 Աշոտ Բ, Հայոց արքա-143-149, 151, 153
 Աշոտ Գնթունի-143-144, 148
 Աշոտ, Դավիթ իշխանի որդին-271
 Աշոտ, Մոկաց իշխան-121
 Աշոտ, Վասպուրականի իշխան-269
 Աշուշա բղեշխ-28, 31, 43, 47, 51-53, 89
 Աշուշան-227
 Ապումուսե, Աղվանքի տիրակալ-268
 Ապումսր -119, 124
 Ապումրվան, Վասպուրականի իշխան-120
 Ապուշամբ, Վայոց ձորի իշխան -121
 Ապուջափր Արծրունի-268-269
 Ապուսիճ -142
 Առաքելյան Վարագ-102-103, 123, 151, 261-262
 Ասքանագ-126
 Ասքանագյան ազգ-126
 Ատրնեբսեհ իշխան-190, 192, 225, 227, 233, 271
 Ատրնեբսեհ, Վասակ Սյունեցու որդին-51
 Ատրնեբսեհ, Վրաց իշխան, թագավոր-130-132, 134-136, 138-141, 146-147
 Ատրնեբսեհ, Վրաց կառավարիչ-96, 225

Ատրվշնասպ Յոզմանդյան-53-55
 Արամ-157
 Արամազդ-25
 Արգամ-23
 Արևես, վրաց իշխան-101
 Արիոս -244
 Արծրունիներ-47, 66, 263
 Արձիլ, Վրաց թագավոր-28
 Արձյուղ-35
 Արշակ Բ, Հայոց արքա-27, 31, 67, 83
 Արշակ, պարթև արքա-20, 29
 Արշակունիներ-83, 103, 152, 159
 Արշավիր-58
 Արուիճան տոհմ-97
 Արտակ Մոկաց-47
 Արտաշամա-21, 29
 Արտաշես, Հայոց արքա-23, 29-30, 85-86
 Արտաշիր Ա Մասանյան-155, 262
 Արտաշիր, Պարսից արքա-24
 Արտավազդ Բ, Հայոց թագավոր-30, 85, 261
 Արտավազդ Մամիկոնյան-114-115
 Արտավազդ Մանդակունի-27
 Արտավազդ, Արտաշեսի որդին-23-24, 30
 Արտավան Ե, Պարթև Արշակունի-155, 261
 Արտավան, Պարսից թագավոր-155
 Արքանոս -241
 Ափշին ամիրա-272, 274
 Ափշին ոստիկան-133-134
 Ափոց եպիսկոպոս-213
 Բ
 Բաբ աստված-126

Բաբան -100
 Բաբգեն կաթողիկոս-127, 150
 Բաբգեն Սյունի-58, 60
 Բաբգեն, Հայոց կաթողիկոս-97, 212, 214, 218, 259
 Բաբեդաս վանացերեց-172, 17-176
 Բաբիկ, Վասակ Սյունեցու որդին-51
 Բագարատ-86
 Բագարատ ասպետ-24, 27
 Բագրատունիներ-123, 151-152
 Բաղալյան Գ.-274
 Բակուր, Վրաց թագավոր-28, 29--34
 Բապ Տիրան-154
 Բառաբա -129
 Բարշղ Վահևունի-58
 Բարսեղ-100
 Բզրմեհ իշխան-190, 192
 Բշիր վերակացու-269
 Բուղա գորապետ-101, 264-268, 270, 273
 Գ
 Գաբիանոս, հռոմեացի գորապետ-22
 Գաբրիել, Վրաց կաթողիկոս-212, 214, 218
 Գագիկ Ա Արծրունի-153, 272, 274
 Գագիկ, Տարոնի իշխան -121
 Գագրիկան տոհմ-121
 Գառնիկ եպիսկոպոս-213
 Գեդեոն-145
 Գնթունեաց տոհմ-121, 143, 153
 Գնունեաց տոհմ-58, 67, 121
 Գողոն Միհրան-76, 82
 Գոռամ, Տայոց իշխան-121
 Գևորգ, վրաց իշխան, Արևեսի եղբայրը-101

Գորգեն Արծրունի, Վասպուրականի իշխան-121-122
 Գուգարացիներ-21
 Գուշար-21
 Գուրգեն Արծրունի-264, 269-270, 273
 Գուրգեն, Աբաս սպարապետի քրոջ ամուսինը-131
 Գուրգեն, Դերենիկի որդին-272
 Գուրգեն, Վրաց իշխան-140, 145-149
 Գտիհոն-64
 Գրիգոր իշխան-112
 Գրիգոր Լուսավորիչ-25, 32-33, 47, 86, 102, 105, 110, 127-128, 168, 170, 173, 175, 177, 179, 182, 184, 190, 192, 194, 208, 211-212, 216, 221, 225, 227, 234-235, 244, 246, 250-251
 Գրիգոր Վահևունի-79
 Գրիգոր, Աղձնեաց իշխան-121
 Գրիգոր, Վասպուրականի իշխան Աշոտի եղբայրը-269
 Գրիգորիս, Գրիգոր Լուսավորչի թոռը-32-33, 86, 467
 Դ
 Դաշտկարին-225, 227
 Դավիթ եպիսկոպոս-218
 Դավիթ կյուրապաղատ-124
 Դավիթ, Ատրնեբսեհի որդին-131, 139
 Դատոս, Ափխազաց արքա-120, 124
 Դարեհ, Պարսից արքա-21, 185
 Դերենիկ, Սմբատ Ա-ի փեսան-124
 Դերենիկ, Վասպուրականի իշխան-274
 Դիմաքսյան տոհմ-67
 Դրով իշխան-106

 Ե
 Եզլիտ իբն Ուսայդ ալ-Սուլամի--117
 Եզլիտ կառավարիչ-113

Եզիտ ոստիկան-117
 Եղատես եպիսկոպոս-218
 Եղիա եպիսկոպոս-213
 Եղիաս մոզ-237
 Եղիշա-126
 Եղիշե-37, 66, 102
 Եղիշե առաքեալ-251
 Եղիսա, Հունանի որդին-85
 Եղիփաս եպիսկոպոս-218
 Ենես եպիսկոպոս-218
 Եսայի եպիսկոպոս-213
 Եսավ -217
 Եսվադեն-89
 Եվգինիս եպիսկոպոս-218
 Եվնիմոս-192
 Եվտիքոս-192
 Երեմիա-126, 180
 Երեմիա հայրապետ-99, 101
 Երվանդ, Հայոց արքա-22-23, 30, 85
 Եփրեմ-157

Զ

Զարեհ, Ատաշեսի որդին-23-24, 30
 Զարմիհր (Զառմիհր) Հագարավուխտ-53, 63-65, 67-68
 Զաքարիա կաթողիկոս-269
 Զենոն կայսր-98, 199, 259
 Զքրի վերակացու-269

Ը

Ըստնգենես եպիսկոպոս-218

Թ

Թադեոս առաքեալ-250

Թալիլե, վրաց եպիսկոպոս-99, 102
 Թարշիշ, Հունանի որդին-85
 Թարսիս -126
 Թեոդոս Գ , Ափխազաց թագավոր-124
 Թեոդոսիոս Բ կայսր-123
 Թեոդորոս Բ (Թեոդոս) կայսր-66, 89, 269, 274
 Թեոդորոս եպիսկոպոս -218
 Թեոդորոս Ռշտունի-78, 80, 83-84, 129, 151
 Թեոդորոս Վահևունի-79
 Թովմա Արծրունի-124, 263, 273-274
 Թորգոմ-126
 Ժ
 Ժիրաք գորապետ-265
 Ի
 Իսահակ եպիսկոպոս-218
 Իսմայել, Սահակի հայրը-270
 Իսրայել-141
 Իսրայել Ա Օթմսեցի կաթողիկոս-151
 Լ
 Լեոնտի Մրովելի-29-30, 110
 Լևոն 1-ին Պապ-151, 162, 170, 207, 212, 214, 217-219, 229-230,
 236, 243
 Լևոն Դ կայսր-117
 Լևոն կայսր-152
 Խ
 Խաթիրլիթբեր տոհմ-113
 Խաթուն-113
 Խաքան-113
 Խոռյամ-78
 Խոսրով Բ Փարվեզ, Պարսից արքա-77-78, 82, 90, 92-93, 107-
 108, 111, 237, 260, 273

Խոսքով Կոտակ, Հայոց արքա-27, 31, 86
 Խոսքով Մեծ, Հայոց արքա-155, 261
 Խոսքով, Պարսից արքա-76, 82
 Խորիան, պարսիկ զորավար-118
 Խուր իշխան-89
 Կ
 Կամսար-27
 Կամսարական-58, 63, 67, 151-152
 Կայեն-244
 Կայսիկներ, Աբդոհմանի որդիները-271
 Կաւատ, Պարսից արքա-162, 164, 207
 Կեղար -141
 Կեսար-22
 Կերինթոս կախարդ-237, 243
 Կիս եպիսկոպոս-156-157
 Կիտիիմ -126
 Կիտրիս, Հունանի որդին-85
 Կիրակոս քահանա-165
 Կիրեղ-241
 Կյուրոն (Կյուրիովն) Սկուտրացի, Վրաց կաթողիկոս-98-99, 128-129, 151, 155-159, 164-178, 186-189, 192, 195-197, 199-206, 208-209, 211, 213-216, 220-225, 227-230, 234-242, 244-247, 249, 251-254, 256, 258-261
 Կոստանդիանոս կայսր-105, 110
 Կոստանդին Բ կայսր-79, 83
 Կոստանդին, Ափսազաց թագավոր-124
 Կոստանդին, Եգերացիների թագավոր, Կոստանդին Եգերացի-135-137
 Կորյուն-34
 Հ
 Հաբեթ-154

Հազկերտ Բ, Պարսից արքա-40, 43-44, 50-53, 66, 88
 Հակոբ, Տիրոջ եղբայրը-251
 Հակոբ եպիսկոպոս-213, 218
 Հակոբ երուսաղեմացի-221
 Հակոբ քահանա-170
 Հակոբ, Եսավի եղբայրը-247
 Համագասպ իշխան-81
 Համակար, Անձնացեաց իշխան-121
 Համամ-107-108
 Համամ Ամատունի-115
 Համդո ամիրա-264
 Հայկազն-21
 Հասան, նախարար-137-138
 Հավան -126
 Հավնունի-137-138
 Հարությունյան Բ.-40, 262
 Հարուն ալ-Ռաշիդ խալիֆա-117
 Հերակլ (Հերակլես) կայսր-78, 90, 107-108, 111, 118, 123
 Հերակլ, հույն հերոս-19, 21, 126
 Հերակլիոս, (Հերակլես, Հերակլ) կայսր-90-91, 103
 Հերովդես-22
 Հիմենիոս -240
 Հիսուս (տե՛ս Քրիստոս)
 Հմայակ Մամիկոնյան-52-53
 Հմայեակ, Փառիսոսի իշխան-121
 Հմայեկ-114
 Հոբնադ եպիսկոպոս-212, 214
 Հովհան Մամիկոնյան-105, 111
 Հովհան պատրիկ-264
 Հովհաննես Ավետարանիչ-243
 Հովհաննես Դրասխանակերտցի-126, 152-153

Հովհաննես եպիսկոպոս-213
 Հովհաննես, իշխանաց իշխան-101, 104
 Հովհաննես Մկրտիչ-217
 Հովհաննես, սուրբ-230
 Հովնաթան-89
 Հովսեփ, Ադսունելի եպիսկոպոս-218
 Հովսեփ, Կումրտայի եպիսկոպոս -218
 Հուդա-49
 Հուդա Սկարովտացի-186
 Հունան-85
 Հուսիկ կաթողիկոս-32
 Հռոմեդ-157
 Հրահատ Կամսարական-60
 Հրանուշ-124
 Զ
 Զյունական տոհմ-121
 Զվիկ-53
 Դ
 Դազար եպիսկոպոս-218
 Դազար Փարպեցի-66-68, 102
 Դևոնդ-112
 Ը
 Մալխապանց Ստ.-29, 84
 Մահմեդ-108
 Մահմեդ-114, 115
 Մահմեդ, Ապումսրի որդին-119
 Մամիկոնեից սեպուհ Մուշեղ-62-63
 Մանաճիհր Ռշտունի-24, 27
 Մանի-26
 Մանկնոս եպիսկոպոս-108
 Մաշտոց Եղիվարդեցի-262

Մավիա (Մոավիա)-80
 Մավրիկիոս (Մորիկ) կայսր-77, 82, 123, 224, 229, 237, 251, 273
 Մատթեոս Ավետարանիչ-66
 Մարիամ-182
 Մարկիանոս կայսր-224
 Մարկիոն-192
 Մելիքսեթ-Բեկ-29, 30, 33
 Մեսրոպ Մաշտոց-28, 31, 34, 36, 87-89, 101-102, 127, 216
 Մերսեբուխտ (տե՛ս Մերուխտ)
 Միհրան մարզպան-56-57, 60, 65
 Միհրան տոհմ-68
 Միհրան, Վրաց առաջնորդ, բղեշխ-24-25, 27, 86
 Միհրդատ-22
 Միհրդատ ,Վրաց բղեշխ-21
 Միհրդատ Պոնտացի-29, 262
 Միհրդատ, Դարեհի նախարար-21, 185
 Միհրդատ, Տիգրանի քեռորդին-22
 Միհրներսես հազարապետ-50, 52, 66
 Միքայել, Աղվանքի կաթողիկոս-99, 101
 Միքայել կայսր-269
 Մոնոս-150
 Մովսես Բ Եղվարդեցի, Հայոց կաթողիկոս-128, 151, 155-159, 164-167, 169-171, 174, 192, 194, 201, 206, 208, 210-211, 213, 215, 219, 225, 234-235, 237, 245, 247, 250, 258, 262
 Մովսես եպիսկոպոս-28, 34
 Մովսես իշխան-153
 Մովսես Խորենացի-19, 29-30, 41, 73, 85, 102, 110, 150, 185, 261-262, 273
 Մովսես Կաղանկատվացի (Դասխուրանցի)-85, 102-104, 150, 262
 Մովսես մարզպարե-58, 217

Մովսես Տաբաի եպիսկոպոս-218

Մովսես, Յուրտավի եպիսկոպոս-157-158, 169-170, 173, 175, 177-179, 181-182, 186, 188-192, 194-205, 207, 213, 215, 222, 227, 230-231, 233, 258

Մորիանոս-81

Մորիկ կայսր(տե՛ս Մավրիկիոս կայսր)

Մորփյուղիկես-20

Մուրացյան ցեղ-23

Մուշե Տարոնացի-28

Մուշեղ զորավար-79, 264

Մուշեղ իշխան-81

Մուշեղ սպարապետ, Վասակ Մամիկոնյանի որդին-33

Մուշեղ, Սմբատ Ա Բագրատունու որդին -120, 122

Մուսե խալիֆա115, 117

Մուրիկ կայսր (տե՛ս Մորիկ կայսր)

Մուքադմ-264

Մսլիման-100

Յ

Յազդ Սյունի-60

Յոհան եպիսկոպոս-218

Յոհան հայրապետ-201, 250

Յուսուփ, Ռահիմի որդի-264

Յուսուփ, Տփիսիս քաղաքից-264

Յուսուֆ ոստիկան-139, 150, 152, 274

Յուսփ, Աբուսաճի որդի (Յուսուֆ, ամիրա)-272

Ն

Նաբուգոդոնոսոր-21, 185, 270

Նեստոր-181, 183, 192, 229, 244, 260

Ներշապուհ Ռմբոսյան-88

Ներսեհ Կամսարական-59

Ներսէս, Կամսարի որդին-27
 Ներսէս, Վրաց իշխան-129
 Ներսէս Ա Մեծ, Հայոց կաթողիկոս-150
 Ներսէս, ասորվոց գորապետ-264
 Նիկողայոս պատրիարք-141
 Նունե-24-26
 Շ
 Շաթ, Ջերու խաքանի որդին-93, 95-96, 101
 Շահր Վարագ, Պարսից գորավար-78
 Շապուհ (Բագրատունի)-132
 Շապուհ Ամատունի -115
 Շապուհ Բագրատունի, պատմիչ-118
 Շապուհ Երկարակյաց, Պարսից արքա-27, 31
 Շապուհ մարզպան, Միհրան տոհմից-64, 68
 Շապուհ, Արտաշիրի որդին-24
 Շապուհ, Պարսից արքա-88
 Շարա-21
 Շարհապադ գորապետ-90
 Շարսադար վարդապետ-225, 227
 Շուշանիկ-186, 206, 213, 215, 221, 225, 255-256, 260
 Ո
 Ողոմպիոսոս-248
 Ովբեղլա-115
 Ովսէէ-188
 Որմզդյան Շապուհ-102
 Որմիզդ, Պարսից արքա-260
 Ուլուքաբյան Բ.-68
 Ուխտանէս պատմիչ-154, 26-262
 Պ
 Պաղդեն եպիսկոպոս-218
 Պապ, Հայոց արքա-29, 33

Պարթև Արշակունի-68
 Պետրոս Անտիոքացի-223
 Պետրոս եպիսկոպոս-156, 189-190, 194-197, 204, 206, 213, 215,
 219, 223-224, 241, 250
 Պետրոսյան Գ.-69
 Պերոզ, Պարսից արքա-53, 64-65, 68, 87
 Պողոս առաքեալ-48, 182, 190, 194, 199, 202, 219, 244, 247
 Պողոս Սամոսատցի-100
 Պողբեր-181
 Պոմպեոս-22, 262
 Ջ
 Ջադա-28, 34
 Ջափր -270
 Ջերու իսաբան-92-93, 96
 Ջոջիկ իշխան-107-108
 Ջվանշիր թագավոր-96, 103
 Ռ
 Ռաժթարխան գորավար-113
 Ռոմանոս կայսր-119
 Ռոսամոսքյան թագավոր-88, 102
 Ս
 Սաբելիոս-192
 Սահակ Ա Պարթև, կաթողիկոս-35, 127, 150
 Սահակ Ապոմկդեմ-269
 Սահակ ասպետ, մարզպան-58, 61
 Սահակ եպիսկոպոս-213, 218
 Սահակ Իսմայիլյան-101
 Սահակ, Սևադայի մեծ իշխան-147
 Սահակ, Տփիսիսի քաղաքապետ-140, 265, 270
 Սահլի Սմբատյան-100
 Սահուն Անձևացի-109

Սամուել-158
 Սամուել եպիսկոպոս-35, 213, 218
 Սամուել մարգարե-253
 Սանատրուկ-27, 86
 Սանեսան թագավոր-32
 Սասան-155
 Սասանյան արքայատոհմ-68, 261
 Սավուղ-158, 253
 Սատոն Գաբելինի-58
 Սարկիանոս-181
 Մբուկ ոստիկան-153
 Մեբեոս-76, 82-83, 151
 Մերուխտ, Ճորա մարգպան-41, 89
 Մեդեկիա- 270
 Մեմ-244
 Միմոն կախարդ-237, 241
 Միմոն հայրապետ-99
 Մնիքոս -192
 Մլկունի տոհմ-110
 Մմբատ Ա, Հայոց արքա-101, 114, 119-124, 130-139, 143, 151-153, 271-272, 274
 Մմբատ Բ, Հայոց արքա-124
 Մմբատ Բագրատունի Խոսրով Շում-128, 151, 168, 203, 205, 224-225, 227, 230-231, 233, 241, 258, 262
 Մմբատ կուրապաղատ-112
 Մմբատ Մամիկոնյան-111
 Մմբատ, Արտաշեսի դայակը-22-24
 Մողմոն Իմաստուն-242, 245, 254
 Մողմոն, մաքենացիների ուխտի առաջնորդ-99, 101
 Մուրեն մարգպան-82
 Մտեփանոս եպիսկոպոս-158, 213

Ստեփանոս եպիսկոպոս-213, 218
 Վ
 Վազգեն-53
 Վախթանգ, Աղվանքի իշխան-99
 Վախթանգ, Վրաց թագավոր 53, 55-56, 58, 60, 64, 66-67
 Վահագն, աստված-28, 126, 150, 261
 Վահան Ամատունի-24, 27
 Վահան իշխան-106-107, 111
 Վահան Մամիկոնյան-53-54, 56-68
 Վահան, Վրաց իշխան-190, 192, 233
 Վահրամ-228, 232
 Վաղարշ Ա, Հայոց արքա-150
 Վաղարշ Ա, Պարսից արքա-65, 68
 Վաղարշակ Արշակունի, Հայոց արքա-20-21, 29, 185
 Վանանդացի-137
 Վաշդեն, վրաց իշխան-107-109
 Վաչագան-87, 100
 Վաչե-87
 Վասակ Գնթունի-143-145, 147-148
 Վասակ Մամիկոնյան, Կարմիր կոչված Վարդան
 Մամիկոնյանի հայրը-82
 Վասակ Մամիկոնյան, Վահան Մամիկոնյանի եղբայրը-58-61
 Վասակ Սյունեցի-38-39, 41, 51-52, 66, 89, 157
 Վասակ, Գորոզուի իշխան -121
 Վասակ, Սյունյաց տեր-147
 Վարազ Ներսէհ Դաշտկարին-79
 Վարազման, Աղվանքի իշխան Վախթանգի որդին-99
 Վարազդ, Վարազմանի թոռը-99
 Վարդան Մամիկոնյան-37-38, 41, 45-49, 53, 66, 88-89
 Վարդան Մամիկոնյան, Կարմիր կոչված-82
 Վարդան Վարդանյան-111

Վարդան Վշնասպ-82
 Վարդանուհի-99
 Վեհվեհնամ-54
 Վիրո-101
 Վիրս կաթողիկոս-103
 Վլիթ խալիֆա-116
 Վրթանես կաթողիկոս-32-33, 267
 Վրթանես Քերթոդ-168, 172-173, 175, 177-178, 182-184, 187,
 189-200, 202, 204-205, 211, 215, 222, 233, 235, 237, 241, 256, 262
 Տ
 Տեր Խորձենացի-28
 Տիգրան-28, 126, 154
 Տիգրան Հայկազն-263
 Տիգրան Մեծ, Հայոց արքա-22, 30
 Տիմոթեոս-248
 Տիտոս-180
 Տիրան, աստված-126
 Տիրան, Արտաշեսի որդին-23-24, 30
 Տիրան, Վահան Մամիկոնյանի որդին-106-109
 Տրդատ Մեծ, Հայոց արքա-25, 27, 30-31, 86, 102, 105-106, 110-
 111
 Ց
 Յլիկ Ամրամ-153
 Փ
 Փառավազյան-33
 Փավստոս Բուզանդ-32, 102
 Փարսման, Վրաց թագավոր-23
 Փիլիպիկոս -264
 Փոկաս Էպիսկոպոս-218
 Ք
 Քաջբերունեաց տոհմ-121

Քարձամ, Վրաց թագավոր-24

Քրիստոս-24-25, 34-37, 45-46, 48-49, 54-55, 87, 96, 100, 108-109, 129, 142-143, 151, 177-182, 184, 187, 190-192, 200, 202-203, 209, 212, 216-218, 222, 226, 233, 242, 244, 249, 255, 267, 269

Օ

Օմար խալիֆա-117

Ա

- Ագռավի-69
- Ադաունել -218
- Ագորդացփոր գավառ-72
- Աթինա-70
- Ալանաց դուռ-26, 30, 132-133, 135, 152
- Ալբանիա (տե՛ս Ադվանք)
- Ախալցխի շրջան-117
- Ախալցխե բերդ-71
- Ախուրյան գետ-111, 124, 151-152
- Ակամսիս (Վոհ) գետ-70, 72, 116-117
- Ակոռի-67
- Ադրերականց կամ Արծաթադրերք դաշտ-63, 68
- Աղթամար կղզի-78, 81, 83
- Աղի ծով-106
- Աղձնիք աշխարհ-37-40, 106, 110, 124-125, 150, 271, 274
- Աղձնյաց երկիր (տե՛ս Աղձնիք աշխարհ)
- Աղչաբետիս-իս գավառ-70
- Ադստև-140
- Ադվան գետ-71
- Ադվանից աշխարհ (տե՛ս Ադվանք)
- Ադվանից դուռ-51
- Ադվանից մարզպանություն-124
- Ադվանք-19, 32, 35, 37-48, 50-51, 53, 56, 65, 67, 69-71, 73, 76, 78-80, 85-90, 95, 97-104, 112-113, 115-116, 118-119, 126-127, 141-142, 150, 154-155, 183, 185, 190, 202-203, 218, 246, 250-252, 259-260, 262, 268, 271
- Ամագոնիա-154
- Ամլ-73

Այրարատ, աշխարհ, գավառ-29, 60, 67-68, 77-79, 82-83, 97,
111, 123-124, 151-153, 262-263, 274

Այրարատյան գավառ-156

Անահտական գավառ-110

Անգղ-76, 82

Անթիլիաս-19, 32, 35, 37, 42, 69, 77, 85, 105, 112, 118, 126, 154,
263

Անի ամրոց-136, 138

Անձնացիք -121, 125

Անտիոք-39, 76, 99

Աշորնիք-119, 123

Աշոցք-21, 29

Աշտիշատ-150

Ապահունիք, Ապահունյաց աշխարհ, գավառ-105, 107, 110,
271, 274

Ապար աշխարհ-40

Աջարիա-28

Առանձնակ Եգեր-69

Առբերանի գավառ-82, 273

Առե-73

Առեստ ավան, Առեստավան-77, 82, 263, 273

Ասիա-69

Ատրեստան-81, 91, 97

Ասորիք-77

Աստուրիադ-218

Աստերմյուդ -218

Ավարայ-41

Ատրպատական-22, 32, 73, 85, 88, 90, 97, 115, 154, 264, 270, 273-
274

Արաբական խալիֆայություն-274

Արագած լեռ-67

Արագածոտն գավառ-172, 176, 262
 Արագածոտնի մարզ-262
 Արագվ գետ-70
 Արածանի (Արևելյան Եփրատ) գետ-67, 110-111, 274
 Արաքս (Երասխ) գետ-63, 83, 97, 102, 111
 Արգունթի լեռներ-70
 Արեաց աշխարհ-228
 Արևելյան ծով, (տե՛ս Կասպից ծով)
 Արզն-40
 Արզնարզուն-37, 40
 Արիներ, Արիք-244
 Արևիք-119, 123
 Արծաթադերք-63, 68
 Արծափ(ք)-78
 Արհիզ գետ, գյուղ-272,275
 Արմինիա-117
 Արմն (Հայք)-73
 Արևմտյան Վրաստան-124
 Արյաց աշխարհ-209-210
 Արշակավան-27
 Արշարունիք գավառ-65,123, 135, 141, 152
 Արայացիոր գավառ-72
 Արվաստան-77, 263, 273
 Արտահան(ք) գավառ-70, 72, 120-121, 124
 Արտաշատ-63
 Արտի կղզի-83
 Արցախ աշխարհ-39, 123, 125
 Արփայք բերդ-79, 83
 Ափխագաց աշխարհ, Ափխագիա, Աբխագիա, Ափխագք-118,
 120-123, 142, 185, 269, 275
 Բ

Բաբելոն-189
 Բագրևանդ գավառ-274
 Բագալեթ գավառ-70, 74
 Բալասական-73
 Բաղասական դաշտ-113
 Բաղդատ-100
 Բաղեշ-78, 83
 Բաղք-119, 123
 Բասյան (Բասեան) կամ Բասեն գավառ-63, 68, 109, 111
 Բարձր Հայք աշխարհ, նահանգ-84, 110-111, 117, 123
 Բեխ գավառ-113
 Բերդացիոր գավառ-72
 Բզնունյաց ծով (Վանա լիճ)-77, 82-83, 263, 271, 274
 Բզնունյաց կղզիներ-78, 83
 Բյուզանդիա-66, 82-83, 89, 103, 111, 262, 269, 273
 Բռառ գետ-93, 103
 Բողնի -218
 Բողնոփոր գավառ-70
 Բուլղար-101
 Բուլխա գավառ-72
 Գ
 Գադիբով-154
 Գալատիա Առաջին-261
 Գալատիա Երկրորդ-261
 Գալի բնակավայր-275
 Գաղատիա-29, 154
 Գաղի -272, 275
 Գաղիա-154
 Գայլ գետ-29, 155, 157, 262
 Գայշ ավան-90, 103
 Գանձակ-103

Գաջենագետ-185
 Գաջենք-157, 185, 199, 201
 Գառնի ավան-77
 Գարդման(ք)-31, 89, 103
 Գդողի գավառ-274
 Գեղամա ծով (Սևանա լիճ)-85, 102
 Գեղան-73
 Գեղավու գավառ-113
 Գոգշեն գավառ, գավառակ-120, 123-124
 Գոռաթխիսն գավառ-70
 Գոռոզ ամրոց (տե՛ս Գորոզու ամրոց)
 Գորի գյուղ-120-121
 Գորոզու ամրոց-121, 125
 Գուգարաց աշխարհ, Գուգարք-27, 29-30, 33, 67, 72, 111, 124, 130, 133, 140-141, 143, 152-153, 185, 262, 275
 Գուերդիս-ձիրի գավառ-70
 Գրգուռ լեռ -109, 111
 Դ
 Դամասկոս-80
 Դասն-37-38, 40
 Դարույնք բերդ-83
 Դերբենդ-82, 100, 103, 274
 Դլմունք-73
 Դնկիցիսե բերդ-70
 Դմբավանդ-73
 Դու-63, 68
 Դոակոն գետ-69, 116, 151
 Դվան դաշտ-70
 Դվին-77, 79-80, 114, 117, 119, 128, 135, 139, 146, 150, 152-153, 156, 250, 262-263
 Ե

Եգերք, Եգեր աշխարհ, Եգերաց երկիր-64, 68-70, 72, 113, 115-116, 123, 151

Եգիպտոս-22, 162

Եգր գավառ-72

Եգրնիկե-69

Ելի (Այլի) գավառ-264, 273

Եխնի (Խինի)-71

Եկեղյաց գավառ, Եկեղիք-106, 110

Երազգավորք-130, 138, 145-146, 151

Երասխ (տե՛ս Արաքս) գետ

Երասխաձոր (տե՛ս Արշարունիք)

Երիքով -264

Երկ (տե՛ս Խերկ) գավառ

Երուսաղեմ-180, 196-197, 204, 210, 212, 214, 217-218, 221, 227, 234

Եփեսոս-161, 170, 192, 240

Եփրատ գետ-22, 28, 150

Զ

Զավ գետ-264

Զարևանդ գավառ-119, 124

Զիզանեո-70

Զուտարինա գյուղ-156-157

Է

Էգրիսձղալի (Էգրո ջուր)-117

Էջմիածին-150

Էրզրում քաղաք-84, 110, 123, 152, 274

Ը

Ընդհանուր Ասիա-69-70, 73, 261

Թ

Թանայիս գետ-69

Թավր գավառ -70

Թեոդոսիոսյուլիս, Թեոդոսի քաղաք-118, 123, 274

Թիանեթ գավառ-71, 114

Թոբեյան բանակ-88

Թոր գավառ-70

Թուխ գետ-271, 274

Թուխարք բերդ-72

Թուրքիա-28, 110, 123, 152, 274

Թոռեղք (Տոռեղք) գավառ-72, 74, 186, 262

Ի

Իսմայել-80-81, 114, 247, 269

Իսրայել -158, 172, 270

Իվերիա-21, 29

Իտալիա-98, 102, 259

Լ

Լազիկա, Լազիկաց աշխարհ-118, 120, 123

Լեխ գետ-70

Լիմ կղզի-83

Լրծոյ (Էրծվոյ) գավառ-71, 74

Լփիինք, Լփնաց աշխարհ-37-40, 155

Խ

Խազիքներ, Խազիք-100

Խաղիսաղ-38, 41, 88-89, 102

Խաղտիք, Խաղտյաց աշխարհ-20, 28, 39, 41, 69, 72, 111, 154

Խառնիսիսն գավառ-74

Խենի գավառ-113

Խերկ գավառ-71, 114

Խինի գավառ-75

Խոդմազ գավառ-113

Խոյտա-101

Ծ

Ծաղկեոտն (Ծաղկոտն) գավառ-55, 67, 82

Ծանաքք աշխարհ, գավառ-132, 186, 266
 Ծավդեք -37-38, 40
 Ծիպանի կղզի-83
 Ծոբափոր, Ծոբոփոր գավառ-71-72
 Ծոբենոր գավառ-71
 Ծուքեթ գավառ-71, 75, 114
 Ծոփ-21, 29
 Ծոփք -124
 Կ
 Կակամար (Վոհ, Ակամսիս) գետ-72
 Կամբեխճան, Կամբեճան գավառ-71, 96, 103, 113
 Կայան բերդ-147
 Կանգարք գավառ-21, 29, 56, 67, 72, 120, 123-124
 Կանգարք լեռ-223
 Կապադովկիա-19, 28-29, 154
 Կապադովկիական Պոնտոս -69, 116, 151
 Կապիճան գավառ, (տե՛ս Կամբեճան գավառ)
 Կապկոհ-80
 Կասրից, Կասպից աշխարհ, երկիր-102, 124, 155, 274
 Կասրից դուռ--26
 Կասպից ծով-69, 72, 82, 93, 102-103, 262
 Կաստաց-218
 Կարին գավառ, քաղաք-81, 84, 105, 110, 118, 123, 132, 152, 269,
 274
 Կարուց բերդ-152, 274
 Կարս գետ-151-152
 Կարս քաղաք-152
 Կեսարիա (Մաժաք)-20, 22-23, 29
 Կիսունեթ (Խվեթ) գավառ-71, 75
 Կղարջք գավառ-26, 30, 72, 132, 139, 152, 272, 275
 Կոգովիտ գավառ-67, 77, 83

Կոլոնիա, Կողոնիա գավառ-20, 29, 155-156
 Կող գավառ-70, 72, 116-117, 120, 123-124
 Կողբ-21, 29
 Կողբափոր գավառ-71-72
 Կողքիս-69-70, 116, 123, 151, 154
 Կոյուլիսար գյուղ-29
 Կոնիս-խն գավառ-70
 Կոսիս գավառ-70
 Կոստանդնուպոլիս-108, 141, 161, 170, 192, 230, 240
 Կովզի երկիր, (տե՛ս Կոգովիտ գավառ)
 Կովկաս-24, 27, 70, 76, 85, 88, 92, 97, 116, 129, 140, 144, 154,
 165, 185, 266
 Կովկասյան լեռներ -21-22, 69-71, 73, 116, 132, 151, 272
 Կոտա-70
 Կոտայք գավառ-77, 82-83
 Կորդուք գավառ, Կորդվաց աշխարհ-37-41, 121, 125
 Կորդրիք-41
 Կորճայք աշխարհ-40-41, 125, 273
 Կուառս գյուղ-106
 Կուրբաթ-71
 Կումայրի գյուղ-114
 Կումրտա -218
 Կուռաքս գետ -69
 Կուր գետ-23, 30, 40, 57, 59, 68, 70-72, 86, 88-89, 91, 96, 103, 113,
 133, 165, 265
 Կտուց կղզի-83
 Կրիակունք-72
 Կրուստ ամրոց-147
 Է
 Հաբանդ գավառ-113
 Հադամակերտ-42, 66

Համամաշեն, Համշեն քաղաք-108, 111
 Հայաստան, Հայոց աշխարհ, երկիր -24, 29-30, 35-37, 42-43, 50, 53, 55, 62-64, 67, 74-77, 79-81, 86, 88-90, 95, 97, 99-101, 103-104, 107-109, 112, 114-119, 129, 133, 137, 141-143, 150-151, 155, 170-171, 176, 183, 185, 213-214, 216, 218, 220-221, 227, 231, 236-237, 249-252, 258-259, 263, 270-274
 Հայկական Տավրոս լեռներ-111, 274
 Հայոց Արևելից կողմանք-104
 Հայք36, 44-46, 46, 48, 51, 54-55, 64-68, 70-72, 74-75, 82
 Հարք-106, 109, 111
 Հացյուն -77
 Հեջար գավառ-113
 Հեր քաղաք, գավառ-119, 124
 Հնարակերտ, ամրոց -71, 218
 Հնդկաստան-97
 Հոնաց աշխարհ, Հոներ-155
 Հոռոմների աշխարհ-37, 201
 Հովհանավան գյուղ-262
 Հովհաննու վանք, Հովհաննավանք, Հովհաննես Սկրտչի վանք-172, 175-176, 232, 262
 Հունաստան-27
 Հունարակերտ քաղաք-21, 133
 Հոռոս կղզի-102
 Հռոմ-106, 151
 Հրագդան գետ-77
 Զ
 Զայլցեղ գավառ, գավառակ-120, 124
 Զելեթ գավառ-71, 75
 Զելթդ գավառ-114
 Զոր-21, 29
 Զորափոր, Զորոփոր գավառ-70, 72, 147, 153

Ղ

Ղազիկա-20, 28

Ղազվիվիկե-69

Ճ

Ճակք գավառ-72

Ճանիվ-69

Ճարմանայնու դաշտ-57, 68

Ճիղքք ցեղագավառ-125

Ճղբաց աշխարհ, Ճղբիք-39, 121, 125, 155

Ճորա դուռ, կողմ, պահակ-38-39, 41, 76, 80, 82, 88-89, 93

Ճորոխ գետ-108, 117

Ս

Մաժաք (տե՛ս Կեսարիա)

Մակու-77

Մանգլիսի խաչ-98

Մանգլյաց փոր, Մանգլուացփոր գավառ-70, 153, 218

Մանգղիս -241

Մանլիո-69

Մանձկերտ (Մանազկերտ)-105

Մանյա այրք-26

Մասիս լեռ-67, 83

Մարաստան, Մարաց աշխարհ-78, 90, 154, 263

Մարգպանական Հայաստան-40, 82-83, 123, 273

Մարուել -218

Մարտիրոսաց քաղաք, Մարտիրոսուպոլիս-127, 150

Մեգալոս- Պոտամոս գետ-70

Մեղացիներ-19

Մելիտենե-127,150

Մեծ Աղբակ-66

Մեծ Զավ գետ-273

Մեծ Զելենչուկ գետ-275

Մեծ Հայք-19, 28-31, 40-41, 66-72, 82-84, 102-103, 110-111, 116,
118, 123-125, 150-154, 261-262, 273-275

Մեծ Սպանիա-29, 154

Մեհենկերտ գյուղ-187

Մեռտիս ծովակ-69

Մթին լեռ-21

Միջագետք-22-23, 85, 118, 154, 273

Մծբին քաղաք-77, 263, 273

Մյուս Հաբանդ գավառ-125

Մոկք -47, 121, 125

Մոսուլ-124

Մուրց գետ-111

Մտկուրիս-իս գավառ-70, 74

Մրիտ գավառ-72

Մրծվին-78, 82

Մրուղ գավառ-72

Մցիեթ, Մցխեթա, Մծխիթա քաղաք-24, 71, 98, 156, 221-222,
232

Մցխիթայի խաչ կամ Մանգղեաց-206, 258

Յ

Յույնք-118

Ն

Նախիջևան, Նախճավան գավառ, քաղաք-78, 81, 83, 119

Նախճրաձոր գյուղ-135, 152

Նավհանաց երկիր-120, 124

Նիգ գավառ-153

Նիգալ գավառ-72

Նիկիա -161, 170, 192-193, 217, 240

Նիկոպոլիս-154, 262

Նոր քաղաք (տե՛ս Վաղարշապատ)

Շ

Շամշդտա բերդ-265

Շամշուլդե (Երեք նետ) ամրոց-143, 145, 147, 153

Շամքոր, Շամքորի բերդ-99, 104, 133

Շանճան-73

Շավշեթ գավառ-272, 275

Շաքե գավառ-101, 113

Շիրակ գավառ-54, 59, 67, 114, 120, 124, 131, 134, 138, 145, 151,

153

Շիրակական-130

Շուշք գավառ-113

Շուջք գավառ-71, 75

Ո

Ողական ամրոց-106, 110

Ողաք-63-64

Ոստան Հայոց գավառ-83

Ոստան Մարգալանյան գավառ-113

Որոմանի գյուղ-145

Ուտի Առանձնակ գավառ, Ուտի գավառ-22, 85, 88, 102, 124,
130, 133, 146-147, 151, 153

Ուտիք աշխարհ-30, 41, 72, 96, 102-104, 124, 151

Ուրմիռ լիճ-124, 273

Ուփրեթ բերդ-257

Ոքաղ, Ոքաղե գավառ-72

Չ

Չորա (տե՛ս Ճորա)

Չքատան կղզի-83

Պ

Պալունյաց աշխարհ-106, 110

Պահ դուռ-37

Պամփղագովնիա (Պափլագոնիա)-29, 154, 261

Պարխար լեռներ-20, 72
 Պարսկահայք աշխարհ-124, 273
 Պարսք, Պարսից աշխարհ, երկիր, Պարսկաստան-24, 38, 62,
 65, 68, 73, 107, 121, 150, 228, 230, 262, 272
 Պարվար գավառ-70-71
 Պարտավ ավան, քաղաք-101-102, 119, 124
 Պարտիզացիոր գավառ-72
 Պերդե-22
 Պերոզ քաղաք-96
 Պիրենյան լեռնաշղթա-29
 Պոնտական , Պոնտոսի (Մև) ծով-21, 28, 68-69, 72, 116, 117,
 151-152, 185
 Պոնտոս-20, 29
 Ջ
 Ջավախք գավառ-21, 70, 109, 111, 155, 186, 262
 Ջերմ գետ-125
 Ջիբրալթար-29
 Ռ
 Ռան (Աղվանք)-73
 Ռիզո-70
 Ռիպեա լեռներ-69
 Ռոդյուպոլիս-70
 Ռուսթավ -218
 Ռվան-73
 Ս
 Սակուրեթ ամրոց, բերդական-144, 153
 Սամթավա -218
 Սամշվիլդե գյուղ-153
 Սամցխե գավառ-70, 72, 114
 Սևանա լիճ (տե՛ս Գեղամա ծով)
 Սաջյան ամիրայություն-274

Սառուք-218
 Սարմատիա-69-71, 116, 151
 Սացխումեթ գավառ-70
 Սբ. Կարապետ վանք-106
 Սբ. Սիոն եկեղեցի-108, 170, 220
 Սեբաստիա-127, 150
 Սեպհական գունդ, Սեպհական գնդի երկիր, կողմ-79, 83
 Սիոն-212
 Սիսական, Սիսական նահանգ, (տե՛ս Սյունեաց աշխարհ, Սյունիք)
 Սիցիլիա-102
 Սկուտրի գյուղ-155
 Սոդոմ -264
 Սյունեաց աշխարհ, Սյունիք-64-65, 73, 78-80, 83, 89, 97, 103, 107, 123, 218, 250-251
 Սուրբ Խաչ-71, 164, 208, 222, 226, 241
 Սպեր գավառ-72
 Սվազի վիլայեթ-29
 Սվանաա գետ-69
 Սրդավ-218
 Վ
 Վաղարշապատ-60, 119, 127, 145, 150, 272
 Վայոց ձոր-119, 121
 Վան ավան-272
 Վանա լիճ (Բզնունյաց ծով)-111, 125, 273-274
 Վանանդ գավառ -107, 109, 111, 124, 130, 133, 152
 Վասպուրական աշխարհ-66, 82-83, 110, 118, 120-123, 125, 153, 269, 272-274
 Վասպուրական գնդի կողմ, երկիր-77, 83
 Վատնիսյան (Վատնյան) դաշտ-267, 274
 Վարազմանավառ բերդ-71

Վարառատ գավառ-264, 273
 Վարդանակերտ քաղաք-102
 Վարդգեսավան+150
 Վարճան (Վիրք)-73
 Վարշակի ջերմուկ-55, 67
 Վելիսցիխե գավառ-71, 75, 114
 Վենետիկ,-68
 Վեռիա (Վիրք)-115
 Վերիա, երկիր -185-186
 Վերին կամ Անփայտ Բասեն-111
 Վերին Ջավախք գավառ-29, 72
 Վիրք, Վրաստան, Վրաց աշխարհ, երկիր-19, 21-25, 28-29, 32-33, 35-39, 41-46, 48, 50-54, 56-57, 60, 62-81, 84-86, 88-90, 93-97, 100-101, 103-106, 109-112, 114-116, 118-119, 124, 126-127, 129, 133-134, 139-142, 145-146, 150-151, 153-157, 165, 170, 183, 185, 188, 190, 195, 202-203, 211, 213-214, 216, 220, 222-223, 225, 227-228, 231, 233-234, 236, 239, 241, 243-246, 249-252, 258-263, 271-274
 Վոհ գետ-70, 72
 Վուրի աշխարհ-136, 148
 Վրաց դաշտ-119, 123, 185
 Վրկանա երկիր-205, 224-225, 227, 230-231, 233, 258, 262
 Տ
 Տաճկաստան-37, 40, 109
 Տամբուր(ա) քաղաք-108, 111
 Տայաստան (տե՛ս Տայք)
 Տայոց ամրոց-134
 Տայք-20, 29, 41, 68, 70, 72, 75, 78, 111, 116-117, 119, 123-124, 138, 272, 275
 Տանիս-խե գավառ-70
 Տանուտերական իշխանության աշխարհ, Տանուտերական տուն-77, 82, 273

Տաշիր գավառ, Տաշիրք-21, 28-29, 72, 138, 140, 153, 187
 Տապրստան-79
 Տարոն աշխարհ, գավառ-105-107, 110-111, 121, 271
 Տարս-218
 Տեղաց անապատ-61
 Տիգրանակերտ-104
 Տիգրիս գետ-40, 91, 273
 Տիգրոն-40, 66
 Տիմուել -218
 Տմորիք-39, 41
 Տյուրենիա-102
 Տուս-133
 Տուրուբերան աշխարհ-110-111, 124-125, 274
 Տրապիզոն-28, 70, 80
 Տփլիս (Տփղիս)-70-71, 77, 90, 94-95, 101, 119, 124, 133-134, 140, 144, 165, 170, 186, 218, 231, 263-264, 269, 272-273
 Յ
 Յիւրաչմա գավառ-70, 74
 Յիւրասձմայա գավառ, (տե՛ս Յիւրաչմա գավառ)
 Յուրտավ քաղաք-123, 158, 169, 172-176, 178, 181, 183-187, 189, 199-200, 202-204, 206, 208, 210, 213-215, 219, 225-226, 228, 231, 233, 238, 240, 253, 256, 258, 260
 Փ
 Փայտակարան աշխարհ, քաղաք-78, 83, 86, 102, 119, 124, 264, 273-274
 Փառիսոս գավառ-121, 123
 Փասիս գետ-68-69
 Փատգոս-101
 Փարիսունք-119, 123
 Փորթ-218
 Փուլթ քաղաք-113

Փոքր Հայք-19, 28-29, 150, 154, 262
 Փոյուզիա-20, 29
 Փրանկ-118
 ք
 Քաղա գավառ-113
 Քաղկեդոն-97-98, 103, 127-128, 155, 157, 159, 162, 170-171, 175, 178, 181, 183, 189-190, 192-194, 196, 199, 201, 207, 209, 212, 217-219, 223-224, 230, 235-236, 259, 261
 Քելքիտ չայ գետ-29
 Քոդկոնլա-218
 Քորգան -218
 Քուելդարա գավառ-71, 75
 Քուեշկափոր (Քուեշ կափոր) գավառ-113
 Քուիշափոր գավառ-70
 Քուստի Կապկոն-73, 75
 Քուստի-Փառնես գավառ-123
 Օ
 Օձ քաղաք-109

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան.....	3
Մովսես Խորենացի	19
Փավստոս Բուզանդ	32
Կորյուն.....	34
Եղիշե.....	37
Ղազար Փարպեցի	42
«Աշխարհացույց».....	69
Սեբեոս	76
Մովսես Կաղանկատվացի	85
Հովհան Մամիկոնյան.....	105
Ղևոնդ	112
Անանուն Զրուցագիր (Կարծեցեալ Շապուհ Բագրատունի).....	118
Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցի	126
Ուխտանէս եպիսկոպոս	154
Թովմա Արծրունի և Անանուն.....	263
Անձնանունների ցանկ	276
Տեղանունների ցանկ.....	294

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**Մատենաշար
Հայ-վրացական հարաբերություններ
Գիրք Գ**

**ՀԱՅԿԱԿԱՆ ՄԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ
ՎՐԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ
(Ե-Ժ ԴԱՐԵՐ)**

**Քաղեց և ծանոթագրեց
Ռուզաննա Հարությունյանը**

Համակարգչային ձևավորումը՝ Ա. Աղուզումցյանի
Շապիկի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. սրբագրումը՝ Վ. Դերձյանի

Տպագրված է «Արման Ասմանգուլյան» ԱԶ-ում:
ք. Երևան, Հր. Ներսիսյան 1/125

Ստորագրված է տպագրության՝ 27.12.2016:
Չափսը՝ 60x84 ¹/₁₆: Տպ. մամուլը՝ 19.625:
Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն,
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.ysu.am